Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՄԵՆԻՑ

ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՄԵՆԻՈՑ

ՀԱՒԱՍՏՉԵԱՑ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԱՑ, Ի Ս. ՂԱԶԱՐ

1896

ԿԱՄԵՆԻՑ

ՊԱՐՈՆ Մ· ԳՐԻԳՈՐ ՊԸՅԶԳԼԵԱՆ

ԹՈՐՉՐԴԱԿԱՆ

ՎԵՐԻՆ ԴԱՏԱԼՈՅԾ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՏՆԻ

ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՌՈՒՄԵՆԻՈՅ

ՍԱՏԱՐԵԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԻՍ

ԿԱՄԵՆԻՑ

ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՄԵՆԻՈՑ

ՀԱՒԱՍՏԶԵՑ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ



ՎԵՆԵՏԻԿ· — Ս· ՂԱԶԱՐ

1896

ԳԻՏԵԼԻՔ



Յառաջաբանի գրոցս՝ երբ սկսաւ հրատարակուիլ ի Բազմավիպի (1895 տարւոյ), յայտնած էինք, թէ միայն Կամենիոյ քաղաքի հայերէն Տարեգրութիւնն ի լոյս կ՚ընծայեմք. յորում՝ Լեհաստանի ուրիշ քաղաքաց և Ռումենիոյ կողմանց տեղեկութիւնք կան. իսկ Թաթարերէն կամ Թուրքարէն չարունակութիւնը՝ քաղելով և թարգմանելով խոստանայինք: Սակայն, յետոյ լաւ համարուեցաւ՝ ոչ միայն այդ այլազգերէն գրուածն այլ հրատարակել, (յորում չատ կարեւոր դիտելիք կան Լեհաց պատմութեան), այլ և զանազան Յաւելուածոյ՝ իբրեւ Հաւաստիացեալ՝ Լեհահայոց վերաբերեալք, մանաւանդ Լվովցւոց (Լեմպէրկ քաղաքի), ուր նստի Հայոց արքեպիսկոպոսն: — Այս Յաւելուածոց Ա. և Բն՝ (եր. 115–23) դարձեալ թաթարերէն ձամանակագրութիւնք են. իսկ հետեւեալքն են,

Գ. Քանի մի հատուածք ի գրչագիր օրինակէ Աւաքել Պատմագրի. (եր. 124–5).

Դ. Յովնանեան Վարդան արքեպիսկոպոսի առ Եւդոկիացիս գրած թղթին քաղուածք (եր.126–7).

Ե. Եկեղեցական տարեգրութիւն մի (1688–98) տարիներու, (եր. 129–30):

Զ. Քաղուածք Մեփհանեան կամ Ոչքեան Մեփհանոս Հմուտ վարդապետի Կամենիցոյ աւագերիցու՝ ընդարձակ Տարեգրութենէն, (եր. 131–46):

Է. Բազտասարեան Տէր Յակովբայ Օրագրութիւն մի, 1704 տարւոյ սեպտեմբեր ամսոյն, Շուետաց ի Լեհաստան արշաւանաց առեն՝ իրեն հանդիպածին. (եր. 147–59):

Ը. Քաղուածք ի Յիշատակարանաց Զեռագրոց (եր. 160–201), Լեհահայոց նկատմամբ, թէ մեր քով գտուած և թէ մեզի ծանօթ իբր հարիւր Զեռագրոց ժողոված, որոց մեծագոյն մասն ի Լեհաստան գրուած. չեմք տարակուսիր որ նոյնպէս և գուցէ աւելի եւս գտուին այսպիսի Յիշատակարաններով Զեռագիրք, յայլեւայլ կողմեր. որոց հաւաքումն կըր-

նայ նոր ծանօթութիւններ ընծայել՝ Լեհահայոց գաղթականութեան գիտելիքն ամբողջացընել ուզողին, որ չէր մեր նպատակն, այլ ամփոփել ուր որ ձեռնհաս էինք, և ինչ որ չէր հրատարակուած ի Ճանապարհագրութեան Բժշկեան Հ. Մինասեայ. ուր, ինչպէս քանի մ'անգամ յիշած ենք, կարեւոր գրուածոց հետ կան և քանի մի Ջեռագրայ յիշատակարանք։

Թ. Վիսպասանութիւն Նիկոլական, (եր. 202–14). գուցէ մեր հրատարակած Յաւելուածոց մէջ՝ սա ամենէն հետաքննականն ըլլայ՝ ոմանց, և փափագելի՝ գրուածին սկզբան և վերջին պակաս մասերը գտնելու։ Տես և ըսածնիս ի ծանօթութեան, եր. 202։

Ժ. Կոնդակք Կաթողիկոսաց առ Լեհահայս (եր. 215–65). անչուշտ չատոց այլ՝ այս Յաւելուածս աւելի յարգի է. 300 տարիներում (1365–1672) մեր կաթողիկոսաց իշխանութիւնն և խնամքը, միանգամայն և կոնդակագրութեան ոճը յայտնողք։ Կոնդակաց առաջինն և երկրորդն՝ ի սկզբան գրոցս հրատարակուած են, երբ չէինք մտադրած այս Յաւելուածները հաւաքել. վասն որոյ Գ թուէն սկսի այս տեղ հաւաքած չարքն՝ մինչեւ ց'ԺԸ. որոց մէջ կայ և թուղթ մի (Ը) Աստուածատոյ պատրիարքի Կ. Պոլսի առ Լեհահայս. թուղթ մի եւս (Ի) Լովացւոց առ Մխայէլ կաթողիկոս, յորմէ խնդրեն իրենց սակաւաթիւ ընտանեաց համար՝ անօրինումն մերձաւոր ամուսնութեանց։ Ինչպէս ձեռագիր յիշատակարանաց համար ըսինք, այսպէս և անչուշտ դեռ ուրիշ կոնդակք և փոխադարձ թղթակցութիւնք եղած են Կաթողիկոսաց և Լեհահայոց, որոց գոնէ ոմանց պատճէնը խնդրելու է յիշմիածին։ Մեր հրատարակելոց կէսն (ինն) Նիկոլի խնդրոյն վրայօք է. բովանդակն այս է ժամանակի կարգաւ.

Ա.	1365,	յունուար.	Մեսրովպ կաթող. առ Լեհահայս.	երես	5
Բ.	1375,	յուն. 15.	Կոստանդին կաթող.	»	» 8 և 215
Գ.	1384,	ապրիլ 2.	Թէոդորոս »	»	» 217
Դ.	1390,	օգոստ. 18.	Նոյն »	»	» 9
Ե.	1390,	յունիս 28.	Յակովբ Գ. »	»	» 221
Զ.	1457–60		Արիստակէս »	»	» 225
Լ.	1572,	ապրիլ 15.	Թուղթ Հայոց Լովի առ Մխայէլ կաթող.	»	228
Ը.	1589,	նոյեմբ. 8.	Թուղթ Աստուածատոյ պատրիարքի վասն Ծառապատկին.	»	231
Թ.	1611,	մայիս 1.	Մելքիսեդ կաթող. առ Լեհահայս.	»	238
Ժ.	1633,	օգոս. 30.	Մովսէս կթ. առ Վլատիսլաւ Թգ. Լեհաց.	»	241
ԺԱ.	1640,	հոկտ. 12.	Փիլիպպոս կթղ. առ Լեհահայս	»	244
ԺԲ.	1644,	յուլ. 27.	Նոյն առ Վլատիսլաւ Թագաւոր.	»	247
ԺԳ.	1653,	նոյեմբ. 5.	Նոյն առ Լեհահայս.	»	» 250

ԺԴ· 1654, փետր· 12· Նոյն առ Լհհայս թագաւոր երես 252
ԺԵ· — ապրիլ 15· Նոյն » » » 255
ԺԶ· 1662, յունու· 12· Յակովբ Դ կթղ· » » » 257
ԺԷ· 1671, սեպտ· 1· Նոյն » » » 259
ԺԸ· 1672, օգոստ· 28· Նոյն » » » 263

Նիկոլէն առաջ գրուած կոնդակք՝ իրմէ առաջ եղած եպիսկոպոսաց հաստատութեան վկայականք են. ասոնց առաջինն օրինաւոր ճանչցուածն՝ ըստ կոնդակի Մեսրովպայ կաթողիկոսի՝ իր ձեռնադրած Գրիգորն է, որ յաջորդ համանուններէն որոշուելով՝ կոչուի Առաջին կամ Մեծ (Ոչուռ Գրիգոր)· զոր Կոստանդին կաթողիկոս եւս հաստատած է յամի 1375։ Զարմանք է որ բազմահմուտ ժամանակագիրն Ստեփ. Ոռչքայ և հետեւողքն՝ առաջին եպիսկոպոս դնեն զՅովհաննէս. թերեւս զԳրիգոր՝ իբրեւ յետոյ մերժուած ի Կոստանդնէ՝ անարժան համարելով, եթէ նոյն և ոչ Բ Գրիգոր մ'է, զոր Թէոդորոս կաթող· իր երկրորդ կոնդակով դասապարտէ (ա· եր· 10–1), զի իր և իր նախորդայ ատեն «բազում անասհման բաներ գործեաց»· այս գործոց ատյգ պատմութիւնն և վախճանը կ'արժէր գիտնալ։ Մենք այն Մեծ Գրիգորէն մինչեւ ի մեր ժամանակիս եպիսկոպոսաց՝ կամ լաւ եւս արքեպիսկոպոսաց՝ շարքը նշանակեմք· յիշեցընելով, որ ասոնց յաջորդութիւնն և թուականք՝ դեռ կարօտին քննութեան և ստուգութեան, որովհետեւ չեն միաբանիր ժամանակագրաց, գաւազանագրաց և յիշատակարանաց ամէն աւանդութիւնք։

1365 **Գրիգոր Ա·**
1379 **Յովհաննէս**
1409 **Գրիգոր Բ**, *եղբայր Յովհաննու*
1415 **Աւետիք**, *եղբօրորդի Գրիգորի և Յովհաննու*
1463 **Խաչատուր** † 1502 (*եր*· 116–7)
1481 **Մատթէոս** † 1492 (*եր*· 135)
1515 **Գալուստ**, *ըստ Լհհայ՝* **Քիլիանոս** † 1549
1545 (*Նիկոլ երէց տեղապահ*)
1552 **Գրիգոր Գ· Վարագեցի կամ Վանեցի** † 1574 (*եր*· 46)
1578 **Պարսամ Տրապիզոնեցի**
1589 **Յովհաննէս Բ կամ Գալուստ** (*եր*· 136· 169· 231)
1607 **Կարապետ կամ Գաբրիէլ** † 1608 (*եր*· 66)
1611 **Մեսրովպ Կաֆացի** † 1625
1626 **Նիկոլ Թորոսովիչ** † 1685
1668 (**Յովհաննէս Քարխմատենց տեղապահ**) † 1678
1681 **Վարդան Յովնանեան** † 1715
1698 (**Աստուածատուր Ներսխեվիչ, փոխանորդ**)

1716 Յովհ. Տուբիա Ալեքսանդրովիչ † 1751
1752 Յակովբ Ալեքսանդրովիչ † 1783
1783 Յակովբ Թումանովիչ † 1798
1799 Յովհաննէս Սիմոնովիչ † 1816
1817 Գայեան Վարդերեսովիչ † 1831
1831 Սամուէլ Սահակեանովիչ † 1858
1858 Գրիգոր Սիմոնովիչ † 1875
1876 Գրիգոր Յովսէփ Ոսկանեան † 1881
1882 Սահակ Նիկոլայոս Խաչովիչ

Թէ մեր այս գրոց և թէ ուրիշ յիշատակք՝ յայտնեն, որ զատ յարքեպիսկոպոսէն Լեհաստանի՝ եղած են երբեմն ի Լեհս, ի Թումենիա և ի սահմանակից նահանգս, ուրիշ հայ եպիսկոպոսք եւս, կամ անոր հպատակք կամ ինքնագլուխք, գոյք և ըստ բանից Մեսրովպայ կաթողիկոսի (եր. 6) առանց հրամանի կաթողիկոսին և ոչ ուղղակի: Այս կարեւոր խնդրոյ քննութիւնը թողով, ոչ անկարեւոր համարիմ այս տեղ նշանակել՝ քանի մի տեղեաց մեզ ծանօթ եպիսկոպոսներ: Աստոնց գլխաւորն է Մոլտաւիա, Պուղտան կամ Սեչով կոչմամբ. յիշուած եպիսկոպոսքն, յամս՝ 1551, Յովհաննիկ Սեչովցի. 1578–1607, Յովհաննիկ Պուղտացի. 1628, Ղազար Բաբերդցի. 1640, Անդրիաս. 1662+1678 Յովհաննիկ Քարիմատենց. 16.. Մահակ, ձեռնադրուած ի Դ Յակովբայ կաթողիկոսէ. 1680, Մինաս Զիլիֆտար:

Ի Կամենից. 1577, Յովհաննիկ Աւագերէց, զոր հաստատէ հօն անձամբ՝ Թադէոս կաթողիկոս. 1627, Թորոս եպիսկոպոս, ձեռնադրուած ի Մելքիսեդ կաթողիկոսէ: — Ի Եագլովից յիշուի (եր. 191) 1655, Անտոն եպիսկոպոս: — Ի Սերադ. 1507, Միհոն եպիսկոպոս (եր. 161): — Ի Մոլիւեւ, ի սկիզբն դարուս (1809), կայր Յովսէփ եպիսկոպոս Քրիստոփորովիչ † 1816. որոյ փոխանորդ կ'ըլլայ, 1816, կանոնիկոն Անտոն Վարդերեսովիչ:

Բայց քան զատունք և քան զԼովի արքեպիսկոպոսունս իսկ՝ հնագոյն, որով և հետաքննագոյն է Ունգարիոյ կողմանց Հայ եպիսկոպոսն, ԺԴ. դարու կիսէն առաջ, յամին 1343, Մարտիրոս եպիսկոպոս Հայոց ի Թոլմաք կամ Տոլմաք քաղաքի, Կրանի (և ըստ գրոց Սարիգոնիհանի) մետրապօլտին օժանդակ. այս եպիսկոպոսին կնիքն այլ գտուած է լատին գրութեամբ, Martini Episcopi Armenorum de Tolmachy, (Կնիք Մարտիրոսի եպիսկոպոսի Հայոց Տոլմաքայ): Նոյն քաղքին Հայ եպիսկոպոսն յիշուի և յամի 1355, հաւանօրէն նոյն Մարտիրոսն: Յետ երեք և կէս դարուց՝ Վարդան Յովհաննեան կ'իմացընէ մեզ (եր. 129. 199), որ յամի 1691 ձեռնադրեր է զՕգսենտ Վերծերևսքոյ կամ Վօծրեագոյ Պօչանցի՝ եպիսկոպոս Հայոց ՅԱլատին:

Մեր վերոյիշեալ Լեհահայոց ժամանակագիրք՝ աւելի իրենց եկեղեցւոյ և եկեղեցականաց վրայօք գրած են՝ քան քաղաքական կենաց. և անոնց

գլխաւորն՝ Կամենիցայ աւագերէցն Յովհաննէս՝ [1] թուի թէ մասնաւոր նկատմամբ չէ ուզած խմացընել՝ Մոլտաւայ քանի մի Վոյվոտայից հայ ըլլալը, մանաւանդ այն Ազգուր կամ Ազհաւոր անուանեալ Յովհաննու, զոր ըստ սովորութեան Իւոն կոչեն. որ թէ և ի մօրէ միայն հայ էր, բայց օտար պատմիչք յատկապէս Հայ մականուանեն զնա, ինչպէս և Ազհաւոր, իր քաջութեանց և անխնայ վրիժառութեանց համար, որովք Ռումենիոյ քաղաքական պատմութեան մէջ՝ ամենէն անուանի անձանց մէկն համարուի, և միայն մասնութեամբ վատ մարդկան՝ զրկուեր է իր եռամեայ իշխանութենէն և ի կենաց. մեր Աւագերէցն յիշէ զայս՝ կարճ բայց լաւ ոճով, (յերես 44–5), սպանման օրն այլ նշանակելով՝ ի 20 մարտի, 1575, ըստ այլոց 1574: Աւոր եղբարք համամարք և բնիկ հայ հօր Սերբենկայի որդիք՝ կարապետ կամ Իւոն, կոստանդին և Ազեքսանդր և սորա որդին Պետրոս եւս, չանացեր և կարճ ատեն գրաւեր են վոյվոտական գահը, հալածելով զՄոլտաւ յաւիշտակողս. վերջի յիշեալ իշխող Պետրոսի բռնութեամբ ատեն՝ Ազաց անուամբ Հայն այլ բռնուեր և փախեր է, և այլն. (տ. եր. 59): Ռումենաց պատմութեան մէջ սոքա՝ Բոդքովա կոչուին, որ Պայտ (նշ) նշանակէ իրենց լեզուաւ, և համարին թէ թարգմանութիւն ըլլայ հայ Սերբենկա անուան կամ բառի. որ մեզ անծանօթ է [2]: Յիշէ և Իւոնի վոյվոտայութիւնը յամի 1577–8, և գլխաւորին ի Լեհաց, (եր. 48–9.) և միւս եղբայրը, որ՝ յետ երկուց չաբաթուց «պարոն մտաւ ի յերկիրն՝ թաղախներովն, զոր ոմանք ասացին, եթէ այդ Բոդքովային եղբայրն է», և այլն, (եր. 49): Տասն տարի առաջ Պր. Գր. Պըլըգեան՝ Հանդէս ամսօրեայ օրագրի մէջ (թ հա. եր. 101–3.) այս Սերբենկեան Հայ վոյվոտայից վրայօք տեղեկութիւն գրած է. աւելի ընդարձակ՝ Ռումենաց պատմիչք, մանաւանդ հռչակաւորն Հաշտէոս. և այս տարի (1896), զատ առջի գրածներէն՝ Քսենոփոլ, ընդարձակ երկհատոր Ռումենաց պատմութեան մէջ [3]: Այս կարեւոր գիրքս՝ շնորհիւ յիշեալ Պ. Գրիգորի հասաւ առ մեզ՝ նոր մամլէ ելած, բայց մեր այս գրոցս այլ տպագրութենէն վերջը, որով չկարցունք ըստ ժամանակին օգտուիլ և ծանօթաբանել: Սա՝ մեր ժամանակագրին պախարակած Տեսրոթը (եր. 19–28) աւելի արժանաւոր անձ մի ցուցընէ, որ և գրաւոր յիշատակ մի թողած է, փառնակաց ե Կարոլոսի պատերազմաց Պատմութիւնն, որ և տպագրուեր է: Բայց նկատմամբ մեր ազգի՝ քիչ դիտելիք կայ Քսենոփոլի այս գրոցս մէջ. ամենէն մեծ դիպուածը՝ Հայոց հալածանքն և վիշտքն

1. Իր որդւոյն՝ Ազոնաի՝ թաթիարերէն գրածին մէջ այլ կան մանր յիշատակք ազգայինք, որոց մէջ նշանաւոր և վիպասանական դէպք մ'է 1616, մարտի 28ին, Հայ աղջկան մի ըրածը. կախաւելու տարուց դատապարտելոյն (գուցէ սիբականին) յանկարծ դէմ գալով, և թիւէն քաշելով տանիլն և մէկ տեղ քաղքէն դուրս փախչիլն, (եր. 77):

2. Գուցէ բառին արմատն «երբ կամ «արբ՝ գրասուց ոմից նշանակութիւն ունենայ, զի ի դիրս (Կանոնական) գտած եմք զայս բան, եթէ ձին կամ ջորին՝ «արբէ և աքցի տայ»:

3. Histoire des Roumains... depuis les origines jusqu' à l'union des Principautés en 1859. par A. D. Xénopol. Paris, 1896.

ի Շտեֆանէ, տողով մի միայն յիշէ ի կարգի պատմութեան, բայց ի ներքեւ ի ծանօթութեան կ'աւելցընէ, թէ այս հալածանաց ողբ մի գրուած է հայերէն (Մինասայ Թօխադցոյն) և հրատարակուած ի Հանդէս ամսօրեայ օրագրի։ Քաղաքական օրինաց և իրաւանց վրայ խօսելով, կու յիշեցընէ (Ե հտ. եր. 42· 439), որ առաջ Հրէից և Հայոց արգելուած էր երկիր գնել, այլ միայն տուն և այգի. ապօրինութեանց վրայօք այլ խօսելով՝ կու յիշէ, որ անցեալ դարուն վերջերը՝ Մխայէլ Սուցոյ վոյվոտային՝ Աբիկզատէ Խօճայ Պօղոս Հայէ մի 30,000 դահեկան (ղուրուշ) փոխ կ'առնու, գրաւ դնելով գեղի մի եկեղեցին, և երբ չի կրնար վճարել, պարտատէրն կ'ուզէ եկեղեցին վաճառել. բայց բարեպաշտ անձ մի (Ա. Մորուզի) ոսկին տալով՝ կ'ազատէ եկեղեցին։

Իսկ նկատմամբ բարոյականի քաղաքական պատմութեան Վլահաց և Մոլտաւաց, երբ ներկայացընէ ասոնց վոյվոտային գրեթէ չարունակ ծանր ծանր կաշառքով առ այլազգիս՝ զիրար տապալելը, իրենց պոյարաց (աւագաց) հետ խստութեամբ վարուիլը և անգութ չարչերը, մեզի դառնալ նայիլ կու տայ մեր ազգային պատմութեան անցիւ. յորում՝ գիտեմք մեր նախնեաց յանցանքները. սակայն՝ բաղդատելով ասոնց ըրածին՝ անհամեմատ կիրթ, բարեբարոյ և հաւատարիմ գտնեմք զՀայն, մեր կարելի անաչառութեամբ. իսկ ապա, երբ տեսնեմք մեր աչօք, թէ ինչպէս դէպք և չանք և պէսպէս անտեսութիւնք՝ այդպիսի երկու ժողովուրդը (վլահ և մոլտաւ) միացուցին մէկ ընտրեն անուամբ և ինքնավար տէրութեամբ, և ո՞ւր մնաց կամ մնայ՝ անոնց գրեթէ զուգանուն Ալմէնն, տեսակ մի ափշութիւն պատէ զմեզ այսօր. մինչ այլևայլ տեսակք ափշութեանց պատեն աւելի կամ պակաս թանձրութեամբ՝ գրեթէ բոլոր բանիմաց կամ անիմաց աշխարհս, զարեւելք և արեւմուտք, զիշխանս և զիշխեցեալս, զագէտս և զխորագէտս... և մինչև ցի՞րբ...։

Ժամանակագրութեանց մէջ մեծ մասամբ օտարաց (Լեհաց և այլոց) և մեզի անծանօթաց և ոչ կարեւորաց յիշատակք են, վասն որոյ աւելորդ համարեցաւ անոնց ամենուն անուանքն այլ ցանկել, այլ ոմանց. իսկ լեզուի կամ բառից օտարութիւնն այլ՝ (թէ լեհի թէ թաթարի), կամ լաւ եւս՝ հաւաքողիս անհմտութիւնն այդ լեզուաց, անչուշտ տեղ տեղ սխալ ընթերցմունք պատճառած է, բայց ի տպագրութեան սովորական սխալներէ, ոչ րոց մէկ քանին նշանակուած են յաջորդ երեսին վրայ։

Ըստ նիւթոյ բանից կամ պատմութեանն՝ այս հրատարակեալ գործս է յատկապէս Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռուսիոյ. բայց թէ՛ անուան համաձայնութեան համար և թէ բուն տարեգրութեան հեղինակացն Կամենիացի ընդարձակ ընդլայնման համար, (որով և այն քաղքին վրայօք մասնաւոր տեղեկութիւնք գրուած են), միանգամայն կոչեցինք զգիրքս՝ ԿԱՄԵՆԻՑ։

30 յունիս 1896

Հ· Գ· Մ· Ալիշան

ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԻԼԱԽԱՑ ԵՒ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՉԳԻՄ՝ գուցէ ոչ պակաս քան զբնիկ հայրենեացն՝ յօտար երկիր գաղթականացն պատմութիւնն այլ՝ կըրնայ չատ հետաքրքրական ըլլալ, եթէ և կարելի ըլլար գտնել, հաւաքել և յայտնել. գործ երկար և դժուար՝ մէկ անձին համար. այլ դիւրին, եթէ գիտնականք գաղթականութեան գլխաւոր կենդրոնից՝ ձեռք զարնեն իրենց երկրորդ հայրենեաց ծագումը լուսաբանել, զոր յետոյ կըրնայ և մէկ անձ մ՚այլ հաւմահաւաքել: Ա.յսպիսի գործոյ արդէն փորձեր եղած են, թէ ազգային օրագրաց մէջ և թէ առանձին գրքոյկներով. որպէս երբեմն և մեր օրագրիս մէջ, և վերջի տարիներս Վիեննայի Մխիթարեանց Հանդիսի մէջ, յատկապար Հունգարիոյ Հայոց վրայօք: — Յետոյս զուգակից՝ աւելի կամ նուազ պատգայիք՝ երկու մեծ կենդրոնք գաղթականութեան Հայոց եղած են և կան, Լեհաց և Վլահաց, ռամկօրէն Իւղախաց և Ոլախաց: Առաջինն է ի Լեհաստան գաղթեալ և բնակեալ Հայոց, քան զամենեսին նշանաւոր. որ ի կիսոյ ԺԴ դարու մինչեւ ցայժմ անընդհատ եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական աթոռ ունի, պատուեալ և հռչակեալ յԱւստրիական կայսերութեան: Երկրորդն՝ ի Դանուբեան նահանգս, ի Վալաքիա և Մոլտաւիա (Ուլահ-Պուղտան), որ թէ և յատուկ եկեղեցական աթոռ չէ ունեցեր, այլ երբեմն առանձին կողմանց և քաղաքաց եպիսկոպոսներ, երբեմն Լեհահայոց աթոռոյն հպատակ. հիմայ այդ երկու նահանգաց միանալով՝ թագաւորութեամբ Ռումանիոյ, ինչպէս և Սերպաց յատուկ տէրութեամբ, տեղացի Հայոց վիճակն այլ քաղաքական փոփոխութիւն և ինքնութիւն մի առաւ. և յառաջադէմքն սկսան իրենց առաջին և միջին գաղթական հարց և նախնեաց անցուկացը հետազօտել, և թէ տեղոյն լեզուաւ թէ հայերէն՝ ծանօթութիւններ ընծայել:

Ռումանիոյ մէջ երկու պատուաւոր գիտնականք, թէ և ոչ համակարծիք, մէկն բնիկ երկրին (և ըստ մեզ՝ օտարազգի) Պր. Հրժտեւ՝ ռումանական ակադեմիոյ ընկերակից, միւսն՝ մերազգի Պր. Գրիգոր Պըրգլեան, տէրութեան բարձրագոյն և վճռաբեկ տեղին դատաւոր, ԺԶ դարու մէջ՝ այն

կողմերու Հայոց դիպուածներու վրայօք՝ ռոման լեզուաւ յօդուածներ հրատա-
րակեցին, այս տարիներս, որոց մասն այլ թարգմանուած է հայերէն ի վերոյ-
չեալ Հանդիսի։ Թէ՛ այդ երկրին և թէ մանաւանդ Լեհաստանի Հայոց վրայօք՝
առկէ 66 տարի առաջ կարեւոր տեղեկութիւններ և յիշատակարաններ հրա-
տարակած էր տպագրութեամբ (ի վանս մեր, 1830) բազմարդիւն Հ. Մի-
նաս վ. մեր Բժշկեան, իր Ձնահապարհորդութիւն ի Լեհաստան գրոց մէջ, որ և
ճոխագոյն և շատ պատուական աղբիւր է այդ կողմանց նկատմամբ։ Այդ
գիրքը կարդացողն կ'իմանայ, որ արդարեւ Լեհահայոց գաղթականն գերա-
զանցեր է քան զայլ կողմանց, ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական
կարգօք, գրաւոր օրինօք, և իշխանօք, դատաւորօք և դատաստանարանաւ,
գրեթէ զուգահաւասար բնիկ ժողովրդեան երկրին, գուցէ և առաւելեալ
ճարտար վաճառականութեամբ, և ոչ յետնեալ ի դպրութիւնս։ Անոնց վրայօք
և յատկապէս Լեմպէրկի Հայոց՝ օտարք այլ գրած են, որոց մին Պիշով՝ գեր-
մաներէն, նախ (1862) անոնց օրինաց (ըստ Մխիթ. Գաշ. Die alte Recht
der Armenier in Lemberg), յետոյ (1864) անոնց պատմութեան (Urkunde
der Armenier in Lemberg)։ Այն իսկ այս օրերս, յետ 600 բազմադէպ
տարիներու, գիտնական բնիկք երկրին սկսած են հրատարակել՝ իրենց յա-
ռուկին հետ՝ նա և իրենց հիւրական Հայոց ձեռագործ յիշատակարանները,
լուսագրելով և լուսաբանելով, ինչպիսիք են եկեղեցիք, ապարանք, աղբերք,
դամբանք, պատկերք, և այլն. որք և անձայն վկայք են Հայոց եկեղեցական
և ուսումնական զարգացման։ — Առաջնոյն նկատմամբ, ծանօթագոյն և հըր-
չակաւորն է Նիկողայոս (Նիկոլ) արքեպիսկոպոսի դէպքն, կրօնական յեղա-
փոխութեամբ և միաբանութեամբ Հռովմէական եկեղեցւոյ, ըստ ծանօթ
պատմագրութեան Առաքել վարդապետի՝ յ'ԺԷ դարու, և ի մօտ տարիներս՝
գիտնական պաշտօնէի Ռուսաց տէրութեան Պր. Կարապետի Եզեանց (Եզոֆ)։
Նկատմամբ երկրորդին՝ հարուստ վկայական է՝ զատ յայլոց՝ իրենց եկեղեցա-
կանաց մէկուն (Տէր Աստուածատուր Պարոնչ) լեհարէն լեզուաւ գրած՝ Հայոց նշա-
նաւոր անձանց կենսագրութիւնն, տպագրեալ ի Լեմպէրկ յամի 1856։

Թէ և նիկոլեան յեղափոխութենէն ետեւ եղած է Լեհահայոց աւելի մը-
տաւորական բարգաւաճանքն, բայց իրենց հնագոյն եպիսկոպոսական գահն
և դատաստանարանք՝ տան գուշակել և հնագոյն զարգացումն. որոյ կըրնային
վկայել և 1000 կտորէ աւելի հայերէն ձեռագիր մատեանք, շատն ի Սսոյ
բերուած, որք այդ կրօնական երկդիմի դիպուածին չփոթութեանց առեն՝
ցրուեր և կորսուեր են. ո՞ գիտէ, թէ և որքան յատուկ յիշատակարանք և
պատմագրութիւնք։ — Այս տեսակ գրուածոց մին համարիմ հիմայ՝ մեր
քով գտուած Տարեգիրքն Կամենիցի, որոյ այս անունը կու տամք, որովհե-
տեւ գրոց սկիզբն պակսի. ԺԶ–ԺԷ դարուց գործ է, և հիմակուան դրից
մէջ՝ երեսաց թուակարգն 3է կու սկսի. ըսել է թէ առաջին թուղթն կորած
է. բայց ոչ այն միայն՝ այլ և շատ թուղթեր։ Վասն զի ամենէն մեծ դի-
պուածներէն մէկը, յամի 1551 Մոլտաւիոյ Հայոց հալածանքը, երկու տո-

ղով միայն յիշելով ժամանակագրողն, կ'ըսէ, թէ այդ բանդ գրուած «կայ ի գրիս յառաջագոյն». եւս և, «որպէս և գրեալ կայ ի գրին այս «առաջագոյն»: Ուրեմն անտարակոյս կորսուած է Տարեգրոցս առաջին մասն, որոյ թերեւս վերնագիր կըրնայ ըլլալ այս երկտող բանս, որ բաւրիզու մեծ գրատան հայերէն ձեռագրաց մէկուն մէջ գրուած է առանձինն. «Ցիշելիք կանուխ ժամանակաց, ապագայիցս ձեռագրութեամբ, յաղագս գա» ւառապետաց, այսինքն Պարոնաց Մոլտաւու երկրիս». Նոյն բանս լատին նարէն այլ թարգմանուած գրուած է: Ա.յս գրոցս (յորմէ չատ բան քաղած է մեր վերոյիշեալ Հայրն Բժշկեան), հիմայ Ճեացեալ մասին տարեգրութիւնն կանոնաւոր կարգով կու սկսի 1560 տարիէն, բայց ընդհատօրէն՝ անկէ դար մի և աւելի առաջ՝ ինչուան 1430էն, կարճ կարճ, և անչուշտ հնագոյն գըրուածներէ հաւաքելով, և ոչ միշտ ուղիղ ժամանակի կարգով, այլ յետ և առաջ ցրուած. զորս մենք տեղափոխելով չարակարգեմք ըստ յաջորդութեան տարեթուոց: Գրոցս մասին նորագոյն օրինակ մ'այլ կայ ի գրատան Խարիզու, յորում քանի մի հնագոյն՝ բայց ոչ նշանաւոր ազգային յիշատակք այլ կան, որ չեն վերաբերիր մեր գաղթականաց: Տարեգիրքս, զոր հրատարակեմք ի խնդրոյ վերոյիշեալ ազգասէր գիտականի Պր. Դրիգորի, թէ և հատարակօրէն Լեհահայոց յիշատակաց է, քիչ մ'այլ Մոլտաւեանց, այլ յատկապէս Կամենից քաղաքի, որոյ վրայօք կարեւոր տեղեկութիւն կըրնան գտնել փափագողք՝ ի վերոյիշեալ Ձանապարհորդութեան Բժշկեան Հօր, և առաւել եւս զուարճալի՝ Թէ՛ քաղքին և Թէ իր պաշտպան՝ Հայոց եկեղեցւոյն մէջ պատուեալ հրաշագործ Տիրամօր պատկերին, ի նորատիպ (1895) Ճանապարհորդութեան + Հ. Քերովբէի Քուչնէրեան:

Տարեգրոցս հեղինակք են հայ աւագերէցք. նախ, Տէր Յովհաննէս, 1560էն մինչեւ ի 1610, յորում վախճաներ է, 84 տարուան, 56 տարի քահանայութիւն ընելով, որոյ 29 տարին այլ աւագերիցութիւն, ինչպէս ինքնին յիշէ տեղ մի (յամի 1597). գրուածն ցուցընէ որ ոչ միայն լեզուին բաւական հըմուտ է, այլ և նախնեաց գրուածոց և ազգին պատմութեան: Կենաց եւքի տարիներուն (1605–10) յիշատակներն՝ երեւի գրած իր որդին և յաջորդն՝ Տէր Գրիգոր աւագերէց: Բայց սա յետ մահուան հօրն՝ (մեզ ոչ հասելի) Թաթար կամ Թանձր Թուրք լեզուաւ չարունակէ գտարեգիրն՝ մինչեւ ի 1616, նոյնպէս այլ իր որդիքն Տէր Օքսենտ և Տէր Յակովբ (+ 1629) մինչեւ ի 1624[1]: Ա.յսպէս ըրած են այդ Լեհահայքդ իրենց գատաստանական գրուածոց եւս, որոց 30 մեծ հատորէն աւելի՝ հիմայ պահուին Քիեւի դիւանաց մէջ. առաջին քիչ տարիներու գործերն՝ հայերէն, վերջի մեծ մասն՝ Թաթարերէն:

Լեզուին օտարութեանն և հատարակաց անհասկանալի ըլլալուն պատճա-

1 Տէր Յովհաննէս յիշէ իր մէկ քահանայ որդին այլ, Տէր Միքայէլ (+ 1592). սորա որդին այլ Յակոբ տարեագ (+ 1609). մէկ ալ տարիկ որդի (Տէր Յովհաննու) այլ յիշուի՝ վարդերես անուն: Ա.յս գրքէս գուրս յիշատակուած է Տէր Գրիգոր ի Ձանապարհորդ. Լեհատանի (եր. 138):

ռաւ՝ ցաւելով ստիպումիք Թողուլ ի հրատարակութենէ՝ վերջին մասը, թա-
թարերէնը, որ և մեծագոյն մասն է, 86 երես գրոցն, մինչ հայերէնն՝ 74
միայն է, ժամանակին Թողլով՝ ուրիշ խորհուրդ կամ հնարք մի տալու.
միայն՝ թերեւս՝ քանի մի դիւրիմաց յիշատակ՝ կամ ըստ գրուածին կամ
թարգմանօրէն և քաղելով՝ առնուիք ըստ տարբերուց, աստղանշաւ ի սկզբ-
բանն, որ իմացուի լեզուին կամ գրողին տարբերութիւնն։

Լեհաց և Վլահաց Հայ գաղթականք՝ ինչպէս և շատ ուրիշ կողմանց, ըստ
աւանդութեան, կու սկսին Անի քաղաքին և Բագրատունեաց նուաճուելէն
վերջը. իրենց գլխաւոր բնակատեղին կ'ըլլայ Լեմպերկ, որ և Լէոպօլիս, ըստ
Հայոց՝ Լով կամ Իլով, որոյ եկեղեցւոյ (հրաշահռչակ Տիրամօր պատկերաւ)
առաջին փայտեղէն չինութիւնն եղած կ'ըսուի յամի 1182, իսկ երկրորդն և
քարաշէնն ի 1363։ Այս թուականէս յետոյ՝ մեծ գրաւոր յիշատակարանք
(տես ի դիրս ճանապարհորդութեան Հ. Մինասեան). որոց կարգէն և անկո-
րուստ մնացեալ հնագոյնն՝ է Մեսրովպ կաթողիկոսի վաւերական կոնդակն՝
յամի 1364, սովորական ձեւով գլանի ծրարեալ՝ յիրար կպած երկար մագա-
զաթով. և ուղղած է գիրն առ գաղթականս՝ Լով, Լուցկա և Վլատիմիր
քաղաքաց և անոնց վիճակաց, իրենց եպիսկոպոս խաւրելով զԳրիգոր ոմն,
որմէ առջիններըը, կ'ըսէ, ինքնագլուխք էին և ոչ օրինաւորք։ Ցասն տարի
վերջը իր յաջորդն՝ Կոստանդին կաթողիկոս՝ զնոյն բան և զնոյն Գրիգոր
հաստատեր է՝ կարճ գրուածով և ստորագրութեամբ՝ Մեսրովպայ կոնդակին
ներքեւ, զոր եպիսկոպոսն բերեր էր ի Սիս՝ վերահաստատութեան համար։
Իբր տասն տարի այլ եւս (1383) յաջորդն Կոստանդնի Թէոդորոս՝ ձեռ-
նադրէ և խաւրէ նոր եպիսկոպոս, զՏէր Յովհաննէս որդի Պր. Նասրադնի.
ուրիշ կոնդակի մէջ (1389) փոխանակ Վլատիմիրի յիշէ (ի թեմս կամ ի
վիճակս եպիսկոպոսին) զՄանգիրման (Համարիմք Ադքիրման), Լով ու Լուց-
կայի հետ նա և զՄերաթ, Զեչով (Ուչաւա), Կամենից, Վլախաց երկիրն,
Պրտին (Պուտա—Բէչդ?) և Ըհկիսալայ? — Թէոդոր այս երկրորդ և նշա-
նաւոր կոնդակով վերահաստատէ զեպիսկոպոսն և մերժէ զԳրիգոր. զոր՝ Թէ-
պէտ և իր նախորդներէն այլ ընդունուած գրէ, բայց իր առաջին կոնդակին
մէջ յիշուած չըլլալով, և թաթարալեզու տարեգրի մէջ այլ յատկաբար Լուս
Գրիգոր մի (մեծ կամ առաջին) յիշուած ըլլալով, տարակուսիմք, մի՞ Թէ երկու
Գրիգոր եղած են։ Թողլով այս քննութիւնը, իբրեւ հետաքննական և հին
դիպուած մի մեր գաղթականաց, մասամբ նման Նիկոլեանին, (Թէ և ոչ
պատուաւոր, այլ ըստ ներելոյ եկեղեցական պատմութեան՝ որոյ հարկ է եր-
բեմն և զանհաճոյն յիշել և դատել ղչարն և զբարին), հրատարակեմք զայս
կոնդակ Թէոդորի՝ յառաջ քան զՏարէգիրս, և քան զայն այլ առաջ զկոն-
դակն Մեսրովպայ, իբրեւ հնագոյն հաւաստագիր մի այս մեծ գաղթականու-
թեան, միանգամայն և նախընթաց լծորդ Թէոդորոսի կոնդակին. երկուքն
այլ իրենց ուղիղ կամ սխալ տառագրութեամբ։

ԿՈՆԴԱԿ ՄԵՍՐՈՊԱԿԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ



Ս. Աստուածածին Հայոց ի Կաւևևից

ԵՐ Մեսրոպ կաթողիկոս ամենայն Հայոց. Զոր գրեալք յամենաւրհնեալ յականաւոր յաստուածատուր մեծ և գովելի մայրաքաղաքդ, ի Լաւվդ և յԱչտաւիրդ, ի Լուցկայն, և ի սահմանեալ վիճակ իւր, ի գեղ և ի վանո֊ րայք ի միասին*. Որոց այդոցիկ առ հասարակ բնակչացդ՝ մեր ի Քրիս֊ տոս Աստուած հաւատացեալ սիրելի ըստ Հոգւոյ որդոց. պատուական և օրբասէր քահանայից, աստուածասէր և գովելի պարոնացդ և խաւճայ֊ նոյդ, հարկաւոր և բարէպաշտ տանուտերացդ, խնամատուն և փառաւոր վայճառականացդ, քաղաքացնոցդ և ճանապարհորդացդ, ձեռնահըմուտ արվեստագիտացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն հայասեռն և քրիստոսադավան մերոց ժողովրդականացդ, մեծամեծացդ և փոքունցդ, արանցդ և կաննանցդ, ծերոցդ և տղայոցդ, երիտասարդացդ՝ և կուսիցդ, և ամենայն չափու հասակի. կարողութեամբն Աստուծոյ Հաւր, շնորհաւք Սուրբ Հոգւոյն, սիրովն Քրիստոսի. առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ, և աւրհնութիւն

* Ամենայն նօտրագիր բառերն ի բնագրին կարմրագեղով են գրուած, ինչպէս և կաթողիկո֊ սին ձեռնագիրն։

առաքելական. յաստուածընկալ սրբոյ Նշանէս վանիցոյ, և ի յայլ սուրբ Նշանացս, և ի բազմաշնորհաբաշխ Աչյոյս Սրբոյն Գրիգորի, և յերկնահանկէտ սուրբ աթոռոյս մեր սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և ի յայլ բազմութենէն սուրբ Նշխարացս առաքելոց և հայրապետաց և մարտիւրոսաց, որք աստ կան հաւաքած. որոց արագահաս և աքանչելագործ կարաւղ զօրութեամբն աւրհնութեամբն և աւգնականութեամբն՝ պահպանեալ փրկեսջիք ի յամենայն որոգայթից փորձութեանց վըտանկից հոգւոյ և մարմնոյ, տամք և որդաւք և ամենայն գոյիւք. ամէն:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն՝ իմ ի քրիստոս Աստուած յոյժ սիրեցեալ ըստ հոգւոյ ցանկալի որդիք, բազմաչարչար երկեամբք ծնունդք աւետարանաւն ի քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի որպէս աւրէն է ծընընդական և մահկանացու բնութեանս փոխանակել զմիմեանս, որպէս որք ունին զմարմնաւորս իշխանութիւն, այսպէս և որք զհոգևորական վերակացութիւն. և ըստ սմին աւրինակի ես ինքն իբր զգթած հայր ի վերա սիրելի որդոց՝ ի վերա ձեր տապացած սիրով ի տուէ և ի գիշերի հոգս բազումս էի վասն ձեր, թէ զիա՞րդ էր բարիոք կեանքդ ձեր ի մէջ այլազգ քրիստոնէից, առանց իմաստուն հովուի և հոգևոր առաջնորդի: Զի թէպէտ որ էք ընդ ձեռամբ մեր, այլ պարտ է հաւտին առանձին քաջ հովիվ ունել և ըստ հոգւոյ վերատեսուչ, զի մի ջնասեցին ի յանմարմին գազանէն: Իսկ այնքիկ որ մինչեւ ցայժմն կային առ ձեզ՝ առանց մերոյ աթոռոյս հրամանի, ոչ էին ուղղակի՝ այլ վարձկանք. և ես մեծաւ պաղատանաւք աւր ըստ աւրէ հայցէի յԱստուծոյ գտանել այր իմաստուն և հանճարեղ՝ ըստ սրտի իմոյ և ըստ գովելի արժանաց ձեր, կացուցանել ձեզ իպիսկոպոս և հոգևոր առաջնորդ. զոր այժմ ըստ հայցուածոյ մեր լուաւ Աստուած աղաւթից մեր. և գտաք գովելի և իմաստուն զարժանապատուեալ և զառաքելաշնորհ եպիսկոպոս՝ զՏէր Գրիգորս, եկեալ առ մեզ, և աւրհնեցաք ձեզ եպիսկոպոս, և եղաք զինք ձեզ հովիւ և հոգևոր առաջնորդ. Այլ և մերով բարձր առաքելական և հայրապետական ամէներևելի հրամանաւս պարգևեցաք ըզձեզ՝ ըզԱւետյտվիրտ իւր սահմանեալ վիճակաւդ՝ Լուցկայիւ, իւր սեփական թեմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի, որպէս մեր քաջ սիրելի որդոյ. և մեծաւ պատուով և ջերմն սիրալից հայրական գթով առաքեցաք զդա առ ձեզ մերով ամէներևելի աւրհնութեամբ հրամայական գրովս, իբր զփեսա ելեալ յառագաստէ՝ ի գրկաց մաւրս կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ. և աւգնականութեամբ և առաջնորդութեամբ Աստուծոյ գայ առ ձեզ. Զոր և մեր աղօթանուէր պաղատանաւք հայցեմք ի յամենակալ արարչէն ամենայն արարածոց, աղօթիւք Սրբոյն Գրիգորի, զի եկեալ մեծաւ փառաւք գտցէ զձեզ զամենեսեան առհասարակ սիրոյն Քրիստոսի, խաղաղութեամբ չինութեամբ, հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ, լի ամենայն բարութեամբ. կալ և չրջիլ ի մէջի ձերում ուրախութեամբ, առաքելաբար խրատել և ուսուցանել զձեզ, գնալով յաւրէնս և ի պատուիրանս Աստուծոյ անարատութեամբ. և լիցի մեզ բարեաց

յիշատակ։ Տացէ և զանձն իւր աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն՝ սրբու-
թեամբ, արդարութեամբ, հնազանդութեամբ, խոնարհութեամբ, և յամենայն
գործս առաքինութեան, առնելով ինքն և ապա ուսուցանել ձեզ առնել. Պա-
հեսցէ զանձն իւր անբանաբաս առ մարդիկ և անդատապարտ առ Աստուած։
Կալցի առաքելաբար իշխանութիւն ի վերա ձեր՝ կապելոյ և արձակելոյ ի
յերկինս և ի յերկրի. զմեղուցեալսն և զամբաստամբեալսն յաւրինացն Աս-
տուծոյ և ի կանոնաց սուրբ եկեղեցւոյ և զհակառակաւղսն՝ իրաւամբք խրա-
տել, սաստել, կշտամբել և յանդիմանել զմեզս, մինչեւ զղջասցին և ցու-
ցանեն պտուղս ապաշխարութեան և հնազանդութեան, մինչեւ դարձցի ի չա-
րէ։ — Կոչեսցէ զարժանաւորսն բազում քննութեամբ ի կարգ և յաստիճան
կիսասարկավագութեան, սարկաւագութեան և քահանայութեան, ի սպա-
սաւորութիւն աստուածային խորհրդոյն, և ի տեսչութիւն ժողովրդեանդ։ Եւ
ի վերա այսր ամենայնի լիցի այցելու որբոց և այրեաց, աղքատաց և կա-
րաւտելոց. ամենեցուն լիցի կարէկից սիրովն Քրիստոսի։ Պահեսցէ հաւա-
տարմութեամբ և արդեամբք հնազանդութիւն առ սուրբ աթոռս, (ինքն) և
յայլորդք իւր։ — Որով և դուք ամենեքեան՝ հոգեւոր որդիք մեր առ հասա-
րակ ի Քրիստոս, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ սրբազան արքիպիս-
կոպոսդ ձեր ըզՏէր Գրիգորդ՝ զիմ սիրելի որդեակդ, յոյժ սիրով և մեծաւ
պատուով ընկալարուք, որպէս քաջ սիրելի որդի մեր, և հրեշտակ Աստու-
ծոյ, և որպէս առաքելական այր, ի դրանէ սուրբ աթոռոյս առ ձեզ առա-
քած. և ամենայն հոգևորական խրատու դորա որ ի շահ և յաւգուտ լիցի
ոգոց ձեր, հնազանդութեամբ ունկնդիր լերուք, որպէս իմոյ անձինս, սիրով
Հոգւոյն Սրբոյ։

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունս աթոռոյ, զհաս տանց քա-
հանայից և զընտանեաց նոցա, և զերախայրիս կալոց և հնձանաց, զ՚րրա-
նուէրսն և զտեառնականսն, և զիրաւունս մատղաց կարգաւորաց, յանկար-
ծամահից և կենդանեաց, և զայլ ամենայն իրաւունս կենաց և մահու, ան-
թերի և առանց տրտնջման, զուարթ և առատ սրտիվ տուք ի ձեռն դորա։
Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ կամ դիմադարձ լիցի սմա և հրամանիս
մեր, կամ յայլազգի մատնել, կամ խորել յիրաւանց. և մի՛ ոք իշխեսցէ ի
քահանայից՝ հակառակ լինել այսմ հրամանի, և կամ այլ եպիսկոպոսի
բարեկամ լինել, և կամ հակառակ դմա. զի որ ոք լիցի, մեր հայրապետու-
թեան հրամանաւս՝ նայ ի կարգէ լուծել ենք և բանադրել. և զարձակումն՝
ի Տէր Գրիգորէ առցէ, նոյն և թէ աշխարհական լինի. զի որ զայս արաս-
ցէ՝ կրեսցէ անիծիւք զպատիժն Կորխա և Դաղանա, զկայէնի և զՅուդայի.
և հնազանդեալքդ՝ աւրհնեալ եղիցին։ Որով աւրհնեալքդ ի յարքեպիսկո-
պոսէդ ձեր ի Տէր Գրիգորէդ՝ աւրհնեալ եղիցիք յԱստուծոյ և ի մէնջ. կա-
պեալքն և աւրոչեալքն՝ ի նմին մնասցեն, և մինչեւ հնազանդութեամբ վըղ-
ջասցին։ — Վասն որոյ ի մտանել դորա և գրավորական աւրհնութեան հը-
րամանիս մեր առ ձեզ, իջցէ և շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկինից ի

վերա ձեր եւթնպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ. Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ. Տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն, և ավագաց ձեր ի վերա քաղցրութիւն. բուսոց և ծառոց տնկոց այնողութեամբ և քալ պտղաբերութիւն. պայճառեղէն անասնոց ձեր՝ անսղալ ծննդականութիւն և ամենայն բարեաց լիութիւն և առողջութիւն: Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր գործնականս և արդենականս, գործել զարդարութիւն, և զամենայն գովելի տեսակս առաքինութեան: Եւ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան առ հասարակ հոգւով և մարմնով. որպէս զի զառաւրայս բարեօք վայելելով, և երկնից թագաւորութեանն և արքայութեանն հասանիցէք ձերսւք ննջեցեալքն, ընդ ամենայն Սուրբս, ի Քրիստոս Ցիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ամենայն ի յաւիտեանս:

Շնորհեցաք և ի ձեռն արքեպիսկոպոսիս ձեր Տէր Գրիգորիդ՝ ձեզ պատուական պարգեւս հոգևորականս, զեղն սուրբ աւծութեան՝ ըզսրբալոյս և զաստուածագործակ զսուրբ Մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն յորդէգրութիւն Հարբն երկնաւորի, և ի ժառանգակցութիւն Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյնն ի ճակատ նշան հաստատութեան, և ի յաւծումն քահանայից, և ի նորոգումն եկեղեցւոյ: Եւ յամենայն ամի նոր առցէ ի մէնէ, և զհինն ի նորն խառնեսցէ. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Գրեցաւ գիր աւրհնութեան հրամանիս մեր ի մարմնաւոր ծնընդեան Քրիստոսի ի ՌԳՃԿԴ (*) ամին, և ի Սրբոյն Գրիգորի ՌՀԴ ամի. և ի թվիս ՊԺԳ, ի յամսեանն յունվի. ԺԵ. ի մեր կաթաւղիկոսութեանն՝ որ է ամ և կէս և աւր ի (քսան): Եւ վասն առաւել հաստատութեան՝ իմով կամաւ ձեռնադրեցի ստորև մերով սովորական կարմիր ձեռնագրաւս. և կընքեցաւ վերոյ տիրական մեծ մատանեաւս, կամաւք բարերար մարդասիրին Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

† ՄԵՍՐԱՒՊ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅԱՍՏԱՆԱՑ

Կոստանդին կաթողիկոսի համառօտ գրածն ի ներքեւ Մեսրովպայ գրածին, ըստ իր ըսածին՝ «Գիր հոգևորական հրամանի աւրհնութիւնն է և » կրկին հաստատութիւնն», իր նախորդին վերոգրեալ կոնդակին. յորում կ'իմացընէ որ անոր ընտրած եպիսկոպոսն Գրիգոր՝ եկաւ առ ինքն, կոնդակն ի հետքը բերելով. Կոստանդին այլ ստորագրելով (կաթողիկոս ամենայն Հայոց) ի ԺԵ յանուարի, ի թուին ՊԻԳ (1375) կու հաստատէ զնոյն Գրիգոր յառաջնորդութիւն իւր թեմին, և օրհնելով զթեմականն՝ կու դարձընէ ի տեղն: Վիճակաց անուանքն այլ գրէ, Լով, Աղատամիր և Լուցկայ:

* Թուականաց տառնորդական թիւերը՝ կամ հին կամ նոր ձեռք մի փոխեր է, տան տան թիւ աւելցընելով, որպէս զի կոնդակին ներքեւ գրուած Կոստանդին կաթողիկոսի թուականին չարմարին. ըստ այնմ և ամսոյն օրը յանուարի ԺԵ ըլլեր է, բնագրին մէջ ինչ ըլլալն չիմացուիր:

ԿՈՆԴԱԿ ԹԷՈԴՈՐՈՍԻ ԿԱՔՈՂԻԿՈՍԻ

ԱՅՍ մեր դիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն Թէոդորոսի ծառայի ծառայից Քրիստոսի Տեառն մերոյ. Շնորհաւք և ողորմութեամբ Նորին եպիսկոպոսապետի Մեծաց Հայոց և պատրիարգի ամենայն Արեւելից [1]. Զոր աւրհնութեամբ և հայրական հոգեբարձութեան գթով՝ գրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ յանուանի և յակամաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լոռի և յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Զիլոֆն, ի Կամենեցն, ի Լուցկայն, ի յԱլաթէմուրն, ի Մանքրման, ի Վրդիսաց երկիրն և ի Պոլինն, ի յԸնկիսալայն, և ի յայլ ամենայն թէմն իւր առ հասարակ: Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ յոյժ սիրեցեալ ցանկալի և պարծանաց որդւոցդ. պատուական և սրբասէր քահանայիցդ, աստուածասէր և բարեպաշտ Պարոնացդ և ավագաւորացդ, փառաւոր խաւճանոյդ և Պուռճէնոյդ [2], իմաստուն վաճառականացդ, հարկեւոր և բարեգործ տանուտերացդ, ձեռնահմուտ արուեստագետացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն հայասեռ և քրիստոսադաւան մերոց ժողովրդականացդ, արանց և կանանց, ծերոց և տղոց, երիտասարդաց և կուսից, մեծամեծաց և փոքունց, և ամենայն չափ հասակի: Որոց այդոցիկ ամենեցուն ի միասին առ հասարակ մեծաւ փափաքմամբ, կարողութեամբն Աստուծոյ Հաւր, զաւրութեամբ Որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, առաքեմք ողջոյն սիրո ի մէնջ և աւրհնութիւն առաքելական. ի յաս-

1. Շատ մեծ և նշանաւոր սխալ, չգիտեմ թէ մեր ուրիշ կաթողիկոսք այլ պտրծածած են զայս, քան սոնց ասորի կամ քաղկէացի պատրիարքաց, որք յԱնտիոք նստելով կիրենք Արեւելից պատրիարք կ'անուանէին. իբր կի քանի որ ի սկզբան միայն երեք էին պատրիարքունք, Հռովմայ, Աղեքսանդրիոյ և Անտիոքայ, սա Ասիոյ կամ Արեւելից եկեղեցական գլուխն էր. երբ չատցան պատրիարքունք անհամաձայնք ի գաւանութեան, սոնն յԱնտիոք նստողք՝ այն նախնական սխալսն այլ իրենց սեփականեցին, այլ մեծ և ընդարձակ կոչմամբ ՊԱՏՆԱՅ ԱՐԵՒԵԼՔՑ: Հայաստան այլ ըստ հին երեք բաժանման աթոռոցն՝ Անտիոքայ պատրիարքութեան վերաբերեալ էր. երբ ինքնագլուխ եղաւ՝ նման ուրիշներու, թէպէ թէոդորոս օրինաւոր համարած է զինքն այլ այնպէս կոչել, կամ թողուլ որ իր զլիրն կամ կոնդակագիրն՝ այնպէս գրէ ի սկզբան. բայց ինքն իր յաւուրն ձեռօք աւորագրած է կաթողիկոս ՊԱՏՆԱՅ ՀԱՅՈՑ, որպէս էր, և ոչ ՊԱՏՆԱՅ ԱՐԵՒԵԼՔՑ, որոց չէր:

2. Դեռ Հայոց Կիլիկիոյ Ռուբինեան հարստութեան չորրորդ կայ, հազիւ երկվեցեակ տարի անցեր էր տէրութեան վերջանալէն, և դեռ ողջ էր Լեւոն Ե. անանց քաղաքականօրէն աբեւմտեայց նմանողութեան նմուչիկ մ' է այդ Պուրճեոզ (Bourgeois), յոգնաբար Պուրճեան:

տուածընկալ սուրբ Նշանէս Վանկկոյ, և ի չնորհաբաշխ Աջոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանդէտ սուրբ աթոռոյս առաքելական. Որոց արագահաս աքանչելագործ կարող զաւրութեամբն և աւրհնութեամբն՝ պահպանեալ փրկեալիք յամենայն վտանգից փորձանաց հոգւոյ և մարմնոյ, տամք և որդովք, և ամենայն գոհութ. ամէն։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի որդիք մեր ի Քրիստոս, բազմաչարչար երկամբք ծնունդք աւետարանին ի Քրիստոս Աստուած՝ Սրբոյն Գրիգորի. զի ըստ հայրական ջերմն սիրո մեր զոր ունիմք ի վերա ձեր, հանապազ հոգ մեր դուք էք ի Տէր, եթէ ոչպէս կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և արտաքուստ ներհակաց. զոր և աղաւթիւք հայցեմք յԱստուծոյ և ի մեր Սուրբ Լուսաւորչէն, պահել զձեզ խաղաղութեամբ հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ և ամենայն բարութեամբ։

Եւ այլ ծանիք մեր ըստ հոգւոյ որդիք, զի այդ Գրիգոր ասացեալ չեպիսկոպոսդ՝ որ ի Լովդ դարանակալ նստի, նա ի մեր նախնեացն ժամանակն ի Քրիստոս հանգուցելոցն՝ ի Տէր Մեսրաւպա և ի Տէր Կոստանդիա, բազում անսահման բաներ գործեաց. զի առանց իր ձեռնադրողին հրամանաց՝ յայլոց վիճակ կու ձեռնարկէր, և ամբարտաւանութեամբ կու գնայր. յաղագս որո բազում խրատական գրեր առաքեաց առ նա, և նա ոչ սգաստացաւ։ Ցետ այնորիկ վաղճանեցաւ Տէր Մեսրովբ, և հաստատեցաւ Տէր Կոստանդին. իսկ այդ ասացեալ չեպիսկոպոսդ Գրիգորդ՝ ևս առաւել յաճախեաց ի յանուղղեա վարս իւր. որ և եհաս համբավ չարութեան նորա առ Տէր Կոստանդին. որ և յոյժ վիրաւորեցաւ նմայ. սակայն ներեաց, թերևս յուղութիւն դարձցի։ Ապա յետ այնորիկ եղ և եկն ասացեալ չեպիսկոպոսդ՝ առ Տէր Կոստանդին. և այնպէս երևեցոյց զինքն կաթողիկոսի, որպէս ասէ Քրիստոս, եթէ գայցեն առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքո են գայլք յափշտակողք. նայ այնպէս արար. զի սուտ խոնարհութեամբ և անտապատիր խաբէութեամբ պատրեաց զմեր նախնին, և կրկին էառ չրջաբերական Լովին։ Իսկ յետ սակաւ աւուրց իմացաւ Տէր Կոստանդին զնորա անուղղեա գործերն, և ծանեաւ ըզնայ որպէս ասէ Քրիստոս, եթէ, ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա։ Ցըղեաց մարդ ըզհետ նորա մինչև ի Վահկայն, և ետ առնուլ ի նմանէ ըզչրջաբերականն և զամենայն գրերն, և գնա հերքեցին։ Իսկ այդ չարեաց արմատ ասացեալ չեպիսկոպոսդ՝ եկն դարձեալ ի քաղաքն. և զերկաթին՝ զոր սպունկանաւ[1] ծածկեալ ունէր՝ նա ի գործ չարութեան էած. զի գնաց յարեցաւ յիշխանն, և կաշառս ետ նոցա, որ եկին իշխանութեամբ զկաթողիկոս ի կամաց հանին, և առին զմա չրջաբե-

1. Մուխ և անսովոր բառիւ ըսուած. Սպոնկանն՝ թուխ իմն թէ ոչ սպունգ՝ այլ պատեան նշանակէ, որով մէջ ծածկեր էր չարութեան կամ կարելու գործիք երկաթը. այսպէս գուշակիլ ասյ և հին բժշկարանի մէջ Սպոնկոս գրուածն, ներքին վիրաց դարմանի համար. «Զփորն խարկէ սպունկռով». իսկ Քիմիագիրքն՝ աւելի սպունգի կարծիք ասյ, ըսելով. «Ծաղովկեղի սպունգառով կամ փետրով»։

բական։ Զի ընդ այն ժամանակն իշխանքն յերկուս են բաժանել, նա երկաւ զի մի պատճառ չարեաց լինիցի. և այնր աղագաւ ետ այդ ասացելոյդ չըրջարերական։ Ցետ այնորիկ մեր նախնին Տէր Կոստանդին գրեաց ասացեալ Գրիգոր չեպիսկոպոսիդ՝ գիր բանադրանաց, որ առաւել հատու էր քան ըզերկսայրի սուսեր, որ մինչեւ ի պակասել չնչոյն հատանէ. և արգելեաց զինքն զասացեալ Գրիգորն ի յեաւթն խորհրդոց Սուրբ եկեղեցոյ, և կապեաց ընդ անիծուք զինքն և զիւր համախոհքն. և հրամայեաց ամենեցունն՝ որ զնա ամենեւին կարգաւոր չընդունիցին։ Ապա լուեալ զգլխովին չարն զոր արար, զի կամեցաւ այդ ասացեալ չեպիսկոպոսդ՝ զքաղաքացիքդ՝ զոմանս խաւճայք՝ ի թագաւորական ցասումն արկանել, և յոյժ վիրաւորեցաւ. և խորհէր թէ որպէս բնաջինջ արասցէ ըզնա այդի. և դեռ ևս ի սոյն խորհըրդեան էր, նա եկն Տէր Յոհաննէս Պր. Նասրատնին որդին՝ վասն եպիսկոպոսութեան այլո վիճակի[1]. զոր իբրև ետես զսա՝ յոյժ ուրախացաւ, և ձեռնադրեաց զՏէր Յոհաննէսդ՝ Լովիդ, և ամենայն վերոյ յիշեալ թէմիդ եպիսկոպոս, և առաքեաց գալ առ ձեզ։ Սակայն յետ աւուրց ինչ եհաս վաղճան մեր նախնոյն և փոխեցաւ յաշխարհէս. և կամաւքն Աստուծոյ և ընդրութեամբ նորին՝ հաստատեցաք ի սուրբ աթոռս և մեք կաթողիկոս ամենայն Հայոց։ Եւ ընդ աւուրն ընդ այնոսիկ հանդիպեցան առ մեզ երկու եղբայր ի Լովէդ, տանուտէրք, Ովէտ և Անպէտ անուն[2]. մեք արարաք այս ասացեալ Գրիգորիդ խնամք, և գրեցաք յինքն, թէ Ե՛լ և արեկ ի յաթոռս, որ իյաթոռոյս չնորհացն ի քեզ հասանի. նայ զմեր հրամանքն ոչ ընկալաւ, և ոչ առ մեզ եկն։ Ցետ այնորիկ և մեք առաքեցաք նվիրակ ի Լովդ. Նա այդ ասացեալ չեպիսկոպոսդ՝ զմեր նվիրակն չէր ընդունել, և՛ոչ յեկեղեցի Թողել էր որ մտել էր։ Կրկին առաքեցաք զնվիրակն. Նայ ի սադրելոյ նորա սպանաւ մեր նվիրակն. և մեր գրերն առ ինքն գտեալ եղև. և երևեցաւ որ ինքն էր գործել։ Եւ պատճառ մի այլ ևս գործեաց ընդդէմ կանոնաց. զի զմեր կընքեալ գիրն բացեալ և կարդացեալ, և ապա յայտնեաց. որ և մեծ պատժոյ արժանի է. և զայն ևս ներեցաք. և առաքեցաք զվարդան երեց նվիրակ ի Լովդ, և կոչեցաք զինքն առ մեզ։ Նայ այսքանի ժամանակ զՔրիստոսի արեամբ գնեալ ժողովրդեանդ զպարգևքն առեալ էր, և սակաւ ինչ ի ձեր պարգեւացն տուել էր ի նվիրակն. և յետոյ բըռնութեամբ յետ կամեցաւ առնուլ, և աղմուկ էր արարել հետ մեր նվիրակին։ Եւ մինչ մեր նուիրակն ի յառ ձեզ էր, նա եկն Տէր Յոհաննէս և կու գնայր յերու-

1. Այս խօսքէս և վերը Գրիգորի համար ըսածէն, թէ՝ «յայլոց վիճակ կու ձեռնարկէր», դուշակուի թէ Հայոց արեւմտեայ գաղթականաց երկիրներուն՝ Լովէն զատ ուրիշ եպիսկոպոսական աթոռք այլ կային՝ այն ժամանակ, ինչպէս ի Խուսաց նահանգս, ի Ֆիւռւ, Սերայ, Աժաէրխան, և յԱւստրիական կայսերութեան՝ ի Թոլմաք Ունգարիոյ։ Ի ԺՉ և ԺԸ դարս յիշուին եպիսկոպոսք նա և ի Յոմանխա, բայց այս ԺԻ դարու՝ ոչ, կամ մեզ ծանօթ չեն։

2. Առանց դալէն ի Սիս՝ ինչ օգուտ կամ առիթ դառ կաթողիկոսն, չըսեր. բայց կ'խնացուի որ նոր տեղեկութիւններ առաւ։

սաղէմ. մեք հրամայեցաք, թէ յորժամ դարձցիս յԵրուսաղէմայ՝ նայ առ մեզ եկն. զի գրել եմք որ այն ասացեալ Գրիգորն գայցէ, որ ձեզ դատաստան առնեմք[1]: Իսկ Տէր ցոհանէս դարձաւ յԵրուսաղէմայ և եկն առ մեզ, և կացաւ բազում ժամանակ ի մեր դուռս. մինչև եհաս առ մեզ մեր նվիրակին գիրն, թէ զայս ինչ արար հետ մեզ, և ինքն չէ ի գալ: Մեք ծանեաք զայդ Գրիգոր չեպիսկոպոսիդ զամբարտաւանութիւնն, որ մեր սուրբ աթոռոյս գլուխ է վերուցել, և ըստ արժանաց իւրոց պատժեցաք զինք, ըստ ասացելոյն, եթէ գչարան չարաւ կորուսցէ, և զայգին տացէ այլոց մըշակաց՝ որ արասցէ զկամս Նորա. նոյնպէս և մեք արաք[2]. և վերըստին հաստատեցաք զՏէր ցոհանէսդ ձեզ եպիսկոպոս, որպէս մեր նախնին հաստատել էր. և պարգևեցաք զԼոռին իւր վիճակոնն, և զԼուցկայն, և զայլ ամենայն թէմն զոր վերոյ յիշեալ ենք, Տէր ցոհանէսիդ թէմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի: Եւ առաքեցաք գրաւորական աւրհնութեամբս մերով գալ առ ձեզ. և առաքելաբար շրջեսցի ի միջի ձերում, վարդապետել, խրատել և ուսուցանել յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, կալ անարատութեամբ ի տուէ և ի գիչերի. տալով զանձն աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ըզձեզ ուսուսցէ սրբութեամբ արդարութեամբ, երկիւղիւ, սիրովն առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ աղքատասիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որոց և այրեաց, և ամենայն կարօտելոց կարեկից, սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ զարժանաւորն և ըզվկաեալսն ի կարգ և յաստիճան կեսսարկավագութեան, սարկավագութեան և քահանայութեան: Կալցի և հրամանավս մեր ի վերս ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկինս և յերկրի. զմեղուցեալսն և զապըստամբեալսն յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սրբոց հարցն՝ կշտամբել և յանդիմանել, և ըզզղջացեալսն ընդունել ապաշխարութեամբ: Որով և դուք ամենեքեան առ ի դմանէ հովեալք և արածեալքն ի վայրս դալարոյ առաքինութեան և ի ջուր հանգըստեան պատուիրանացն Աստուծոյ, զաստուածապատիս և զառաքելաշնորհ յոյժ սրբազան արքեպիսկոպոսդ ձեր զՏէր ցոհանէսդ, զսիրելի և զհաւատարիմ որդիս մեր՝ մեծաւ պատվով և յոյժ սիրով ընկալարուք, որպէս զհրեշտակ Աստուծոյ և որպէս զառաքելական այր: Զի հրամանավս մեր դա՝ Տէր ցոհանէս՝ է ձեզ եպիսկոպոս. որպէս մեր նախնին հաստատեաց, և որպէս նա պարգևեաց յայնժամ, նոյնպէս և մեք հաստատեցաք այժմն, և է և եղիցի: Դուք ամենեքեան սիրելի որդիք մեր ի Քրիստոս, ամենայն հոգևորական խրատս դորա՝ որ ի շահ և յաւգուտ է ոգւոց ձերոց, հնազանդութեամբ ունկնդիր լերուք:

1. Յայտնի ուրեմն որ երկու եպիսկոպոսքն հին և նոր՝ վիճէին ի վերայ աթոռոյն, և ժողովուրդն այլ երկպառակէր:

2. Հետագրիվռ է ըսածն. ինչ կերպով արդեօք պատժեց՝ այդ ամբարտաւան և անհնազանդ եպիսկոպոսը, և ինչպէս զչարն չարաւ կորոյս:

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունք՝ զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռս, զհաս տանց քահանայից և զամենայն ընդանեաց նոցա, զերախայրիս կալոց և զհընձանաց, զՏեառնականս և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանեաց և զյանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորայ, զուարթ և առատ սրտիւ. որպէս զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ սմա կամ հրամանիս մեր, և արգելցէ յիրաւանց տալոց կամ խորհեսցէ, կամ յագդ անկանի և ուժ հասուցանէ Տէր Յոհաննէսիս. զի որ ոք որ հակառակ լիցի սմայ, նայ այնպիսի առցէ յԱստուծոյ զանէծան կաճնի, զմահն Յուդաի և զխաչահանուացն: Որով աւրհնեալքն ի Տէր Յոհանիսէս՝ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և որոշեալքն՝ ի նմին միասցեն, մինչև զղջասցին: Վասն որո ի մտանել դորա և աւրհնութեան հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ մեռանիս, խնդէ և չնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր էաւթնապատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն, զպատուհաս և զտարաժամ մահ. տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. և ամենայն բարեաց ձեր լիութիւն և առատութիւն. և աւրհնեսցէ զձեզ զամենեսեան Քրիստոս Աստուած մեր:

Շնորհեցաք ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական՝ զերն աւծութեան, զաստուածագործակ սուրբ մեռոնն, ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանին՝ յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի, և ի ժառանգակցութեան Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյն ի ճակատ նչան հաստատութեան յաւծումն քահանայութեան, ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, աւրհնելոյն յամենայն յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ գիր աւրհնութեան բարձր հրամանիս մեր՝ ի յըստ ի մեզ մարդեղութեանն և ծննդեանն մարմնով Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳՃԶ ամի, և ի Սրբոյն Գրիգորէ ՈՂ ամի. եւ մեծ թուիս Հայոց ՊԼԷ ամի. ի մեր նըստիլս ի սուրբ աթոռս՝ որ է ամ Է և ամիս ութ և աւր ԺԷ, ի յաւգոստոս ամսոյ ԺԸ. ի փառս Քրիստոսի: Եւ վասն առաւել հաստատութեան և ավտալո՝ ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր ձեռնագրովս, կնքեցաւ վերոյ ամէներևելի ծաղկաւետ մեծ մատանովս. կամաւք բարերարին Աստուծոյ աւրհնելոյն ի յամենայն յաւիտեանս. ամէն:

† ԹԷՈՒՈՐՈՍ ՇՆՈՐՀԱԻՓՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ:

Auf dem Deck des Linienschiffes „Prinzregent Luitpold“

ՏԱՐԵԳԻՐՔ ԿԱՄԵՆԻՑԱՅ

1430. Թվ. Ֆռանգաց ՌՆԼ. վախճանեցաւ Ռնեալ Վիդուլդ, որ էր քաջ և արի ընդդէմ թշնամեաց իւրոց. զոր և զԴադարն (Թաթարք) մինչեւ իւր դախ-դըն (աթոռ տէրութեան՝) որ կոչի Ղրիմ, մինչեւ ի այն հալածեաց և կո-տորեաց, և զ՝ 20,000 Դադարն գերի վարեց, և եթեր ի այսմ Լիդվայի եր-կիր (Լիդուանիա), և անդ բնակեցոյց զնոսա. որք են այժմ ի Վիլնային գաւառն՝ այնոքիկ են, յորէն յայնմանէ:

1434. Թվ. Ֆռանգաց ՌՆԼԳ. Եկայլոյ (Եակելլոն) էառ զՄաճրաց երկրին զդախթն. այս Եկայլոյ երեք եղբայր ունէր, Վեդուլդ, Շվիտրհայլոյ և Կո-բէկալ:

1444. Թվ. ՊՂԳ. Կամինիցս ջրհեղեղ եկաւ, և զբերդն աւերեց, և զՂըրա-ղագքն տարաւ. և շատ պակասութիւն արաւ աշխարհի. մարտի 22, օրն կիրա-կի, ի պարսնութեան Տիարիխին: Եւ ի նոյն ամին խաբեց Մանայիլն զԻլախանին (Լեհք), և կամեցաւ զբերդն տալ, և ոչ ետուր:

1448. Թվին. ՊՂԶ. Նստաւ ի թագաւորութիւն Քազիմիր (Զ) թագաւորն, որ էր հայրն Զիկմոնդին. և վախճանեցաւ ՋԽԱ. (1492):

1450. Թվ. ՊՂԹ. Մեծ կռիւ արաւ Եկայլոյ ի հետ Բրուսին. և յաղթե-ցին զԲրուսն:

1454. Թվին. ՌՆԾԴ. Գազմիր թագաւորն կռիւ արար ի Վոյնցային տակն:

1467. Թվ. ՉԻԶ. Ծնաւ Զիկմոնդ թագաւորն. որ է որդի Գազիմիր թագա-որին, յունուարի առաջին օրն, որ է նոր տարի:

1475. Թվ. ՉԻԴ. Տաճիկքն զՄեչովն այրեց. զոր յետոյ Շահքան վոյվո-տան զիւրեանք կոտորեց մինչ իսպառ:

1475. Թվ. ՉԻԴ. Տաճիկ ազգն էառ զկաֆա՝ ի ձեռաց Ֆռանգացն ազգին:

1483. Թվ. ՉԼԲ. Ան ազգն Տաճիկ էառ ի քրիստոնէից ձեռացն զԿիլին (Քիլիս) և զԱքէրմանն:

1484. Թվ. ՉԼԳ. Եկաւ Թուրքն և զԿիլին և զԱքէրմանն էառ իւր ձե-ռաց տակ:

1485. Թվ. ՉԼԴ. Օգոստոսի ամսոյն Շահճան վոյվոտան Օլախի (Վլահք) երկրին՝ հոլտովադ (հպատակութիւն) արաւ Քազիմիր թագաւորին Իլախաց երկրին։

1485. Թվ. ՉԼԴ. Երկուսում անգամ Թուրքն զՍեչովն այրեց։

1494. Թվ. ՉԽԳ. Զձըհուտ ազգն ի այսմ Լիդվայի երկրէն վարեցին և հալածեցին։

1497. Թվ. ՉԽՉ. Հոկտեմբ. 25. ըզՕլպարախդ թագաւորն Իլախաց՝ անհաւատ և խաբերայ ազգն որ կոչի Օլախ, կոտորեցին ի Պուքովինան, Շտեֆան պարոն։

1497. Թվ. ՉԽՉ. Իլախ թագաւորն Օլպարախդ (Ալբերտ) անուն՝ Օլախաց երկրի վերայ գնաց։

1498. Թվ. ՉԽԷ. Եկաւ Մալգոչն? Տահիկք։ Եւ ի նոյն ամին եկաւ Շտեֆան վոյվոտայ Օլախաց՝ ի վերայ Կամենիցոյս. և պատնէշ արաւ ուխ չաբաթ։

1502. Թվ. ՉԾԱ. Վաղճանեցաւ Տէր Խաչատուր Եպիսկոպոսն, որ էր ազնիւ և աստուածաբան վարդապետ։

1503. Թվ. ՉԾԲ. Ըստըմպօլն՝ զտէր Յովհաննէսն, զտէր Դաւիթն, զտէր Սարգիսն՝ որք էին յԷջմիածնայ Նվիրակք, նահատակեցան, մտանելով ի ձեռս.. և վասն անմեղութեան նոցա ի յերկնից մեծապանծ լոյսն ճառագայթեց ի վերայ մարմնոյ նոցա. զոր Տէր Աստուած տացէ մեզ ամենեցուն ըզնոյն մասն և բաժին՝ զոր նոքա ընկալան ի Տեառնէ։

1506. Թվ. ՉԾԵ. Օգոստոսի 19. Վաղճանեցաւ թագաւորն Ալէքսանդր (Ա.) Իլախաց աշխարհի։ — Եւ ի նոյն ամին երեւէր ագեւոր աստղն։

1507. Թվ. ՉԾԶ. Նստաւ ի թագաւորութիւն Զիկմոնտ (Ա.) բարեպաշտ թագաւորն մեր, փետրուարի վեց. և վաղճանեցաւ Թվ. ՉՂԻ (1548), ի օրն սրբոյ Զատկին։

1509. Թվ. ՉԾԷ. Փետրուարի 21. Փնաղ Կոստանդին կոտորեց զԴաղարն 1200 ի Պիլըյձէոքովչն (Belozerka ի Տաւրիդիան նահանգի), Հօրօտիշչան (Horodiszcxe 'ի Զէրքասք գաւառի Ռուսաց), և ազատեց 9000 գերիք ի ձեռաց անօրինաց։

1509. Թվ. ՉԾԸ. Վարդավառի ուխ աւուրն եկաւ Պոհտան Օլախի վոյվոտան Իլովի վերայ։

1514. Թվ. ՉԿԳ. Սեպտեմբերի 8, եղաւ կռիւն Օրշային (Orsava Սերպիոյ)· զոր Աստուծոյ աջողութեամբ գնաց Կոստանդին 14,000 հոգով կոտորեց զՄոսքովցիքն 80,000։

1519. Թվ. ՉԿԸ. Եղաւ Սագալին կռիւն, զոր անհաւատ ազգն կոտորեց Դադարն զԻլխան, վասն չմիաբանութեան քրիստոնէիցն։

1519. Թվ. ՉԿԹ. Ընաւ Չիկմոնդ Թագաւորն՝ որ կոչի Ակուստ. վասն այն կոչի Ակուստ՝ զի օգոստոս ամսոյն ընծայեցաւ. և Թագաւոր օծեցին ի կենդանութեան հօրն, որ էր Թվն. ՉՀԹ (1530) յորժամ օծաւ, փետրուար 20։

1520. Թվ. ՉԿԹ. Սուլէման Խոնդիքարն նստաւ ի կայսրութիւն։

1524 Թվ. ՉՀԳ. Եկաւ Դադարն յԻլովին վերայ, և էանց ի Ս. Գէորգայ սալհէէն, որ է Ըռզի (Ռուսաց) եկեղեցի, և գնացին մինչեւ ի Եպրասլովն, և դարձաւ. զոր զՄիքլաչն սպանեցին զԻլովցին՝ Սդեցքոյին զորդին։

1526. Թվ. ՉՀԵ. Սեպտեմբեր ամսոյ. ան ազգն Տաճկաց Խոնդքարն Սուլէյման՝ կոտորեց զՄաճար ազգն, և զԹագաւորն Լուտվիկ փախստական աբար. և ոչ գիտացին Թէ զի՛ եղեւ Թագաւորն, և զՊուտին քաղաքն՝ որ էր դախթին Մաճարաց՝ էառ։

1527. Թվ. ՉՀՉ. Գնազ Կոստանդին կոտորեց զԴադարն, Քէրօրմանէն այակոյս հինգ միլ, և էին 25,000։

1530. Թվ. ՉՀԹ. Գնազ Կոստանդին վաղճանեցաւ. զոր բազում քաղաքացիքնս ցուցեալ փոխեցաւ առ Քրիստոս։

1535. Թվ. ՉՁԴ. Բան Դառնովոսքիյ էառ զԱդրայոտուպն զՄոսքովի բերդըն, օգոստոսի 29։

1536. Թվ. ՉՁԵ. Ի կամենից քաղաքն մեծ քամի ելաւ, և 133 տուն կործանեց. և ի նոյն ամին երկիր շարժեցաւ։

1538 Թվ. ՉՁԸ. Սեպտ. 17. Եկաւ Խոնդքարն սուլտան Սուլէյման՝ ի Օլախաց երկիրն, և զԲենդր պարոնն ի յերկրէն եհան, և ընկաւ փախուստական։

1538. Թվ. ՉՁԸ. Ապրիլի 7, օրն Աւետման Ս. Աստուածածնին՝ արեգակն խաւարեցաւ։

1545. Ի Թվ. Հայոց, ՉՂԴ. Մարտի 11 օրն, Ս. Թորոսի չար(աթուն), մեծ ջուր եկաւ և զՀայու Լրաշաչքն աւերեց, և զերկու խապախն (Լրմուղ?) քաղքին, և այլ շատ պակասութիւն առաւ քաղքին (կամենիցու)։

1545. Թվ. ՉՂԴ. Ապրիլի 20. Պարոն Հրիհորն փառաւոր և զեղեցիկ զանկակ երեւ ի Ս. Նիկողայ եկեղեցւոյ, յիշատակ իւրին և իւր հաւասար ննջեցելոց հոգւոն համար. ամէն։

1547. Ի Թվին Հայոց ՉՂՉ. Օգոստոսի 14, օրն Ս. Աստուածածնին, եկն Ֆրանգի եպիսկոպոսն ի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ, և քարոզեց երկու անկամ։

1567. ի Թվին Հայոց ՋՂԶ. Սեպտեմբեր ամսոյ 10 Կամենից քաղքին մեծ մահ եղաւ. Ֆրանգ ազգն և Ըրուզ ազգն խիստ չատ մեռան։ Ցետոյ այլ կրկին անկամ մեծ մահ եղաւ Թվին ՋՂԷ. և այն յետի մահուն այլ չատ մեռան քան զառաջինն։

1547. ի Թվին Հայոց ՋՂԶ. Կամենից քաղաքին ջուր՝ կանանչ դարձաւ, որ բնաւ այդպէս բան չէր եղեալ. զերայ մահուն ցուցակ էր։

1548. ի Թվին Հայոց ՋՂԷ. Ապրիլի մէկ, օրն Զատկին կիրակի, բարեպաշտ Թագաւորն մեր Զիկմունդ առ. Աստուած փոխեցաւ. Աստուած զիւր հոգին լուսաւորէ։

1548. ի Թվին Հայոց ՋՂԷ. Բարեպաշտ Թագաւորն մեր Զիկմունդ Ակուս-դուս՝ ի Թագաւորութիւն նստաւ. զոր Տէր Աստուած ժամանակն երկայնակեաց և զիւր մէկ օրն հազար այնէ։

1549. ի Թվին Հայոց ՋՂԸ. Տէր Ստեփանոս Ըստամբօլու պատրիարգն եկն ի Կամենից, և Կամենիցն քարոզեց։

1549. Թվ. ՋՂԸ. Տէր Վարդերեան Թորոսին որդին՝ մէկ գեղեցիկ և փառաւոր զանկակ երեսք ի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ, յիշատակ իւրին նըն-ջեցելոցն։ Եւ ի նոյն ամին եկաւ Դաւիթ վարդապետ մի, և Տէր Մելքիսեդեկ կրօնաւոր ի Կամենից քաղաքն, և քարոզեց. և իւր սարկաւագ մի կայր Ազատ անուն, մահին վաղճանեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1550. ի Թվին Հայոց ՋՂԹ. Օլախի պարոնն հեծեալ ղրկեց Պարին վերայ, որ զԲրէգվիչն բռնէին. և աստուածային զօրութեամբ և Ս. Հոգւոյն կարողութեամբ, երկու երեք հարիւր հոգով զՕլախ հեծելն չարդեց. զորն չարդեց, և զայլն ի չուրն ընկղմեց, աստուածային օգնականութեամբ։

1551. ի Թվին Հայոց Ռ. Տէր Մակար եպիսկոպոս և Տէր Յակոբ եպիսկոպոսն և Տէր Մարկոս կրօնաւոր նուիրակ եկան։

1551. Թվ. Ռ. Շտեփան պարոնին զորդին՝ անունն Իւոն՝ վոյվոտայ էր, բերին որ Օլախաց երկիրն տէր դնէին, և ոչ դրին. քանզի երկիրն չտըրվեցաւ։

1551. ի Թվին Ռ. Օլախի երկրին Շտեփան պարոնն՝ Օլախի երկրին զՀայերն եհան ի հաւատէ, և զեկեղեցեստան քակեց զամէն բովանդակ[1]։

1. Այս ծանօթ պժգալի պիսուածքին վրայօք՝ դաբ մի վերջը երեմիա չէլէպի Քէօմիւրճհան, եղբայր Երան. Կոմիտասայ, գրէ այսչափս. « ի Թվականութեանս Հայոց Ռ.ին, ի » Սեչով քաղաք երկիր Ուլախին, Թագաւորն Ստեփան՝ դաւանութեամբ Յունաց, բռնութեամբ » կալաւ հազար տուն ի Հայոց ազգէ, գրով, զաթճացանել յաղանգս իւր, որք ընդ նորա խր-» խանութեամբ էին. և որք ոչ գտթան՝ նահատակեցան։ Յորոց մինն ի քաղմաց խաչատուր

1552. ի թվին Հայոց ՌԱ. Յունվարի 14. Տէր Սահմանոս Էջմիածնու կաթողիկոսն եկն ի Ֆռանգիստանու ի Լով քաղաքն, և անդ վաղճանեցաւ։

1552. Թվ. Հայոց ՌԱ. մարտի 10, օրն հինգշաբթի. Կամենից քաղաքն մեծ կրակ ընկաւ, և 16 ալբաւուտի (կրպակ) երեցաւ, և եօթն տուն Հայու։

1554. Թվ. ՌԳ. Խոնդքարն Սուլէյմանն զՄուստաֆան ղիւր մեծ որդին էսպան։

1556. Թվ. ՌԵ. Լուսինն և աստղն ընդ յիրար վակեցան, մայիսի 12, օրն երկուշաբթի. զոր տեսեալ բազմաց՝ և Աստուծոյ փառս տուեալ հիացմամբ մեծաւ։

1560. Հայոց Թվ. ՌԹ. ի Կամենից քաղաքս՝ ջժամայոյցն որ կոչի սահաթ, նորեցին և մեծագոյն չինեցին։

1560. Հայոց Թվ. ՌԹ. Հոկտեմբեր 15. Ոմն Տեսրոթ անուն յայտնեցաւ այսմ ժամանակիս. որ և զինքն Օլախի երկրի վերայ պարոն անուանեց. և էր ինքն Սըրպ, այսինքն Արնաւուէթ. յետոյ գնաց ի քրիստոնէից կայսրն մօտ Ֆէրնանտըը (Ֆերտինանտոս Ա.), և կայսրն ետ նմա ոչ բազում ինչ զօրս, և զամենայն կուլոյ անօթք քալ պիտանիք, և թէ հրեղէն և թէ բոցեղէն, և թէ սրեղէն. և առաքեաց զինքն՝ որ գայր տիրէր ի վերայ Օլախաց երկրին. վասն զի Օլախի երկրին մարդիքն խիստ մեծ նեղութեան մէջ էին, և բազումք չարչարանս կրէին ի իւրեանց պիղծ պարոնէն, որ կոչէր Բէդրա Օլե-

» քահանայ ոմն, որ զերկու աչսն հէտն, և զերկու ձեռն և զոտն և զլեզուս և զհոտոտելիս » և զչրթունսն՝ նման ցակովկայ սրաբ։ Եւ Պալքոյ անուն ումեմն զհակառակ քերթեցին. և » այլ պէսպէս կտտանս սպանին և զբազումս։ Դահիճք նոցա քահանայք էին Ուլախաց ազգէ, » և զվերադրոք սոցա չհպիսկոպոսն Իւրեանց, հրամանաւ պիղծ թագաւորին Սահմանի. յորմէ » էառ »···· (պակասէ)։

Յառաջ քան զերեմիա՝ ժամանակակից և ակնատես քերդողն Մինաս Թոխադցի՝ երկար ոտանաւոր Պատմութիւն մի գրած է այս դէպքերուս, որ ծանօթ էր մեզ կէս դար այլ առաջ, բայց երբեւ նորայայտ ինչ հրատարակեցաւ թէ՛ բնագիրն ի Հանդէս Ամսօրեայ (Բ, 39·62, և Թ, 97·131), հանդերձ կարեւոր տեղեկութեամբք, և թէ թարգմանութիւնն ոտանաւորէն։ Եթէ ասոր ցեղէն սերեալ չէ, զարմանալի է դար մի վերջը ուրիշ Մինաս Թոխադցի վարդապետի մի երեւնալն, և նոյն այն կողմերուն՝ ուր ողբերգական դէպքն եղած է։ Յետոյն ծնողքն այլ յԷջուին, Զէլիֆաար Ալէքսան և խաչատրուն. նախ յամին 1641 այս Մինասայ համար գիրք մի գրուած է ի Տփղիս· յետ 36 տարիներու (1676) ինքն գրէ· « Մինաս՝ բանի սպա» սաւոր, երկրին Պուդուանայ առաջնորդ, որ զգիրքս (Մաշտոց) դտի եաշ քաղաքն, կտրա» տեալ ի յայլազգեաց և առի յիս, և զպակասն գրեցի ձեռօք իմովք », և այլն։ Տասն տարի վերջը 1687 ի Լով՝ խոստագիր կու տայ մէկու մի, որ անոր ի Պոդանն մեռած եղբօր մէկ գիրքը գրկէ իրեն· ուրիշ մէկ գիրքն խաւրեր էր ի Թոխատ։ Մեր այս ժամանակագրութեան կարգն և հեղինակին խօսքն, թէ առաջուց գրած էր Շահֆանին հալածանքը, պատշաճ երեւցուցին, որ առաջին Մինասայ քերդուածն անցընենք այս տեղ ի կարգի ծանօթութեան գործոյս, որ գուցէ և ամենուն ծանօթ չըլլալով՝ կըընայ հաճոյանալ, թէ և ծանօթութեան նիւթն՝ միչտ անհաճոյ։

քեսանդրն. և էր ինքն գոռոզ ուել տառնապատիկ քան զՑուլիանոս՝ ի վերայ քրիստոնէից. մանաւանդ եւս առաւել ողորմելի Հայ ազգին գլուխն բազում փորձանս յարոյց. զոր ոչ է արժան խօսել և կամ լսել ումեք. որպէս և կայ ի գրիս յառաջագոյն[1], որչափ ինչ արար եղկելոյ Հայոց ազգին. բայց ինքնին Ցէր հատուսցէ չարին ըստ չարութեան իւրում, և ինքն լիցի վրէժխնդիր իւր ամենակարող զօրութեամբն: Եւ յորժամ եկն զօրովք իւրովք այս ա-ռաջասացեալ Ցեսրոթն, և մերձեցաւ ի յայդ խուժադուժ երկիրն Օլախացն, նա այդ խաբեբայ չըներն՝ Օլախի մեծարարքն՝ ստեցին զիւրեանց երդումն, որպէս և գրել էին նմա, թէ դու գաս՝ նայ մեք զմեր պարոն կու սպաննեմք և քեզ կու հնազանդիմք, որ դու լինիս մեր վրայ պարոն: Նա այս պեղծ Ցու-

1. Ոչ յառաջ այլ յետոյ քիչ մ՝ աւելի երկար գրուած է, ինչպէս ակնհէ ընթերցողն: Ա-կայն հաւանական է թէ երկարօրէն այլ գրած ըլլար հեղինակն, նա և Շահֆանին հալածանքը:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՑ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻ ՀԱՑԵՐՈՒՆ

Ի ԹՕԽԱԹՑԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԱՍԱՑԵԱԼ

Գոչեմ առ ձեզ ողբերգական
Հառաչելով յոյժ լալական,
Քահանայք և աշխարհական,
Ծունդըր դըրեք ամենեքեան.

Ի թվին Հայոց հազար ամին
Տաճն և վեցն էր օգոստոսին,
Առաւածածնի փոխման օրին,
Ի տէրունի օր կիրակին.

Ի այս[1] վերջի ժամանակի՝
Փորձանք եկաւ Հայոց ազգի,
Վասն մեղացըն մեր յայտնի,
Զոր գործեացն ի յաշխարհի:

Հիւսիսական կողմ աշխարհի
Փղբրիկ երկիր կայ Օլախի,
Բազում Հայք կայր իւրեանց միջի
Լաւ քրիստոնեայք և անուանի.

Երիցանիքն ուսած էին,
Ժամատեղիք պայծառ էին.
Խիստ փառաւոր Հայեր կային.
Ցանկարծ փորձանք եկաւ նոցին:

Ալախ ազգին մեծ վոյվոտան
Անուամբ կոչէր ինքն Ըչոքճան 2,
Մանուկ տիօք ամբարտաւան,
Բազում չարիք արար մարդկան.

Նա հաւատոյն էր Հոռոմի,
Դաւանութեամբ Քաղկեդոնի.
Նոր չար գործեաց Հայոց ազգի
Զոր ոչ ընաւ եղեւ երկրի.

Զար թագաւորքըն առաջին
Այսպէս չարիք ոչ արարին,
Զոր դա գործեաց Հայոց ազգին
Լուսաւորչի փոքրիկ հօտին:

Առաւածածնի օրըն փոխման,
Ալախաց ազգին չար վոյվոտան՝
Իւր պարոնայքըն միաբան
Սկիզբ քաղքի բերդըն մրատն.

Եպիսկոպոսաք իւրոց ազգին
Առաքեցեք ի միաբին.
Նստան ի հաց ի սեղանին
Ուրախանալ ի միասին.

1. Աւ. Օ. Եւ այս:

2. Մականուանեալ Որբէս:

լիանոսս փութանակի ժողովեց զամենայն երկիր իւր, և մեծ և բազում զօրս կացոյց ընդ ձեռամբ իւրով. և ինքն ևս էլ ի խոդինն. և անդ ևկաց երկաւ երեք օր: Խորհուրդն պեղծին այդ էր, որ թէ հզօր ձեռամբ գայր այդ ոմն Տեսրոթ իւր վերայ, նա ինքն անցնէր այս կողմն և փախստական երթայր առ թագաւորն մեր Զիկմունդ. բայց ոչ ունէր բազում ինչ զօրս. և զոր ինչ ունէր՝ և զայն եւս ահացուցին մեր իշխանք Վոյվոտայ Եալլովիցքին, որ երկեաւ և փախստական գնաց առ կայսրն Ֆերնանտ: Եւ այս անօրէնն գարձաւ, և մեծաւ ուրախութեամբ գնաց և նստաւ իւր ժանդ պարոնութիւնն. և զի ոչ էր տաւեալ ի վերուստ՝ ոչ ինչ կարաց առնել. և վասն որոյ գրեալ իսկ է, եթէ, Ո՛չ կարէ մարդ առնել (առնուլ) յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի վերուստ:

Խորհուրդ արին իւրեանց միջին,
Զարիք բազում սերմանեցին.
Շատոց սխ կայր իւրեանց սրտին
Սուրբ հաւատոց Լուսաւորչին:
Ի լուսանալ օր կիրակի
Ըշտեֆան Պարոն ձիաւորի,
Գայ մըտանէ յեկեղեցի
Աստուածածնի Հայոց ազգի.
Ելաւ ասիք ի խոսանին,
Զխորհուրդն առաւ ի յիւր ձեռին,
Յանկարծակի զարկ ի գետին
Եւ չար ասիք կոխան արին.
Ըզգուրք մեռանն Էջմիածնին՝
Զայն ալ վաթեց վերայ գետնին.
Շունք և մարդիկ կոխան արին,
Եւ ապիք մեր խարշաւեին.
Զինչ որ գերք կայր յեկեղեցին
Եւ զմեծ պատկերքըն խորանին,
Խաչեր և սկի մաղըմանին
Ոսկեջըրած և մեծագին,
Ծաղովեցին ի մխաին,
Տարին զերբն ի Վէստեւին [1].
Ըզվարդապետն և զաբեղնին՝
Զեռըն կապած բանել այդպէսին:
Սեչով քաղքին Հայոց ազգին
Զեկեղեցիքըն փակեցին.
Զգրուններն ամենըն մօրթեցին
Որ չիմանին սուրբ անօթինին:
Ի լուսանալ միւս օրին
Եկաւ Պարոնն ի Վէստեւին,
Առմաշ [2] զերկից Հայոց ազգին
Բանալ տուր զեկեղեցին.

Զինչ անօթ կայր իւրեանց միջին,
Խաչեր, չապիկք և չուրջառներն,
Ոսկեջըրած և մեծագին
Բաժկամաններն և քուրվառներն,
Արծաթեայսա աւետարան,
Շարակնոցներ և աղտմոսարան,
Ցայսմաւուրք և Տաբէդիրք
Գանձատեր, Մաշտոց, և այլ գըրեան,
Զինչ անօթ կայր եկեղեցին՝
Զամենեսեան ժողովեցին.
ԶԱստուծոյ տունըն կողոպտեցին
Տարան զերբն ի Վէստեւին.
Վարդապետին և աբեղային
Շատ չարչարանք նոցա տուին.
Աղէկ մարդիկ ի մէջ մըտան
Հազար ճոռով ազատեցին:
Զար հրաման արար կրկին
Բներել եռուր զթօխեր բերդին,
Սեչով քաղքին զեկեղեցին
Մեծ մեծ թօփով աւերեցին:
Վ՚արըն մեղայ մեր անքընին
Փորձանք եկաւ Հայոց ազգին,
Աչխարհականք ու երիցանին
Ամենեքեան փախուստ առին.
Շատ ոք փախան մորին մըտան,
Ոմանք քաղերըն [3] պահուեցան.
Մերկ և բոպիկ ի չուրջ եկան
Եւ լալագին մոլորական.
Հարք ի յորդւոց բաժանեցան,
Որ այս չարիս հանդիպեցան.
Բուն սիրելիքըն քակտեցան.
Վա՛յ և եղուկ միաքերան:

1. Պահարան, Հանդերձատուն:
2. Ձօրական, Ջոռը:
3. Թուխ գետնատուն: Արիշ Ո. Քալէր:

1561 Հայոց թվ. Ի֊ի֊որդի, նոյեմբեր ամսեանն ԺԳ֊որդի։ Փառք Աստուծոյ Հօր անմահի, և Որդւոյն Աստուծոյ Միածնի, և Ս. Հոգւոյն ճշմարտի, այժմ և յաւէտ յաւիտեանս. ամէն։ Որ ետ մեզ կարողութիւն համբերութեան իւր ամենազօր մարդասիրութեամբն. և հասոյց զմեզ յայսմ ժամուս, զոր տեսաք զհալածումն և աւարառումն նեղչաց և հալածչաց մերոց. որպէս և գրեալ կայ ի գրին այսմ առաջագոյն, եթէ որչափ փոքճանս և հալածումս յարուցին ի վերայ ողորմելի և անտիրացեալ ազգիս մերոյ, այդ խուժադուժ երկրին իշխանն, որ կոչի Օլախաց, ամբարիշտ և պիղծ պարոն Ալէքչանտր, որ էր որդին կորստեանն և մարդն անօրէնութեան, ժառանգ դժոխոց և Ղեռան կարապետն, հպարտացեալ ի վերայ փառաց իւրոց, իբրեւ զատատնայ. համարձակեցաւ ետ պիղծ և լիրբ անզգամութեամբ զայսչափ անբաղում առմաչեր սփռեցան
Քաղքին արնէրն և մորեսան,
ԶՀայոց ազգն զորս որ գըտան,
Թէ քահանայ թէ աշխարհական,
Զոմանք փոսէն ի դուրս հանին,
Շատք ի մորին գըտան քերին,
Կանայք բազում և աղջկունին,
Նորահարսներ ու երիցակին։
Զոմանց ըղձեռըն կապեցին,
Եւ շատք մազէն ի քարշ քերին։
Բերին ի դուռըն Վեստեհին,
Անառանելի չարչարեցին։
Այն վոյվոտայն պիղծ Շահֆան
Որ ինքն եղաւ դիւաց զարան,
Ասաց. Հայեր դուք միաբան,
Ունկըն[2] գըրեք ամենեքեան.
Այդ ինչ հաւատք որ կու պահէք,
Ամէն ազգէ դուք ի դուրս էք,
Որ դուք ամէնքըդ մոլար էք,
Եկէք ի մեր հաւատն մտէք[3]։
Ասցին Հայերըն միաբան.
Լըսէ Պարոն մեր Շահֆան,
Մենք քրիստոնեայ ենք միաբան[4]
Եւ մկըրտած ի յաւազան։
Պիղծ վոյվոտան Օլախ ազգի
Պատասխանեաց Հայոց գասի[5]
Եկէք մտէք հաւատս Հռոմի,
Շատ մեծութիւն տամ ես ձեզի։

Ի լուսանալ չորեքշաբթին՝
Պարոնն եկաւ ի Վեստեհին,
Եւ վինչ Օլախ կայր Սեչովին
Ժողովեցան ի միասին.
Այլ չար հրաման արար կրկին,
Զինչ որ գըրեանք կայր Վեստեհին՝
Զարծաթեղացա զաւետարանին
Զանգին գըրեանք Հայոց ազգին,
Հանին ի դուռն ի Վեստեհին
Եւ փայտի պէս կըտորեցին.
Այն անօրէն պիղծ Օլախնին
Զամէն գըրեանքըն այրեցին։
Շահֆան Պարոնն ի Վեստեհն էր,
Ի բարձր տեղիք նստել էր.
ԶՀայոց օրէնքըն բամբասէր,
Վկրուստ հայէր և ծիծաղէր։
Սեչով քաղքի վեհերեցին
Եւ ըզվաներն Հայոց ազգին՝
Զարն այրեցին և աւերեցին,
Մինչեւ ի հիմըն հասուցին.
Զամէն զանկակն և պատկերքնին
Տարան իւրեանց եկեղեցին,
Ասին. Աւժան չէ այս Հային,
Դուքա վայել են մեր ազգին.
Ցետոյ հրաման եկաւ կրկին,
Ասաց, Բերէք ըՀայ երիցնին,
Զվայթ ատնուտերքն և Պըրկարնին[1]
Զկանապէ և աղջկունքն ի միասին.

1. իշխանաւոր կամ հոգեւոր, ինչպէս Procureur.
2. Այլ Ո. Աւետ.
3. Եկէք ամենքդ Օլախ եղէք
ի մեր հաւատքն մկըրտեցէք։
4. Քրիստոնեայ եմք ամենեքեան։
5. Ազգի։

օրէնութիւն գործել, զոր գրեալ կայ ի գրիս։ Իսկ բարեգութ և մարդա-
սէրն Աստուած վասն այսչափ նորա անօրէնն չարագործութեանն համբերեաց,
և ոչ ի նոյն ժամու զնա պատուհասեաց. Նայ և մեզ ետ համբերութիւն մինչեւ
իսպառ. յաւել իւր բարձր բազկաւ և հզօր ձեռամբ յարուցանել ի վերայ նո-
րին անօրէնութեան դէմ զայս ինչ։

Որմն Տեսբոթ անուն դուքս յայտնեցաւ ի յաշխարհն ֆրանգաց առ քրիստոնէից
կայսրն, որ կոչի Ֆերտինանտոր. և եկաց առ նա ի մանկութենէ հասակէ մին-
չեւ ի չափ կատարեալ հասակի. ապա յետ այնորիկ եգիտ իւր արժան զոմն
մեծ իշխան՝ որ կոչի Վլասքից. և էր ի Լեհից աշխարհէն այդ Վլասքին, և
ընդ նմա միաբան և համախոհ եղեւ։ Եւ էր այս Տեսբոթն դուքսն կարի աղ-
քատ և անզօր. վասն զի անօրէն ազգն Իսմայէլացիքն որք կոչին՝ զնորա
հայրենիք ափշտակել էին զամենայն ինչ. և ապա այս բարեպաշտ ոմն որ

Ի Սէչովա ջրերէրին
Զաթմանէտուն [1] սահմանեցին,
Եւ ի վերայ չատ ծեղ լըցին,
Փոքրիկ դռնակ իրեն թողին։
Կրկին ասաց Հայոց ազգին,
Թէ ով չմանէ հաւատ Հումին՝
Լընում ըզձեզ յայս ամն միջին
Ի ի հուրն այրեմ զամենեսին։
Քահանայք և աշխարհական
Կանայք աղջկունքն ամենեքեան՝
Բոլոր սրտիւ յօժարեցան,
Ի հուրն այրէին միաբան [2]։
Այն անլիծած ամբարտաւան
Օլախ ազգին չար Վլյվոտան,
Եահս Հայոց ազգըն լըսան՝
Որ այրմանէ ոչ վախեցան.
Զար հրաման եհան կրկին,
ԶՀայոց ազգըն ժողովեցին,
Ըզվոյթ, պրկար, զերիցանին,
Զկանայք, աղջկունքն ի միասին.
Պեղծ անլիծած չար Օլախնին
Զնոքա ճորով մերկացուցին,
Հումի հաւատ դաւանցուցին,
Եւ ակամայ մըկըրտեցին։
Պարոնն ասաց. Ես իշխան եմ,
Եւ չարաչար ըզձեզ տանջեմ.
Զհուրիդ կտրեմ, զայվիդ հանեմ,
Դարձեալ կրկին ըզձեզ կնքեմ։

Զոմանց մօրուքն ածիլեցին,
Զոմանց մազերըն կտրեցին.
Անառանելի չարչարեցին,
Ցետոյ կրկին մըկըրտեցին,
Զաքեղանէրն և զերիցին։
Զքէշնեղն [3] ածիլեցին,
Հումի հաւատ մըկըրտեցին,
Աշխարհակնի կերպ հագուցին.
Զեպիսկոպոսըն քըմնեցին,
Մազն և մօրուքն ածիլեցին,
Եւ հաւատոց զինքըն հանին,
Եւ մեծ փողպատ վիզն ագուցին։
Զկանայք լալով տանէն հանին,
Եւ զաղջիկներն ի միասին.
Զամենեհան մկրտեցին,
Հումի հաւատ դաւանցուցին.
Զգըլխոցներուն հագուստ առին
Եւ զանձնեղուն ըզշուպանին [4],
Ի Օլախ կերպ ագուցին
Ու ի գլխինին տոլպանս դըրին։
Զտանն տասլչանքըն [5] քակեցին,
Զհանգըստատեղն աւերեցին.
Օլախի պէս տանմանեցին
Զտուն և զհանգիստ Հայոց ազգին։
Օլախ իրիցներ չուրջ եկին
Եւ զՀայերուն տուն օրհնեցին,
Տանտանեղ [6] և զգաւաթնին
Օրհնած ջրով լուանալ տուին։

1. Փայտաշէն խրճիթ, հիւղ։
2. Միւս Ձ. Թէ հուրն այրինք մենք միաբան։
3. Ըգկուլակ։
4. Ա.յլ Ձ. չապիկն հանին։
5. Մահճակալք, անկողինք։
6. Միւս Ձ. Ըզամաններն։

կոչէր Վլասքիյ, բազում գաւառ ունէր, և[1] բերդ ու քաղաք և գիւղք, զամենայն զոր ինչ ունէր՝ եղ գրաւական, և էառ բազում դանձ. և Աստուծոյ օգնութեամբ զօրք ժողովեց և կացոյց զօրավարս և զօրագլուխս, հազարապետս, հարիւրապետս և յինանապետս և տասնապետս. և զղէնս պատերազմի, սրեղէն, հրեղէն և բոցեղէն, բազում և անթիւ անօթք։ Եւ էառ զայս դուքն և եկն ի այդ խուժադուժ երկիրն իշխանին վերայ, որ կոչէր Ալեքչանտր, կրկին անկամ, որպէս գրեալ կայ ի գիրս՝ զառաջադոյն գալուստն իւր յառաջին թղթին, եթէ որպէս դարձուցին և փախուցին Լեհից մեծարարքն, վասն չնորհ առնելոյ այդ կրկին Ցուլիանոսին. բայց մեք զերկրորդ գալուստն նորա այժմ գրեմք։ Եւ յորժամ եկն և մերձեցաւ ի այդ անօրէնին երկիրն՝ զօրովք և ամենայն ընչիւք իւրովք, փութանակի էանց զՈւրլու գետ. և այդ անօրէնն ի Պոթչանն (Պոթուչան) էր, բայց ի վերայ ճանապարհին զօրքն իւր եղեալ էր ասպատակութիւն ոչ բազում ինչ, որ դի-

1. Երեք չորս գրի չափ բան մի աւրուած է այս տեղ, դուցէ յիշած տեղացոյ թիւն էր։

Ո՞վ է տեսել այսպէս խեղճ բան՝
Որ այս երկիրըս գործեցան.
Վա՛յ և եղուկ միաբերան
Որ այս չարիս հանդիպեցան,
Ցառաւ եկաւ Հայոց ազգին՝
Այս Օլախաց երկրի միջին.
Զեկեղեցիքն աւերեցին
Եւ ըզգըրեանքըն այրեցին։
Այսպէս չարաչ պղծըն Վադէս,
Ցուլիանոս, Հողեփեանէս,
Մարկիանէ և Հերովդէս,
Եւ Փարաւոն ու Աղեկանդրէս։
Բազում չարիք զոր գործեցաք
Եւ յօրինաց ի գուրս ելաք,
Եւ յաղօթից մեք ձանձրացաք
Զաղօրումութիւն տալըն մոռացաք 1.
ԶԱստուած սըրտէ ոչ սիրեցաք,
Ըզհայր և զմայր ոչ պատուեցաք,
Ընկերաստաց մեք խիստ եղաք,
Եւ զհիւրն ի տուն ոչ ընկալաք,
Ոխակալ և խռով կացաք,
Անհաշտութեամբ զօրն անցուցաք.
Բամբասանաց տեղի տըվաք,
Որ այս չարիս հանդիպեցաք։

Լալով ասեմք, թէ Տէր մեզայ.
Դու ապաւիչ՝ մեզ ողորմեա,
Ի այլազգաց վրեժ ապատեա
Ի այս ցաւէս չուտ փրկաստեա 2։
Դարձեալ կրկին հրաման հանեց,
Ամէն քաղաք առմաչ ղըրկեց,
Ըզգլուխ Հայոց զամէն քոնեց
Զեկեղեցին ամէն մոհրեց.
Զերեցանին, զվոյթըն ձևնեց,
Եւ ակամայ վերունք կնքեց.
Լուսաւորչին հաւատն հանեց,
Մեծ հրամանաւ ապրատղրեց.
Թէ, զինչ Հայ կայ՝ թող մըկրտին,
Կանայք ապշկունքն ի միասին,
Թող Հայ չկենայ ի յիմ երկրին 3,
Ամէն Հռոմի հաւատ լինին.
Եկեղեցիք զինչ կայր Հայի
Խոթին, Սերաթ, յԱսպազարի 4,
Վասլով, Պոչտան, յՈւռումանի,
Ամենքեան հիմնէն քակի։
Սաստիկ հրաման եհան կրկին.
Զեկեղեցիքն աւերեցին.
Եւ զինչ անօթ կայր կողոպտեցին
ԶՀայոց գրեանքն այրեցին։

1. Միւս Ο. Տալն ուրացաք։
2. Դուռ կազդուրեա։
3. ի մեր երկրին.
4. Եազպազարի. որ է ծանօթ քաղաքն Իշլ։

տէրն զճանապարհն նոցա. և ինքն անկեալ էր ի արբեցութիւն, ի յուտել և ի ըմպել, և իւրովք ամենայն իշխանօք, փողովք և տաւուլովք յաղագս ուրախութեան, զոր լուաւ զհամբաւ գալոյ: Եւ յորժամ եկին հասին այդ ապօրէնին պահապանացն, ի այնժամ կոտորեցին զնոսա. և յաւել եւս այլ զօրք, զորս կացուցեալ էր ի վերայ ճանապարհի նոցա. և զնոսա կոտորեցին: Ցետ այնորիկ գնացին փախստական և գուժ հասուցին այդ անօրէնին, եթէ ահաւասիկ է, մերձեցաւ զօրքն նոցա: Իսկ նա իբրեւ լուաւ զբանս գուժկանն՝ ուրախացաւ. ետ կատաղի հպարտութեամբն (պատասխանի), և ասաց նախարարաց իւրոց, զի պատրաստութիւն ունիցեն, և զրահեսցեն և զինուսցեն, և երթիցեն ընդդէմ նոցա: Եւ ինքն պիղծ նոյնպէս պատրաստելով

Պռչան [1] քաղքին եկեղեցին
Ոսկով պատկերք գըրած մէջին,
Շատ մալ խարճած վրայ նորին
Յիշատակ էր Քրխատասուբէին.
Վկյվոտային աղաչեցին,
Հազար կարմիր տանք քեզ ասցին,
Ըսկիք, խաչեր և զանօթներին,
Մի աւերեր զեկեղեցին:
Պիղծ վկյվոտան նոցա ասաց,
Չխնդիրք նոցա ոչ կատարեաց.
Անպատճառ քակել ասաց,
Թէ չէ՝ դլխոցդ էք դուք զրկած:
Գաղաք մի կայր Ռուումանի,
Ինքըն փաքրիկ բարով իւի,
Շատ Հայ ազգ կայր ի յայն տեղի,
Խիստ ուղվայթօրք և անուանի:
Երից մի կայր իւրեանց մէջի,
Էր շատ գանձով բարով իւի,
Հեզ և հանդարտ ամենայնի,
Չիւրամեծար էր ազքատի.
Տարին առեան վինքն կացուցին,
Ասցին, Թէ մուտ հաւատ Հռոմի,
Թէ չէ՝ առնչինք անկրնարին,
Բանտ և ի մահ աղջումըղչին:
Տէր խաչատուր քահ և արին՝
Պատասխանեաց ի դէմ նոցին.
Չևմ ուրանալ զհաւատըս հին,
Չդաւանութիւն Լուսաւորչին:

Ի Մինթեանայ երկրէն ելայ,
Հաւատս համար պանդխտացայ,
Ըզիմ հաւատն ոչ ուրացայ,
Ի յայս երկիրս քնակեցայ:
Եւ այլ բազում բաներ ասաց,
Թէ, ձեր հաւատն ու դուք կորած,
Ամէն ազգէ աչքց ելած,
Օլախացըն [2] հաւատծն նեխած:
Պատասխանեց պիղծ վկյվոտան,
Տօ, Հայ երեց ամբարտաւան,
Արի եղիր [3] քաղկեդոնեան
Որ չըտանջեմ զքեզ ի յատեան [4]:
Դարձեալ հրաման եւս Ծրինկանին,
ՉՏէր խաչատուրըն տանջեցին.
Չեռվին և վոտըն կապեցին,
Երիտ աչքունքըն [5] փորեցին:
Կրկին ասաց, Թէ ուրացիր
Չկուսաւորչին հաւատն ընտիր.
Թէ չէ՝ գլուխդ կտրուսիր,
Դուսար և որդիքդ խեղճ արիր:
Ամենեքեան ասաց, զնացէք
Չդուսար և զորդիքըն կարդեցէք,
Չատն եւ զտեղին թողնեցէք.
Ցետոյ գերեցըն կնքեցէք:
Երբոր եկան պիղծ առաջնին,
Կին և արդայքըն ճիչ բարձին.
Կալով յատըս [6] անկան ծնոդին
Ագաչելով կտկտալգին.

1. Պռչան, Պոթուշան:
2. Օլախաց ազգ:
3. Դարձիր օրէնք:
4. ի յատեան:
5. Եւ գերկու աչքըն:
6. Ցատս:

զամենայն զէն կռվոյ՝ որչափ ունէր, զամենայն հրամայեաց զի ընդ ինքեանս բերիցեն, եթէ սրելէն և եթէ հրելէն. և ի նոյն ժամ ժողովեաց ընդ իւր զամենայն պատերազմող և քաջ զօրքն իւր, որ էին անթիւ բազումք: Եւ եկն (ել) ընդդէմ նոցա. և ահա և նոքա հասին ընդդէմ նորա. և զտեղի առին ընդդէմ միմեանց, ոմն այս կոյս և ամն այն կոյս: Եւ ահա սկսաւ պիղծն հպարտանալ իբրեւ զԲելիար. և սկսաւ բարձր բարբառով հրամայել անօրէն զօրաց իւրոց, եթէ՝ Ուրախ լերուք զօրք իմ և իշխանք, զի ահա եկին Թշնամիք մեր ի ձեռս մեր. բայց խնդրեմք ի ձէնջ վասն Աստուծոյ, որ բնաւ զոք չի սպաննէք. զամենեսեան կենդանի կալջիք և կապեսջիք. զի ես ձեռամբ իմով անհնարին տանջանօք սատակեցից զդոսա:

Եւ անօրէնն բարձեալ էր երկու սայլի ցիցք սրեալ, և էր Թուով 2000

Արա՛ ըզկամք Թագաւորին,
Եւ մկրտիր հաւատս հեռոին.
Թէ չէ՝ զանմեղ գաւինք քոյին
Սըրոյ հարակ տուիր զահէին:
Մըննդական գուէն չարժեցաւ
Եւ իւր սըղոց ողբմեցաւ,
Եւ ակամայ մըկըրտեցաւ
Եւ յՕլախի հաւատս մնաւ:
Ի յայս վերջի ժամանակի
Հայոց ազգըս կան վըտանկի,
Եւ տարագիր ի յաշխարհ՝
Աչս Օլախաց փոքրիկ երկրի:
Վա՛յ և եղո՛ւկ հազար քերան,
Հառաչեցէք ամենեքեան.
Աչս Օլախաց Հայերս որ կան՝
Ի հաւատոցըն զըրկեցան.
Եկեղեցիքըն քակտեցան,
Աչս սուրբ տաճարքըն այրեցան 1.
Աղնիւ գրեանքն հուրն այրեցան
Ի ժամատեղին ոչինչ գտնան 2:
Խոտս գեղեցիկ անօթք կային,
Խաչ և ոսկիք և չուքչաւանին.
Աղեկ մարդկանց յիշատակին՝
Բաժին եղաւ Օլախ ազգին:
Աչն քաջ ուսած երիցանին
Փայլըտաքարբառ սարկաւագին.
Թագաւորին և զ'Ալէքսանին
Ցանկարծակի խափանեցին:
Աչն հրաշալի գիշերժամին
Չեկեղեցեաց ուխտ ի յօրին 3,
Չայն հանդիսի 4 ըղմատաղնին
ՉՆընչեցեալոց մեծ Թագուհին.
Մեծի Ծննդեան Չըօրհնեաց օրին, 5
Աւաչաւորք, սուրբ Մեծ պասին.
Տեառնընդառաջ քառասնօրին,
Եւ Ահաման սրբոյ Կուսին.
Ամաւհնեաց ծաղկազարդին,
Մեծահանդէս Չատկի օրին,
Ցինանց վրէժ Չամքարձմանին
Եւ Հոգւոյ գալըստեան օրին.
Վարդավառին օր կիրակին,
Աստուածածնի ննջման օրին,
Եւ Սուրբ Խաչի մեծի ծօնին, 6
Եւ այլ սրբոցն որք ծօնէին.
Աչն հրաշալի մեծ ապօթնին
Որ կարգացուէր ժամատեղին.
Չօրն 7 սրբոց խուռ պատուէին.
Եւ գտէրունի օր կիրակին:
Ամենեքեան ոչինչ գտնան,
Ժամ և ապօթք խափանեցան,
Իրիցանիք կարգէն անկան
Եւ ժողովուրդք մոլորեցան.
Երկրոյ երկիր չատոնք անկան
Փահանայք և աշխարհական.
Բազում եղբարք բաժանեցան
Պարիսպուէին վտարեցան:

1. Աստեա եղան:
2. Չայն պաշտամանցըն վերացան:
3. Ուխտի նորին:
4. Հանդիսաւոր:
5. Չըրօրհնէին:
6. Խաչվերացի սըրբոյ ուխտին:
7. Չօծնըն:

ցից, զոր բերել էր վասն նոցա։ Եւ սկսաւ զամենայն հմուտ և զքաջ պատերազմող արքն ի ճակատամարտին կացուցանել. և ինքն չինէր զճակատն։ Եւ յորժամ կացոյց զզօրքն կարգ կարգ միմեանց յետ, ապա հրամայեաց ըզհրեղէն զէնս յառաջ բերել, այսինքն՝ որ կոչին Թօրք. և էր թուով 16 մեծագոյնք. և հաստատեաց ընդդէմ զօրացն Տեսբոթին։ Եւ հարին զթօբսերն միում նուագին. և ոչ ինչ վնասեաց նոցա բնաւին, այլ էանց ի վերայ նոցա. վասն զի այս անօրէնն ի վերայ բլրին էր զօրովք իւրովք, և Տեսբոթն ներքեւ բլրին. վասն որոյ չի վնասեաց նոցա ոչինչ. զի Տէր ընդ նոսա էր։ Եւ ի նոյն ժամն յաւել եւս երկրորդումն ընդել զթօբսերն, նոյնպէս և երկոքեան միանգամ արձակեցին։ Եւ ի նոյն ժամ ելին ի վրանացն Հայոց զօրքն, և սկսան հարկանել ի վերայ նոցա։ Եւ ոչ ինչ կարացին նոքա ընդդէմ կալ Հայոց զօրացն, այլ դարձան փախստական։ Եւ հալածեցին զնոսա Հայք մինչեւ ի գիշերն։ Եւ ի վաղիւն ելին ի հալածանացն, և դարձան ի վրանս իւրեանց։ Եւ ի տեսանել զայն Տեսբոթայ, զի ոչ ինչ կարացին առնել ընդդէմ Հայոց զօրացն, ոչ ինչ ևս ետ ի մտի հարկանել ընդդէմ նոցա, այլ ելեալ ի վրանացն իւրոց, դարձաւ ի տեղի իւրում։

Ուր ի կանանց խնամ հեռացան,
Ի յայլ քաղաք քնակեցան։
Ո՞վ է տեսել այսպէս խեղճ բան.
Վայ և եղուկ հազար քերան։
Ո՞վ անխրատ չար թագաւոր,
Թող զու լինիս զըլուխ ի կոր.
Քո մեծութիւնդ լինի խոտոր
Որ Հայոց ազգն արեր մոլոր։
Բնաւ զու չես մեղադրելի,
Ո՛վ արքանեակ սատանայի.
Ասուած երկրի մի քարկոսի՝
Չար թագաւոր յայտնի լինի։
Ի մեր անքաւ գործոց չարեաց՝
Յասուեաւ հասուր Հայոց ազգաց,
Իւր սուրբ մարմինն ոչ խնայեաց
Եւ արկանել ներքոյ ոտից։
Առաջ իւր սուրբ տունըն մատնեաց,
Ըզսուրբ մեռանն յերկիր ցրուեաց.
Զիւր սուրբ գրեանքն հրով այրեաց,
Չկեղեցին հիմնէ 1 չըկեաց։
Եկեղեցին քար և կիրէ,
Եւ իւր անօթք ի յայլ նիւթէ,
Եւ սուրբ գրեանքն պէսպէս նիւթէ 2,
Խաչ և ըսկիք ի արծաթէ,
Բերան չունին որ քամբասեն,
Ոչ ձեռք և ոտք որ մեղանչեն.
Վասն մեղաց մարդկան որ են՝
Յոյցըս մարդկան պատիժ կըրեն։
ԶՀայոց ազգըն դառըն մատնեաց
Ի ձեռն արանց քրնաւորաց.
Ի հաւատոց վիրենք զըրկեաց,
Ուրացուցին զնոսա մատնեաց.
Ասուած փրկէ ի յայլ չարէ,
Այլ մեծամեծ 3 պատուհասէ.
Ի յաշխարհիս թէ չարչարէ՝
Անանց կենացն անառակ չառնէ։
Ցայս ունիմք առ Տէրն ամենի
Որ ողորմի Հայոց ազգի.
Ով որ չարիամ եղեր մեզի՝
Անդ ահագին առեանն գատի։
Քահանայք և աշխարհական
Խնդրեմ ձեզնէ հառաչական,
Դարձիք մեզաց ապաղաչական,
Լալով ասէք ըզՏէր մեզան։
Եւ անարժանս մեզաց գերի
Մինաս անուն պարսաւելի,
Եւ եմ դարիկ Հայաստանի,
Թոխաթէ անուն քաղաք կոչի։
Զայս գառն ապէսս աչօք տեսի
Ասյս Օլախաց փոքրիկ երկրի.
Փորձանք եկաւ Հայոց ազգի
Քահանայից, ժողովըրդի.
Ցանգէտ մըտացս առաջ եկան
Եւ սակաւ ոմքըս գերեցան. 4
Զձեզ ապաշխար զամենեսեան,
Զյս յիշելոյ արէք արժան 5.
Մեղաքըս լի եմ անարժան,
Ոտից ձերոց լինիմ կոխան,
Ըզբնայեք ըզՀայր մեզան,
Զաւրք աղօթքըն աէրունեան.
Օրհնութիւն գուք սուք միաբան
Երրորդական սատուածութեան,
Որ գմեզ փրկէ ի յայլ ցասման
Այժմ և յաւէտ և ապագայն։

1. Զեկեղեցոյ հիմըն։
2. Պատրիչ է։
3. Ի այլ մեծ մեծ։
4. Ցանգէտ մըտացս առաջ եկի
Եւ սակաւիկ ոմքս ասացի։
5. Առնէք արժանի։

կրոդումն նուագին ոչ ինչ վնասեաց նոցա. այլ մանաւանդ զինքեանք զանօրէնքն կոտորեցին Թօբերն: Իսկ նոքա բնաւ չի շարժեցան զօրքն Տեսբոթին. և էին ի միում տեղւոջն հաւաքեալ: Եւ յետոյ հրամայեաց զի ելանիցէ իւր մաքսաւորն, և խաղալ երիվարաւ, որպէս օրէն է հեծելոց. և ի նոյն ժամ ել և անկաւ երիվարիւ և զարկաւ զգետնի, և ոլորեցաւ պարանոցն նորա: Զօր այդ անօրէնն այլ բազում նեղութիւնս յարոյց ի վերայ եղկելի ազգին մերոյ. վասն որոյ պատուհասեցաւ ի Տեառնէ: Եւ յաւել եւս երկրորդումն զորիշ ոմն հանել զի խաղացէ. և նորա գտակն անկաւ ի գլխոյ իւրմէ:

Ցետ այսց բանից ապա սկսաւ քաջալերել զզօրքն իւր և ասել. Ո՛ արք մեծամեծք և իշխանք, լերուք քաջ, և դիմեցէք ի վերայ այս անհաւատից, զի կոտորեսցուք զդոսա, և մի՛ ապրեսցի ի նոցանէ և ոչ ոք: Եւ հպարտացաւ իւր ամբարտաւանութեամբն. և ահա առհասարակ զօրովք իւրովք դիմեցին ի վերայ նոցա, որպէս երբեմն Գողիաթ ի վերայ Դաւթի: Եւ յորժամ հարին ճակատամարտն նորա, ի նոյն ժամն կոտորեցաւ անօրէնք զօրքն նորա. և Տեսբոթին զօրքն ամենայն էր 1200 հոգի. և նոքա էին իբրեւ 40,000 արք պատերազմողք և հմուտ կռուոյ. և աստուածային կարողութեամբ զօրացան և կոտորեցին մինչեւ խապառ. բայց որք խոնարհեցան և հնազանդեցան՝ զնոսա բնաւ չի կոտորեց: Եւ յորժամ այս եղեւ, ինքն պիղծն անկաւ փախստական. վասն զի ոչ կարացին ըմբռնել զամբարիշտն. և ելաւ ի բարձր բլուր մի, և նայեցաւ ի վերայ զօրաց իւրոց, եթէ որպէս կորեաւ ինքն և զօրքն իւր. և սկսաւ լալ դառնապէս, և ի միտ ածել դիւր անօրէնութիւն, եթէ այս պատուհաս ի Տեառնէ է, և Տէրն ինքնին ետ պատերազմ, և իւր հզօր ձեռամբ սատակեաց զիս և զօրքն իմ, որ ոչ կարացի զդէմ ունել 40,000աւ զայլազի սակաւ զօրքն: Եւ ի սոյն խորհուրդ ընկաւ փախստական, և հալածական. ելաւ գնաց յերկրէն իւրմէ՝ ի Թուրքաց աշխարհն:

Եւ այս Տեսբոթն եկն առ Սեչովն և մերձեցաւ. և ահա դարձեալ ազդեցին նմա, եթէ այդ պիղծն դարձեալ կրկին զօրքն ժողովել է, և ահա կամի գալ: Իբրեւ լուաւ Տեսբոթն՝ դարձաւ և գնաց ի վրայ նորա. և կրկին անկամ պատերազմեցան, և դարձեալ կոտորեցին զնոսա, և հազար թուրք ընդ նոսա, զոր բերել էր ի Աղբերմանէն՝ որ օգնէին նմա: Ցետ այսորիկ դարձաւ մեծաւ ուրախութեամբ և եկն ի Սեչով քաղաքն ի դախան իւր. և զամենայն մեծամեծ և զիշխանքն փոխեց, և որիշ կացոյց ի վերայ ամենայն իշխանութեանց. և որք հնազանդեցան՝ նոցա ետ դարձեալ զիշխանութիւն նոցա: Եւ Խոզինա բերդին զպահակապան (բերդապահ) եհան, և ի նոցա տեղի զոմն զՖռանդ եդիր ի բերդն, որ կոչիւր Բխոցքխյէ: Եւ այլ որիշ քաղաքն և բերդ որչափ կայ յերկիրն այն, զամենեսեան իշխանութենէ փոխեաց, և Լադինացիք կացոյց Օլախաց տեղն: Եւ յետ այսորիկ նստաւ իւր պարոնութիւնն. և Թուրքին զրկեց որ դրուլ (Թուղրա?. կնիք) բերեն, որ նմա խարտ տայ, զայս առաջին ամն. և յետոյ որպէս Տէրն տայ՝ այնպէս

լինի. վասն զի բազում տեսութիւն ունի նորա նստելն ի այդ երկիրն. զոր Տէր ցիտուս օգնեսցէ նմա իւր կարողութեամբն։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

(Աղաչեմ զամենեսեան վասն խորտակեալ եղկերիս նորոգելոյ աղաչել զՏէր։ – Ջծոյլս ի բարիս և զարագս ի չարիս, զմեղսանեկ և զթշուառա- կանս և զանվարժս, աղաչեմ յիշել ի Տէր. բայց վասն գրին անմեղադիր լերուք վասն Աստուծոյ, զի թանաքս ոչ էր բարի)։

Եւ որպէս գրեալ կայ յառաջագոյն ի գրիս այսմիկ՝ զհալածումն և զնեղութիւն և զաւերումն ողորմելի Հայ ազգիս մերում, եթէ որպէս բռնութեամբ ուրացուցին և հաւատոյ հանին, և զեկեղեցիքն քանդեցին ի հիմանէ, և զամենայն սպասս և զանօթս եկեղեցոյ ափշտակեցին. զոր այդ պէղծ անօրէնն Աղեքսանտրին հրամանաւն գործեցին զայս չափ ինչ, զոր ոչ կարեմ (ընդ) գրով արկանել այժմ զնոցա ամբարշտութիւն և զանօրէնութիւն։ Զոր մարդասէրն և բարեգութն Աստուած յարոյց ի վերայ նոցա զայս արագահաս պատուհասն, որ երկոտասան աւուր մէջն կորեան և անյայտ եղեն իբրեւ զծուխ հրոյ. և թէպէտ փոքր մի ժամանակ բարձրացան այդ անօրէնքն իբրեւ զմայրսն Լիբանանու, այլ իբրեւ զփոշի անցան. զոր տարաւ մրրիկ հողմոյ։ Վասն որոյ զոհութիւն և փառք Աստուծոյ։ Բայց Լուսաւորչին ողորմելի ազգն փոքր ի շատէ մխիթարեցան Աստուծոյ ողորմութեամբն՝ զոր ետ նոցա Տէր Աստուած զայս ինչ մխիթարութիւն, զոր տեսին իւրեանց թշնամիքն ցրուեալք և փախստականք, և տուն նոցա կործանեալ։ Եւ զի հրամանաւն Աստուծոյ այս բարեպաշտ Տեսբոթն հաստատեցաւ իւր իշխանութիւնն ի վերայ երկրին այնմիկ. և զՀայ ազգն դարձոյց, և շնորհեաց նոցա զիւրեանց օրէնքն, որ Հայոց օրինաքն լինին համարձակ. և ոչ ոք նոցա բան չխօսէ և կամ դատէ. ով ոք զՀայ ազգն դատէ և կամ նախատէ վասն օրինացն, նայ [1]... գլխով պատժեն։

1562 Հայոց թվ. ՌԺ. Իւրվի արհի եպիսկոպոսն Գժէօնց Թարլոյ եկաւ ի Կամենից. և մեք Հայոց քահանայքս գնացաք ի մօտն՝ ընծայիւք. և քան զչափն աւելի ընդունեց զմեզ։

Եւ ապա եկն մեր արհի եպիսկոպոսն Տէր Գրիգոր ի Կամենից, որ է աթոռակալ ամենայն Հայոց, որչափ մեն է Նեմեչի երկիր։ (Ամենայն Հայոց մերազգեաց որք ի Գերմանիա)։

1562 Հայոց թվ. ՌԺ. Նոյեմբ. ԻԳ. փառք Աստուծոյ Հօր անմահի, և Որդւոյն Աստուծոյ Միածնի, և Ս. Հոգւոյն Աստուծոյ ճչմարտի։

1562 թվ. ՌԺԱ. Սարգիս տամղաճին առ Աստուած փոխեցաւ, Աստուած ջնջէ զիւր մեղքն զոր գործեալ է կամաւ և ակամայ։ — Եւ ի նոյն ամին պարոն Դուկալ պէկն ի Աստուած փոխեցաւ. և ի նոյն ամին զորդին իւր

1. Բառ մի կամ երկու պակսի պատճառաւ թղթին պատառման. թերևս բլայ այիպիսին։

զԼեդրէն սպանեցին. Աստուած ողորմի իւրեանց հոգին։ — Եւ ի սոյն ամին Բան Եանկինդարն (առ) Աստուած փոխեցաւ, և Զըխն Սդանիսլա?

1562. Թվ. ՌԺԱ. Ի օրն երկրորդ Ծաղկազարդին Ֆրանգի եպիսկոպոսն Գժեօնց Լենարդն, քաջ հռետոր և բանիբուն վարդապետ, փոխեցաւ առ Աստուած. զոր մարդասէրն Աստուած զիւր հոգին դասեսցէ ընդ արդարան և ընդ աստուածաբան սուրբ վարդապետան. քանզի երախտաւոր էր ընդ Հայոց ազգին. և քան զնափն աւելի ընդունելով ընդունէր, միշտ ու հանապազ ի սեղանս կոչելով և հացակից առնելով. և 16 ամ կալաւ զաթոռ Կամենից վիճակի զաթոռն։

1562. Հայոց Թվ. ՌԺԱ. Մայիս ամսոյ ԻԱ. օրն կիրակի երկրորդ Ծաղկազարդին, Ֆրանգի եպիսկոպոսն Գժանց Լենարդ Սլունչովսքէյ առ Աստուած փոխեցաւ ի Կամենից. զոր էր ազնիւ բանիբուն վարդապետ և քաջ հռետոր. Աստուած ողորմի հոգոյ նորա։

1562. Հայոց Թվ. ՌԺԱ, և Օգոստոսի ԺԵ, օրն չաբաթին. զոր էր տօնն հռչակելի և հրաշալի Տիրամօրն Սրբոյ Կուսի Աստուածածնին։ Այս դուքս որ կոչի Տեսրոթն, զոր կացոյց տէրն իշխան ի վերայ այդ խուժադուժ երկրին Օլախաց, զոր ամենազօրն Աստուած իւր մարդասիրութեամբն հաստատեսցէ զնա ի վերայ իշխանութեան իւրոյ՝ մինչեւ ի խոր ծերութիւն անսասանելի և անշարժելի, յաղագս ողորմելի և եղկելի անտիրացեալ ազգիս Հայոց. զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցեն զկեանս իւրեանց ի վերայ Հայկազեան և յաքեթածին օրինացն. զոր ունին կարգեալ ի հօրէ իւրեանց Սրբոյ Գրիգորէ Հայաստանեաց սուրբ Լուսաւորչին։ Ի սմին աւուր զոր առաջագոյն գրեցաք, Աստուծոյ հրամանաւն և քրիստոնէից կայսեր հրամանաւ՝ իւր իշխանութեան վերայ թագ կապեաց և պսակեցաւ որպէս օրէնն է, օծեալ և թագաւորեալ թագաւորացն, և ի նոյն օրն քարոզ կարդալ ետ, որ ամենայն ոք թագաւոր անուն կոչեսցէ զնա. զոր բնաւ այսպիսի ինչ երբեք ոչ էր լեալ ի այդ երկիրն, ի սկզբանէ իշխանաց մինչեւ ի նա, և ոչ ունէր օրինակ նախ քան զինքն ի այդ երկիրն, և ոչ ի նախնեաց և ի ծնողաց իւրոց. թէպէտ զինքն որդի իշխանի անուանել ետ, բայց ոչ էր յայտնապէս և ճշգրիտ՝ եթէ իցէ որդի օծեալ և թագապսակ թագաւորի, որպէս օրէն է թագաւորաց՝ որդիս յորդիս յազգէ յազգ յաւիտեանս՝ պսակել ըստ ժամանակի իւրեանց. այլ սա իւր իշխան կամաք և բարձր հրամանաւն սահմանեց և հաստատեցաւ ամենազօր երկնաւոր թագաւորին կարողութեամբ. զոր Տէր ճիսուս պահեսցէ զնա խաղաղական կենաք, և աշն Աստուծոյ ամենակալին եղիցի ի վերայ նորա պահապան, զի փրկեսցէ զնա յամենայն թշնամեաց իւրոց և ի ձեռաց առելեացն, և հաստատեսցէ զնա ի վերայ իշխանութեան իւրոյ անխախտելի. խորհելով զՀաճոյն Աստուծոյ և զբարին յԱստուծոյ՝ առ ամենայն ազգս, եւս առաւել առ ողորմելի Հայոց ազգն. զի փոքր մի ժամանակ հանգիստ գտցեն իւրեանց հալածանաց և նեղութեանց. զոր ի անձն առին անօրէն և անհա-

ւատ ազգէն, որք են սուտ քրիստոնեայք, պիղծ Օլախ ազգն, զոր են Մա-
կեդոնեցիք և արիոսեանք, (ըստ կարծեաց գրողին)։

1562· *Հայոց Թվ· ՌԺԱ, Մայիս ամսոյ ԻԲ· Հրամանաւն Թագաւորին բա-*
բեպաշտ Ջիկմոնդի, որ կոչի Ակուստուս, Կամենից քաղաքին իշխանին հրա-
մայեաց գալ առ ինքն արագահաս և փութանակի· վասն զի չարախօսքն նո-
բա մատնել էին Թագաւորին· եթէ, ի քում Թագաւորական հրամանի ոչ
հնազանդի, և ոչ ունի երկիւղ, և զամենայն թշնամիքն Օլախաց երկրին
զիշխանին՝ Թողել է որ ել և մուտ են ի Կամենից բերդն· զոր բնաւ այդ-
պիսի ոմանք բերդ ոչ էին մտեալ· և այլ բազում չարախօսութիւն ունէին առ
Թագաւորն՝ վասն այդ իշխանին· զոր անունն իւր կոչի Վլոտէք Բան Մա-
ցէյ· եւ էին չարախօսքն երկու մեծամեծ իշխանք· մինն Վլյվոտա Բոտոլսքիյ
(գաւառի), զոր Բան Ադարոխովսքիյ կոչեն, և միւսն Բան Եազլովէցքիյ։ Եւ
յորժամ այս չարախօսութիւն եղեւ առ Թագաւորն, և ահա Թագաւորն հրա-
մայեաց գալ նմա փութանակի առ իւր· և յորժամ եկ և գնաց առ Թագա-
ւորն, ահա այդ ոմն Եազլովեցքին եկն ի Կամենիցն, և կամեցաւ գնալ առ
բերդն, զի նստցի փոխանակ Բան Վլոտքսին իշխանութեան· և արքն որք
էին ի մէջ բերդին՝ և նոքա եւս էին մեծարարք, զոր անձնեալ էր նոցա
զբերդն այս իշխանն Բան Վլոտքս· ընդդէմ կացին նմա, և ոչ ետուն Թոյլ
մտանել և նստել իշխանութիւն ի մէջ բերդին· և ապա նկուն եղեւ, և ամօ-
Թալից դարձաւ և գնաց։ Իսկ այս բարէհոգի իշխանն որ կոչի Վլոտէք Բան
Մացէ, գնաց առ Թագաւորն, և զամենայն թշնամեաց իւրոց զբերանն պա-
պանձեցոյց և ամօթ արար զնոսա· և ինքն ի Թագաւորէն պատուեցաւ և գո-
վեցաւ, և դարձեալ եկն և նստաւ իւր իշխանութեան վրայ յայտնի և համ-
արձակ, ի պարծանս իւրայնոց և ի յամօթ ներհակաց իւրոց։ Այսքան
առ այս։

1562· *Հայոց Թվ· ՌԺԱ· Գնեազ Վիշնովսքիյ ոմն Ըռուս իշխանն՝ մի ան-*
կամ զԹագաւորն ուրացաւ, և ապստամբ ինչ գործեաց, և փախեաւ ի Թուրքի
խանդիքարն, և դարձեալ եկն· որպէս կայ առաջագոյն գրեալ ի մէջ Թղթիս
զնորա պատմութիւն· և ոչ ինչ չար արար նմա Թագաւորն· այլ մանաւանդ
ետ ի նա զամենայն զգաւառն իւր, որչափ ինչ ունէր բերդ և գիւղ։ Ցետ
փոքր մի ժամանակի դարձեալ ապստամբութեամբ գնաց փախստական առ
Մոսկովի գնեազն· և ոչինչ բազում ժամանակ եկաց առ նա· և դարձաւ եկն
յետ երկուց ամաց իւր գաւառն· և բարեպաշտ Թագաւորն Ջիկմունդ ոչ ինչ
չար արար նմա։ Բայց այս ոչ է հիանալի· զի երկու անկամ խաբեաց
և ուրացաւ զԹագաւորն· վասն զի նոցա ազգին սովորութիւն է ամենայն՝ ու-
րեք զայս գործել, մինչեւ որ անձամբ զանձն իւրեանց դատապարտեն։ Այս
քան և առ այս։

1562· *Հայոց Թվ· ՌԺԱ· Սեպտեմ· ԻԵ· Բարեպաշտ Թագաւորն մեր Ջիկ-*
մունդ Ակուստուս՝ Մոսկովի վերայ հեծելազօր ղրկեց· և աստուածային օգնակա-

նուէքեամբ պատահեցան Մոսկովի զօրքն մեր թագաւորի զօրացն. և էին Մոսքովցիքն 30,000 հոգի, և սոքա 16,000 հոգի, և հարին ընդ միմեանս. և խկոյն ժամու սոքա զնոսա կոտորեցին մինչեւ իսպառ. զոր ոչ ոք փախեաւ ի Մոսքովի զօրաց. զպահենեսեան սատակեցին: Եւ աստ կատարեցաւ մարգարէութիւն պարագլուխ մարգարէին Մովսէսի, եթէ, մինն զհազարս և երկուքն զբիւրս. ի փառս Աստուծոյ: Եւ յորժամ այս բարի քաջ և յաղթող համբաւն եկաւ ի Կամենիցս, նայ մեծ ուրախութիւն և ցնծութիւն կատարեցին քաղաքս, ամենայն քաղաքացիքն առ հասարակ զԱստուած օրհնեցին. և նմա փառք և գոհութիւն մատուցին, որ տայ հաւատարիմ ծառայիցն այսպիսի քաջայաղթութիւն: Բայց Ըռուս ազգն լցան նախանձու, և ոչ կատարեցին զայս ցնծութիւն, և նա և ոչ Աստուծոյ գոհութիւն մատուցին. վասն զի թագաւորին մերոյ թշնամիք են և ամենայն հաւատացեալ քրիստոնէից: Բայց հատուսցէ նոցա Տէր ըստ չարութեան սրտից նոցա:

1562. Թվ. ՌԺԱ. Դեկտ. ԻԸ. Ի ժամանակին Տեսրոթին երկրորդում ամի պարոնութեան նմին, զԼաքին ուրացաւ և զիւր երդումն ստեց, զոր բազում անկամ երդուաւ նմա ի վերայ խաչելութեանն Քրիստոսի. զոր խոստացել էր նմա զիւր երկրին զկէս պարոնութիւն, վասն նորա երախտաւորութեան համար: Եթէ որչափ ինչ արար ընդ նմա Բան Լաքին, զոր գրեալ է ի մէջ այսմ թղթիս առաջագոյն. զոր կարող են հաւատարիմ ընթերցողքն ի միտ առնուլ զամենայն ինչն Բան Լաքինին: Իսկ նա իբրեւ ապստամբ ոք ուրացաւ զնա. և զԽոդինու բերդն էառ ի նմանէ. և զԲխոցքին՝ զոր իշխանութեամբ Լաքինի էր նստեալ ի մէջ բերդին՝ եհան. և զՕլախ պռկալապներն եդիր ընդ իւր իշխանութեամբն: Եւ այսպիսի նորա ապստամբութիւն իւր գլխոյ կորստեան նշանակ է. զոր անձամբ իւրով զանձն իւր դատապարտեաց:

1562. Թվ. ՌԺԱ. Հայոց ազգիս Տէր Ստեփաննոս Արընճեցի կաթողիկոսն եկաւ ի Կամենիցս, ստոյգ և ճշմարիտ ճանապարհաւ. և եկաց ի Կամենիցս՝ ի Հրեշտակապետացն մինչեւ ի Տնօրէնութիւն Քրիստոսի. և ապա գնաց յԻլով քաղաքն, և անդ ընդունելի և պատուելի եղաւ քրիստոնէից. և ապա դարձեալ եկն ի Կամենիցս: Եւ էին ընդ նմա Տէր Զաքարեայ եպիսկոպոս, և Տէր Դաւիթ վարդապետ, և Լուսիկ անուն սարկաւագ մի. զոր մեզ եկին, և զՍ. Լուսաւորչին օրհնութիւն ետուն: Բայց մեծ զարմանք զմեզ կալաւ, որ ի յայս աշխարհս զՍ. Էջմիածնայ զկաթողիկոս տեսաք. վասն զի յօրէ յորմէ հետէ զՍ. Էջմիածնայ աթոռն կարգել է Ս. Լուսաւորչին մեր Հայոց ազգիս՝ մինչեւ ցայժմ կաթողիկոս ի այս աշխարհս բնաւ ոք չէր տեսեալ, զոր մերոյ տեսեալ, և Աստուծոյ փառս մատուցեալ. որ զմեզ այնպիսի ճշմարիտ քահանայապետին տեսոյն արժանացոյց:

1563. Թվ. ՌԺԲ. Եկաւ Մոսքովի դնազն ի թագաւորի աշխարհն, և զԲոլոգքա քաղաքն էառ. բայց ոչ իւրով կարողութեամբ, այլ չար և վատ Ը-

ռուզ ազգին ապստամբութեամբ. զոր նոքա ի մէջ բերդին հինգ վեց տեղ հրով այրեցին, և ապա ամենայն քաղաքն և բերդն չիւարեցան, և ինքեանք եւ տուն զբերդն Թչնամեաց, և գերեցան ամենեքեան ի ձեռն Մոսկովցոցն: Զոր Տէր Ցիսուս երկնաւոր Թագաւորն զվերջն նոցա ի բարին դարձուսցէ. և զՋիկմունդ Թագաւորն զօրացուսցէ ի վերայ Թչնամեաց իւրոց:

1563. Թվ. ՌԺԲ. և յուլիս ամսոյ ԻԳ. Ըռուզ գնեաց Վիշնովեցքին՝ գնաց ի Օլախաց երկիրն, զի լինէր պարոն ի վերայ երկրին. և ընդ իւր ունէր 3000 հոգի հեծելազօր: Եւ անհաւատ ազգն Օլախաց Թոյլ ետուն որ մտաւ և եկաւ ի Մեչով հասաւ. և եկաց անդ երկու չաբաթ. և զՏեսբոթն կամեցաւ ի բերդէն հանել, զի փոխանակ նորա ինքն նստցի պարոն. Եւ այս Տեսբոթն չի հնազանդեցաւ նմա. այլ ազաչէր զնա ի խաղաղութիւն, զի Թոյլ տացէ նմա՝ զի երթիցէ իւրովի ուր և կամենայ. իսկ նա բնաւ չընդունեց զաղաչանքն նորա. այլ ուժգնութեամբ կամէր զինքն հանել և սպանանել: Ցետոյ բազմացան անօրինաց ազգն այն Օլախն, և դիմեցին ի վերայ գնազին, և յաղթահարեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ. և զինքն զՎիշնովեցքին կենդանի ձերբակալ առին, և ընդ նմա զԲիսոցքին և զայլս բազումս. զոմանց զքիթն և զականջս հատին, և զոմանս ի հետ գնազին և Բիսոցքիին ի խոնդիքարն ղրկեցին կապանօք: Եւ այսպէս կորեաւ ունայնութեամբ, և ընդ իւր կորոյս զամենեսեան առ հասարակ:

Եւ յորժամ զՏեսբոթն կամեցան սպանանել անհաւատ ազգն Օլախաց, և նա զերծաւ ի նոցանէ, և փախեաւ ի բերդն Մեչովին, և փակեցաւ յամրոցին: Եւ այս անօրէնքն ընտրեցին ի մէջ իւրեանց զոմն Տոմշա անուն, զոր էր փանաքի ծառայ այս Տեսբոթին. և զնա փոխանակ նորա հաստատեցին պարոն ի վերայ երկրին, և մինչեւ երեք ամիս ոչինչ կարացին առնել չար՝ Տեսբոթին, այլ մանաւանդ զբազումս ի յանհաւատից կոտորեց ի բերդէն այդ Տեսբոթն. զի ունէր ընդ իւր ի մէջ բերդին 500 հոգի՝ զոր ընդ նմա փախեան, միաբանեցան ի մէջ բերդին: Եւ այս ամբարիշտն Տոմշա պիղծ և անիրաւ ոմն եղեւ, զոր և զբազումս կորոյս չարաչար մահուամբ զանմեղ զոմանս. ընդ որս էր ոմն կրօնաւոր Ցովանէս, զոր մականուն Ծուռգտակ անուանէին. և զնա անպարտ և անմեղ գոլով՝ ետ կախել զիպայտէ. և զՀայոց Վոյթն լաւ և անմեղ ոմն Թաչերես անուն՝ և զնա կախել ետ ընդ նմա. և զերեք կինն Հայոց փոքր զաւակօք իւրեանց՝ ետ կախել անողորմ և անիրաւ դատաստանաւ: Զոր Տէր հատուսցէ չարին ըստ չարութեան իւրում և խընդրեսցէ վրէժ ի նմանէ՝ այդ անմեղ և անպարտ արեանց նոցա վասն:

Ցետոյ ոմն իշխան Լաստի անուն, զոր առաջագոյն գրեալ է պատմութիւն նորա ի մէջ գրքիս, թէ որպիսի ինչ առաւ նա այս Տեսբոթին, և սա իբրեւ լուաւ զբանն Տեսբոթին, ահա փութանակի եհաս զօրովքն ի Կամենից. բայց կարի շատ ոչ ունէր զօրք. և համբերեալ մնաց երկու ամիս, մինչ որ բազմանայցէ զօրքն, յետոյ եմուտ այդ խուժդուժն յերկիրն սակաւ զօրաք:

եւ անօրէն Օլախն, իբրեւ զմարախ անթիւ բազում էին. և մինչ Լասքին եհաս ի Սեչոլին, ահա գուժ հասուցին նմա՝ եթէ զՏեսբոթն սպանեցին, և սա իբրեւ լուաւ՝ այլ ոչ գնաց, և դարձաւ ելաւ երկրէն անվնաս։

1564. Թվ. ՌԺԳ. Պիղծ և անօրէն Օլէքչանտր՝ զոր էր փախստական, եւ լեալ գնաց ի Տաճկաստան, և անդ եկաց մինչեւ երկու ամ. և յորժամ զՏեսբոթն այս անիրաւ Տոմշան սպանեց իւր ձեռամբ, համբաւէ գնաց այս Ալէքչանտրին, անդ ուր էր բնակեալ ի Տաճկաստան. և խոկոյն ել և եկն առ խոնդիքարն. և խոնդիքարի որդոյ միջնորդութեամբ աղաչեց որ կրկին նստուցանէ զինքն ի վերայ իշխանութեան Օլախաց երկրի վրայ. և խոնդիքարն վասն որդոյն խնդրուածոցն՝ հրամայեաց նմա որ գայ և նստի ի պարոնութիւն իւր։ Եւ յորժամ եկն և եհաս Իպրայիլ՝ եզրն Տունայիսն, և թխտեր ղրկեց այդ անիրաւ Տոմշային և իշխանացն ամենին, եթէ, Ահա եկայ, առ իս եկէք ընդ առաջ իմ, զի լինիմ ձեզ պարոն։ Եւ նոքա ընդդէմ նորա պատասխանի ետուն, եթէ, Մեզ պէտք չես, և ոչ զքեզ կամի երկիրն ի պարոնութիւն. ընդ որ եկեալ ես՝ դարձեալ ընդ նոյն ճանապարհ գնա։ Եւ նա դարձեալ ղրկեց ի խոնդիքարն, եթէ Օլախաց պարոնայք զիս չեն կամենար ի պարոնութիւն. և խոնդիքարն հրաման ետուր Դաթբրի (Թաթարաց) խանին, որ գայ իւր հեծելով, և առնու զնա տանի և նստուցանէ ի պարոնութիւն։ Եւ Դաթբրի խանն եկաւ 50,000 հոգով, և էառ զայդ պիղծ Ալէքչանտրն և եմուտ ի երկիրն. և նստոյց զնա ի պարոնութիւն, և ինքն դարձաւ, զբազումս գերի վարելով և աւար առնելով զանասունս զամենայն, զարջառ և զոչխար, զձի և զմատակ երամով, բազում և անթիւ, մինչ որ զկէս երկրին զբարութիւն և զմարդիկ եհան և տարաւ. վասն զի խոստացեալ էր այս գոռոզն՝ Դաթբրի խանին, եթէ որչափ լինիս գերի առնուլ և տանել, հրաման քո լինի, բայց զիս հասո իմ պարոնութեանս։ Եւ յորժամ եմուտ Դաթարն ի երկիր, նայ այս միւս պարոն Տոմշա անուն կամեցաւ ընդդէմ գնալ և պատերազմել ի հետ Դաթբրին. յետոյ իւր իշխանքն ցրուեցին զՏոմշային զխորհուրդն, և չպատերազմեցան. և ելեալ ի երկրէն իւրեանց՝ փախստական գնացին ի Պուչաչ (Buchaczow?) ի Նեմիչի աշխարհն, ամենայն բարութեամբն իւրեանց, կանամբ և ընդանեօք, զաւակօք. բայց եթէ կռիւ տվել էին ի հետ Դաթբրին՝ նա պիտի յաղթէին զԴաթարն։ Եւ յորժամ եկին ի վերագոյն գրեալ քաղաքն ի Պուչաչ, նա այդ քաղաքին իշխանն գնոցա զամենայն ինչ որ ունէին ընդ ինքեանս՝ էառ, և ի բերդն մտոյց, և զինքեանս ետ ի պահապանաց ձեռն, մինչ որ ազդեցուսցէ զբանն թագաւորին։ Եւ յորժամ ազդեցին թագաւորին՝ ի նոյն ժամ թագաւորն հրամայեց, զի զամենեսեան տանիցեն Իլով քաղաքն, զոր և տարան և փակեցին գնոսա ի մէջ բերդին։ Յետոյ ի խոնդիքարէ չաւուշ եկաւ ի թագաւորն՝ վասն նոցա, զի կենդանի տաս գնոսա ի չաւուշն՝ որ տանի ի խոնդիքարն։ Եւ թագաւորն ոչ կամեցաւ. վասն զի այդ սահմանք ոչ գոյ ի այս թագաւորութիւն, զի զայնպիսի չարագործն

կենդանի տայցեն ի աշխարհէն Նեմիչաց. և յաղագս այնորիկ հրամայեաց թագաւորն զի գլխատեսցեն զնոսա յԻկով քաղաքն. զի չաւուչն տեսցէ աչօք իւրովք. զոր և արարին ըստ հրամանի թագաւորին, ի ապրիլի 28, օրն ուրբաթ, գլխատեցին զայդ պիղծ զՏմշեան, որ էր իշխան ի վերայ երկրին Օլախաց, ընդ նմա և զիւր մեծարարքն. զոմն Մոցոք անուն, և Սփանչօքն, զոր էին առաջակայ պարոնայք. և էր այդ Մոցոք անձամբն մեծ իբրեւ զմսաբլուրն Գողիաթ, և այսպէս չարաչար մահուամբն սատակեցան ըստ արժանեաց իւրոց: Եւ յետոյ այդ Օլեքչանտրն հաստատեցաւ ի պարոնութիւն: Եւ յաւուր միում ի կիրակի ի մէջ Ասպազարն (եալ քաղաք) կոչեց զամենայն մեծամեծքն իւր ի սեղան, զի հացակից լինիցին ընդ նմա. և խաբէութեամբ զամենեսեան առ հասարակ ի սուր մաչեաց անխնայ, ըստ արժանեացն իւրեանց. և էին թուով 47, և ամէն ոմն մեծ իշխան. և զայլսն ետ ի Տաճկաց ձեռն, զի չարաչար մահուամբ սատակեսցեն զնոսա:

1564. Թվ. ՌԺԳ. Նոյեմբեր ամսեան Գ. ՈՄն Լեկարդ Հռոմայ փաբայէն եկաւ ի Կամենիցս, յաղագս նուիրակութեան համար. և էր ինքն գրասէր ոմն և կատարեալ գիտուն. և զՀայոց գրեանք ուր և որչափ գտաւ, զամենեցուն զխորագիրն նոտրեց և գիր էառ. և էր ինքն տաղհասակ ոմն:

1564. Թվ. ՌԺԳ, և ի Նոյեմբ. ամսեանն ԺԷ. Կամենից քաղաքիս նոր եպիսկոպոս եկաւ, անուն կոչի Գժեօնծ Տեւուչ, այսինքն որ Թարգմանի Տեւենիոս. և է ինքն խոնարհ և հեզ ոմն, և կատարեալ հասակաւ. բայց մականուն՝ այսինքն նախնեաց անուն Զեցենովաքիյ է:

Եւ դարձեալ ի նոյն ամին չարժ եղաւ ի Կամենից. զոր էր Թվ. ՌԺԳ, և դեկտեմբեր ամսոյ ԻԱ. և էր ԺԱ ժամու վերայ գիշերով. բայց գոհութիւն Աստուծոյ որ անվնաս եղեւ, բնաւ ինչ չի վնասեաց. զոր Տէր Աստուած զվերջն ի բարին կատարէ, և զչարն խափանէ:

1564. Թվ. ՌԺԳ. Զիկմունդ Ակուստոս բարեպաշտ թագաւորն մեր ի Թուրքն խոնդիքարին էլչի խրկեց՝ զոմն Եասլովեցքիյ անուն գիշխանն. և խոնդիքարին որդոյն այլ գնացեալ էր ի էլչիութիւն. և քան զչափն աւելի հարկեցին ու պատուեցին, և բազում պարգեւք և ընծայք ետուն հայրն և որդին ի Գոթայն (Փիւթահեա?), այն կոյս ծովուն եօթն աւուր ճանապարհ:

1565. Թվ. ՌԺԴ. Փետրուար ամսոյ Ի. Հրամանաւն թագաւորին Զիկմունդ Ակուստոսի, երեք իշխանք մեծագոյնք ի յամենայն Ֆրանգաց աշխարհն, որչափ և է թագաւորին իշխանութիւն, չրջեցան և աշխարհագիր արարին. և էին անուանքն՝ Բան Տրեվիցքիյ, Բան Տեմպիցքիյ, և Բան Ազօլովաքիյ, և եկին ի Կամենիցս, և կացին երկոտասան օր, և ելին գնացին:

1565. Թվ. ՌԺԴ. Ի այս ամին ոմն պարոնացոյ Օլախի երկրէն՝ եկաւ ի այս երկիրս, և Օլախցիքն կամեցան զինքն առնուլ իւրեանց ի պարոնութիւն, բայց ոչ ունէր բազում մարդիկ. և մինչ նա կամէր անցանել ի Օլա-

խաց երկիրն, ումն մեծ իշխան Բան Հարպուրդ գնաց ի վերայ նորա և կալաւ զնա. և կապանօք ղրկեցաւ առ թագաւորն Զիկմունդ Ակուդուս, և թագաւորն չարչարանօք եսպան զինքն: Եւ էր ինքն ստոյգ Շտեֆան պարոնին որդին. զոր և նշան այլ գտին ի վերայ նորա:

1565. Թվ. ՌԺԴ. Ապրիլի ամսոյ Գ. Վաղճանեցաւ պարոն Հրիհորն՝ որդի Զատիկի, որ էր գլուխ ժողովրդեանն և առաջադէմ ամենեցուն. և էր սիրեցեալ յաչս թագաւորաց և ամենայն իշխանաց և մեծամեծաց. զոր բազում բարութիւնս և երախտիք թողեալ Հայոց ազգին իւրոյ. զոր 25 անկամ ի թագաւորի արքունի դուռն գնացեալ վասն դատաստանի իրաց, զոր կամէին Իլախ ազգն ափշտակել ի ձեռաց Հայոց, և նորա գնացեալ ամրացոյց և հաստատեաց զԴատաստանն (Դատաստանագիրք կամ Օրինագիրք), զոր այժմ ունին Հայոց ազգ, և խաղաղութեամբ և հանտարտութեամբ վարեն զկեանս իւրեանց, ողորմութեամբն Աստուծոյ և թագաւորին, և պարոն Հրիհորին ջանիւ և հոգաբարձութեամբ: Զոր ողորմածն Աստուած ողորմի իւր հոգուն և զմեզքն ընկէ, զկամայ և զակամայ. և իւր սուրբ արքայութեան արժանի արասցէ հանդերձ իւրովք արեան մերձաւորօք. ամէն:

1566. Հայոց Թվ. ՌԺԵ. Յուլիս ամսոյ ԺԵ. Փառք Աստուծոյ Հօր անմահի, և Որդւոյն Աստուծոյ միածնի, և Հոգւոյն Աստուծոյ ճշմարտի. այժմ և յաւէտ յաւիտեանս. ամէն: Եւ արդ պարտ է և արժան է մեզ՝ զայսպիսի ամենայն ինչ գրով աւանդել. զի առ ապա եկեալքն ընթեռնելով փառս տայցեն Աստուծոյ: Եթէ որպէս հրամանն Աստուծոյ եկն ի վերայ մեր՝ վասն ծովացեալ մեզաց մերոց. այս ինքն է զոր եղաւ յայսմ ամի ի Կամենից քաղաքիս, մեծ և անողորմելի ցասումն մահուն. ոչ թէ միայն ի վերայ մանկանց տղայոց, այլ ի վերայ երիտասարդաց և ծերոց, զոր ամենայն օր ի մէջ Հայոց ազգիս ութ և ինն և մինչեւ ի տասն հոգի ի հողն թաղէաք. և այս երկարեցաւ ի յուլիս ամսոյ մինչեւ հոկտեմբեր: Եւ այլազգիքն Ֆռանգ և Ըռուզն՝ ամենայն օրն մինչեւ ի 60 հոգի թաղելով ի հող դնէին: Եւ զի էր դառն և դժար ժամանակ, զի ոչ ոք ի քաղաքս ոչ գայր, և բնաւ ի քաղաքացոյն զոք ուրեք չէին թողուլ. մինչ որ քաղցրութիւն Աստուծոյ յայտնեցաւ ի վերայ մեզաւոր ծառայից իւրոց: Եւ զի էր ահագին ցասումն, որ մինչեւ երկրորդում և երրորդում օր ողջ և առողջ գոլով մարդիքն՝ ի հողն դնէին. բայց Աստուծոյ կամքն օրհնեալ եղիցի. զոր նմա փառք ի յամենայն արարածոց և ի մէնջ: Զոր ինչ եկն ի վերայ մեր՝ վասն մեր չար գործոց և անթիւ մեզաց մերոց եկն. զի զոր ինչ ետուր և զոր տալով է, գոհութեամբ ընդունեմք և ընդունելոց եմք:

1566. Թվ. ՌԺԵ. ԵՒ սեպտեմ. ԻԴ. Աստուած ամենակալ ողորմի Պար. Հրիհորին հոգոյ. զոր նորա արդեամբք բարեպաշտ կինն իւր Բանի Ագիզը՝ զհրաշալի տաճարն Սրբոյ Նիկօլա մեծացոյց, և այլ վայելչապէս զարդարեցոյց և զեղեցկացոյց, ի փառս անհաս աստուածութեան Տեառն մերոյ Յի-

սուսի Քրիստոսի. զոր ամենակարող Փրկիչն աշխարհացն՝ փրկեսցէ ի չար հերձուածողաց և ի չարաբարոյ թշնամեացն. և յիշատակ անջնջելի պահեսցէ մինչեւ ի կատարած աշխարհի, և Պր. Հրիհորին և իւր ամենայն արեան մերձաւորացն. և զիւր պարկեշտ տիկնոջն Աղիգքոին զհոգին և զիւրայնոցն ամէնին՝ արժանաւորեսցէ յերկնային խորանին, անմահական սեղանին, և լուսեղէն պատմուճանին և անթառամ պսակին. լսել տայ զերանաւէտ ձայնն, եթէ, եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ի սկզբանէ աշխարհի. ամէն: Հայր մեր որ յերկինս: — Եւ ինքն վաղնանեցաւ Թվ. ՌԺԴ Պր. Հրիհորն:

1566. Թվ. ՌԺԵ. Սեպտ. ամսոյ ԻԵ. Խոնդիքարն Թուրքին մեռաւ ի մէջ գօրացն իւրոց, զոր էր գնացեալ ի վերայ քրիստոնէից, ի վերայ Ֆռանգաց աշխարհին, ի վերայ հռչակելի և անուանի մեծ և ամուր քաղաքի՝ որ կոչեն Վիատանեայ (Վիտին), և Թուրքի լեզուով Պէչ. և զի երկու անկամ գնացեալ էր և ոչինչ կարաց առնել, այս երրորդում էր գնացեր. և այնպէս ուխտ եդեալ էր, զի կամ զքաղաքն առցէ և կամ մեռցի. զոր իսկ կատարեցաւ իւր խոստումն, որպէս ի բերանոյ իւրմէ բխեց: Եւ էր թագաւորութիւն նորա որչափ թագաւորեաց՝ 47 ամ, և փոխանակ նորա նստաւ որդին սուլտան Սէլիմ անուն:

1567. Թվ. ՌԺԶ. Հոկտ. 1. Թագարն եկաւ ի Ըռուսաց աշխարհն, ի կողմանն Խմելնիքին, և էին հազար հոգի անօրէնք. և Ֆռանգ ազգն որ կոչին Իլախ՝ էին և նոքա արք իբրեւ 600. և էր գլխաւոր նոցա Սդրուս, որ էր սպարոսդայ Խմելնիքն. և էր ընդ նմա այլ իշխանք իւրեանց գնդաւն. ընդ որս էր Օլեքսանդր Խօրուժիին վոյվոտային եղբայր, և այլքն հարիւրապետք: Եւ իբրեւ դիմեցին ի վերայ Դաթարին, կոտորեցին ի նոցանէ իբրեւ արք 600, զքաջ և զօրեղ զմարդիքն. յետոյ մնացեալքն ի անօրինացն կրկին քաջալերեցան և դարանակալեցան, և դիմեցին ի վերայ Ֆռանգաց. և նոքա ցրուեալք էին և ոչ էին ի միում տեղոջ. և ընկան փախստական. և անօրէնք Դաթարն յետս նոցա չոգան և հասին Սդրուսին, որ էր գլուխ զօրացն, և սպանին, և զայլսն ընդ նոսա քաջ և արի մարդիքն, և գերեցին 80 հոգի կենդանի, և զայլս փախստական արարին, և ինքեանք ելին և գնացին ի երկրէն:

1568. Հայոց Թվ. ՌԺԶ. Դեկտ. Ի, Ալազգեաց Ցննդեան ժամանակն: Եկաւ Դադարն, և բազում զօրօքն, զոր ոմանք ասէին եթէ 40,000, և եմուտ ի գաւառն Բոտոլեաին, և զամենայն գաւառն և քաղաքն և զգիւղն աւարեց եւ գերի տարաւ, և զամենայն բարութիւն, զոչխար և զարջառն և զամենայն հացն և ստացուածն հրկիզ արար: Եւ զի երկու չաբաթ չրջեցան անօրէնքն ի երկիրս այս, և ոչ ոք ի նոցանէ կորեաւ. քանզի մեր իշխանքն և մեծամեծքն թուլասիրտ են դարձել և ձեռքն լքեալ և ծունկքն կթոցեալք, մանաւանդ յուտել և ի ըմպել և արբենալ, և զմիմեանս սպանանել և զազ-

բագործելն՝ պատրաստագոյն են, քան զթշնամիսն հալածել և կամ կոտո-
րել։ Զոր և ինքն վոյվոտա Ռուսքից զոր խռովժից կու անուանեն, փախեաւ
ի բերդն եմուտ և փակեցաւ, ընդ նմա և երկու որդիքն իւր և այլ մե-
ծամեծք. և զամենայն զառամիկք և զիղձք (?) թոյլ ետուն անօրինացն, որ
աւարեցին և գերեցին. բայց ինքեանքն այլ ի մէջ այդ բերդին՝ հազիւ զեր-
ծան. զոր եթէ մի օր այլ կացեալ էին, Աստուածն ամենազօր զիւրենք ի
ձեռս նոցա մատնեալ էր, բայց դարձեալ ողորմեցաւ և ոչ մատնեաց. զի
բազմագութ է և ողորմած։ Եւ հանին գերի իբրեւ 30,000 հոգի, և այլ աւելի։

1567–8. Թվ. ՌԺԶ. Վաղվանեցաւ կիւրեղ վոյքն. Աստուած ողորմի
հոգուն։

1567–8. Թվ. ՌԺԶ. Ֆռանգի դատաւորքն սկսան քաղքի բոլորն քարէ
պարիսպ չինելոյ, բայց բազմաց հաճոյ չթվեցաւ. քանզի մեծ և ծանր գործ
սկսան. և զի զքաղաքացիսն յոյժ նեղելով բանեցնէին. և նոքա անմռունչ
յոգւոց հանելով գործէին զգործն զայն. և էին ի մէջ գերութեան իբրեւ
զիսրայելացիսն առ Փարաւոնիւն երբեմն։

1568. Թվ. ՌԺԷ. Պիղծ և անհաւատ Դադարն ազգն եկաւ, և բազում
գիւղք և գաւառ աւերեց և գերեցոյց, և մեծ իշխան ումն անուն Լասքից՝
էառ ընդ իւր զօրս ոչինչ բազում, իբրեւ 5,000, և չոգաւ յետ նոցա, և
եհաս և կոտորեց զԴադարն. և բազում գերիք և աւարս ազատեաց և դար-
ձոյց։ Բայց ի իւրոց անտի հեծելոց սակաւ մի կոտորեցան ի Դաթարէն.
քանզի անօրէնքն այն բազում էին քան զնոքա։ Եւ այս ոչինչ է զարմա-
նալի, զի կռվոյ է բանս. զի ով ոք զնոյն խաղն խաղասցէ՝ այնպէս լինելով
է։ Աստուած զվերջն ի բարին փոխէ և տայ զօրութիւն քրիստոնէիցն։

1569. Թվ. ՌԺԸ. Բարեպաշտ թագաւոր մեր Զիկմունդ Ավգուստոս՝ մեծ
ժողովք արաւ ի քաղաքն Լուպլին, զոր ամենայն աշխարհն Իլախից անդ
կային ժողովեալ. և զի վաղուց հետէ ժողովք բազում լեալ էին վասն Ի-
լախից և Լիդվայի երկրին միաբանութեան, այսինքն է որ կոչի յունիա
(union). և Թարգմանի զայս, զի այս երկու երկիրս զոր վերոյ ասացաւ՝
Իլախի և Լիդվայի, թէպէտ տէրութիւն և թագաւորութիւն մի է, բայց
առանձին էին Իլախի երկրին դատաստանն և դատակնիք. զոր ի յայսմ
ժողովքիս եղեւ խաղաղութիւն և միաբանութիւն ի վերայ ամենայն աշ-
խարհի Իլախից. զի մի դատաստան լիցի և մի դատակնիք յաւիտեան, և
այլ չփոփոխվի այս սահմանքս և կարգս։

1570. Թվ. ՌԺԸ. Նոյեմբ. ամսոյ ԻԲ. Լվովի արհի եպիսկոպոսն Գժոնց
Սլոմովսքից եկաւ ի Կամենից. և ամենայն քաղաքիս բազմութիւն ել ընդ
առաջ նորա, Ֆռանգ ազգ և Հայք. և Ըռուզ ազգն լցան նախանձու և ոչ
էլին, վասն երեք պատճառի. զի մեք Հայոց ազգս Ֆռանգի առաջն էաք, և
նոքա ի մեր առաջն էին։ և վասն այսպիսի հակառակութեանց նոցա չէլին,

և ամօթալից մնացին։ Եւ այս եպիսկոպոս և Կամենիցի եպիսկոպոսն Գաժոնց Տեառ՝ եկին ի եկեղեցին մերոյ, և տեսին զպատարագն մատչելն, և զմկրտութեան կարգն և զխորհուրդն. և բազում հարցաքննութիւն արարին ի մէնջ, և մեք ազգս Հայոց ըստ պատշաճի իրի պատասխանի արաք նոցա. զոր և փառս տալով գոհացան զԱստուածոյ, որ է օրհնեալ։

1571. Թվ. ՌԺԹ. Փետրուարի Զ, օրն երկուշաբթի Բուն բարեկենդանի։ Ի քաղաքս Կամենից ի յայսմ ամին՝ մեծ գետյարուց եղեւ, զոր քաղաքին զխապախներն կոտորեց, և զքաղաքներէն աւերեց, և զկարմունչներն տապաւ. և զդեզանքն հացի (համբարք ցորենոյ) և խոտք շատ տարաւ. և բազում պակասութիւն արաւ քաղաքիս և ամենեցուն։ Զոր այս ամենայն եղեւ վասն բազում և զանազան մեղաց մերոց. զոր Տէր Աստուած զվերջն ի բարին դարձուսցէ, և ամենեցուն մեղաց թողութիւն պարգեւեսցէ. ամէն։

1571. Թվ. ՌԺԹ. Օգոստոսի ԺԵ. Հրամանաւ թագաւորին երեք իշխանք եկին ի Կամենից, որք էին Լիւդրադորներ (քննիչք), և շրջեցան ընդ ամենայն աշխարհն և ընդ քաղաքն թագաւորական, և զամենայն ինչ հարցաքննեցին՝ զկարգն և զսահմանքն, և ի գիր առին, և գնացին. և կացին երեք շաբաթ. և մինն ի նոցանէ եկաւ ի եկեղեցին Հայոց, որ էր թագաւորին սեգրըդար (խորհրդական կամ դպիր)։


1571. Թվին. ՌԺԹ. Հոկտ. ԺԵ. Բան վկտոր Մացէյ՝ որ էր իշխան քաղաքիս, առ Աստուած փոխեցաւ. զոր Տէր Աստուած ողորմի իւր հոգոյն, և ընդ բարեպաշտ իշխանսն դասեսցէ, և երկնից արքայութեան արժանի առնէ. քանզի յոյժ բարեհոգի ոմն էր, հեզ և խոնարհ. մանաւանդ զՀայոց ազգն քան զամենեսեան առաւել սիրէր և ընդունէր. և էր սգարոսդայութեան (աւագութեան) նորա ամք 28 [1]։

1571. Թվ. ՌԺԹ. Դեկտ. ԻԱ, օրն է հինգշաբթի։ Բան Բոդացքէյ, Բան Մկօլայ նստաւ իշխանութիւն Կամենից քաղաքիս, հրամանաւ թագաւորին. զոր Տէր ցիսուս տացէ նմա հոգի հեզութեան և երկիւղի և աստուածպաշտութեան, զի լիցի ըստ հրամանի սրբոց պատուիրանացն Աստուծոյ։

1571. Թվ. ՌԺԹ. Բարեպաշտ թագաւորն մեր Ջիկմունդ Ակուստուս խռովեցաւ ի վերայ քաղաքիս Կամենիցոյ, և զտամղան (ազատագիր մաքսի) որ չնորհել էր քաղաքացոց՝ որ չէին ի տալ տամղա Իլախի աշխարհ, նայ հիմիկ յայլվի հրաման առաւ՝ զի տայցեն. բայց յոյս ունին քաղաքացիքն՝ զի այլվի գթասցի և ողորմեսցի ի վերայ այս աղքատ քաղաքիս, և կրկին ազատութիւն չնորհիցէ, որպէս առաջ քան զայս. զի թէ ըստ պատշաճի իրացն երթայցեն և հայցեսցեն ի նմանէ, կարող է նոցա զայդ առնել, որպէս քրիստոսասէր թագաւորն։

1. Զնոյն բան գրէ և այլուր, յաւելլով, «հասեալ ի բարի և խորին ծերութիւն»։


1572. Թվ. ՌԻ. Սեպտ. ԻԸ, օրն երկուշաբթի: Ելախաց երկրին պատրոնն որ կոչի Պոկտան վոյվոտայ, եկաւ ի Կամենիցն, մանուկ տիօք, ամաց իբրեւ եօթնեւտասնից, բայց հասակաւն էր կատարեալ, և պատկերօք գեղեցիկ, և եկաց երեք օր ի քաղաքս. և իջեալ էր ի տունն Քարափչովսքիյին.



Պատկեր Հրաշագործ Ցիրամօր Կաւսեհիցայ.

և քաղաքին իշխանն՝ այսինքն սդարոսդան՝ Բոթոշքիյ, մեծաւ պատուով զինքն ընդունեց. և պատուելով մեծարեցին, և կոչեցին զնա ի պատիւ ի Հայոց Դատաստանատունն, և մեծ ուրախութիւն կատարեցին կերակրովք և ըմ-

պելով բազմածախիւք, և ազգի ազգի երգովք և նուագարանօք զուարճացուցին զսիրան։ Եւ զայս ամենայն պատիւ արարին նմա վասն այնր, զի ունէր Թագաւորէն Զիկմունդէն իշխանութիւն և պատուէր, զի ուր և կամիցէ երթալ և շրջել ի այս Թագաւորութիւն, հրաման լիցի նմա, և ոչ ոք ի մարդկանէ նմա բան չասիցէ։ Եւ ի գնալն ի քաղաքէն մեծաւ հանդիսիւ



Նոյն Պատկեր զարդարեալ.

ուղաւորեցին զնա. որ և գնաց ի խոդին. զի անդ եկեալ էր և դադարեալ էր, Թողլով զերկիրն իւր և պարոնանիստ զքաղաքանիւր. վասն զի կասկած ունէր իւրոց մեծաւորաց, զի կամէին զնա սպանանել. որպէս սովորութիւն է նոցա միշտ. և նա յաղագս այնորիկ իջեալ էր ի խոդինն. Եւ զիւր իշ-

խանք հեռացուցանելով յիւրմէ և չհաւատալով նոցա զանձն իւր, չուրջ և բոլորն իւր ժողովեց զիլխանացն ազգն, և նոքօք չրջէր. և ընդ նոսա զամենայն ինչ և պէտս կատարէր և հոգայր: Եւ եկաց այս կերպիւ ի Խոդինն չորս ամիս. և յետոյ եկին մեծարարքն իւր և եպիսկոպոսն իւրեանց. և երեք անկամ երդուան նմա, զի մի նիւթ մահուան խորհեսցին նմա. և ապա առեալ գնացին ի դախդն (աթոռ) իւր՝ ուր միշտ նստեալ կայր. որ կոչի Ցաան (Եաչ):

1572. Թվ. ՌԻԱ. Օլախի պարոն Պոկտան վոյվոտան և իւր եղբայրն Բեդրան ելին իւրեանց երկրէն և եկին ի այս Իլախի աշխարհն, և կացին ոչինչ բազում ժամանակս. յետոյ կրկին կամեցան գնալ իւրեանց երկիրն. և Օլախի մեծամեծք չընդունեցին զնոսա. և ի թուրքի խոնդքարէն բերին իւրեանց այլ ուրիշ պարոն ումն Եւոն անուն, զոր ի Մոսկովն եղեր է ժամանակաւ: Եւ երբ տեսին այս երկու եղբայրքն՝ որ ատեցան և անարգ մնացին և ունայն իւրեանց պարոնութենէն, յետոյ հնարք գտին և գնացին առ զօրավարքն Եաղլովեցքին, որ նոցա ձեռնտու և օգնական լիցի, և տանի զիւրենք հեծելազօրովք, և նստուցանէ ի պարոնութիւն իւրեանց. և խոստացան նմա պարգեւս մեծամեծս: Եւ նա հրամայեաց հարիւրապետաց, զի իւրեանց գնդաւն երթիցեն և մտցեն ի երկիրն Օլախաց, և տարեալ նստուացեն զնոքա ի պարոնութիւն: Եւ իբրեւ մտին ի երկիրն այն, ահա և նոքա պատրաստեցան և քաջացան, և հեծելովք ընդդէմ կացին, և ոչ ետուն թոյլ զի մըտանիցեն. և ոչ կամեցան զնոքա ի պարոնութիւն. այլ մանաւանդ բազում և չատ կորուստ եղաւ երկու կողմանէ, սոցա և նոցա, զի փոքր ի չատէ պատերազմեցան ընդ միմեանս. և թուրք ազգն այլ կայր ի հետ Օլախ: Եւ ապա դարձան ունայն և նկուն և ատեցեալք եկին դարձեալ ի աշխարհս այս: Եւ այդ իւան պարոն չատ իշխանք և մեծամեծք ընկեց և կորոյս ի Օլախաց ազգէն, դառն և չարաչար մահուամբ. որպէս երբեմն ի կռապաշտից ժամանակն: Եւ յայն ժամանակի զխոդինն այրեցին բովանդակ: Եւ էր գլուխ զօրաց վոյվոտայ Բոտոլսքիյ:

1572. Թվ. ՌԻԱ. Տէր Պետրոս ծեր քահանայն առ Աստուած փոխեցաւ. 52 ամ քահանայագործութիւն արաւ ի Ս. Աստուածածնին եկեղեցին, զոր Տէր Աստուած դասակից և պսակակից արասցէ զնա ընդ սուրբ քահանայսն և ընդ արդարան. ամէն:

1572–3 Թվ. ՌԻԱ. Եկաւ Տէր Մարտիրոսն Հաւթեցի եպիսկոպոս ի այս աշխարհս՝ նուիրակ. և ընդ նմա Տէր Ցովանէս անուն երէց մի, զոր ի յիւլոմն վաղճանեցաւ. և Տէր Մարտիրոսն նուիրկեց զիլոմն և զկամենիցն, և ելաւ գնաց փառօք և պատուով:

1572. Թվ. ՌԻԱ. Ցուլիս ԺԵ. Բան Մկրօլայ Գրիպքիյ նստաւ ի կամենից սդարոսդայութիւն, հրամանաւ բարեպաշտ թագաւորին Զիկմունդ Ա-

կուսդոսի. զոր Տէր Քիսուս տացէ նմա սիրտ սուրբ, և հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի իւրում. զի լիցի ըստ օրինացն և ըստ պատուիրանացն Աստուծոյ անարատութեամբ, առանց ակն առնելոյ և կաշառաց. սիրել զամենեսին, և միապէս խնամել զվեծն և զփոքրն, և քաղցրութեամբ վարել և հովուել զիշխանութիւն իւր, ի փառս Աստուծոյ. ամէն. ամէն. և եղիցի:

1572. Թվ. ՌԻԱ. Բարեպաշտ թագաւորն Չիկմունտ Ակուսդուս առ Աստուած փոխեցաւ, առ յոյն ամենեցուն: Ցետ փոխելոյն նորա բազում տարակոյս եղեւ ի մէջ իշխանաց. վասն զի ոչ գոյր յետնորդ այս թագաւորիս՝ որ ժառանգէր զաթոռ իւրոյ հայրենի. և եղեւ անիշխանութիւն աշխարհիս այս երկու ամ. յետոյ մեծ ժողովք եղեւ ի մէջ իշխանաց և ամենայն մեծամեծաց, և բազում խորհուրդ և քննութիւն արարին ի մէջ իւրեանց, թէ ուստից և կամ զո՞ր թագաւոր. վասն զի հակառակութիւն կայր ի մէջ նոցա, ոմն այս կոյս և ոմն այն կոյս խորհէին. ոմանք զՀեսարին (կայսեր) որդին կամէին, ոմանք զՄոսքովին իշխանն կամէին. և ոմանք այլ և այլ իշխանացն կամէին. և այսպիսի հակառակութեամբ ոչ կարէին հաստատել զխորհուրդ իւրեանց: Ցետոյ Ֆրանցուզքի (Փառանկաց) թագաւորն զիւր դեսպանն առաքեաց եպիսկոպոս մի, այսինքն է էլչի՝ ի ժողովս նոցա. և նա եկեալ հնարիւք և մեծաւ ճարտարութեամբ և իմաստ(ուն) բանիւք հաւանեցոյց զամենեսեան և հաճեցոյց, զի զթագաւորն իւր ընդունիցեն ի թագաւորութիւն, զոր և եղեւ իսկ. ամենեցուն հաճոյ թվեցաւ, մեծի և փոքու, զի Ֆրանցուզքին թագաւորեսցէ ի վերայ նոցա: Զոր և իսկոյն առաքեցին (ի) մեծամեծ իշխանաց և արքունի խորհրդով առ նա, զի եկեալ թագաւորեսցէ ի վերայ նոցա. ուր (որ) և կամակից եղեւ նոցա և հաւանեցաւ թագաւորել նոցա այսմ աշխարհի, որ կոչի Լէհիչնոց, այսինքն է Բօլաքայ (Լեհաստան): Ուր և առաքեցին նմա զթագաւորական զգեստն և զհրամանն թագաւորական և զիշխանութիւնս ի վերայ ամենայնի, ըստ օրինի սահմանաց և կարգաց նոցա, նա և զերդումն և զուխան իւրեանց. զի որպէս նախնոյն թագաւորաց կարգաւ և սահմանաւ վարէին զիւրեանց երկիրն զթագաւորութիւն և զիշխանութիւն, նոյն կարգաւ և սահմանաւ և սա թագաւորեսցէ և տիրեսցէ ի վերայ նոցա և ամենայն երկրի նոցա: Ըստ նմին օրինակի և թագաւորն նոցա ուխտադիր և դաշնադիր եղեւ նոցա. և երդուաւ նոցա, զի որպէս նախ քան զինքն թագաւորք իշխեցին և տիրեցին ի վերայ նոցա և ի վերայ աշխարհի նոցա, նոյն օրինակաւ և կարգաւ և ինքն տիրեսցէ, և ըստ հասարակաց կարգաց հովուեսցէ և տիրեսցէ ի վերայ նոցա. և ոչ մի ինչ փոխեսցէ և նորաձեւ սահմանս կարգիցէ. այլ ըստ հնոյն և առաջնոյն սահմանաւ վարեսցէ զնոսա:

1573. Եւ ևր թիւ Հայոց ՌԻԳ (ՌԻԲ) յորժամ նստաւ ի թագաւորութիւն. և փետրուար ամսոյ ԻԲ աւուրն բուն բարեկենդանին կիրակին հաստատեցաւ ի վերայ աթոռոյ թագաւորութեան իւրոյ. և է 25 ամաց երիտա-

սարդ գոլով. բայց անձամբ է վայելուչ և հասակաւն կատարեալ, և իմաստութեամբն զարդարեալ և հեռեւեալ: Եւ կոչի անուն նորա Հենեբիքուս թագաւոր. զոր Տէր Աստուած թագաւորն թագաւորաց փրկիչ ամենայն աշխարհաց՝ փրկեսցէ զինքն ամենայն փորձանաց հոգեկան և մարմնական. և չնորհեսցէ նմա բազում ամուլք թագաւորել. և տացէ նմա սիրտ սուրբ և հոգի ուղիղ, նորոգեսցէ ի նմա և բեւեռեսցէ զերկիւղ իւր սուրբ ի սրտի իւրոյ, միշտ խորհել զբարին և զհաճոյն ըստ Աստուծոյ կամաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցէ զկեանս իւր. զի և մեզ ընդ նմա լիցի խաղաղութիւն, և հանդարտութեամբ ի թշնամեաց պատերազմէ և յոբոգայթից թշնամոյն. ամէն: Նա և տացէ նմա թագաւորն անմահ Քրիստոս Աստուած զիւր ամենակարող և յաղթող զգօրութիւն և զքաջութիւն, յաղթող լինել ի պատերազմի. վանել զթշնամիսն իւր և խոնարհեցուցանել ի ներքոյ ոտից իւրոց. որպէս երբեմն թագաւորն սուրբն Դաւիթ՝ զանօրէնն զմաբլուրն զԳողիաթ: Եւ ամենազօրն Աստուած միշտ հովանի լիցի ի վերայ նորա. և իւր հզօր ձեռամբ և բարձր բազկաւ վերակացու եղիցի նմա զամենայն աւուրս կենաց իւրոց. ամէն: Եւ զհանգուցեալն զքրիստոսասէր թագաւորն մեր Ջիկմունդ Ակուստուս՝ դասեսցէ ընդ բարեպաշտ թագաւորսն, և հանգուսցէ ընդ արդարսն յանանց փառսն և յերկնից թագաւորութիւն. տացէ նմա վայելել և ժառանգել, Քրիստոս անմահ թագաւորն թագաւորաց. զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայնէ, այժմ և յաւէտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ էր ի թագաւորութեան նորա ամք 25. և յորժամ վաղճանեցաւ՝ էր ամաց 52: Հայր մեր որ յերկինս:

1574. Թվ. ՌԻԳ. Մարտի ամսոյ Ի, Աղուհացիցն: Եղաւ այսպիսի բան, զի Օլախաց երկիրն նոր ուրիշ պարոն կու բերէին միւս պարոնի վերայ. և երբ լսեց այս Օլախաց պարոնն՝ որ կոչէր Իւոն վոյվոտայ, իսկոյն պատրաստելով զզօրս իւր գնաց ընդդէմ իւր թշնամոյն. և եհաս ի Մինդանին երկիրն, և եգիտ զինքն անպատրաստ. զի նստել էին ճաշոյ ուտելոյն. և եհաս ի վերայ նոցա և կոտորեց. և փախեան ի Պրայիլն, և փակուեցան ի բերդն այս նոր պարոն: Եւ այս հին պարոն Իւոն կատղեցաւ և բարկութեամբ բորբոքեցաւ և եկն ի Պրայիլն, և զքաղաքն զամենայն հրով այրեց և թալանեց. և զքաղաքացիսն՝ զոմն ի սուր մաշեց, զոմն ի Տունան (Դանուբ գետ) ընկղմեց անողորմ, մինչեւ բուն երեխայքն. և զամենայն բարութիւն երկրին և քաղքին աւար առնելով դարձաւ ի տեղի իւր: Յետոյ այդ գաւառին Թուրքերն ժողովեցան և պատերազմեցան ի հետ նորա, և զնոսա կոտորեցին 2000 անձն: Յետոյ զբանն խոնտիքարին ազդեցին, եթէ Պողտանի պարոնն քեզ խային (թշնամի) դարձաւ, և ուրացաւ զքեզ և գլուխ քաշեց, և այսչափ չարիք գործեց և վնաս: Եւ խոնդիքարն իբրեւ զկատաղի գազան մեծաւ ցասմամբ և սրտմտութեամբ հրամայեց ասնձախներաց և Դաղրի խանին, զի գայցեն ի վերայ Օլախի պարոնին, և զերկիրն զամենայն

ընդեսացեն անողորմ։ Եւ զամենայն Դադրի խանն իւր գլխով և եօթն որդովն և շատ հեծելովն և թուրքի սանճախներն ի մի վայր ժողովելով, մտին յերկիրն, և զամենայն երկիրն հրձիգ արարին, և ի սուր մաշեցան, և գերի տարան, և աւար առին զամենայն մարդիք և զանասուն. և ոչ թողին բնաւ ինչ. բայց միայն Սեչովն ազատեցաւ և Սերաթն. այլ ամենայն ինչ մատնեցաւ ի ձեռս անօրինաց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Եւ զինքն զիւրն պարոնն կենդանի կալան և սպանին չարաչար։ Ցետոյ դարձեալ զնոյն պարոն բերեալ նստուցին ի երկիրն, զոր յառաջագոյն էին բերեալ ի վերայ այս իւռնին։ Այսքան է առ այս։

1574. Թվ. ՌԻԳ. ցունիս ամսոյ ԻԸ, օրն վեցշաբթի (ուրբաթ)։ Թագաւորն Ենրիքոս ելաւ գիշերով ի Փրաքովին բերդէն, որ է Թախթն իւր, և փախաւ յերկիրն իւր ի Ֆրանցիա, ուր թագաւորութիւն էր իւր. և զայս ոչ ոք չգիտաց իւր բոլոր իշխանաց. միայն երեք արամբ ելաւ ի բերդէն, յետոյ գիտացին թէ թագաւորն գնաց ի բերդէն, և իսկոյն ընթացեալ այսր և անդր՝ ոչ ուրեք գտան։ Եւ ոմն իշխան Վոյնիցքիյ ընթացաւ յետ նորա և եհաս նմա ի Հրանիցան, երկու միլ, և եկն անկաւ առաջի թագաւորին ի վերայ ճանապարհի, և թագաւորն զտեղի էառ և եկաց. և այս իշխանին ասաց՝ զի կացցէ ի վերայ ոտից իւրոց. և ասաց նմա, Ձի՞ ես եկեալ. զինչ կամիս։ Եւ այս իշխանն ասաց, Եթէ, թագաւոր, ողջ լեր. դարձիր վասն Աստուծոյ, քանզի թէ չդառնաս՝ իմ գլխոյ կորուստ առնես։ Եւ թագաւորն պատասխանի տուեալ նմա, Եթէ, Դարձիր գնա ի բանդ. ոչ թէ դու միայն եկեալ ես, թէպէտ ամենայն Բոլցքայ և ամենայն իշխանք գային և զիս կտրատէին յօդ յօդ՝ չիկայ հնար ինձ դառնալոյ. վասն զի պարտ է ինձ գնալ և տեսանել զմայրն իմ և զհայրենի ժառանգութեան աթոռն իմ. զի ահա զեղբայրն իմ մեռուցին մահադեղ արբուցանելով. և մայր իմ միայն գլխով է, և ոչ ոք չունի իւր ձեռնտու կամ օգնական. և միւս կրսեր եղբայրս կատարելութիւն ոչ ունի, և իշխանք և մեծամեծք ընդդիմակցութեամբ հակառակին նմա, և ոչ կամին հնազանդել. երկնչիմ, գուցէ զերկիրս չիտան տուր թշնամեացն. վասն որոյ անպատճառ պիտի երթամ. և մինչեւ չորս ամիս այլուի կու գամ առձեզ. ոչ թողից զձեզ ի մէջ տարակուսութեան և անիշխանութեան։ Բայց զամենայն ինչ գրով թողել եմ ի սենեակս իմ՝ խաչոռ (կապերտ ?) յետեւ. ի անդ կու գտնուք և կու իմանայք զամենայն որպիսութիւն և զպատճառն գնալոյ իմոյ ի ձէնղ։ Զայս ասելով ուղի անկեալ գնաց ի ճանապարհն իւր։ Եւ զամենայն ինչ զոր բերել էր ի հետ իւր ի Ֆրանցիայէն, զայդ ամենայն յառաջագոյն հանել էր ի բերդէն և ուղարկել էր, անտես ի մարդկանէ՝ յաշխարհն իւր. և երբ եկել են ի սրահն իւր՝ ոչ ինչ գտել են, բայց միայն երկու բարձ գլխոյն։ Եւ այս եղեւ վասն անհնազանդութեան իշխանացն և մեծամեծացն, զոր այսպիսի բան բնաւ ոչ էր եղել այս աշխարհս։ Աստուած զաւարտն ի բարին առնէ. ամէն։

1574. Թվ. ՌԻԳ. Օգոստ. Գ. Նեմիչի դատաստանին դատաւորքն զՀայոց դատաստանն անփոյթ առնելով, և ոչինչ համարելով զթագաւորական տվեալ զտումարն և զհրամանն, և կալան զոմն Հայ երիտասարդ և գլխատեցին: Պատճառն այս եղեւ, զի այս երիտասարդն եագուպ անուն՝ որ էր Միխալին թոռն, զոմն առնակին սեղեխ ունելով՝ մտեալ էր առ կինն ի գիշերի. և այրն կնոջն կալաւ ի միատեղ, և բերեալ ի բաթուչն (դատաստանարան), զերկուքն այլ՝ զկինն և զերիտասարդն գլխատեցին: Զոր այսպիսի բան բնաւ չէր եղեր, որ զՀայն՝ Նեմիչն դատէր կամ ի մահ դատապարտէր. և այս եղեւ վասն անթիւ մեղաց մերոց, մանաւանդ վասն անհոգութեան դատաւորացն:

1574. Թվ. ՌԻԳ. Թուրքի խոնտիքարն սուլտան Սէլիմ մեռաւ. ինն ամ թագաւորութիւն վայելեց, և փոխանակ նորա նստաւ որդին իւր սուլտան Մուրատն:

1574. Թվ. ՌԻԳ. Տէր Գրիգոր եպիսկոպոսն՝ որ էր Վանեցի, առ Աստուած փոխեցաւ ի յԼստամպօլն. զոր խռովեցաւ վերայ յԻլովցոց, և գընաց ի այս աշխարհէս. և էր եպիսկոպոսութեան նորա ամք 22, զոր եղեւ աթոռակալ այս աշխարհս, ի վերայ Իլովին և Կամենիցոյ:

1575. Թվ. ՌԻԴ. Հոկտ. ԺԲ, օրն երեքշաբթի: Կամենից քաղաքն Թաթար եկաւ, և շուրջ զքաղաքաւն չրջեցան ամբարիշտքն. և զամենայն գեղանն այրեցին հրով, զՑօլչքան և զՆովասելիցան և զԳօպոչոմն, և զՍ. Լուսաւորչին զեկեղեցին Հայոց, և այլ շատ գեղանք. զոր և իսկոյն եկել էին բերդին ներքեւ և շուրջ զլերամբք ապաստակեալք, և ի մէջ քաղաքին նետաձիգ լինէին, անահ և աներկիւղ չրջելով: Զոր էին հասեալ մինչեւ յԻլոմն. և հազիւ ազատեցաւ քաղաքն. զի թէ թօբերով չընդդիմանային ընդդէմ նոցա, այլ և յԻլովին յետ անցել էին, շուրջ զգաւառաւն զամենայն ինչ հրով այրեցին. յԻլովէն մինչեւ ի Կամենից՝ տեղ ոչ թողին որ չգերեցան. և աւարեցին զմարդիկ և զանասունս, որչափ ինչ կայր՝ զամէն սրբեցին, և հանին զերկրի բարութիւնս. այլ և մինչեւ ի Լուցքան՝ զՎիղվայի գաւառաւն և Վոլինի գաւառաւն և Բոտոլեայի գաւառաւն, որչափ կարաց և ձեռն բաւեց՝ զամենայն ինչ տարաւ, անթիւ և անբաւ: Եւ ելեալք գնացին և անցին զՏուրլուն, խոդինէն ի վայր, անվնաս զամենայն գերեալսն և գաւարն անցուցանելով այնկոյս գետոյն. այսպէս ելեալ գնացին անօրէնքն անահ և անկասկած: Զոր այսպիսի համարձակութիւն անբարշտաց ոչ էր լեալ՝ որչափ Կամենից քաղաքն կանգնեցեալ կայր. զոր և ի մէջ քաղաքին չիւարեցան և տարակուսեցան. ամենեցուն ձեռքն լքան, և ամենայն անձն մարդոյ դողացան. և ոչ ոք իշխանաց կամ մեծամեծաց հնարք և ճարտարութիւն և կամ փոքր ի չատէ քաջութիւն ոչ ցուցին. և ոչ բնաւ ի անօրինաց կալան կամ սպանին, որպէս յերեկն և եռանդն կային այնպիսի ոմանք արք պատերազմողք և քաջասիրտք:

Բայց ոչ է պարտ հիանալ. զի ամենեցուն Տէրն երարձ ի սոցանէ զամենայն օրպիսութիւն. ըստ մարգարէութեան Եսայեայ, զոր կու հրամայէ ի բերանոյ Աստուծոյ այսպէս. եթէ, « երարձ Տէր յիսրայէլէ զգլուխն և զվերջն, զվեծն և զփոքրն ի միում աւուր. այսուհետեւ ժողովուրդն ի գերութիւն վարեցաւ վասն ոչ ճանաչելոյ նոցա զՏէր. և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյ: Եւ ի վերայ այսր ամենայնի ժողովուրդն ոչ դարձաւ, և զՏէր զօրութեանց ոչ խնդրեցին, մինչեւ վիրաւորեցաւ. վասն այնորիկ ի վերայ երիտասարդաց նոցա ոչ եղիցի ուրախ Աստուած, և այրեաց և որբոց նոցա մի ողորմեսցի, զի չարք են և անօրէնք. և ամենայն բերան խօսի զանիրաւութիւն », և այլն ըստ կարգի: Ուր և այժմ մարգարէութիւնս կատարեցաւ ի վերայ այսմ երկրի իշխանացս. զի ոչ ունին միաբանութիւն ի միջի իւրեանց, և ոչ պատիւ և ոչ հնազանդութիւն, և ոչ սէրն Աստուծոյ իւրեանց սրտի. վասն որոյ Տէր զօրութեանց կամի եղծանել զերկիրն նոցա, և զինքեանս ընկել ի մեծութենէ և ամբարտաւանութենէ բարձր իշխանութենէ, վասն ծուլացեալ մեղաց մերոց: Զոր Տէր Աստուած տացէ նոցա հոգի զգաստութեան և զօրութեան և իմաստութեան, զի մի առնիցեն անփոյթ զայսպիսի տեսութիւն և զգուշակումն, անհաւատից և ամբարշտաց, զոր ոչ էր եղեալ երբէք նախ քան զայս այսպիսի ինչ՝ զոր այժմ եղեւ:

1576. Թվ. ՌԻԵ. Հանգեաւ առ Աստուած կամենից քաղաքիս Ֆռանգի եպիսկոպոսն Գժօնծ Տեւուշ Սեգենովքէյ. 13 ամ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան այս վիճակիս. զոր Տէր Աստուած ողորմի հոգուն. և էր հեզ և խոնարհ ոմն և պարզամիտ և երախտաւոր առ Հայոց ազգիս, միշտ ընդունելով զնոսա, ի սեղանս միշտ հացակից առնելով, և մեծարելով քան զչափն աւելի զեպիսկոպոսն մեր և զքահանայսն: Թողէ նմա Տէր զմեղս՝ զկամայն և զակամայ. ամէն:

1577. Հայոց Թվ. ՌԻԵ. Մայիս ամսոյ Ա, օրն երեքշաբթի: Ի յայսմ ամի ի Լեհից աշխարհս նոր թագաւոր նստաւ, որոյ անուն կոչի Պաթօրիյ Ըշտեֆան, որպէս առաջագոյն գրեալ կայ ի սմսմ թխտիս՝ զպատմութիւն թագաւորացն, ողորմած հոգոյ Չիկմունտ Ավգուստոսի և զվախճանն նմին. և յետ նորա միւս թագաւորին Ֆրանցուսքիյ աշխարհէն, զոր էին բերեալ, անուն նորա Եէնիրիքոս. զոր վասն անհնազանդութեան իշխանացն այսմ երկրի՝ ելաւ, և փախստական գիշերով գնաց յաշխարհն իւր, և այլ ոչ դարձաւ, յաղագս անկարգ և անսահման գնացից սոցայ: Եւ յետ երկուց ամաց բազում անկամ ժողովեցան և քննութեամբ ընտրեցին իւրեանց երկրի վերայ զայս վերոյգրեալ թագաւորն, և բերեալ նստուցին ի յաթոռ թագաւորութեան ի քաղաքն Թագաւորանիստ ի Կրաքովն. և մայիսի առաջին օրն երեքշաբթի օծեցին, և թագադրեալ պսակեցին ըստ օրինի թագաւորութեան: — Եւ հանգուցեալ թագաւորիս Ավգուստոսին քոյր մի կայր ժառանգ աշխարհիս այս՝ ի բնական հայրենեաց իւրոց, զնա ետուն նմա այս

թագաւորիս ի կնութիւն. և զհարսանիքն այլ պատրաստեցին և կատարեցին։ Բայց այս թագաւորս զոր առաջ ասացաք՝ ոչ էր ի թագաւորական զարմէն, և ոչ ինքն էր օծեալ թագաւորին որդի, այլ էր ի արքունի իշխանացն, այսինքն զինուոր. որ և վասն քաջութեան և հմտութեան պատերազմաց՝ զոր ցուցեալ (էր) ի Մածրաց երկիրն, և համբաւ և լուր նորա հասեալ էր բազում աշխարհն. առաքեցին առ նա պատգամաւորս և նուիրակս և զխոստումն իւրեանց. մինչ հաւանեցուցանելով զնա բերին ի Մածրաց երկրէն Պողտանայ երկրովին, և տարեալ նստուցին ըստ առաջ ասացելոցն՝ ի թագաւորութիւն։ Զոր ամենազօրն երկնաւոր թագաւորն թագաւորաց՝ տացէ նմա սիրտ սուրբ և զհոգի ուղիղ նորոգեսցէ ի նմա. և տացէ նմա միշտ խորհել զկամս Աստուծոյ և գնալ ի պատուիրանս նորա, և առնել զհաճոյսն Աստուծոյ, ըստ օրինի բարեպաշտ թագաւորաց. և ուղղափառութեամբ վարեսցէ զկեանս իւր. զի մի խոտորեսցի երբէք ի պատուիրանաց Աստուծոյ ալ կամ ահեակ. այլ միշտ բեւեռեալ ունիցի զերկիւղն և զսէրն Աստուծոյ ի սրտի իւրում. և ամենազօր թագաւորն անմահ տացէ նմա հոգի իմաստութեան և գիտութեան, հոգի երկիւղի աստուածպաշտութեան, հոգի հանճարոյ և զօրութեան. զի վարեսցէ զաշխարհս զայս խաղաղութեամբ և հանդարտութեամբ, ի չար պատերազմաց թշնամեաց անօրինաց. և զսուրն իւր ի վերայ թշնամեացն միշտ մխեցուսցէ կայծակամբ կաղնոյ. ամէն։ — Եւ մեք թշուառացեալքս ազգս Հայոց՝ զոր կամք գրկեալ ի թագաւորութենէ գահոյից և ի պերճութենէ իշխանացն, և մնացեալ կամք իբրեւ ճնճղուկ մի ի տանիս և իբրեւ բու աւերակի, և տարագիր եղեալ պանդխտեալ և նժդեհեալ կամք ի այսմ օտար աշխարհս և օտար լուրս և ի հողս, յաղագս օրինազանց և անկարգ գնացից մերոց. վասն որոյ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած և խնդրեսցուք զողորմութիւն նորա, զի տացէ այս թագաւորիս սիրտ մարմնեղէն և հոգի արդարութեան, զի միշտ քաղցր աչօք հայեսցէ ի վերայ ողորմելի և անտիրացեալ ազգիս մերոյ. զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածպաշտութեամբ. զի այս է հաճոյ և ընդունելի առաջի Աստուծոյ փրկչին մերոյ, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։ Զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայն առ և ի տուր չնչոյ, այժմ (և) յաւիտեանս. ամէն։

1577. Թվ. ՌԻԵ. Այս թագաւորիս հրամանաւն եկին երկու իշխանքն՝ որ կոչին Ռեվիզօրներն (քննիչք), և երկու օր կացին ի Կամենից, և գնացին։

1577–8. Հայոց թվ. ՌԻԶ. ի այս ամին Ողախաց երկիրն նոր պարոն մնաւ, Բոդիովա Իւոն անուն նորա. վասն զի հին պարոն Բեդրա լցեր էր զերկիրն հոռոմ ազգաւ և Թուրք ազգաւ. և երկրցիք խիստ մեծ նեղութեան մէջ էին հոռմին և Թուրքին ձեռն, որպէս երբեմն Իսրայելացիքն առ փարաւոնի յԵգիպտոս. վասն այն պատճառի առեցին զինքն, և չկամեցան

զնա ի պարոնութիւն: Եւ այս Բողքովա Իւոնն երբեմն լեալ էր ի երկիրն, և յետոյ ելեալ ի յերկրէն գնացեալ էր ի Մաճարք, և յետոյ եկեալ Իլախաց երկիրս այս, ժամանակաւ ժամանակաւ կացեալ էր և առ մեծամեծս. և երկրի պարոնայք դաղտաբար սմա թղթեր առաքելով իւրեանց ձեռնագրով և մոհրովն, կոչէին զինքն ի պարոնութիւն. և նա նոցա ղորդութեան վերայ ելեալ և ժողովեց զԹագվեցն 400, և ընդ նոցա եմուտ ի երկիրն Օլախաց. և եկաւ ուղղորդ ի յԱն (Եայ) ուր պարոնանիստ քաղաք է. և զմիւսն հին պարոն փախստական արարեալ ի երկրէն, ինքն նստաւ փոխանակ նորա ի պարոնութիւն: Ցետոյ դարձեալ այդ հին պարոն՝ որ է Բեդրա, ժողովեց զԹուրքն և զՄինդանն, և դարձեալ եկաւ ի այս Բողքովային վրայ, և զինքն եհան ի պարոնանիստ ապարանիցն ի յԱն, և արար փախստական. և ինքն դարձեալ նստաւ ի պարոնութիւն: Եւ զայս Բողքովանն հրամանաւ Թագաւորին մերոյ Ստեփանոսին՝ կամեցաւ վոյվոտան ղրկել ի Թագաւորն՝ կապանօք. և աղաչեաց զվոյվոտան որ Թոյլ տայ նմա, զի ինքն իւր կամաւ երթայցէ առ Թագաւորն. և նա եթող զնա զի երթիցէ: Եւ իբրեւ զնաց առ Թագաւորն՝ ի նոյն ժամն զինքն կապել ետ երկաթի կապանօք, և առ իւր պահել. և յետ փոքր ժամանակի հրամայեաց գլխատել ի Լոմն: — Ցետոյ դարձեալ յետ երկուց շաբաթուցն՝ այլ ոմն ուրիշ պարոն մտաւ ի յերկիրն՝ Թագաւորեն. զոր ոմանք ասացին, եթէ այդ Բողքովային եղբայրն է. և դարձեալ եկն ի պարոնանիստ քաղաքն. և զհին պարոն զԲեդրա եհան ի ապարանիցն՝ որ է ամրոցն, և ինքն եմուտ և նստաւ ի տեղի նորա, և փակուեցաւ ի ամրոցին: Եւ ունէր ընդ իւր 1000 Թազախ՝ դրճանքչիք, և Թօփեր այլ ունէր ի հետ իւր: Եւ այս պարոն Բեդրն չիւսարեցաւ տարակուսեցաւ, Թէ զինչ առնիցէ. և դատեցաւ ի Եասէն՝ ուր դախդն էր. և հեծելովն իւրով հեռագոյն չրջէր. մինչ դարձեալ ետ բերել զԹուրքերն, և ընդ նոսա սկսաւ կռիւ առնել ի հետ այս նոր պարոնին. և որչափ մարտնչէին և կռուէին՝ այդչափ կոտորէր զնոսա այդ նոր պարոնն. և բազում Թուրքն կոտորեց և զՕլախցիքն այլ ընդ նոսա: Եւ այս ընդերկարեցաւ մինչեւ երկու ամիս. և հանապազ պատերազմէին, և միշտ յաղթուէին և կոտորուէին այս հին պարոնին մարդիքն: Բայց վասն այս պատճառի մեծ նեղութիւն և հալածանն եհաս այդ երկրի բնակչաց ամենայն ազգի, եթէ Հայոց և եթէ Օլախի. զոր զքաղաքս նոցա այրեց զԱն, և զամենայն ինչսն զոր ունէին՝ Թալանեցին և աւարեցին, և զինքեանսն լաւ ի պատուաւոր մարդկանէ սպանանէին: Բայց այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց. զոր Աստուած ողորմի ամենայն աշխարհի, և բառնայ զայսպիսի պատուհասն ի յամենայն երկրէ և ի սահմանացն, նա և ի մերում քաղաքէ և ի սահմանաց մերոց. ազատէ ի ձեռաց անօրինաց՝ խստաց և ապստամբողաց. և զամենայն Թշնամեաց զկարողութիւն և զզօրութիւն խափանէ, և կործանէ զնոսա մինչ ի սպառ: Նա և մեզ տացէ զգաստութիւն և արթնութիւն. զի լիցուք ըստ պատուիրանի նորա, և գտցուք զթողութիւն մեղաց մերոց. և միշտ բեւե-

ռեսցուք զսէրն և զերկիւղն Աստուծոյ ի սիրտս մեր. գնալ յամենայն օրէնս անարատութեամբ և արդարութեամբ և ամենայն աստուածպաշտութեամբ. զի այն է հաճոյ և ընդունելի առաջի Աստուծոյ. որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ: Զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայնէ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1577. *Հայոց թվ. ՌԻԶ. եկաւ Էջմիածնին Տէր Թադէոս կաթողիկոսն՝ ի Կամենից. ընդ նմա երկու եպիսկոպոսք. մինն Տէր Յոհաննէս, և միւսն Տէր Փիլիպոս, և արեղայ մի, որոյ անուն Վարպետ կոչէին, որ է Տէր Աւետիս:*

1578. *Հայոց թվ. ՌԻԷ. Աղուհացիցն: Թաթարն եկաւ և շատ վնաս արաւ այս երկրիս, և անհամար գերի տարաւ զմարդիքն, և շատ սահմանացն զքաղաքն և զգեղն այրեց և թալանեց, մանաւանդ բազում արս և զկանայսն և զտղայս ի սուր մաշեց. վասն զի ցրտային էր և ձմեռնային էր ժամանակս, և ձիւն սաստիկ կայր, որ ոչ կարացին փախչել ազատել. և Ոստրօհն (Ostrog ի Վոլինիա) քաղաքն այրեց բովանդակ, և զամենայն բանբութիւնս էառ. զոր զերդն այլ հազիւ կարացին ազատել: Այլ այս ամենայն եղեւ վասն թուլասրտութեան և անհոգութեան թագաւորիս իշխանացն ամենայն. զոր Տէր Աստուած զաւարտն ի բարին առնէ, և զմեզ ազատէ ի ձեռաց անօրինաց և անհաւատից. և մեր բազում յանցանաց Թողութիւն շնորհեսցէ:*

1578. *Հայոց թվ. ՌԻԷ. ի Կամենից քաղաք նոր եպիսկոպոս նստաւ. անուն ԳԺենց Մարցին Օբաթ Մոկիլսքից:*

1578–9. *Թվ. ՌԻԷ. ի Կամենիցս Հայտուքներն եկին ի Մաճարք, որք էին թագաւորին Ստեփանոսին չրջակայ և բոլորովի զօրականք. և էին թվով 800, ընդ հեծեալս և ընդ հետեւակս. և կացին ի քաղաքս երկու չաբաթ. դարձեալ գնացին առ թագաւորն:*

1579. *Թվ. ՌԻԸ, մարտի ԺԵ. Մեծ գետյարոյց եղեւ ի Կամենիցս, և բազում նեղութիւն և պակասութիւն հասոյց քաղաքիս, զեպապախան կոտորելով, և զայլ չինութիւնս աւերելով, զմարդիկն ընկղմելով: Զոր վասն այսմ ամենայնի փառք Աստուծոյ:*

1579. *Թվ. ՌԻԸ. Հոկտ. ԻԹ. թագաւորն Ստեփանոս մեծ և բազում զօրօքն գնաց ի Մոսքովի երկիրն, պատերազմել ընդ Մոսքովի քնազին. և աստուածային կարողութեամբ զԲոլոցքան էառ, զոր այս Բոլոցքան մեծ և անյափելի քաղաք կու անուանի, զոր Մոսկովցիքն առել էին ի այս թագաւորէս. և էր ի յայն ժամանակէն մինչեւ ցայժմ 17 ամ: Եւ վասն այս պատճառի քաղաքիս իշխանն որ կոչի Բերդի ադարոստան, մեծ ուրախութիւն և ցնծութիւն կատարեցին քաղաքիս մեծամեծք և դատաւորք. և զՀայ ազգն մեծարեցին, և հայցեցին զի ընդ նոսին կատարեսցեն զայս ուրախութիւնս.*

զոր և քահանայք և միաբան ժողովուրդք մեծաւ խնդութեամբ զգեստաւորելով, խաչիւ և աւետարանաւ շրջեցան զբոլոր քաղաքն և զեկեղեցիք նոցա։ Բայց Ըռուզ ազգն չմիաբանեցան, և ոչ կամեցան զայս ուրախութիւնս կատարել, վասն նախանձու սրտից իւրեանց, զոր ի սկզբանէ թշնամիք են Թագաւորիս և ամենայն քրիստոնէից ազգին. զոր հատուցէ Տէր ըստ սրտից նոցա։

1579. Թվ. ՌԻԸ, և օգոստոսի ԻԲ. Բազում և անթիւ մարախ եկաւ, վասն ծովացեալ մեզաց իմոց։

1581–2. Թվ. ՌԼ. Շինեցաւ պլանքաներն, Ըռզի խապախն։


1581–2. Թվ. ՌԼ. Տէր Օքսենդն ծեր քահանայ առ Աստուած փոխեցաւ. զոր Աստուած արժանի առնէ ընդ սուրբ քահանայիցն դասս, և էր 90 ամաց. և 58 ամ քահանայութեան արաւ ի Ս. Նիկոլայ եկեղեցի։

1582. Թվ. ՌԼԱ. Մարտի ԺԵ. օրն երկուշաբթի։ Ի կամինից քաղաքն մեծ ուրախութիւն կատարեցին. այսինքն է որ կոչի Լեկտամռս (լատին. lætamus, ուրախ լիցուք). վասն զի Թագաւորն մեր Ստեփանոս՝ Աստուծոյ կարող զօրութեամբ հնազանդեցոյց զՄոսկովի քնազն. որ և զամենայն աշխարհն Մոսկովի հրկիզ արար և ընկեաց, և բազում բերդ էառ ի Մոքովէն։ Ցետոյ ոչինչ չկարաց առնել Մոքովի գնեազն. այլ հրեշտակութիւն առաքելով զմեծ փափան զՀռոմայ, զի հաշտեսցի Թագաւորն Ստեփանոս ընդ քնեազին Մոսկովի. և մեծ փափն Հռոմայ՝ փոխանակ իւր առաքեաց զմեծ կարտնալն իւր՝ մեծաւ փարթամութեամբ, զի եկն և խաղաղացոյց զերկու Թագաւորն, որ հաշտեցան ընդ միմեանս, և երդմամբ ուխտիւ հաստատեցին զյաւիտենական խաղաղութիւն յորդեաց որդիս և ազգաց յազգս։ Եւ որչափ այս Թագաւորն Ստեփանոս այս հեծելութեան վերայ խազնա և մալ խարճել էր, զայդ ամենայն նմա վճարեց այս Մոքովի քնեազն. և զիֆլանդն՝ որ է մամլուքազն (վիճակ, գաւառ) Ղեմեցին, զամենայն բովանդակն դարձոյց Ստեփանոս Թագաւորին. և էր Թուով 130 բերդ. զայդ ամենայն էառ ընդ իշխանութեամբ Թագաւորն Ստեփանոս։ Վասն որոյ Քրիստոսի Աստուծոյ մարդասիրին փառք և պատիւ յաւիտեանս. ամէն։

1582–3. Թվ. ՌԼԱ. Եանգով պարոն Օլախաց երկրին՝ հպարտացաւ ընդդէմ Թագաւորին Ստեփանոսին, և զծածուկ թղթերն ուժով էառ ի չավուշին ձեռացէն, և երաց և ընթերցաւ. վասն այն պատճառի համար զինքն եհան ի յերկրէն՝ խոնդքարի հրամանաւն, և նա եկն ի Լով քաղաքն. և Թագաւորն Ստեփանոս զնա գլխատել եաւ։

1582–3. Հայոց Թվ. ՌԼԱ. Նոյեմբեր ամսոյն. Բեթր Օլախի երկրի պարոն՝ զոր հանել էին ի տէրութենէն զինքն, այս վերագոյն գրեալ Եանգուլ պարոնին պատճառաւ, զոր հայցել էր ի խոնդքարէն, որ փոխանակ Բեդրի նոցի այս Եանգուլս. զոր և խոնտքարն յաղագս խնդրելոյ նորա կոչեաց

առ ինքն զԲեզրան. և նա թողեալ զպարոնութիւնն գնաց առ խոնտքարն, և հրամայեաց տանել զնա ի Հալապն. և ապա յուղարկեց զԵանգուլն, որ եւ կաւ նստաւ Օլախաց երկիրն ի պարոնութիւն: Եւ որպէս վերագոյն կայ գրեալ զԵանգուլին կորուստն, զոր հպարտացաւ ընդդէմ Թագաւորին մերոյ Ստեփանոսին, և զնորա ծածուկ Թագաւորական խորհուրդն կամեցաւ իմա-



Ս. Ստեփանոս [1]:

1. Ս. Նիկողայոս եկեղեցւոյ մէջ. Ս. Ստեփանոսի պատկերն է, որոյ քովերը գրուած է. *Ձիշատակ* է պատկերքըս Նուրիճանի Իորդի Փիրզաստա մըղտէսին եւ իւր կենակցո եւս մըղտեսին, ի դուռն Սուրբ Նիկօլա եկեղեցին. Թվ. ՌՃԲ:

նալ. ընդդէմ ապիրատուԹեան նորա զայս հնարք խորհեցաւ, և յուղարկեաց առ խոնտքարն՝ որ զինքն հանէ ի պարոնուԹենէ, և զպարոնուԹիւնն տայ ի ԲեԹրան, զոր և արար այնպէս. և եկաւ նստաւ ի պարոնուԹիւնն, այս երբորդում անգամ։

1582–3. Հայոց Թվ. ՌԼԱ. Մեծ և զարմանալի բան եղաւ ի մէջ Լաթինացոց ազգին. զի մեծ Պապն Հռոմայ փոփոխեց զիւրեանց բնական և առաքելադիր տօնսն, զոր ունէին կարգեալ երիս սուրբ ժողովոյն հայրապետաց. այսինքն է, Նիկիայի, Կոստանդնուպօլսի և Ցեփեսոսի Ռ ժողովոյն. քանզի օրէ յայնմանէ վարէին մինչեւ ցայժմ, և ոչ էին խոտորեալ ոչ այլ և ոչ յահեակ. զոր այժմ խոտորեցան առանց իւիք պատճառի (!)։ Ուր (որ) և հրամայեաց զամենայն տօսն զտէրունական և զմարտիրոսական և զամենայն Սրբոց՝ փոփոխել, և նորաձեւ կարգաւ վարել, որչափ կան Լաթինացոց ազգն. և է այսպէս խոտորումն նոցա. հրամայեաց զի զամենայն տօնսն տասն աւուրբ յառաջ տօնեսցեն, զոր յառաջագոյն ըստ հնոյն կարգի տօնէին. զոր և նոյն կերպիւ զոր վերագոյն գրեցաք՝ սկսան տօնել. զոր և բազումք յազգէ նոցա հիանալով զարմանային (վասն) նորաձեւ սահմանաց նոցա. բայց բազմաց հաճոյ չԹուեցաւ այսպիսի խոտորումն իւրեանց ազգին։

1583. Թվ. ՌԼԲ. Ոմն Լաճար Եանչիյ անուն ժողովեց զԹազախներն իբրեւ 5,000, և նոքօք գնաց և զԹուրքի խոնտքարին զքաղաք զՊենտէրն հրկիզ արար, և զբերդն աւերեց, և զմարդիքն որչափ գտաւ՝ զամէնն ի սուր քաշեց, և զամենայն ապրանքն Թալանեց, զոչխար և զարջառ և զամենայն բարուԹիւն։ Եւ այս քաղաքացիքն որք մնացին ողջ՝ գնացին ի խոնտքարն՝ լալով և կոծելով և մեծ ողբով, և պատմեցին նմա զիւրեանց վնասն. և խոնտքարն հրաման արաւ զօրապետին իւրոյ, զի զօրօք իւրովք մտցէ ի այս Թագաւորիս աչխարհ։ Եւ եկին անցին զՏունան, և անդ կացին մինչեւ ժողովեն զամենայն զօրս իւրեանց. բայց յետոյ քննուԹիւն արարին և ծանեան, եԹէ Թագաւորին գիտուԹեամբ ոչ էր այս բանս, այլ այն անիծած Մահրին բանիւ էր այս աւերումս և խաւնակուԹիւնս. և յետ զարձան գնացին, վասն երդմանն և խաղաղուԹեան՝ զոր ունին իւրեանց մէջ երկու Թագաւորքն։ Եւ այդ գոռոզ Եանչին հրկիզեալ սատակեցաւ։

1584. Թվ. ՌԼԴ. Թագաւորն Ստեփանոս հրամայեց զի զԹազախներին մաչեսցեն ի սուր սուսերի, վասն պէնտէրին վնասուց համար, զոր գործեալ էին առանց հրամանաց Թագաւորին. զոր պիտէր բազում խռովուԹիւն լինէր վասն նոցա պատճառի ի մէջ երկուց Թագաւորաց, ըստ առաջասացելոյն։ Եւ Թագաւորն հրամայեաց զի կալցեն զնոսա և պահեսցեն ի Կամինիցս, և ըստ հրամանի Թագաւորին կալան 38 այր, և այլքն փախեան և Թաքեան. և զորս կալան՝ փակեցին ի մէջ բերդին, մինչ որ Թագաւորէն դառնայ չաւուշն. և երբ դարձաւ, և Թագաւորն զիւր հաւատարիմն ուղարկեց ի հետ չաւուշին,

ոմն Ցերժքո անուն զոր եկաւ, և հրամանաւ թագաւորին հանին ի դաշտն. և առաջի չաուշին գլխատեցին զնոսա. զոր չաուշն տեսաւ աչօք իւրովք. և էին թուով իբրեւ 33, ի մի ժամ գլխատեցին զնոսա: Եւ 26 թօփք զոր բերեալ էին ի Պէնտէրէն, հրամանաւ թագաւորին դարձուցին չաուշին, զոր առեալ տարաւ զնոսա:

1584. Թվ. ՌԼԳ. Թագաւորն Աստիվանոս հրամայեց, զի Զպորովաքին զԱմուէլն գլխատեցին. քանզի այս Զպորովաքին մեծ իշխանին որդի էր, որ էր երկրորդ թագաւորին, և վասն ապիրատ գործոյն իւրոյ զոր գործեալ էր, այսինքն զոմն մեծ իշխան սպանեալ էր, և այլ ընդդէմ թագաւորին հրամանացն հակառակ կայր, և էր անհնազանդ ամենեցուն: Վասն այն պատճառի կալան զնա, և ըստ արժանեաց նորա սպանեցին՝ գլխատելով ի Քրաքոյին. և եղեւ հիացումն մեծ. զի որչափ թագաւորն առ իւր կոչէր պատգամաւ իւրով, ոչ ինչ համարէր և նախատէր զթագաւորն. և յորժամ կամեցաւ Աստուած զչարիսն իւր հատուցանել նմա, յիմարեցոյց զնա. զոր և ոտիւքն տարաւ գգլուխն իւր առ ոտս թագաւորին. և այսպէս չարն չարաւ կորեաւ:

1586. Թվ. ՌԼԵ. Կամենից քաղաքիս եպիսկոպոս վաղճանեցաւ Գիժանճ Մարձին Օքաթ–մօկսիլաքից. ութ ամ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան, և փոխեցաւ առ Աստուած. բայց լաւ և բարի ոմն էր, հեզ և խաղաղարար և բարերար առ ազգս Հայոց. զոր Տէր Աստուած գասակից և պսակակից արասցէ ընդ ամենայն սուրբ հայրապետացն. ամէն: Եւ ի նոյն ամին վաղճանեցաւ Արոլինաքից մեծ ոմն իշխան. և ի սոցա երկոցունց թաղմանն՝ ոմն զՀայքն մեծարանօք կոչեցին. զոր և գնացաք չուրջառով և խաչերով. բայց մեծ հակառակութիւն արարին ընդ մեզ տգէտ և ամբարտաւան ազգն Ըռուզ. բայց ամօթալից դարձան իւրեանց սովորական տեղն, որպէս յերեկն և յեռանդ ունէին զկարգն և զսահմանքն:

1586. Թվ. ՌԼԵ. Տէր Դաւիթ կաթողիկոսն նստաւ. և զՏէր Գրիգոր վարդապետն՝ որ էր Անկուրիոյ քաղաքին աթոռակալ, այս Ֆռանգաց աշխարհս նուիրակ ուղարկեց, որ և եկաւ ի Կամինիցս, և նուիրկեցաւ, և զժողովուրդն հաւանեցոյց քարոզիւ և աստուածային բանիւ. վասն որոյ մեծաւ պատուով ընդունեցին և մեծարեցին, և բազում սիրով զինքն ուղաւորեցին ի ճանապարհն իւր:

1586. ՌԼԵ. Ոմն մեծ իշխան որ էր թագաւորին քանձլեր, այսինքն մհրտար (կնքապահ), և չինեաց իւր անուան վերայ քաղաք մի, և եդ անուն քաղաքին Ջամոյոց. քանզի և ինքն այս իշխան Ջամոյոցի կոչէր. և անդ կոչեաց զՀայ ազգն, ով որ կամիցի երթալ և բնակել ի անդ. և էր հեռաւորն ի Լովէն իբրեւ 15 մղոնաւ. զոր և գնացին փոքր ի չատէ, նոքա որ էին եկք և օտարք Հայոց տանէն. և մեծ երախտիք արար նոցա, չնորհելով ամե-

նեցուն ազատութիւն և բնակութիւն. այսինքն տունս և տեղս: Այլ և եկեղեցի ետ շինել գեղեցիկ և վայելուչ Հայ ազգին անուան վրայ, զի հաստատեսցին անդ յաղագս յաղգս և որդեց որդիս: Այսքան առ այս. և Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան. ամէն:

1586. Թվ. ՌԼԵ. Դեկտ. ԺԵ օրն. Հրամանաւն ամենակալին Աստուծոյ բարեպաշտ թագաւորն մեր Ստեփանոս՝ զոր Պաթօրիյ որլորլիւր, առ Աստուած փոխեցաւ. և մեծ սուգ և տարակուս եթող Ղեմիչի աշխարհիս այս. քանզի էր աստուածապաշտ և ուղղափառ Աստուծոյ օրինաց. այլ և էր շնորհօքն Աստուծոյ զարդարեալ ամենայն առաքինութեամբ և կարողութեամբ. զի էր արդարադատ և իրաւարար, հեզ և խմաստուն և հանճարաշատ, և հսկայազօր, քաջասիրտ պատերազմայ և հմուտ կռվոյ. զոր քաջութիւն նորա ընդ ամենայն աշխարհն համբաւեալ էր. վասն որոյ ամենայն ոք որք հակառակ կային նմա՝ լքան ձեռք նոցա, և ահ պատեաց, դողումն կալաւ զնոսա զամենեսեան: Ջոր և փոքր ի չատէ կայ գրեալ ի սյսմ թղթիս, թէ որպէս հնազանդեցոյց զՄոսքովի իշխանն, այսինքն զքնազ: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք՝ յաղագս այսորիկ. ամէն:

1587. Թվ. ՌԼԶ. Մարտի ԺՌ. Մեծ հրաշք եղաւ, զի ոչ ոք ի մարդկանէ լուեալ էր կամ տեսեալ. և այն օրն Լաթինացոց ազգն զիւրեանց խոտոռեալ զպատիկն առնէին. և արդ երկու օր և երկու գիշեր անչափ ձիւն իջաւ հոդմախառն, որ զդրունս ծածկեաց, և ոչ ոք ի մարդկանէ կարէր ի տանէ կամ ի դրանէ ի դուրսն ելանել. և այս մեծ և յայտնի ցասումն էր Աստուծոյ, վասն խոտոր զատիկ առնելոյ նոցա. զոր Աստուած վերջն ի բարին առնէ:

Դարձեալ ի սոյն ամին մեծ գետյարուց եղեւ ի Կամինիցս. զի տասն օր քաղքին դուռն չփակեցին, վասն զի ջուրն խապախի մէջով կու ընթանայր. բազում պակասութիւն քաղաքացոց (եղեւ), զի չորս շաբաթ առաջ զատիկն առին քան զայլ քրիստոնեայս:

1588. Թվ. ՌԼԸ. Նստաւ ի թագաւորութիւն Զիկմունդ բարեպաշտ թագաւոր մեր. քանզի այս թագաւորն Զիկմունդ որդի էր Շվիդքէյ թագաւորին, և էր ինքն դեռ ևս կենդանի գոլով. և էր այս երկրին ծեր Զիկմունդ թագաւորին փեսայն. վասն որոյ կամեցին զի այս երկրիս ժառանգութենէ լինէր թագաւոր: Քանզի յորժամ վաղճանեցաւ քաջ և յաղթող բարեպաշտ թագաւորն Ստեփանոս՝ ասի կենաց յանանց կեանս, որպէս կայ գրեալ վերագոյն ի մէջ այսմ թխտի, մնաց աշխարհս առանց թագաւորութեան. վասն զի բարեպաշտ թագաւորն Ստեփանոս անորդի մեռաւ, և ոչ եթող ժառանգ թագաւորութեան. և վասն այս պատճառի՝ երկրի իշխանք տարակուսեցան և շիւարեցան, և մեծ տարակուս ընկաւ ի մէջի նոցա. և բազում ազմուկ և խռովութիւն և արիւնհեղութիւն եղեւ. զի ոմանք իշխանաց և բազմու-

թիւն մեծամեծաց և աշխարհն ամենայն միախոհք եղեն, և զայս Զիկմոնդ թագաւորն կամէին առնուլ ի հօրէ իւրմէ՝ ի թագաւորութիւն, որպէս թէ այս երկրիս զարմէ է, եւ այլք իշխանաց հակառակէին և չկամէին. վասն զի հակառակողքն իւրեանց կողմանէ բերեալ էին զոմն՝ կայսրն Մաքսիմիա-նոս անուն, և զնա կամէին դնել թագաւոր. զոր ունայնախորհքն վրիպեցան ի խորհրդոց իւրեանց. և աստուածային կամօքն և ընտրութեամբ Հոգոյն Սրբոյ՝ իսկոյն միաբանեցան այս Զիկմոնդ թագաւորիս հօրն, զի զորդին իւր տացէ ի թագաւորութիւն. և նա ետ նոցա յօժար կամօքն. և բերեալ նստուցին ի թագաւորութեան յաթոռն, ի թագաւորանիստ քաղաքն ի Գրա-քովին. և յետ սակաւուց օծեցին և պսակեցին, ողորմութեամբն Տեառն, և հաստատեցին չնորհիւն Աստուծոյ: Եւ այդ միւս կողմ Մաքսիմիանոսին, որք էին թշնամիք այս Զիկմոնդ թագաւորիս, հակառակ կային ճշմարտութեան, և զիւրեանց չարութիւնն առնել, և ոչ կամեցան հնազանդել այս թագաւո-րիս Զիկմոնդին. և սկսան զիւրեանց զչարիսն և թշնամութիւն առնել այս թագաւորիս, զերկիրն աւերակ և հրձիգ առնելով, և բազում պակասութիւն և վնաս գործելով այդ երկրին բնակչացն. մինչ զի ձեռն արկանելով եկե-ղեցեաց, կողոպտելով և թալանելով սպաք և զանօթք եկեղեցոյ. այլ և բա-զում անմեղ և անպարտ արանց հեղլով զարիւն: Իսկ բարեգութ և մար-դասէր Աստուած՝ իւր ամենակարող զօրութեամբ զօրացոյց այս թագաւորիս կողմն, և ետուր նոցա քաջութիւն: Զոր գնացեալ մեծ զօրագլուխն որ կոչի Զամոքիյ, քանցլէր այս թագաւորիս, քաջ և յաղթող հմուտ պատերազմի, զօրօքն իւրովք, և պատերազմեցան ընդ զօրացն Մաքսիմիանոսի, և Աստու-ծոյ կարողութեամբ իսկոյն յաղթեաց նոցա և ի սպառ կոտորեաց զնոսա, և զինքն զՄաքսիմիանոս կենդանի ձերբակալ արար, և զայնոսիկ որք ընդ նմա միաբանեալ էին այս երկրիս իշխանքն, և էին ամենայն ոք մեծամեծք և ա-ռաջակայք, զամենեսեան կենդանի կալաւ, և երկաթի կապանօք էած առ ոտս թագաւորի Զիկմոնդին, ամօթալիս երեսօք և կորացեալ գլխով: Եւ այս գործն Աստուծոյ պանչելարարի է. զոր նմա փառք և գոհութիւն ամենայնի, որ տայ քաջայաղթութիւն հաւատարիմ ծառայից իւրոց ընդդէմ թշնամեաց իւրոց:

1589. Հայոց թվ. ՌԼԷ. Յոստոսի. Ի Կամինից քաղաք մեծ մահ եղաւ, և բազում հոգիք մեռան, Հայք և Ֆռանկ և Ըռուզք. զոր ոչ ժամանէին ի հող հասուցանել: Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծուլացեալ մեղաց մերոց. հազար փառք և պատիւ անմահ երկնաւոր թագաւորին, յաւիտեանս. ամէն:

1589. Թվ. ՌԼԸ. Յոստ. ամսոյ. Բազում և անթիւ թաթար եկաւ, և բազում պակասութիւն արաւ ի գաւառն Բոտոլիային, և եհաս մինչեւ Ի-լովի սահմանք և ի Լուցքային, և անթիւ գերի տարաւ, ոչ թէ միայն զռամիկ և զիղձ, այլ և զիշխանս և զմեծամեծս՝ կնաւ իւրեանց, թող թէ զոչխարս և զարջառս և զանասունս. և բազում հրձիգ արարին. զոր և զՈդրուն

սպանին զիչխան ոմն, որ էր այր քաջ և հզօր պատերազմող. և ելին անվնաս և դնացին զիւրեանց տեղիս:

1589. Հայոց թվ. ՌԼԸ. Օգոստոսի. եկաւ ան տաճիկ ազգն, և Սնեա-դին քաղաքս հրկիզ արաւ, և բազում վնաս գործեց, և անթիւ մալ և խաղնա տարաւ. զմարդիկ ի սուր մաշեց և զայլսն գերի տարաւ, վասն զի ետրմարքի (տօնավաճառ) ժամ էր: Բայց այս եղեւ ի թուլութենէ և անհոգութենէ իշխանաց մերոց:

1591. Թվ. ՌԼԹ. Օգոստոսի. Ի քաղաքս Կամինից նոր պարոն եկաւ, որ կոչի Եան Բօդօցքից. և զմիւս պարոնն որ կոչի Նիքօլայ Պրիսքից՝ կեն-դանի գոլով եհան ի բերդէն, և փոխանակ նորա ինքն նստաւ:

1590. Հայոց թվ. ՌԼԹ. Մեծ երաշտ եղաւ, որ բնաւ անձրեւ չեկաւ մինչեւ ի բուն ամառն. և սերմանիքն և բոյսքն չորացան. վասն այն պատ-ճառին մեծ սով և թանկութիւն եղաւ. զի ցորենոյ կապիճ տասն մաճրի (ոսկի) եղաւ, և սուլուն՝ 8 մաճրի, և տուկուն՝ 10 մաճրի, և կորեկն՝ 8 մաճրի, և ուլուան՝ 4 մաճրի. զոր բնաւ տեսեալ չէր և ոչ լուեալ: Բայց այս ամե-նայն եղեւ վասն չարաչար օրինազանցութեանց և դառն մեղաց մերոց. զոր Տէր Աստուած աւարտն ի բարին փոխէ. ամէն:

Հայոց թվ. ՌԼԹ. Օգոստոսի. Երկիր չարժեցաւ, զոր ընդ ամենայն տե-ղիս ծանուցեալ եղեւ. բայց անվնաս եղեւ նախախնամութեամբն Աստուծոյ:

1591. Հայոց թվ. ՌԽ. յուլիսի Զ. Մեծ հիանալի և զարմանալի մա-նաւանդ Աստուծոյ պանչելագործութիւն կատարեցաւ. զի այս սովոյս ժա-մանակն ի միում աւուր յառաւօտու՝ իննական սօմ Մխինոյ երեսփոխանն սոլու ծախեց, և մինչեւ ի ճաշք չորսական սօմ եղաւ ի նոյն օրն: Փառք Աստուծոյ մարդասիրին. ամէն:

1591. Հայոց թվ. ՌԽ. Վարդավառին պահոցն երկուշաբթի Մերչքո էլչի ի թագաւորէն գնաց ի խոնդիքարն:

1591–2. Հայոց թվ. ՌԽ. Թագաւորն Զիկմունդ երրորդ վասն իրիք խռովութեան՝ զոր էր բարկացեալ ան թուրքի խոնտիքարն ի վերայ այս աշխարհին և կամէր պատերազմել ընդ այս թագաւորիս. զոր և զհաշտե-լութիւն զոր ունէին ի նախնեաց՝ նա և զերդումն կամէր աւերել. բայց թա-գաւորն մեր Զիկմունդ հաստատուն եկաց ի վերայ իւրոյ երդմանն, և առա-քեաց առ նա պատգամաւորս, զոմն Մերչքո անուն և Զամոյսքից, որ գնացին մեծամեծ պարգեւաք, և հազիւ կարացին զինդուցանել զբարկութիւն այդ... և հաստատեցին զխաղաղութիւն ըստ առաջնոյն, զոր ունէին ի նախնեաց իւրեանց որդից որդիս յաւիտենական: Բայց ան զգուշացոյց, զի մի՛ գերկիրն իւր խաղաղն բնաւ չաւիրէ և ոչ վնաս գործէ. բայց եթէ աւերեսցէ և վնա-սեսցէ ինչ՝ դարձեալ խաղաղութիւնն ի խռովութիւն փոխեսցի և աւերեսցի: Այսքան և առ այս:

1591–2. Թվ. ՌԽ. Օլախի պարոն Բեդրան իւր կամաւ եթող զպարո-նութիւն, և ելաւ յերկրէն և գնաց. յայտնի ունելով ընդ իւր զկին և զորդիքն և զբոլորի մարդիքն որչափ ունէր, զօրականն՝ զՄահարք և զՕլախք, իբրեւ 3000. Նա և ստացուածս իւր, զոսկին, զարծաթ, զհանդերձն, զչորքոտանիք, զամէնն ընդ իւր հանելով. և էանց այս թագաւորիս երկրաւ և գնաց Ալամանաց յերկիր, առ կայսրն քրիստոնէից. և անդ եկաց: Զոր ոմանք ասեն, թէ երկու քաղաք գնեալ էր վասն իւր, զի բնակեսցէ անդ. բայց մեր իշխանքն բազում նեղութիւնք յարուցին ի վերայ Նորա, ուժգին առնելով և յափշտակելով ի ձեռաց Նորա զբարիքն իւր. և նա անմռունչ հեծութեամբ տալով Նոցա, և ազատեցաւ ի ձեռաց Նոցա. և ելաւ գնաց:

1591–2. Թվ. ՌԽ. Դաթարի խանն ինքն և եղբայրքն իւր բազում զօրօք գնաց ի վերայ Մոսկովի երկրին. և Մոսքովի գնեազն իւր հեծելով պատե-րազմեցաւ ընդ անօրէնսն և կոտորեաց զնոսա մինչեւ ի սպառ. և էին թուով իբրեւ 100,000. եւս բազումս կենդանի կալաւ զմրզաներ, զսուլթաններ և այլ բազում ռամիկ մարդիկ, որչափ էին՝ զամենեսեան ի ջուր ընկղմեց, և ոչ եթող կենդանի և ոչ զոք: Որպէս այս երկրիս իշխանքն՝ զոր ոչ ունին հնարք կամ քաջութիւն կոտորել զնոսա կամ ըմբռնել կենդանի. և թէպէտ զոք ըմբռնեն ի յանօրինաց, դարձեալ առ նոսա ընդդէմ սպիտակի (դրամ) փոխելով դարձուցանեն. իսկ նոքա կրկին անգամ գալով զերկիր նոցա հրձիգ առնելով և զինքեանս գերելով, զիշխանն և զկանայս և զորդիս և զամենայն բարութիւն նոցա հանելով յերկրէն, ընդ միոյն հազարապատիկ չահելով, և զնոսա ծաղր առնելով:

1592–3. Հայոց Թվ. ՌՆԱ. Բարեպաշտ թագաւորն մեր Զիկմունդ ո-զորմութեամբն Աստուծոյ կարգուեցաւ, և երեր իւր թագուհի ի տանէ կայ-սերաց, որ կոչի Մաքսիմիլիանոս կայսր. զոր գնացեալ մեծամեծ իշխանք և եպիսկոպոսունք, փառաք և պատուով և մեծաւ փարթամութեամբ բերեալ պսակեցին թագուհի, և ի միում հետ զհարսանիքն, արարին ըստ օրինի թագաւորաց: Բայց ոմանք իշխանացն և մեծամեծաց հակառակ կացին, և ոչ կամէին ընդունել զայս, ասելով, եթէ ուխտ և դաշինս կայր ի միջի մերում, որ այդ տանէն այս աշխարհս թագուհի չի ածէաք, և դու, թագա-ւոր, զմեզ զամենեսեան արհամարհեցեր և անփոյթ արարեր, և զքո կամդ կատարեցեր. այս բանս մեզ ոչ է հաճոյ: Եւ այլ բազում ինչ խօսեցան ան-կարգ և անօգուտ յերեսս թագաւորին:

1592. Թվ. ՌՆԱ. Սդարոսդան Պրիսքէյ առ Աստուած փոխեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն:

1592. Թվ. ՌՆԱ. Ոմն Բեթրա անուն Օլախի պարոն անուանեցաւ. և էր որդի Օլէքսանար պարոնին. և բազում ժամանակ յերկրէ յերկիր շըր-ջեցաւ առ թագաւորօք. զոր յետոյ եկեալ ի կամինից, և նստաւ փոքր մի

ժամանակ, և նախ քան դնա այլ ուրիշ պարոն նստեալ կայր, Ահարոն ա-նուն. և բազում չարիս և նեղութիւնս յարոյց ի վերայ Օլախաց երկրի, մինչ որ համբաւն եհաս խոնտիքարին. և խոնտիքարն հրամանք արաւ՝ զի փութով գնասցէ առ նա, և նա գնաց: Եւ մինչ նա դարձաւ, եկին Օլախի մեծամեծք և երդուան այս Բեթրային, և առեալ տարան զնա և նստուցին ի պարոնութիւն, և հնազանդեցան նմա. ընդ որս էր և աւագն ընդ նմա. և փոքր մի ժամանակ նստան ի պարոնութիւն: Եւ ահա այդ Ահարոն պարոն դարձեալ եկն ի պարոնութիւն, հրամանաւ խոնտիքարին. և ունէր ընդ իւր զԹուրքի պարոնն՝ որ կոչի Աղայ, զօրովք իւրովք. և եկեալ ի Ան կեն-դանի ձերբակալ արար զԲեթր պարոնն, և զԱւագն՝ որ էր հայ, Մաթէյի որդի, և իսկոյն հատին զքիթն, և տարաւ ի խոնտիքարն. և զաւագն եդին ի բանտն երկաթի կապանօք. և նա փախեաւ ի բանտէն և եկաւ. և փոխա-նակ նորա կալան զերկու հայ կարիճ, զԳրիգորն Մարքոյին և զՍիմոն Զոխ-նայինն, և եդին ի խաւարային բանտն:

1593. Թվ. ՌԽԲ. փետրուարի ամսոյ Ի. վաղճանեցաւ Տէր Մկրտիչ որդիս, և իրիցկինն իւր և որդին Զաքարիկն, ի միում ամսեանն, կամաքն Աս-տուծոյ. զոր նմա փառք և գոհութիւն յաւիտեան յաւիտենից. ամէն:

1595. Թվ. ՌԽԴ. Ընդ աւուրան ընդ այնոսիկ՝ որ էր մարտին 8, մեծ գետյարոյց եղեւ ի Կամենից քաղաք, և մեծ պակաս արաւ քաղքին, զդրունսն կոտորելով զերկոսին. և մեծ պակասութիւն հասոյց ամենայն որ-պիսութեանց, թէ չինուածոց և թէ կալերաց և թէ անասնոց և ամենայն ընչից: Զոր այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց. զոր վասն ամենայնի այսորիկ փառք և գոհութիւն Աստուծոյ. ամէն:

Եւ ի սոյն ամի Թազախներն ժողովեցան մի վայր, զոր ոմանք ասացին եթէ էին իբրեւ 20,000, և մտան պատրաստութեամբ զինուք յերկիրն Օ-լախաց, և բազում վնաս գործեցին ուր և հասին, մինչ զՕլախաց պարոն զԱհարոն երկրէն փախուցին, և զօրքն կոտորեցին, զայլսն այրեցին, և զա-մենայն ինչ աւարեցին և թալանեցին. մինչ զի Հայոց եկեղեցւոյ գդուռն կոտորեցին, և մտան ի ներս, և բազում բարութիւն առին, ոսկի, արծաթ, հանդերձ մեծագինս, զոր էին պահեալ զեկեղեցի Հայոց ազգ: Եւ ինքեանք եկին և անցան այս կողմ. բազում վնաս արարին Կամենից քաղքին բոլորի գեղուն, անասնոյ, ոչխարի, արջառոյ և հացոյ. և յետ սակաւ աւուրց դար-ձեալ անցին Օլախաց երկիր. և գնացին և հաշտեցան և երդուան միմեանց, և միաբանեցան հետ պարոնին. և մտան Թուրք աշխարհ վասն պատերազ-մելոյ ի հետ Տաճկաց: Զոր երկնաւոր Աստուած տացէ նոցա կարողութիւն, և զօրացուսցէ զնոսա.... զի փոքր մի ժամանակ խաղաղութիւն գտցէ ազգն քրիստոնէից: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն: Եւ է գլխաւոր սոցա միոյն անուն Լոպօտայ և միւսոյն Նաւիվայքո:

1595–6. Թվ. ՌԽԴ. Թուրքի խոնտիքարն սուլթան Մուրատ մեռաւ. և փոխանակ նորա նստաւ ի թագաւորութիւն որդին իւր սուլթան Մահմատ. 21 ամ թագաւորեաց Մուրատն։

1595–6. Թվ. ՌԽԴ. Զօլախի պարոն զՀարոն՝ հանին ի պարոնութենէ, և կապանօք տարան ի Մաճարք։

1595. Թվ. ՌԽԴ. Յունիսի Ա. Բարեպաշտ թագաւորին մերոյ Զիկմունդին որդի ծնաւ, և մեծ ուրախութիւն եղեւ այս Իլախաց աշխարհն, վասն սորա մեծ ուրախութիւն և յնծութիւն և անբաւ խնդութիւն կատարեցին։

1595–6. Թվ. ՌԻԴ. Կամենից քաղաքս նոր եպիսկոպոս եկաւ, անուն՝ ԳԺօնց Բաւէլ Վոլուցքիյ։

1595–6. Թվ. ՌԽԴ. Ի յայսմ ամի խազախ մտան Թուրքի յաշխարհ. մեծ և բազում վնաս գործեցին. զմարդիկն ի սուր մաշեցին, զերկրի բարութիւն՝ զարդաւ և զոչխար և զամենայն ինչ աւար առին. և էր գլխաւորք նոցա Լօպօտայ և Նալիվայքօ. զոր յետոյ Նալիվայքօ ի Մաճարք փախաւ խազախներով իւրով։

1595–6. Թվ. ՌԽԴ. Ի յայսմ ամի թագաւորն մեր Զիկմունդ հեծել զրկեց ոչ բազում ինչ՝ այլ իբրեւ հինգ վեց հազար, և էր գլխաւոր զօրաց քանցլէր Բան Զամոյքի. զոր եկեալ մտան ի Օլախաց երկիր, և հասին մինչեւ ի Ակն. և էր անդ ոմն գոռոզ Բըզվան անուն իշխան երկրին Օլախաց, փոխանակ Հարոն պարոնին. իբրեւ լուաւ զգալուստն քանցլերին և զօրաց իւրոց, վաղվաղակի փախստական գնաց ի Մաճարք. և քանցլէրն էառ զերկիրն ընդ ձեռամբ իւրով, և նստաւ երեք ամիս ի Ցոցորան (գիւղ ի վերայ Բրուէթ գետոյ). և կացոյց զոմն Երեմիայ անուն ի պարոնութիւն երկրին վերայ. ուր և հնազանդեցան նմա երկիրն ամենայն։ Եւ յետ սակաւ աւուրց եկն Թաթրի խանն բազում զօրաք, զոր ոմանք ասէին եթէ 80,000, հրամանաւ պիղծ և անհաւատ ? քարին, և կամէր պատերազմել ընդ նոսա։ Իսկ ապա, այսինքն է քանցլէր և ամենայն զօրքն իւր զինեցան և քաջացան, պատրաստեցան աստուածային օգնականութեամբ. մարտեան ընդ նոսա և կոտորեցին զնոսա ոչ բազում ինչ, այլ իբրեւ չորս հինգ հազար։ Իբրեւ ետես պիղծ և անհաւատ Թաթրի խանն որ յաղթեցաւ, յետս չոգաւ. և սկսաւ հրեշտակութիւն առաքել զի հաշտեսցի ընդ նմա. զոր և քանցլէրն հաւանեալ՝ հրամայեաց Թաթրի խանին զի եկեսցէ առ նա, և դէմ յանդիման խօսեսցի ընդ նմա. զոր եկեալ մեծաւ երկիւղիւ և դողութեամբ՝ խաղաղութիւն հաստատեց, և երդուաւ. ուխտ և դաշինք եդին ընդ միմեանս, զի մի այս Իլախի երկիր սուր չքաշէ և ոչ աւերէ, որպէս յառաջագոյն հանապազ եկեալ աւար առնէին և գերի վարէին, հրձիգ առնէին։ Յետ այսորիկ դարձաւ և գնաց. և քանցլէր եկն յաշխարհն իւր։ Բայց է այս մեծ և զարմանալի պատ-

չելագործութիւն Աստուծոյ Փրկչին մերոյ, որ այնչափ բազում զօրօք երկեաւ, և ահաբեկ եղեալ ի սակաւ զօրաց, զոր վերագոյն գրեալ կայ, և միչառեկ եղեալ նկուն դարձաւ և կորեաւ։ Զոր փառք անմահ թագաւորին, որ զբազումս նուաղեցուցանէ և զնուազն բազմացուցանէ։ Այսքան առ այս։

Եւ յետ ոչ բազում ինչ աւուր իբրեւ լուաւ Բըզվան զքանցլերին դառնալն, եկն զօրովք ի վերայ Օլախի պարոնին Երեմիային, զի կալցէ զնա, զոր թողեալ էր քանցլէր անդ, և զիւր զՕլախի հեծելն, ընդ որս էր սպարոսդան Կամինցոյ Խոդոցկին, զոր էր գլուխ զօրաց, և հարան ընդ միմեանս. վաղվաղակի կոտորեցին զԲըզվանին զզօրքն. և զինքն կենդանի կալան, և բերին Մէչով, և խաղուխ զարկին։ Զոր Տէրն մեր վրէժխնդիր եղեւ նմա, վասն անմեղ և անպարտ արեանց՝ զոր հեղեալ էր այդ պիղծն։ Ընդ նմա կալան զմեծ իշխանն իւր զԳալըհօր, և զնա կամէին խաղուխ զարնել, զոր բազում դանձք խոստացաւ նոցա՝ զի մի սպանցեն զնա. զոր ոմանք ասէին երկու բոլպոչօք (տակառիկ) կարմիր ֆլորի։

1596–7. Թվ. ՌԽԵ. Ի յայսմ ամի ոմն Նալիվայքո՝ զոր կայ գրեալ ի մէջ Թղթոյս այս, և ընկերն Նորա Լոպօտոյ, ժողովեցին բազում խազախներս ընդ ձեռամբ իւրեանց, զոր ոմանք ասէին 20,000. և էր այս Նալիվայքո աղքատ տանէ այս քաղքիս, և եղեւ գլուխ ի վերայ խազախներուց. բայց էր ինքն հմուտ կռվոյ և քաջ պատերազմող. և սկսաւ բազում չարիս գործել և վնաս առնել ի մէջ այս երկրիս. ուր և հասանէր, ի քաղաք և ի գեօղս, զամենեսեան առ հասարակ կոտորէր, զարս և զկանայս, զծերս և պտղայս, զմեծամեծս և զիշխանս, և զտունս նոցա և զամենայն բարութիւնս աւար հարկանելով։ Մինչ զի եհաս բանս այս առ թագաւորն. և իբրեւ լուաւ թագաւորն՝ տրամեցաւ յոյժ. և հրամայեաց մեծամեծաց և զօրապետաց իւրոց, զի փութով երթիցեն զօրք իւրեանց ի վերայ այդ չարագործ Նալիվայքոին և Լոպօպային, և ընկեցեն զնոսա յերկրէ։ Եւ նոքա եկեալ ի սպառ կոտորեցին զնոսա, և զԼոպօտան գլխատեցին իւր խազախներն։ Իբրեւ ետես Նալիվայքոն եթէ ոչ ինչ օգնէ, չիւարեցաւ, և ինքնին գնաց առ զօրապետն թագաւորին. և նա նոյն ժամ հրամայեաց մերկացուցանել ի մեծագին հանդերձից զորս զգեցեալն էր, և երկաթի կապանօք առեալ տարան առ թագաւորն. և այսպէս բարձաւ չարն ի միջոյ, և ամենեքեան ազատեցան ի ձեռաց նոցա։

1597–8. Թվին ՌԽԶ. Եկաւ Նեմիչի եպիսկոպոսն Գժօնց Վօլուցքոյ ի Ս. Նիկոլայ եկեղեցոյ, ի հետ սպարոսդային Բան Բոցոցքոյին, և այլ քաղաքիս բազում իշխանք և ամբոխ բազում. մինչ զի լցաւ եկեղեցին բազմութեամբ. և սկսան տրամաբանութիւն առնել և հարցաքննութիւն վասն օրինաց և եկեղեցական կարգաց և սահմանաց։ Եւ ես մեղաւորս Յովաննէս աւագերեցս, որ եմ տրուպ ի կարգաւորացս և յետինս ի քահանայիցս, ըստ կարգի և ըստ պատշաճի՝ վասն ամենայնի պատասխանի ետու նոցա, մինչ զի հաւանեցան և ետուն փառս Աստուծոյն։

1597–8. Թվ. ՌԽԶ. Թագաւորն Չիկմունդ էլաւ ղրկեց ի Թուրքի խան-տիքարն՝ զոմն իշխան, որ կոչի Կուլաքիյ, որ էր Պարին (Bar ի Մայելիւ) սպարապետ. զոր և գնաց մեծ փարթամութեամբ. և ընդ նմա բազում իշխանաց որդիք վաճառականք, զոր ոմանք ասէին եթէ 80 արապայ էր, զամէն կարմիր չուխայով ծածկած. և անցին գնացին քաղքիս գոլով? և մտան ի Օլախաց երկիր, և գնացին ի Սեչով, ուր Օլախաց պարոն էր Երեմիայն, եւ իբրեւ հանդիպեցաւ՝ մեծաւ սիրով ընկալաւ զնա և յոյժ պատուեաց զնա մեծամեծ պարգեւօք և տրօք. և ոչ եթող գնալ մինչեւ չաբաթ մի. զոր ուրախացեալք ի միասին ուտելով և ըմպելով, և ազգի ազգի երգովք և թըմպկովք և նուագարանօք. և ապա արձակեաց. որ և գնաց: Եւ հրամայեաց պարոն Երեմիայ որ ամէն օր հինգական նալօվիցայ և երեսնական ոչխար տան, մինչեւ ի Տունան (Դանուբ): Այսքան է առ այս:

1598–9. Թվ. ՌԽԷ. Թագաւորին Չիկմունդին թագուհին վաղճանեցաւ ի վերայ տղին ծննդեն. եօթն ամ եկաց ի հետ թագաւորին իւրոյ: Այս տուած ողորմի իւր Հոգուն:

1598–9. Թվ. ՌԽԷ. Մեծ գետյարուց եղաւ և բազում վնաս արաւ և չատ պակասութիւն. ղրաղաչքներն աւերեց, զի հաց անկամ ոչ գտանէին և վաճառականք. նա և զքաղքին դրունն կոտորեց և զմարդիկ ընկղմեց. զոր ոմանք ասացին, եթէ բազում անկամ մեծ գետյարուցներ տեսել եմք, բայց այսպէս մեծ և անհուն չէաք տեսեալ: Բայց այս ամենայն եղեւ վասն մեղաց մերոց. զի ժամանակս գառնացեալ է, և մարդիքն դժարացեալ են և զԱստուած մոռացել են, և յագահութիւն անկել են, և արծաթասիրութիւնք զիրեանք պատել են. և յամենայն ինչ մէկ քին (գին) հինգ վեց քին եղել է, եթէ հաց և եթէ միս, եթէ ըմպելի և ամենայն ցեղ կերակուր. մէկ չարեկ միս՝ եթէ եղի և եթէ կովու՝ չորս մաճրի եղել է, զոր յառաջ 20 սպիտակ կ'առնուաք ու թանկ կու հաշուէաք. և մէկ ոչխարի չարէկ՝ 15 սպիտակ եղել է, զոր յառաջ 3 սպիտակ էր: Բայց այս եղեւ անիրաւ մարդկանէ, որ զԱստուած մոռացել են և զհոգիս իւրեանց արհամարհել են, և զԱստուծոյ տուրքն ոչ ինչ համարել են:

1626. ՌՀԵ. Մելքիսեթ կաթողիկոսն ժամանեալ ի Լեհս՝ ի Լէօպօլիս, և գտեալ զաթոռն պարապ, ձեռնադրէ զաբեղայ Տէր Նիկողայոսն Թարսոսովիչ՝ եպիսկոպոս Հայոց Լեհացւոց, և տայ նմա առնել զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդդէմ կամաց ժողովրդեանն, որ դեռ եւս հերձուածող էր։ — Կոնտակ։

1627. ՌՀԶ. Յակոբ քահանայ Եւդոկիացի (Թօխաթեցի) եկեալ ի Լեհաստան պանդխտական՝ ի քաղաքն Զամօսցայ գալով, գրօվանդակ 150 Սաղմոսն Դաւթի՝ գեղեցիկ և քաղցր ոճով մեկնօրէն ոտանաւորս արար. նա և զբազում խօսս Ս. Գրիգորի Նարեկացւոյն՝ տաղաչափականս չարադրեաց. այլ և զպանազան տաղս վասն կենաց մարդկան և զղջման, և այլն, յայսմ ամի աւարտեաց. զայսոսիկ զորս առ ձեռս ունիմ։

Մելքիսեթ կաթողիկոսն ի Լէօպօլսէ գայ Յեազլովցայ, ընդ իւր ուղեկից առնելով զՆիկողայոս արքեպիսկոպոս, որում տուեալ զգիր բանադրանաց, փետր. 15, ի վերայ Լէօպօլսեցւոցն՝ դարձուցանէ յաթոռն. և ինքն չուէ ի Կամինից. ուր՝ մարտի 5, ձեռնադրէ եպիսկոպոս զԹորոս սրեղայն, երբեմն կանամբի, Կամէնցացի. առնէ զկտակ, մարտ 14, որով զաթոռն Էջմիածնի յանձնէ Խաչակ կաթողիկոսին՝ եղբօրորդւոյ իւրում. վճարէ զկնանս իւր ի մարտի 18. և թաղի յորմն եկեղեցւոյն Աւետման Ս. Աստուածածնին, զոր ինքն էր սրբագործեալ, ըստ կոնտակի իւրում։

Նիկողայոս արքեպիսկոպոսն դարձեալ ի Լէօպօլիս, դաչաւրք ձեռնադրաց

ընդունի զնա ժողովուրդն. անտի եկեալ ի կամէնից՝ առնէ զմիաբանութիւն ընդ կամէնցացւոց, ըստ կերպի նախորդացն իւրոց, նոյեմ. 17. և ի Սիկիզմունտէ գԺէն Լեհաց թագաւորէն հաստատի առաջնորդ Հայոց յամին 1629, մարտի 6։ Ասէն ի կամէնից, արքեպիսկոպոսն ձեռնադրէ քահանայ զՏէր Ծնոփրիոսն, որում զկնի 22 աւուրց զառաջին պատարագել հրամայէ. բայց Գրիգոր Կեսարացի վարդապետն՝ որ յայնժամ անդ էր նուիրակ Էջմիածնի, ընդդիմանայ. զի չէ պարտ նախ քան զքառասունն նորընծային պատարագել. վասն որոյ արքեպիսկոպոսն զայրացեալ՝ զերկոսին եկեղեցիան փակէ, և գկեսարացին՝ զի մի՛ ի Լէօպօլիս անցցէ, վտարէ անտի. իսկ հեռացեալ աստի՝ զբանադրանս առաքէ Նիկողայոսի. որ՝ զայն իբրեւ անհաստատ ոչ ինչ համարի, գոլով ինքն ընդ իշխանութեամբ Սրբազան Փափին։ — Զառաքեալ պատուիչ։

1629. ՌՀԸ. (Նիկողայոս արքեպիսկոպոսն) ծողովեալ զղօրականս ոմանս և զպարոցականսն Լեհաց, հանդերձ քահանայիւք և մեծամեծօքն Լատինաց, գայ առ մեծ դուռն եկեղեցւոյն, և զհայրապետական զգեստն զգեցեալ՝ հրամայէ արուեստաւորաց՝ բանալ. որոյ բացելոյ՝ ինքն սկսանելով զերդն Ջքեզ, Աստուած, գովեմք, մտանէ յեկեղեցին երգովք և նուագարանօք, գոհանալով զԱստուծոյ. և յետոյ տիրէ բովանդակ գանձուց եկեղեցւոյն։ Վասն որոյ Լէօպօլսեցիքն դիմեն առ Մովսէս կաթողիկոսն, յորմէ և ոչ զմի գտանեն օգնութիւն. զի կաթողիկոսն գոլով ուղղափառ՝ հաճոյ էր նմա զոր արարն արքեպիսկոպոսն. եւս զի Թագաւորն և այլք՝ առ որս թէ և գրէրն՝ ոչ կարէին այլապէս առնել։

1630. ՌՁԹ. Երարձ ի չարականէն Ով հրաշալի նախահարք, զերիս յերիվին տունն, ի հերձուածողաց ոմանց յաւելեալս, որպէս յայտ է ի Թղթոյ նորա և առ մեր Լէօպօլսեցիս։

Կամէնցացիք, ապրիլի 5, զմեծածախ և զփառահեղ զանկակատունն Ս. Նիկողայոսի հայրապետին չինել սկսան, և ՌՁԲ (1633) Թուին աւարտեցին։ — Ի ցիշատակարանէ։

Հոկտ. 22. Տէր Նիկողայոս Թորոսենց արքեպիսկոպոսն մեր՝ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ արար ի Լէօպօլիս, առաջի Պ. Պ. Միքայէլի ad Annunciatione Բրովէնցիալին Կարմելիտաց Եղիայի a SS.mo Sacramento Բրիօրին Կարմելիտաց Լէօպոլսի, և Տ. Թօմասոս Էլծանովսքի Յիսուսեան, և այլոց բազմաց։ Բացատրէ ի նմին զամենայն յօդուածան հաւատոյ, և իւր արարեալ առաջի Մելքիսեթեկ կաթողիկոսին ի ձեռնադրութեան իւրում՝ ի նորին դաւանութեան՝ զուղղափառ դաւանութիւնն իւր։

Ցայսմ ամի գայ ի Լէօպօլիս նուիրակ Մովսէսի կաթողիկոսի Խաչատուր վարդապետն Կեսարացի, որ մինչ արքեպիսկոպոսն ընդդէմ կամաց նուիրակին հրամայեաց քահանայի իւրում ընթեռնուլ դաւետարան, դարձեալ ի ժո-

ղուլուրդն՝ անէծ զնա, որ զկնի արքեպիսկոպոսին ծննդրեսցէ (1)։ Վասն որոյ առաւել ցաւուցեալ ժողովուրդն ի վերայ արքեպիսկոպոսին, զի զղաւանութիւն արարեալ էր, և ի նուիրակէն ոչ երկնչէր, փակեցին դդրունս աթոռակալ եկեղեցւոյն. զոր տեսեալ արքեպիսկոպոսին զանօրէնութիւն նոցա ընդդէմ կանոնացն արարեալն.. — (այսպէս թողած է օրինակողն)։

1632· ՌՁԱ· Նիկողայոս արքեպիսկոպոսն Լէօպոլսի Հայոց առեալ ի վլատիսլաւէ Սիկիզմունտէ թագաւորէն Լեհաց զճանապարհագիր, գայ ի Հռոմ առ Ուրպանոս փափն, տալով նմա զպարտական հնազանդութիւն. զոր մեծաւ պատուով ընկալաւ Սրբազան փափն. չնորհեաց նմա զեմիփորոն արքեպիսկոպոսական, և կոնտակաւ մակագրեաց զնա արքեպիսկոպոս Լէօպոլսի և բոլոր թագաւորութեան Լեհաց և Մեծի դքսութեան Լիթվանիոյ՝ ազգին Հայոց։ Եւ այսպէս մեծարեալ դառնայ յաթոռն իւր։

1636· ՌՁԵ· Խոճայ Սէչովցի ցակոբչայի որդիքն՝ Վարդանն, Սահակն և Տօնիկն, զԼէօպոլսի դպրատան հաստատառոյց պարիսպն, և զդուռն Ս. Խաչի եկեղեցւոյն՝ ի հիմանց չինեցին յայսմ ամի. որպէս յարձանէն սեաւ մարմարիոնէն երեւի։

1638· ՌՁԷ· Ած վլատիսլաւ թագաւորն Լեհաց՝ յայսմ ամի՝ յուլիսի 23, դրեցին խնդրելով զպաշտպանութիւն նորա ի վերայ կրօնին իւրեանց՝ որ յԱսպահան՝ Հարքն Կարմելիտացք Բոբիկք. զոր և ընկալան ի Շահ Սոֆիէն՝ յամի Տեառն 1647, նոյեմ. 9, կոնտակաւ, ոչ միայն վասն Կարմելիդայից՝ այլ եւս առաւել Եզուիդայից միսիոնարաց, հաստատեաց։

1639· ՌՁԸ· Լէօպոլսեցիք՝ իբրեւ անօգնական մնացին ի Մոլիսէ կաթողիկոսէն, ապաւինին առ փիլիպպոս կաթողիկոսն, յորմէ հազիւ զկնի երից ամաց ընդունին զպատասխանին, 1638· հոկտ. 12, յԱսպահան գրեցեալն. որով յորդորէ զայլ քաղաքացիսն օգնել նոցա, զսակաւ ինչ յոյս տալով. վասն որոյ ընդ Պատրի (Հայր) Պօղոսին Բիրամալլի՝ զգլխաւորութիւն սմանց ի վերայ պրակաց հաւատոյ և սխալութեանց սմանց՝ ի գրի հաստատեալք, առաքեն զնոյն Պատրին առ Ուրպանոս փափն՝ յայսմ ամի, ուլիսի 2. Թերեւս հրամայեսցէ արքեպիսկոպոսին Թոյլ տալ նոցա մնալ յառաջին կրօնն։

1640· ՌՁԹ· Ամդ, Ուրպանոս փափն գրէ թուղթ առ թագաւորն Լեհաց յայսմ ամի, ուլիսի 16, խնդրելով՝ զի օգնեսցէ Նիկողայոսին. և առ փիլիպպոս կաթողիկոսն, յորդորելով զսա բազում վկայութեամբք և օրինակօք, մանաւանդ Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ընդ Ս. Սեղբեստրոսի փափին, և Ֆլօրէնդիոս Ս. Ժողովոյն միաբանութեամբն, զալ յօդուածաւորութիւն։ Ցանձն

1. կարծուի թէ օրինակողն մոռցեր է այս տեղ գրել քանի մի բառ։

առնէ զՊասարի Պօղոսն, ի ձեռն որոյ զթուղթս առաքեաց, չաս գովելով զսա, որ էր նախագոյն ծանօթ և փիլիպպոսին, զի լուիցէ ի բերանոյ նորին ըզսէրն փափին առ ազգս Հայոց, և զուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնն։ Բայց յաղագս Լէօպոլտեցւոցն՝ ոչինչ յիշէ ի Թղթին՝ փափն։ Պատրի Պօղոսն դառնայ ի Լէօպոլիս, և աստի տուեալ նմա Հայոց դեսպան ոմն՝ երթայ Էջմիածին, առ կաթողիկոսն։ Բայց թէ զորպիսի պատասխանի տուեալ իցէ կաթողիկոսն, ոչ գտաք, վասն Լէօպոլտեցւոցն. զայս ունիմք ստուգիւ, զի նոյն փիլիպպոս կաթողիկոսն զդաւանութիւն իւր առաքեաց ի ձեռն նոյն Պօղոսին առ իննովկենտիոս փափն, 1647։ Երկարեցաւ իրողութիւնս այս, և անհնազանդութիւն Լէօպոլտեցւոցն իւրեանց արքեպիսկոպոսին՝ մինչև յամն 1653։

1646· ՌԿԵ· Ստեփանոս Լեհացի յազատ տանէ Վարդանենց Լէօպոլսեցի, առաքեցաւ ի ծնողաց իւրոց Էջմիածին, ուր զլեզու և զգիր Հայոց՝ զոր նախ ոչ գիտէր՝ ուսաւ բարւոք. զոր յաղագս մաքրակենցաղ վարուցն՝ փիլիպպոս կաթողիկոսն օրհնեաց վարդապետ զնա։ Սա՝ զի հմուտ էր լատին լեզուին՝ թարգմանեաց զՑովսեփայ հին Պատմութիւնն, միայն որ ի վերայ Երուսաղեմի և Հրէից պատերազմին, զԴիոնեսիոսի Արիսպագացւոյն, զի առաջին թարգմանութիւնն էր անհասկանալի. զԳիրս յաղագս Պատճառաց՝ ի պրակս 36· զՀայելի վարուց, և զԲուրաստանն աղօթից։

1651· ՌՃ· Փիլիպպոս կաթողիկոսն յայսմ ամի զՅօհաննէս վարդապետն Արղնցի՝ այրն հանճարեղ և գիտուն՝ ի Լէօպոլիս առաքէ, ի հաշտեցուցանել և հնազանդեցուցանել զժողովուրդն՝ Նիկողայոսի արքեպիսկոպոսին. զոր և արարն իսկ, և եմոյծ զժողովուրդն յեկեղեցին, որ ընդ ամս... հեռացեալ էր ի նմանէ։

1653· ՄՃԲ· Նիկողայոս արքեպիսկոպոսն՝ գիտութեամբ մեծաւորացն իւրոց, ի յորդորմանէ ժողովրդոցն՝ որք զնա ընդունել ոչ կամէին, պատճառելով թէ բանագրեալ իցէ, գայ ի Կ. պոլիս առ փիլիպպոս կաթողիկոսն՝ ուր յայնժամ գտանիւր, և առեալ ի նմանէ զօրհնութիւն և զկոնտակ, արարեալ նախ զգլխադրութիւնս ոմանս, որպէս ասէ Ագաքէլ պատմիչն, և զթուղթ առ Լէօպոլտեցիս և կամէնցացիս, յայսմ ամի 1653, ապրիլի 15, դառնայ յաթոռ իւր։ Իսկ թղթոյն օրինակն է առ խս, որոյ մասն ինչ գնեմ աստէն. « Ցուշ լիցի հոգեւոր սիրելեացդ խոց, զի... Նիկողայոս արքեպիսկոպոսն » դիմեաց առ մեզ, և եցոյց զկատարեալ հնազանդութիւն իւր. զոր մեք ընկալաք բազում սիրով և կարի մեծարանօք, իբրեւ զհարազատ որդի. և » վերստին չնորհեցաք զիւր եպիսկոպոսական իշխանութիւնն. վասն որոյ ընկալարուք դդա՝ բազում սիրով և մեծարանօք. և յամենայն կարողութենէ հպատակ և հնազանդ լերուք դմա. և ամենայն բանի մի՛ վրդովիք փոթով, այլ երկայնամիտ լերուք, և զօգուտն խորհեցարուք, » և այլն։ Ցետ այսորիկ, « Որպէս մեր հոգեւոր որդի Յոհան վարդապետն Նւրբակն Ս·

» Լ՚Վիածնի՝ բաժին արասցէ, ամենեքեանդ հնազանդ լինիք։ Գրեցաւ Թվին » Հայոց ՌՃԹ, յապրիլի ԺԵ »։

Նիկողայոս արքեպիսկոպոսն դարձեալ ի Լէօպօլիս՝ գտանէ զնոյն ցօհան վարդապետն, որ էր Արղնցի, այր հանճարեղ և յոյժ գիտուն, որպէս և Վարդան արքեպիսկոպոսն մեր գովէ. սա խոհեմութեամբ իւրով հնազանդեցուցանէ զժողովուրդն՝ Նիկողայոսի, իբրեւ առաջնորդի իւրում, և հաշտեցուցեալ մուծանէ յաթոռակալ եկեղեցին զարքեպիսկոպոսն և զժողովուրդն, ոչ առանց արտասուաց և մեծի խնդութեան երկոցունց կողմանցն։ Զոր լուեալ եան Գազիմիր Թագաւորն, որ յայնժամ էր ի Լէօպոլիս, կոչեալ առ ինքն զցօհան վարդապետն, բազում շնորհակալութիւն մատուցանէ նմա։ Եւ այնուհետեւ սիրով և խաղաղութեամբ Լէօպոլսեցիքն և միւս քաղաքացիքն վարեցան ընդ Նիկողայոսի արքեպիսկոպոսին իւրեանց, և ընդ յաջորդաց նորին։

1655· ՌՃԴ· Նիկողայոսն իբրեւ հնազանդեցոյց ինքեան զժողովուրդն թեմի իւրոյ, սկսաւ կարգաւորել զհոգեւոր իրողութիւնս եկեղեցեաց իւրոց. թոյլ տուեալ ոմանց իրաց, ոչ առանց խորհրդակցութեան նուիրեալ փիլ, առ ժամանակ մի։ Առնէ զժողով թեմական յայսմ ամի, ապրիլի 8· առ որ զան և կամինցացիք. յորում զբազում ինչ կացուցանէ՝ հաւանելով ժողովելոցն, ի տան կէտս. յորոց չորրորդն է, զի ամուսնութիւնն՝ եթէ յերկոցունց կողմանցն ի չորրորդ աստիճանի իցէ, հաստատապէս հաչակեսցի, բայց ոչ առանց դրամի. բայց այս կէտս յետոյ խափանեցաւ, զի է ընդդէմ կանոնաց Թրիտէնտեան Ս· ժողովոյն. որպէս տօնի Ծննդեանն Տեառն ընդ ցայտնութեանն առնել. ևայլն։

1657· ՌՃԶ· Սիմոն վարդապետն Ջուղայեցի մեռաւ յայսմ ամի. գոլով ի Լէօպոլիս՝ ընդ նուիրակին, ետես զգիտութիւն իւր, զի և ոչ զբերակատնութիւն գիտէր. իբրեւ դարձաւ յերկիր իւր՝ այնչափ աչխատեցաւ ինքնին և առ այլս, զի ուսեալ շարադրեաց զբերականութիւն, որ եթէ այն է՝ զոր ես տեսի՝ ոչ է այնքան քամահելի, թէպէտ ոչ է ըստ արհեստի։

1662· ՌՃԺԱ· Աղեքսանդր Է փափն՝ ի խնդրոյ Նիկողայոսի արքեպիսկոպոսին՝ հեմնէ զդպրատունն հայրապետական ի Լէօպոլիս, վասն երկոտասան աշակերտաց Հայոց. առաքէ վարդապետ նոցա զԿղեմէս Կալանոսն՝ աստուածաբան վարդապետն, յոյժ հմուտ լեզուին Հայոց, ի կարգէն Թէադինոսաց. յորմէ վարժարանէ ելին և ելանեն այժմ եւս բազում քահանայք՝ վարդապետք և եպիսկոպոսունք իմաստունք։

Նոյն Նիկողայոսն եկեալ ի Կամէնից, ի խնդրոյ դատաւորացն՝ կոնդակաւ վերստին հաստատէ զոր ինչ յառաջագոյն դաշնադրեալն էր. և զՏէր Ներսէսն Հօլուպօվիչ օֆիցիալ Կամէնիցու կացուցանէ յամի 1662, նոյեմ. 8։ Եւ այսպէս հանդարտութեամբ և մեղմ յառաջելով՝ ընդելացուցանէր զժողովուրդն։ Մինչեւ ցայս վայր ի Կամէնից ոչ խառնէին քահանայքն զկուր ի սուրբ

պատարագն, զոր առնել հրամայեաց, և զայլ արարողութիւնս ոմանս կացոյց. վասն որոյ քահանայք և դատաւորքն այսու դժուարեալք, զգանգատանս գրեցին առ Բիկնադելլի նունցիոն փափին, որ յետոյ փափ եղեւ անուամբ Ինոճենտիոս ԺԲ: Որոց պատասխանէ նունցիոն, 1666, սեպտեմ. 6. զարմանալով, թէ զիարդ դժուարին զՂուրն ի պատարագին ընդ գինւոյ խառնել, գոլով այս հաստատ սովորութիւն ի մէջ ամենայն ուղղափառաց, և ի ժողովոց իբր հարկաւոր սահմանեալ, և այլն: Գրէ նոյն նունցիոն յամի 1667, յունուարի 3, և առ Նիկողայոս, զի զգանձն և զարդն եկեղեցւոյ՝ թոյլ տացէ պահել դատաւորացն, ըստ հին սովորութեանն, և մի պահանջեսցէ ի նոցանէ զկելուր, այլ չատասցի պարգեւաք նոցին ըստ երախտեաց, զորոց գանգատեալք էին Կամէնցացիքն:

1666· ՌՃԺԶ· Կղեմէս Կալանոն իտալիացի ի կարգէն Թէադինոսաց, աստուածաբանութեան և Հայոց վարդապետ... միսիոնար գոլով ընդ Հայաստան և ընդ վիբս զամս 25, այնքան կատարելապէս ուսաւ զքերականութիւնն, զբովանդակ փիլիսոփայութիւնն, և այլն. ի Հայաստանեայց դարձեալ ի Հռոմ, ուսոյց անդէն ի դպրատանն մերում զփիլիսոփայութիւն և զաստուածաբանութիւն՝ Հայոց արեւելականաց: Անտի ի Լէօպօլիս եկեալ՝ զնոյնս արար. յորոց բազում ընտիր վարդապետք ելին՝ հայրապետական դպրատանն. ուր անխոնջելի աշխատութեամբ կեցեալ՝ հանգեաւ ի Քրիստոս, յայսմ ամի, և թաղեցաւ ի մերում աթոռակալ եկեղեցւոյն, ամաց...: Սա մինչ էր ի Հայաստան՝ զգեստ և (զձեւ) Հայոց արեզական կրէր, յաւուրս պահոց զձուկն ոչ ուտէր, զգինի ոչ ճաշակէր, թէպէտ վտիտ էր մարմնով. զգիշերային ժամուն, զսաղմոս և զայլն՝ ի միասին կատարէր. ըստ այնմ, « Ընդ ամենեսեան ամենայն եղէ, զի զամենեսեան չահեցայց: »

1668· ՌՃԺԸ· Նիկողայոս արքեպիսկոպոսն վերատին գայ ի Կամէնից, և զգովելի կարգաւորութիւնս եկեղեցականս առնէ յայսմ ամի, մայիսի 29, ի կէտս 19· ի մէջ որոց են, զի քահանայն որ մկրտէ՝ մի անգամ ասասցէ Ես մկրտեմ յանուն Հօր, և այլն. — զի զվերջին օծումն տացեն հիւանդաց. — զգրեանս մկրտելոց, ամուսնացելոց և մեռելոց՝ ունիցին. — զհերետիկոսական գիրք՝ մի ոք իշխեսցէ գնել կամ վաճառել: — Մի ոք ի քահանայից իշխեսցէ վասն բազմաց զպատարագիս տուողաց՝ զմի միայն պատարագ մատուցանել, այլ այնքանս՝ որքան են տուողք: — Զսոսնս Ընծայման և Ննարատ Յուդեաց Աստուածածնին և Ամենայն Սրբոց՝ հանդիսիւ կատարել: Եւ զայս ամենայն ընդ պատժովք նզովից իսկոյն անկելոց՝ սահմանադրեաց:

Յետ այսոցիկ կոչի ի Ս· Յովովոյն՝ ի Հռոմ. զի մի զկնի մահուան նորա (քանզի էին այժմ 42 ամք եպիսկոպոսութեան նորա, և կենաց 72), Հայք ի կաթողիկոսաց առեալք զեպիսկոպոս, դարձցին յառաջին հերձուածոն:

1670· ՌՃԺԹ· Պր· Մտեփան Մարգսեան Ոսկքայ՝ հայր իմ՝ մեռաւ, մարտի 28· ես ընծայեցայ օգոստոսի 12 ըստ հնոյն, Լատինաց 22։

1671· ՌՃԻ· Ցօհաննէս Քարմատաննենց Լէօպօլսեցի եպիսկոպոս սուքրական (օգնական կամ տեղակալ), մինչ Նիկողայոս արքեպիսկոպոսն էր ի Հռովմ, կառավարէր զեկեղեցիս մեր. զբազում բարեկարգութիւնս արարեալ՝ տրամադրեաց զՊատարագատետրն և զՄաշտոցն Հայոց՝ քալ ուղղափառ, եղեւ ի Հռովմ. և զկնի աշխատանաց հանգեաւ ի Քրիստոս, յամի Տեառն 1678։

1675· ՌՃԻԴ· Նիկողայոս արքեպիսկոպոսն Թոյլատուութեամբ Ս· Ժողովոյն, ընարէ և ձեռնադրէ յալորդ իւր զՏէր Վարդան Ցունանեան, անուամբ եպիսկոպոս Եպիփանիոյ· և առեալ զիշխանութիւն ի Սրբազան փափէն, զպարգեւս զանազանս և զմակագրութիւն ընտանի և առընթերակաց Բրէլադի և Գավալերի Ս· Մէքայելի, դառնայ ի Լէօպոլիս։ Ունէ բազում ուղղութիւնս, զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս· Գրիգորի Լուսաւորչին և զԱտուածածնին սահմանէ և հաստատէ ի Լէօպոլիս։

Վարդանս այս էր որդի Ցունանու քահանայի, ուստի Ցունանեան կոչեցաւ, ի ձագու գեղջէն մերձ Թօխաթու· էր ճարտար գրագիր, ուշիմ և հմուտ բառիցն Հայոց· երթեալ Լէմպէրկ, և անտի ընդ նուիրակի գայ ի Լեհաստան· ուր զբարեկարգութիւն և զուղղափառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն Հայոց· ուստի զկնի ուսանելոյն ինչ լատիներէն՝ գնայ ի Հռովմ, և ի դպրատանն Ուրբանեան ուսեալ կատարելապէս զլատին լեզու, թարգմանէ (զԱլՈնորդ?) յերկինս, յամի Տեառն 1671· տալի գեղեցիկ ոճով, բայց խրթին և նոր բառիւք։ Զկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի՝ ոչ չատ յամեցեալ և ինքն ի Հռովմ, դառնայ ի Լէօպոլիս· բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զհրաման ի Ս· Ժողովոյն՝ երթայ ի Հայաստան քաղզելոյ աղագաւ· ուր ընդ ամս իբր տասն տեւէ։

1681· ՌՃԼ· Նիկողայոս Թորոսովիչն արքեպիսկոպոսն Լէօպոլսի գոլով ամաց 85, յայսմ ամի մարտի 21, յետ անպատմելի աշխատանաց իւրոց՝ արդեամբք լի հանգեաւ ի Քրիստոս, ի Լէօպոլիս։ Սա էր որդի Պարոն Ցակոբայ Թորոսովիչ մեծատան Լէօպոլսեցւոյ· այր փառահեղ, քաղաքավար, խոհեմ, ճարտար յառնելիսն, և ամենայն գովեստից արժանի· զի երկարաձիգ ամաց տաժանմամբն՝ երկիցս ի Հռովմ, երկիցս յարեւելս երթալով, զազգ մեր Հայոց ի Լեհաստանն՝ ի հնազանդութիւն սուրբ մօր եկեղեցւոյն Հռովմայ զարձոյց· յորմէ և ի Մահառս և յայլ տեղիս ուղղափառութիւնն սփռեցաւ· զսէր և զպատիւ ազգիս մերոյ՝ առ ամենայն ազինս բարգաւաճեաց· զանուն անմահ յիշատակի ինքեան թողեալ։

1875· ՌՃԼԴ· Մտեփաննոս Լէօպոլսեցի վարդապետն Լեհացի, յազատ

տանէ Պերնադովեանց, որ ի սկիզբն միաբանութեան մերոյ ընդ Հռովմայ սուրբ եկեղեցւոյն՝ ի ծնողացն յԷջմիածին առաքեցաւ, և զի զճարտասանութիւնն լաղինական ուսեալ էր ի Լէօպոլիս, թարգմանեաց քաղցր ոճով ըղբուբաստանն աղօթից, զմասն ինչ Հին պատմութեանն Յովսեփայ հրէի, ըղԴիոնեսիոսի Արիսպագացւոյն վերստին թարգմանեաց գիրսն. Նա և զգիրս Պատճառաց յ'36 պրակս, և զՀայելին վարուց։ Ցետոյ բարի վարուք և ուղղափառութեամբ զկեանս իւր վճարեալ՝ հանգեաւ ի Քրիստոս, մօտ յայսմ ամի։

1686· ՌՃԼԶ· Մինաս վարդապետն Թօխաթցի Չիլիֆտար օղլու կոչեցեալն, եպիսկոպոս Պուղտանու (յորմէ ես զչորս աստիճանս առի յամի Տեառն 1680), ի դառնալն ընդ լերինս Մաճառաց, ի միզարգելութենէ՝ զոր ի բազում ամաց կրէրն՝ տանջեալ, վախճանի. Թաղի ի գերեզմանատանն Օլախաց. ի վերայ գերեզմանի նորա բազում անգամ ի կիրակամտի լոյս յերկնից իջանէ. զոր ականատեսք և արժանահաւատ արք տեղւոյն՝ պատմեցին մեզ։ Սա էր ճգնազգեաց, սրբակրօն, պահեցող և աղօթասէր. մինչ զի յայնմանէ աւուր զութ կանոնս սաղմոսացն Դաւթի՝ անխափան ասէր. ոչ երբէք մերկանայր զհանդերձան յանձնէն, այլ նոքօք կծկտեալ ի վերայ բարձից ննջէր. ի գիշերին բազմից անգամ ելեալ ի մահճէն՝ սաղմոսելով չրխրջէր ընդ տնիկն իւր։ Որոյ ականատես բազմից ես ինքն եղէ։

Վարդան Ցունանեան լուեալ զմեռանելն Նիկողայոսի արքեպիսկոպոսին Լէօպոլսի, հնարիւք ելեալ ի Հայաստանեաց՝ գայ ի Լէօպօլիս, և տիրէ աթոռոյն, զոր ընդ ամս 29 կառավարէ բարի վարուք։ Ի սոյն ամի ընդունի յինոճենցիոսէ ԺԱՀն զանուն արքեպիսկոպոսի և զեմիփորոն, և ի Ս· Ժողովոյն՝ զհազար սկուտս, զոր ոչ էր առեալ իբրեւ եպիսկոպոս ընդ ամս տասն. ոբովք զտիպ (գրոց) գեղեցիկ կազմեաց, զոր յափշտակելով յետոյ Շվէտացին, խափանեցաւ գործ նորա։

1689· ՌՃԼՐ· Աստուածատուր վարդապետն ի Մշու Ս· Կարապետին վանաց, և Տէր Քրիստոսատուր Մնտրողն՝ աւագերէցն Սեչովու և այլք, զուղղափառ հաւատոյ դաւանութիւն արարին առաջի Գեր· Վարդանայ Ցունանեան արքեպիսկոպոսին մերոյ ի Լէօպոլիս, գոլով իմ ներկայ, փետրուար ամսոյն։

Սիւնհոդոս արարին մերայինքս ի Լէօպոլիս, հոկտ· 10, վերակացու գոլով Գեր· Տէր Նունցիոսն Կանդելմի և Վարդան արքեպիսկոպոսն, վասն սրբագրելոյ զՊատարագատետրն, և այլն. որոյ աղագաւ առաքեցաւ ի Հռովմ Աստուածատուր եպիսկոպոսն Ներսէսեան։

1690· ՌՃԼԹ· Մովսէս վարդապետն և եպիսկոպոս Երեւանցի, երկիցս զմեծ նուիրակութիւնս Էջմիածնի արար· եկն ի Լէօպօլիս, յունվարի 25, և

առաջի Վարդանայ արքեպիսկոպոսին մերոյ զուղղափառ դաւանութիւն արար. անտի գնացեալ ի Վիննայ, առնու ի Լէօպոլտէ կայսերէ զհրաման չինելոյ զեկեղեցի ի Պելկրատ. ուր սկսանի, բայց ի դիմէն Տաճկաց ի վերայ Հայոց? (դադարէ).

1693· ՌՃԽԲ· Պարոն Յառուկն Ադենեանեան պապն իմ՝ 105 ամաց, բա- րեպաշտաբար փոխեցաւ յաստեաց, ուլիսի 10, ի Լէօպոլիս։

Մխիթար վարդապետն եպիսկոպոսն Մոկաց, Լալուակ Մխոյ կոչեցեալ, եկեալ ի Լէօպոլիս, առաջի Վարդանայ Յունանեան արքեպիսկոպոսին մերոյ արար զղաւանութիւն ուղղափառ հաւատոյ։

1695· ՌՃԽԴ· Սիմէոն Աղուանից կաթողիկոսն՝ ընդ որոյ իշխանութեամբ են Շամախի, Կանձայ, Շիրուան և Ղարապաղ, քաղաքք և գաւառք, առ սոյն հայրապետն (Իննովկ. ԺԲ) զպատուական թուղթ հնազանդութեան և դաւանութեան գրեաց, զոր ես թարգմանեցի. ի վաղուց հետէ զինքն հնա- զանդ սուրբ եկեղեցւոյն Հռոմայ գրէ. խնդրէ ի սրբազան փափէն զյանձն- արարական թուղթ առ արքայն Շահ սուլթան Հուսէյինն. որպէս զի ըստ ա- ռաջին թագաւորացն Պարսից՝ անխափան կարասցէ ինքն հովուել զհօտ իւր. և ընկալաւ։

Ներսէս վարդապետն Երեւանցի (կամ Վրացի) կանոնիկոս Վիննայի, զայ- սու ժամանակի վախճանի։ Սա ի դպրատանն Ուրպանեան աշակերտեալ և ուսեալ զգիտութիւնս, և զի ոչ գոյր ի Հռոմ հայ եպիսկոպոս՝ յորմէ քա- հանայ ձեռնադրիւր, գայ ի Լէօպոլիս, հրամանաւ Ս. Ժողովոյն, և յարք- եպիսկոպոսէն Նիկողայոսէ քահանայ օրհնի. անտի դարձեալ ի Հռոմ՝ հան- դիպի ի Վիննայ, յորժամ աստիկ ժանտամահն էր անդրէն. ուր աներ- կիւղ պաշտէ զխորհուրդս եկեղեցւոյ՝ ախտացելոցն ժանտամահուամբն. թա- ղէ եւս. վասն որոյ եպիսկոպոսն Վիննայու՝ իբրեւ դադարեաց մահն, գիտա- ցեալ զսորա բարութիւնն, թոյլտուութեամբ Ս. Ժողովոյն առնէ զնա պէնէ- ֆիցիատոս (ժառանգաւոր) աթոռակալ եկեղեցւոյն Ս. Աստեփաննոսի Նախա- վկային։ Յառնուլն Լէօպոլտի կայսեր զՊուտայ ի Տաճկաց, զՏէր Ներսէսն վասն թարգմանութեան Թղթի Հայոց ուրուք՝ որ ի Պուտայն էր և զհուր (!) ետ պարսնութիւնն, առնէ զնա պաղատան իւրոյ երէց, որ կոչի Գաբելլեան, և յետոյ կանոնիկոս նոյն եկեղեցւոյն։ Սա որպէս ինքն իսկ պատմեաց ինձ՝ (զի էր իմ մեծ բարեկամ), գ'1,200 տաճիկս գերեալս՝ մկրտեաց։

ՋՇէհրիմանեան տոհմի՝ Լէօպոլտոս կայսրն՝ յայսմ ամի, մայիսի 23, ա- նուամբ կոմսից թագաւորութեանն Մաճառաստանեայց՝ կոնտակաւ վայելչա- ցոյց. որոյ ես թարգման եղէ. և վեհագոյն հայրապետքն Հռոմայ և այլ իշ- խանք՝ զնոյն մակագրութիւնն չնորհել նոցա սովոր են։

Քահանայ մի երգմնեցուցիչ իտալիացի՝ յայսմ ամի ուլիսի 8, առաջի իմ բաղում աշխատութեամբ ընդ 15 աւուրս, գ'700 հարիւրապետս դիւաց զօ-

բոքն Լուբեանց (!) հալածեաց ի դիւահարեալ կնոջէ, քեռ անտեսին մերոյ, ի մատուռն դպրատան մեր Հռովմայ։ Զարմանալի էր քահանայս այս մեծահաւատ և յոյժ խոնարհ, որ մինչեւ ցայժմ գ45 դիւահարս ազատեալ էր։

1704· ՌՃԾԳ· Սվէտքն յետ հարկանելոյ զԱքսոնս, սկսանին զԼեհաստան հարկիւք կողոպտել· գան ի Լէօպոլիս, և զի քաղաքացիքն ոչ զհարկս կամեցան տալ և ոչ ի ներքս մտանել թոյլ ետուն, մատնութեամբ ոմանց ահին զքաղաքն, սեպտեմ. 6· և իբրեւ զերիս ժամս աւար առին· ապա գրաւս 200,000 դալերաց ի քաղաքացեացն, յարքեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցեաց բռնութեամբ առին· ուստի և աթոռակալ եկեղեցին Հայոց զբազում սկիհս, զխաչս և զայլ արծաթի կահս՝ ետուն փոխանակ գրամոց։ Իսկ յետ չուելոյն անտի Շվետաց՝ ժանտամահ մեծ անկաւ ի քաղաքն Լէօպոլիս, յորմէ 10,000 հոգիք կորեան· նոյն մահն և յայլ մերձաւոր տեղիս սփռեցաւ։

1736· ՌՃՁԵ· Ծանեայ զոմն (քսան տարի էն) իբր զնուիրակ, որ զսուրբ մեռոնն՝ աչխարհականաց գնահատեալ էր ի Պօլսոյն, և յայլ քաղաքս՝ նոքօք Պուղտանաց առաքեաց։ — Բայց լռել ոչ կարեմ զանօրէն արարն Կիրակոս վարդապետին, որ երկուք ամօք յառաջ ի քաղաքին, ի մէջ եկեղեցւոյն առաջի ժողովրդեանն՝ զխորհրդատետր մի ծիւ ծիւ արարեալ այրեաց, և կողիւքն զգլուխ քահանայի միոյ ծեծեաց։ Գարշելի է ինձ զայսպիսեաց գրելն, բայց գանգատքն ոչ տան թոյլ (1)։

1. Ոչքեանն զայս գրած է ի թղթին առ Աբրահամ Գ կաթողիկոս, ի 10 մարտի, 1736։

ՅԱԻԵԼՈՒԱԾ Է

Տ· ՅԱԿՈՎԲԱՑ ԲԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԻՊՈՒԱԾՈՑՆ ՄԵՐՈՑ ՅԵՐԿՐԻՆ ԼԵՀԱՑ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՌԶԴ (170 սեպտ.)

Ի սեպտեմբերի 5· — Յաւուր վեցշաբաթու, եկին Սվէտք լութերականք ի Լէօպօլիս, իբր 30,000ք, որք յերից ամաց և այսր գաւերս բազում ա֊ծեալք էին երկրիս Լեհաց, և զոհիւս ոչ սակաւս գործեալք յամենուրեք։ Ո֊րոց ի գալն՝ գոլով իմ յարտաքաղաքի անդր, ելեալ ի վանացն Ս· Աննայի, գնացի առ Ս· Թաչն, որ է հանդէպ նոյնոյ վանացն ի վերժատանն քահա֊նայապետական, իբր առ տեղի ապահովագոյն։

6· — Յաւուր չաբաթու, նախ քան զլուսանալ այգուն, առին զքաղաքն, որպէս ասի՝ մատնութեամբ, և սպանին զանձինս 180, որք յառաջնում դիմմանն պատահեցան նոցա, որ և զտունս բազմաց՝ մանաւանդ Հայոց՝ յա֊ւար հարին· ընդ որս և զտունն մեր՝ որ ի քաղաքի անդր, հուսկ եկեղեցւոյն։

7· — Ի կիրակէի յաւար հարին եւս զարտաքաղաքն, որպէս և զվանքն մեր, և զմնացեալ կահն կողոպտեցին։ Ձէնէրալն Ըչէմպէք՝ այր գոռոզ և անողորմ, որ յերեկեան աւուրն հրամայեալն էր աւարել զքաղաքն, այսօր պահանջեաց եւս ի նոյնոյ քաղաքէն զհարկ 300,000ից զուռուշից, որ և զդատաւորս Լեհաց և Հայոց, նաև զեկեղեցականս ժողովեալ յաշտարակ Դատարանին՝ փակեաց, ասելով· Ոչ ելանէք աստի՝ մինչև զհարկն նախա֊սացեալ ոչ բաժանիցէք ի վերայ եկեղեցեաց, եկեղեցականաց, և այլոց քա֊ղաքացեաց, որպէս զի ցաւուրս տասն բովանդակ գումարտակն Հատուցա֊նիցի ինձ· որ եթէ մինչև ցնախանշանակեալ օրն ոչ վճարեսցի բոլորն, բըռ֊

նութեամբ զինուորայ իմոց պահանջեցից։ Ցայսմ վայրի դատաւորքն անեն-թադատք՝ բարդեալք ի վերայ իմ զղուռուչս հազարս, ոչ առ չքաւորութեանս և ոչ յաւարուամն գոյիցս նկատելով, յերկրորդումն աւուր առաքեցին առ իս զվճիռ գնահատութեանն, ծանուցանելով զանդանդաղ հատուցման հարկաւորութիւն։ Իբրև տեղեկացայ զիրէն և զմտաւ ածի զանկարելութիւն հատուցման, գոլով թափուր յամենայնէ զոր ունէի (թէ և սակաւ), ևս զվտանգն որ ի վերայ կայր՝ անկանելոյ ի ձեռս հերետիկոսաց, խուսել խորհեցայ առ ժամանակ մի. բայց զի ոչ գրաստ գտանիւր՝ և ոչ թէ և գտանիցիւր՝ ունէի զդրամ վարձու, բաց ի 14 զլօթայից Լեհաց, որ պակաս քան զերկուս զուռուչս լինէր, եզերեցի յինքեան՝ հետի խուսել ի տեղւոջէն, թէ և տկար և ծեր։

10. — Ի չորեքշաբաթիոջ զոմանս իրս զորս տակաւին ընդ իս ունէի, առաքեցի առ Տ. Աստեփաննոս քահանայ Ս. Խաչին, ի պահեստ, և զգրեանս Թողի առ Հարս Վարժարանին. որոց և յայտնեցի զխորհուրդ գնալոյս զանխուլ, բայց ոչ զուրն. և յանձնեալ զմանուկն իմ Նոցա, երեկոյին պատահեցի գնալ ի զնին վնասու վանացն, առեալ ընդ իս զխահարարն իմ և զերիս նկանակս հացի։ Եւ տեսեալ զդրունս բնակութեանն քարաշինի խորտակեցեալս, ի ներքս զանօթս ապակեղէնս փշրեցեալս, և ի յատակ տանն ցրուեցեալս զսեղանս, և զառորմունս կոտրատեցեալս, ոչ համարձակեցայ անդէն ագանիլ, այլ գնացի ի տուն խահանոյին, յայսմ ամի յինէն նորոգեցեալն, և գտի զդրունս նորա ամբողջս։ Եւ անդէն գերծեալ զմօրուս, և թեթևացուցեալ զհերս գլխոյս, առ ի չճանաչելոյ յումեքէ դիւրակի, օթեցի անդէն. բայց մեծաւ երկիւղիւ ի Սվէտաց, չուրջանակի բնակողաց. այս է ի վանս Ռուսաց, ի գերդաստանի Խուշքեվիցին, Խուրքեվիցին, և Սթեցքեվիցին. գուցէ ի գիշերի կամ ըմբռնիցէին կամ սպանանիցէին, և լինեցէի ինքնս ինքեան մահուան պատճառ։ Ուստի յոյժ մեծատաժան գիշեր եղև այն ինձ, և բնաւին ընդ բոլոր ցայգն՝ կուք մի ոչ անկաւ յաչս. նախ, ի կասկածանաց թշնամեաց, որպէս ասացի. երկրորդ յանուսաղութենէ, զի ի տկարութենէ անցելոց աւուրցն, և ի մտատանջմանէ՝ դոյն ինչ ճաշեցի, և յերեկոյին զոչինչ. երրորդ, յանբաւութենէ լուոց, զորս թողեալք էին ի տեղւոջն՝ ողորմելիքն չինականք, որք նախ քան զգալն Սվէտաց փախուցեալք բնակէին անդ իմով թոյլատրութեամբ, և ի գալ թշնամեաց՝ վերստին յայլուր թագուցեալք էին։ Այսց ուրեմն պատճառաց վասն ամենամեծ տագնապաւ ոգւոյ, և մարմնոյ անհանգստութեամբ՝ տապեցայ մինչեւ ցերկրորդ հաւախօսն։ Վերայացեալ սոցին եւս տարակոյս, զի բաց յ'անցելոյ աւուր անձրեւոյն՝ յայնմ գիշերի ոչ դադարեաց անձրեւել. և ես ոչ զկոշիկ և ոչ զտրեխ իսկ ունէի, այլ զհանապազորդեան հողաթափն ևեթ, որով ելի ի դպրատանէ անտի. և թվիւր ինձ անհնարին՝ այնու գնալ զառաջիկայ ճանապարհն չաղախային, եթէ ոչ բոկոտն։

11. Ուրեմն, ի հինգշաբաթիոջ յերկրորդում հաւախօսին՝ թէ և մթնագի-

չեր և հոգմայոյզ էր, և տակաւին մեղմաբար անձրեւիցէր, յանձնեալ զիս Աստուծոյ և Սրբոց խնամակալուաց իմոց, մանաւանդ հրեշտակիս պահապանի և Սրբոյն Կայէթանոսի, աչխարհականաւ զգեստու, հետեւակ, ցուպ ի ձեռին եւլի ի վանացն, ունելով առ իս զ'14 զլօթիս Լհհաց, որպէս ասացի· ցառաջագնացութեամբ սպասաւորիս դիմեցի դէպ ի կախաղան քաղաքին, ուստի համարբէի ալաղակի անցանել. զննելով գաւազանաւ զուղին՝ ի փոխելն զքայլս՝ վասն մթանն և տղմոյն· եւ հասեալ ի ջաղացն՝ որ առ ստորոտով լճին Պուդտանուվքայի, լուայ զձայն Ավետաց ի նմին և երկեայ. այլ և չունն ի դրաց սկսաւ հալել· Աստ սասանումն և ահ մեծ, գուցէ յազդմանէ չանն արտ-ելեալք՝ զբռնութիւն ինչ առնիցէին ընդ մեզ. որ և յերկիւղէ անտի դո-ղումն ծնկաց և բոլորի մարմնոյս կալաւ զիս, մինչ գրեթէ յոտին կալ ոչ զո-րիցէի. սակայն սրտապնդեցեալ յուսովն Աստուծոյ և Սրբոց խնամակալուացս, զորս ջերմապէս վերակարդայի, փութացայ յառաջել և անդր· Իբրեւ հասի ի խրամ լճին վերասացելոյ, ուր գերան մի փոխանակ կամրջի ձգեցեալ էր, և կամէի ընդ այն անցանել, զի չէր յայլուստ հնար, յանկարծ լպրծեցեալ ոտս՝ անկայ ի վերուստ ի խորն տղմալի ձախակողման. որ եթէ գահավիժեցեալ իցէի յաջակողմն կամրջին ի խորխորատն որ ստորեւ կայր, արգա-րեւ կամ բեկումն անդամոց կամ մահ իցէր հետեւելոյ· Ապրտաքարշեցեալ անտուտ ի սպասաւորէն, գնացաք ընդ ուղիս չաղախուտս՝ ցանկավիճոյ Պուղ-տանուվքային. մերթ անցանելով աստ և անդ ընդ խրամս պարտիզաց և ծառատնկոց, զի խոտորիցէաք ի ճանապարհէն հասարակէ, գուցէ պատահի-ցիւր ոք ի թշնամեաց. ոչ սակայն կարէաք ի Ավետաց խուսել, որք գրեթէ յամենեսեան խուղս կողմանցն, որպէս և ընդ բոլոր արտաքաղաքն չուրջա-նակի լինք էին· Եւ իբրեւ հասինք ի գերեզմանատունն Հրէից, զի ընդ այն անցանելոց էաք, արտաքս ի խըղէ իմեմնէ վազեալ Ավետ ոմն, խրոխտա-կանաւ ձայնիւ՝ ոչ դիտեմ զինչ բարբանջելով՝ տարաբերիւր անդաստական. որոյ յերկիւղէն՝ ի տեղւոջն ուր կայաք՝ ի մէջ մացառացն խտից կըկզեալք գաղեցաք· Իբրեւ երիցս կամ չորիցս զնոյն բարբառ կրկնեալ՝ եմուտ վերըս-տին ի խուղն, անդէն յորդեցան ձայնք աղմկաց խառնիճաղանճք. և գիտա-ցի բանակռուիլ նոցա ընդ իրեարս. ապա յարուցեալ դիմեցի դէպ առ ու-ղին արքունի՝ որ ընդ կախաղանաւն, որ զերծ ի բնակութեանց է. և անտի խուսեալ դոյն ինչ զառ ի վեր և դարձեալ զառ ի վայր, ընդ պարտիզօքն՝ որք ի կողմանս վանացս Սրբոյն Գէորգեայ և Մարիամայ Մակդաղենացւոյն, ընդ մացառուտս և եղէջս դժուարինս և մարգս և ճախինս որք ի նոսա, յ'որս բազմիցս անկանելով, և օգնութեամբ սպասաւորին կանգնելով, հասի ի տափարակն անշէն. ուր և լուսաշաղեցաւ այգն· Աստէն զտեղի առեալ՝ գոհացայ մեծապէս զԱստուծոյ՝ ընդ փրկելն զմեզ յայնքանեաց վտանգից դի-չերոյն և թշնամեաց, ընդ որոց մէջի անցոյց անվնաս· Եւ ի խոկալս թէ յոր կողմն դիմիցէի անքոյթագոյն, թէ և ի մոխ եգեալ իցէի գնալ ի Աթանխ-լավօվ, չրջակն ածեալ՝ տեսի դխորց իմն ընդարձակ ի հանդիպոյն արեւե-

լեան հարաւոյ, և անդր քան զայն անտառ իմն՝ որպէս թուիւր ծառախիտ, անդ եզերեցի գնալ, թերեւս ընդ թաւ սաղարթեաւ ծառով իմիւ նպաստաւորիցէի ի յորդութենէ անձրեւոյն՝ որ ստիպէր: Բայց հասեալ անդէն՝ գտի զընդդիմակն. զի ոչ միայն ցանցառք էին ծառք, ոստք նոցին և սաղարթք, այլ և ի ներքոյ նոցա ջուր ծովացեալ յանձրեւոյ, գոլով տեղին գոգ և զիճային մարդ: Վրիպեցեալ ուրեմն ի յուսոյ, հարկեցայ դիմել և անդր, դուցէ ուրեք գտանիցիւր սիփուռն. և ոչ էր. այլ և մառախուղ թանձր շրջաղեալ, թէ և անձրեւն մեղմացաւ, և հողմն ցրտաշունչ յարեաւ. որով պատճառաւ մոլորեցեալք և թափառականք՝ այր և անդր շրջաբերեցեալք ընդ խորափիտս, ձորակս և հեղեղատս, մերթ չաւղօք մերթ անհետիւք վայրօք տատանեցաք մինչեւ ցհասարակ օր, որպէս համարէաք: Այս մառախուղն մերժեցեալ, այլ անձրեւն յորդեցեալ՝ նշմարեցի զինն ի մէջ խարոյին՝ մարդանման. և մինչ դանդիտելով զտեղի առեալ յղեցի զսպասաւորն ի զնին, պատուիրանաւ զգուշաբար հպելոյ և տնտղելոյ, ահա կոճ ծառի էր. տես, թէ երկիւղն զինչ ոչ երեւակայացուցանէ մարդոյ:

Այս կալաւ զիս տարակոյս մեծ՝ ի խորհելն զներկայն և զապագայն. զի անձրեւել ոչ դադարէր. զի զգենլիք ամենեքեան թացեալք մինչեւ ցչապիկ՝ ծանրացեալք էին ի վերայ իմ, յորոց կաթէր ջուրն. զի ցուրտն ստիպէր, զի չինուիւն ուրեք ոչ երեւիւր, ի նպաստ այնքանոյ անճարակութեան. զի տեսանէի զճախին ընդարձակ ի ձորակին՝ ընդ որ անցանել մարթ էր, որ ինձ էր անհնարին. զի զտեղի առնուլ զանգիտէի, դուցէ ի ձեռս Պուղտանցւոց աւազակաց կամ Վլետաց ցրուեցելոց ամենուրեք յապուր՝ անկանիցէի: Ի մէջ այսպիսեաց ուրեմն վշտաց փաղակացեալ, մինչ վարանէի տխրագին, սպասաւորս՝ որ էր առոյգ և ուժնդակ երիտասարդ, քաջալերեալ զիս՝ էառ ի չալակ իւր՝ իբր զտղայ իմն, և անցուցեալ ընդ ճախինն, և հանեալ ի վեր ի բարձրաւանդակի միում դետեղեաց. ինթէրիմ (մինչ այս մինչ այն) անձրեւն սկաւ նուազիլ, և դադարեաց հողմն: Այրարձի պաչս ի բլրակէ անտի շրջահայել, և ահա չինուԹիւն իմն ոչ հեռի ի տեղւոջէն երեւիւր. և ուրախացեալ հանգեայ անդէն սակաւ մինչ. և նկանակ մի հացի ընդ սպասաւորին կերի. և յարուցեալ դիմեցի ի չէնն, համարելով գտանել զդիպաւորութիւն իմն: Իբրեւ շրջապատեցի զբոլոր պատուարն՝ որ մեծ արդեօք էր, և հասի ի դուռն, ծերունի ոմն պատահեցեալ՝ հարցմանս պատասխանեաց. Այս գերդաստան տեառն Սիմէոնովիցի դատաւորին Լէօպօլսոյ է, և չիք ի ներքս ոք, և տունքն սմայիք են. բայց եթէ խոնարհագոյն զինչիցես՝ հուպ արդեօք է գեօղ. և թերեւս գտանիցես դիպաւորութիւն ի նմին: Այս դիմեցի զառիվայր, և դիպեցայ լճի, որոյ ի ծայրն երեւիւր գեօղ մեծ. այլ ծուխ և ոչ մի ելանէր, և զարմացայ. Թանտէմ (tandem, և սակայն) գտեալ զկոպար լճին, անցի ի գեօղն. և չրջեալ ընդ տունս բազումս՝ գտի զդրունս քակեցեալ և զոչ ոք ի ներքս. և վհատեցեալ նստայ ընդ խոտադիզաւ միով ի հանդչել. և յղեցի զսպասաւորն որոնել ընդ ամենայն չէնն, թերեւս գտանիցիւր ոք որ ժողովիցէր

զմեզ ի տուն իւր. և դարձաւ ունայն: Աստէն եկին ի միտս դիպուածք նախնեաց զանազանք ի գրոց սրբոց և յարտաքնոց պատմութեանց. նախ, առածն իմաստասիրաց հնագունից. յորոց յիշմանէն եւ թաղծեցայ եւ յուսադրեցայ: Յարեալ անտի՝ նչմարեցի բացագոյն ի ծայր գեղջն գեկելեցի քարաչէն և մեծամեծ. դիմեցի ատէպ առ այն, գուցէ զոք գտանիցէի, գոնէ ի տեղեկանալ զուրանօր լինելոյս. և ահա խոզարած ոմն ածէր զսակաւ խոզեան, և իսկոյն ի տեսանելն զմեզ՝ թողեալ զխոզեանն ի փախուստ դարձաւ. որոյ զհետ պընդեալ սպասաւորին՝ հազիւ դարձոյց, ասելով. Ցանօթք քահանայի գեղջս եմք, և ոչ օտարք կամ վնասակարք: Իսկ ի խօսակցելն ընդ նմա՝ գտի արդարեւ բիրա, սոպա, կոպիտ, տաւ և տմարդի, և արժանի գործոյն ևեթ իւրոյ. զոր մեծաւ աղերսմամբ և չողոքորդութեամբ հաւանեցուցի մուծանել զմեզ ի խուղ իւր. առ որ մտեալ՝ ափսոսացի զաղաչանս այնպիսւոյ առն զարարեալս, վասն այնպիսւոյ տան աղբալւոյ, ժահահոտի և տղմամածի ի կաթլեաց աստստաղին. ուր անբաւութիւն ճանճից, որք զրեթէ յակն մարդոյ մտանէին, և լւոց ոչ սակաւ բազմութիւն. և ոչ իմն տեղի հանգստեան կամ աթոռիկ մի նստելոյ: Ցեցեալ ուրեմն յորմն և ի գաւազանս՝ ախրագին վարանէի. զի ի խոնաւութենէ զգինեւեաց՝ սառուցեալ դողայր բոլոր մարմինս, և ի կափկափմանէ. ատամանցս հազիւ բաւէի խօսել, և թուէր թէ քաղիւր ոգիս, և իցէր արդ արդ վերահասեալ կէտ վերջին կենիս (կենացս):

Ցայսմ տաժանման մինչ կայի, ոչ գիտեմ ո՛րպէս՝ մրափեցի, և տեսի յանուրջս զՍուրբն Կայեթանոս, այնու զգեստիւ որով նկարեցեալն է ի մատրանն պալատին իմոյ. որ զուարթագունիւ դիմաւ ասաց ցիս. Ընդէ՞ր այդքան վհատիս. քաջալերեաց, մի երկնչիր. արտաքոյ վտանգի ես: Ի լսել զբանս զայս յուսադրական, իբրեւ կամէի փարիլ ի ֆնդութենէ զոտիւք Սրբոյն, սահեցեալ յորմոյն յոր յեցեալն էի, անկայ ի գետին, և զարթեայ: Ի սկսանելս գոհանալ զՍտուծոյ և զՍրբոյն, յանկարծ լուայ զդոփիւն ոտից երիվարաց և զձայնս խօսից մարդկան առ դրանն, և երկեայ յոյժ. համարեալ թէ խնդրակք իցէին զկնի հասեալք. և զինչ իցէր յուսալի, եթէ ոչ կամ ըմբռնումն կամ անողորմ սպանումն. և յանձնեալ զիս Աստուծոյ և սրբոց խնամակալուացս, ակնկալէի արտագործութեան կարծեացս: Իրրեւ մտադրաբար ուշ եդեալ բանից նոցա, զի լեհերէն ասէին ցխոզարածն, « մի զապուրծք գրեթէ զերծաք ի ձեռաց Ավէտաց, եթէ չէաք աճապարեալք ի փախուստ, անկարծիք յափշտակեալք իցէին զձիս, թերեւս և զմեզ ». զոգի առի, և իբր ի վտանգէ մահուան փրծանեցեալ՝ կազդուրեցայ: Ասէ ցնոսա խոզարածն. Ես աստ ի խղիս ոմն փախստական ի Ավէտաց. և թէ ով ոք իցէ չգիտեմ. բայց թուի թէ մեծատուն ոմն իցէ: Ապա մի ոմն յեկելոցն եմուտ ի ներքս. և հայեցեալ յիս՝ քաղաքավարօրէն ողջունեաց, և ստորայարեաց. Տէր, չէ այս վասն քո տեղի. խնդրեմ, եթէ հաճեսցիս, մատիցես ի տուն իմ և հանգիցես. զի տեսանեմ զտէրդ կարի խոնճեցեալ և վշտացեալ: Շնորհակալութեամբ հանդերձ հետեւեցայ նմա. յորժամ ի տունն մտի և տեսի

յատակ, և ի նմին մահիճ, և հնոց՝ ըստ Պուղտանաց, ուրախացայ ոչ սակաւ. և այնու ծանեայ զայցելութիւնն Աստուծոյ առ իս, բարեխօսութեամբ Սրբոց Խնամակալուացս, և զոհացայ զնմանէ։ Եւ իւկոյն այրն հիւրընկալ վառեաց զհնոցն, և ասէ. Տէր, մերկացիր ի զգեստուդ, և ընկողմանեալ յանկողնի աստ հանգիր, մինչեւ ցամաքեցուցից զհանդերձդ. և հասուցից կերակուր ջերմ. գիտեմ զի ներելոց ես ինձ, եթէ գեղացւոյ և ոչ քաղաքացւոյ զխորտիկս առաջաբերից. զի ոչ զայլ ունիմ այժմ ի տանս՝ բաց ի փոքու իմն կոգւոյ, սակաւուց ձուոց և կորկոտէ գարւոյ։ Զոհացեալ զառնէն՝ ննջեցի իբրեւ զժամս երկուս կամ առաւել։ Իբրեւ զարթեայ՝ գտի զհանդերձս ցամաքեցուցեալս և զկերակուր պատրաստ. զգեցայ, կերի և զօրացայ։ Ապա ասացի ցայրն. Տեսանեմ զքեզ այր բարի և երկիւղած յԱստուծոյ. վասն որոյ կամիմ յայտնել քեզ զխորհուրդս իմ, և լսել ի քէն զգացումիդ. Ես ի Լէօպօլսոյ հետի փախեայ ի ձեռաց Ովէտաց, որք հանդերձեալք էին առնել ինձ զրոնութիւն, և մեծաւ տաժանմամբ հազիւ հասի աստ. եթէ չէիր դու մարդասիրեալ՝ թերեւս ցարդ մեռեալ իսկ էի. յաղագս որոյ չնորհի՝ զոհանամ զքէն. և եթէ կամ լիցի քոյ՝ ինացից աստէն զաւուրս քանիս, մինչեւ դոյն ինչ զուժ առեալ՝ հետեւեցայց զուղին իմ. և ոչ արդեօք եղեց առ քեզ ապաշնորհ։ Պատասխանի ետ. Տէրութիւն քո գիտասցէ, թէ գեօղս այս Ժուպր՝ պատկանի առ զատաւորն Լէօպօլսոյ, և չէ իսկ հեռի ի քաղաքէ անտի, եթէ ոչ միով մղոնաւ. և նոքա հրամայեցին հանուրց չինականաց թագչել ընտանեօք և գոյիւք իւրեանց յանտառս խորինս, զուցէ յափշտակիցէին յաւարառուաց. որ և քահանային մեր ոչ համարձակեցաւ մնալ աստ, թէ և յեկեղեցւոյն կարէր բարեպէս ամրանալ. և Տէրութիւն քո զիա՞րդ կարէ միայն յանմարդաբնակի տեղւոջ անքոյթ կալ. կամ ուստի՞ գտանել զկերակուր. քանզի և ես առեալ զանկողինս մնացեալս՝ գնայից եմ ի գիշերիս՝ յանտառն՝ առ ընտանիս իմ։ Ասացի. Եւ ո՞ւր երթայց, մինչ անտեղեակ վայրիցս և պակասեցեալ յուժոյ, քայլել ցձորակն այն ոչ բաւեմ։ Պատասխանեաց. Ես վասն Քրիստոսի Տեառն մերոյ հասուցանէի սերկ (այսօր) զՏէրդ՝ յապահով և յանքոյթ իմն տեղի, այս է, ի դղեակն Սթառօշէլի՝ որ երիւք եւեթ մղոնօք բացեայ է, եթէ կարիցէի ունել զմիւս ձի պատկանաւոր տեառնդ. զի ձիս իմ յերկոցունց աչաց կոյր է, և ոչ ոք բաց յինէն կառավարել գիտէ զայն. արդարեւ ընկերն իմ ունի, բայց գոլով ինքն սոպո և տառ, ոչ կարծեմ թէ կամիցի տալ։ Ազաչեցեալ ուրեմն յինէն՝ գնաց, և ոչ յամեալ՝ եկն ընդ առն և ձիոյն. և գնահատեալ երից գլօթայց և միոյ քառորդի ցքոյ, ետու դվարձն, առեալ ի նմանէ զչիշ մի ապակի, պայմանաւ անդրուստ առաքելոյ զինդրեալն. և ձիաւորեցայ. հեծեալ և այրն բարի յիւրն երիվար՝ էառ ի գաւակն զսպասաւորն իմ, գնացինք։

Իբրեւ ելինք զառիվերն հուպ անտառին, ասէ ցիս. Տէր, ի հետոց իմոց մի վրիպիցիս, զուցէ մոլորիցիս. զի ոչ ընդ ուղին արքունի՝ այլ ընդ չաւիղս և մերթ ընդ անհետս գնալոց եմք. վասն զի յայսոսիկ ի վայրս աւազակք Պուղ-

տանցւոց՝ բազմիցս կողոպտեն զուղևորս, մերթ և սպանանեն. գիտեմ դի ծոյլ է ձիդ, մի խնայիցես ի խարազանն։ Եւ ետ ցիս՝ զոր ինքն ունէր։ Գընայինք արդեօք՝ այլ իբր արշաւմամբ՝ վասն տարամերժելոյ աւուրն. զի գոնէ նախ քան զմուտ արեւոյն՝ յանտառէն արտելանիցեաք։ Լուր աստ զկատարած կրիցս. զի դեռ կերեակ էի, և ստամոքսն ի բնէ յամրամարս, տակաւին չէր ծախեալ զկերակուրն. և ի ցնցմանէ ձիաւորութեանն, (զի ձին էր վատաքայլ և ոստոստամբ ընկայր), չփոթեցան ի նմա կերեալքն, և տոզկայի. բազուկքս լքան ի հարկանելոյ զձին պղերգ. ի կարծրութենէ համեստին լերկացան մորթք.. յենուլ ոտիք յ՝առ ներքանն՝ ի վերաբառնալ զծանրութիւն մարմնոյ՝ զօրէի ոչ. ի թուլութենէ ծնկացս օդից (յօդից), բնաւք մարմնոյս օդուածք՝ թուէր թէ իցէին լուծեցեալք. և ի խելապատմանէ գլխոյս պատճառաւ հարհրման՝ մինաշաղէին լուսարանքս. թանձէմ, տաժանմամբ մեծաւ հասինք ի դղեակն Սթառօչէլի, ի մտանել արեւուն։ Եւ ահա չուրջ եղեն արք և կանայք՝ ի տեղեկանալ զանցիցն Լէօպօլոյ. որոց նշմարեցի ձեռամբ հարցանել ցսպասաւորն. չունելով զուժ խօսելոյ։ Վասն վարձու՝ զոչինչ կամէր առնուլ այրն բարի, ասելով, թէ վասն Աստուծոյ արարեալ իցէր. և հազիւ ստիպեցեալ՝ էառ զեօթն զլօթիս, և մի զլօթի եաւս վասն ցքոյն խոստացելոյ, զի գնիցէր։

Ապա խոտորեցաք ի տուն ուրումն կարաւակի՝ Փաւլօ կոչեցելոյ, գոլով տաբաժամ որոնել զիջեւան պատկանաւոր. յոր՝ ի մտանելն՝ իսկոյն զժահահոտութիւն կաշեայ և այլոց փնդռթեանց գգացեալ, ստամոքսն որ արդ վըրդովեցեալն էր ի յարաշարժութենէ ցնցմանց և տոզտկացեալ, փսխել սկսաւ զոր ունէր յինքեան. և յայնմանէ եւս առաւել նուազեցեալ՝ անկայ ի տախտակին որ առ յորմն՝ իբր գկիսամեռ, և համարէին ամենեքեան թէ մեռանի արդ արդ։ Ցետ սակաւս միոյ ուշաբերեալ՝ ասացի պատրաստել գմահիճ, համարելով թէ ի տան իմում իցէի. և եդին զծեղս ի վերայ տախտակին և զայլս առ ինաբս, և ընկողմանեցին ի նմա, ծածկելով վերարկուաւս և եթ. և տանտիկինն կարեկից լեալ՝ մատոյց զվերմ գարէվուր կոգեաւ, զոր արբի. և իբր թմբրեցեալ՝ ննջեցի։ Սակաւ ինչ նիրհեալ՝ զարթեայ. և ոչ գիտէի գ՝ուր գոյս. զի և ոչ զճրագ թողեալ էին ի վառ. գննէի գմահիճս, և ահա ծեղք. հիանայի ընդ իս ինքեան, թէ որպիսի իցէր այն դիպուած. լուայ զի խորդայր ոք մերձ, և զարմացայ, ասելով ընդ միտս. Ոչ ոք երբեք ննջէր առ իս ի սենեկի. և այս ո՞վ իցէ արդեօք։ Մինչ յայսոսիկ վրանէի, սկսաւ աղմկիլ ստամոքսն, և արտաճգեաց զոր ունէր յինքեան. ուստի թալկացեալ անկայ. և կկնի փոքու միոյ ուշաբերեալ՝ ծանեայ զտեղին. կոչէի զփոքրաւորս, և ոչ զգայր. զի չունէի զուժ հզօրապէս ձայնելոյ. և ահա լուծումն.. ստիպէր, և ոչ կարէի գտանել զդուռն տանն, մինչեւ հազիւ գնընմամբ ձեռաց ընդ օրմունս՝ արտելի. և դարձեալ ի ներքս՝ այր և անդր տատանմամբ դիպեցայ տեղւոյս, և ննջեցի մինչեւ ցլոյս։

12. (Սեպ.) Ցուրբաթիոյ առաւօտուն զգացի դոյն ինչ յիս զօրութիւն և զա-

խորժ ուտելոյ. բայց զի չէր ի տան անդր բաց ի գարէլրոյ, բրդեալ ի նա զհաց՝ կերի և առաւել զօրացայ։ Ապա աղաչեցի զկարուսակն գտանել զկառ ի վարձու. և նա իւրով կառաւ և ձիով մատոյց զինքն պատրաստ՝ հասուցանել ցաւանն Պուպոքով, երկու մղոնաւ հեռի անդուստ։ Հասեալք ուրեմն անդ՝ գնացի ի տունն ուր օդեալն էի երբեմն, մինչ գնայի յայցելութիւն Աթանիալավվու. և տանուտէրն Աթանիալաւ և կինն Հեղինէ, ոչ գիտեմ որպէս՝ ծանեան զիս. և հիացեալք հարցին զպատճառն, և տեղեկացեալք դամինայն անցս՝ յարտասուս հարան. մինչ զի և ես փղձկեցայ։ Աղաչեցին զի հանգիցէի յանկողնոջ իւրեանց, և արարի։ Իբրեւ զարթեայ՝ տեսի պատրաստեցեալ զսեղան պէսպէս խորտկօք համեմեցելովք. կերի և արբի զմեղբալնուր աղնիւ յոյժ և համեղ, և զուարթացաւ սիրտս. և գոհացայ զնախախնամութենէն Աստուծոյ, որ յայնքանեաց նեղութեանց ազատեալ, առաւել զարժանն իմ մխիթարեաց. և եկեալ ի միտս բանն Սողոմոնի, ցորժամ ի քան սեղան հզօրաց ուտիցես, եւայլն. խորհէի, թէ ուստի վճարիցէի զպախարէն այնքանոյ մարդասիրութեան, զի մի զլօթի միայն ճնացեալ էր առ իս։ Ցետ գոհանալոյն՝ ասեմ ցտանուտէրն. Սիրելի եղբայր, պակասեցաւ ինձ դրամ ծախուց. արա սէր, և տուր ինձ փոխ 15 զլօթայս. և դիտ կառ զի երթիցեմ մինչեւ Աթանիալավվ, և անդուստ վերառաքեցից քեզ գոհութեամբ։ Պատասխանեաց. Աբարից զամենայն զոր ցանկայ անձն տեառնդ իմոյ. բայց ոչ կամէի թէ ի Աթանիալավվ, այլ ի Ռօհաթին գնայիր, որ հեռի է չորիւք մղոնօք. զի թէ խնդրակք եւս արձակիցէին զկնի, ոչ դիւրաւ գըտանէին՝ առնելովդ զծիրն զայն։ Ընկալայ զխրատն խոհիմ և չնորհակալ եղէ։ Ել ուրեմն այրն, վարձեաց զկառն՝ հինգ զլօթայի. եգիտ և զերկուս ձիաւորս՝ որք տանէին, անդէն էին գնալոց. և եկն նոքօք, և յանձնեաց զիս նոցա, զի անվընաս հասուցանիցէին ի տեղին։ Իբրեւ եղեւ ժամանակ գնալոյ, եկին այրն և կինն ընդ փոքու մանկան իւրեանց, եւտուն զ'15 զլօթիսն, և ասեն. Հայր սուրբ, զվարձ կառին վճարեցինք, և զայս դրամս չնորհեմք ի ծախս ճանապարհի. և օրհնեա զմեզ, զի զաւակք՝ զորս տայ մեզ Աստուած՝ մեռանին. թերեւս աղօթիւք քովք՝ դմինս զայս պահեսցէ Աստուած ժառանգ մեզ։ Զարմացայ ընդ հաւատ նոցա. և օրհնեալ ըստ ցանկութեան իւրեանց՝ գնացինք։

Ի ճանապարհին հանդիպեցաք յաւանն Աթրէլիաքայ, և յերեկոյին անցան հասինք յարտաքաղաքն Ռօհաթինու. և անդէն ի տան գրգակազմի ուրումն Ռուզի՝ Գասաուպեաք կոչեցելոյ՝ օթևցինք։ Այլ սակաւ դանադանութիւն անցելոյ գիշերին պատահեցաւ, յանդիպաւորութենէ՝ ճանապարհին և ի վիրաց.. առեցելոցն յառաջնումն աւուր ձիաւորութեան. որ և զբոլոր գիշերն տքուն անցուցի տապիւ մեծաւ. թէ և ի տանտիկնոջէն գթասիրաբար տածիցէի, որ ընդ իս տքնիւր և մայրաբար աղէխարչիւր։

13. Ի չաբաթոջ առաւօտու զառաւել ջերմութիւն զգացեալ ի տքնութենէ և ի ցաւոց վիրացն, գուցէ ի մեծագոյն ախտ անկանիցէի յանդիպաւորութենէ. առաքեցի զոպասաւորն՝ որոնել ի քաղաքէն զօթեւան, կամ ի հո-

գաբարձականում ևկեղեցւոյ, կամ առ Տօմինիքանս։... Իսկ սպասաւորն երթեալ եգիտ զօթեւան առ Տօմինիքանս, բայց դժուարութեամբ. զի խղճէին, զուցէ խնդրակք զկնի հասեալք և առ նոսա գտեալք զիս, ինքեանք ինձ սպասարք գտանիցէին։ Երեկոյին ուրեմն գնացի առ նոսա. և Փաթէր փըռիօրն Ֆիլիպ Յանիովից, առ ի խուցն իւր հրաւիրեաց ի խօսակցութիւն. և ի մէջ այլոց բանից՝ ասէ. Վանքս աղքատ է, և սակաւ եղբարք բնակեմք, ոչ ունելով զդիպաւորութիւն, և ոչ զանկողինս բաւական։ Իբր կամէր այսու առթիւ բառնալ զինքն, եթէ ոչ պաշտպանիչէր ինձ. կամ զկերպի կամ զանկողինս. և այնպէս գալջօրէն, մանաւանդ թէ ցրտաբար խօսէր, մինչ զարմանալ իմ։ Ապա հանեալ զոտւսի թապաքին յաղնիւ յոսկրէ կրիայի, արծաթակազմն և փայլուն յոյժ, և յունչան էառ զհոտ ախորժ խառնուածոց թապաքին, իսկոյն փոխեալ զկիրս ոգւոյն, սկսաւ ջերմաւ սիրով խօսել, և կարեկցաբար և փոյթ կոչեաց զպաշտօնեայն, և հրամայեաց զրարձս և զանկողին իւր վերայի տանել ի խուցն ինձ պատրաստեցեալ։ Աւեմ ընդ միտս. Ո՛վ տուի, զօրաւորագոյն ես դու ի չարժել զսիրտ առ գութ, քան զակարութիւնս իմ, և զհիւծեալ ծերութիւնս։ Ցետ փոքու մի՛ոյ ողջունեալ զնա՝ գնացի. և նպաստաւիր փափկագունի անկողնոյն քրտնեալ ի զիշերի՝ ցրուեցաւ ջերմութիւնս, և առաւօտուն գտի և զվէրս առողջացեալս, և զոհացայ զբարերարութենէն Աստուծոյ։

14. Ի կիրակէի առաւօտուն եաու փոքրաւորին զլօթիս 10, զի հոգայցեր զպակասութիւն իւր. այս է, զկօշիկս, չապիկս, և զայլս պիտոյս, նա և զկերակուր և զըմպելի. զի վանքն և ոչ զգարէջուր պաշտպանէր մեզ. մանաւանդ թէ և զպոյտս կամ զդրաչկ ջրոյ կամ զրգալ մի կամ զփայտ ոչ կամեցան տալ. զորս ամենեսեան հարկ եղեւ գնել. և մնաց միայն 3 զլօթի առ իս։ Եւ մինչ խորհէի, թէ զիարդ զառաջիկայ ճանապարհն փազահետեւիլ կարիցէի այնու փոքր դրամով, զի թէ և ունէի ընդ իս մատանի մի չափիւղայ, ոչ կարէր անդ ոք գնել, կամ ի գրաւ առնուլ. ահա նախատեսութեամբն աստուածայնով ժամանեաց անդր փռէզիտէնս Թրինաթարից (նախագահ՝ կամ առաջնորդ Trinitari միանձանց), Փաթէր Մաթիաս սպանիացի, նախածանօթ իմ. որում զգացուցին Տօմինիքանք, թէ իցէր առ նոսա ոմն փախստական ի Լէօպօլսոյ. բայց զսմ ոք լինելն տգիտանային, թէ եկեղեցական կամ աշխարհական իցէր. և խնդրեցին այց առնել և գիտել։ Իբրեւ եմուտ ի ներքս՝ իսկոյն ծանեաւ, թէ և այլակերպեցեալ իցէի. և փարեալք զմիմեամբք ողջագուրելով խնդութեամբ, ոչ առանց արտասուաց, հարցանէր զվանէրն և զորպէան գալոյս. զոր իբրեւ բացատրեցի պարագայիւք հանդերձ, յայտնեցի իբրեւ բարեկամի և զչքաւորութիւնս. որ մեծաւ սիրով մտերմականաւ մխիթարեալ զիս, մատոյց զինքն պատրաստ ի ընուլ զպակասութիւնս։ Մինչ պատաղեցեալք էաք ի ճաւուն դիպուածոյն Լէօպօլսոյ, ևկն ի վերայ Փաթէր Յիրինա՝ կվարտիան Ֆրանչիսքանաց Լէօպօլսոյ, նմանապէս ծանօթ իմ. աճեաց ատեն խնդութիւնս, և մոռացումն եղեւ վշտա-

կրութեանց անցելոց. եհաս ի վերայ և Ռէյէնթ Տօմինիքանաց Լէօպօլսոյ՝ Փաթէր Իւսթուս Ռօլայ, և ծանուցայ ամենեցունց Տօմինիքանաց տեղւոյն, որ և մատուցեալ Փաթէր Փռիօրն ամօթալի, հայցէր զներումն վասն ոչ առնելոյն զպատիւ պատկանաւոր։ Բայց խորհեցայ ոչ յամել ի տեղւոջն, զի և ի քաղաքին լսելի եղեւ անունս. գուցէ վտանգն յորմէ խիթայի՝ պաշարիցէր զիս։ Ծանուցի զխորհուրդս Փաթէր Մաթիասին. որ և նա առ փորձեալ զզգացումն իմ, խոստացաւ յերեքշաբաթիոջ աւուր առնուլ զիս ընդ իւր մինչեւ ցՄթանիսլաւով։

16· Ցերեքշաբաթիոջ, զկնի պատարագին, կառաւ Փաթէր Մաթիասին գընացինք դէպ Մթանիսլաւով. և յերեկոյին խոտորեցաք ի գեօղն, ուստի եբեւիր գեօղաքաղաքն Հալիչ, և օթեցինք ի բակի չինականի ումեմն մեծատան։

17· Ի չորեքշաբաթիոջ անցեալք նաւու զդետն Տնեստր, գնացինք ի Հալիչ. Փաթէր Մաթիաս գնաց առ գասթէլլանն, և ես ի տուն ժէլինաքայ Լինոջ Հայկազնւոյ, առ որում երկիցս յայցելութեանն Մթանիսլաւով՝ օթեալ էի. բայց ոչ նա զիս ծանեաւ և ոչ ես ետու ծանօթութիւն. գնեցի ի թոռանէ նորա զերկուս դոխս աղաւնոյ՝ վասն վաղուհան, և կերի ընդ սպասաւորիս վարունգս թթվոյ և եթէ։ Էր յայնժամ Մէյմիք գաւառին և մեծամեծք ամենեքեան ժողովեցեալք էին, ընդ որս և Վլատիքայ Ռուզաց՝ Շումլայնսքի, զոր տեսի ի գնալն առ ժողովն, այլ ոչ ողջունեցի. սակաւ ինչ յամեալք՝ յետ ուտելոյն, դիմեցինք ի Մթանիսլաւով, և երկուք ժամօք յառաջ քան զերեկոյն՝ հասինք յարտաքաղաքն, ի գերդաստանն Թրինիթարաց. Փաթէր Մաթիաս գնաց ի վանք կարգին իւրոյ, և ես մնացի անդէն։ Աստ ի ծածուկ կոչեցի առ իս զՊատուելի Տէր Պտեփաննոս Պտեփանեան՝ զաւագն Հոգաբարձուաց գաւառին. որոյ ի տեսութենէն ուրախ եղէ յոյժ, և բերկրեցաւ ոգիս. որ և յօժարամտաբար մխիթարեալ զվշտագնեցեալս, բայց ի պաշտպանելոյ զկերլիս, չնորհեաց և զգեստս գղերիկոսականս, և զանկողինն վչենակաւ, նա և զթոշակ ճանապարհի։ Ագայ անդէն գայն գիշեր։

18· Ի հինգշաբաթիոջ ընդ Տեառն Պտեփաննոսի եգերեցի ոչ մնալ անդ, այլ յառաջել ի Պնեաթին և անդուստ ի Սէչօվ դիմել, և անդէն ձմերել սպահով. ծանուցի զխորհուրդս Փաթէր Մաթիասի, և կառաւ նորա (որ գնացոց էր ի Պանիլովայ, առ սահմանաւն Մօլտաւիոյ, ուր նախաւաքեցեալք էին գայք եկեղեցւոյ Նորա՝ յահէն Սվէտաց), գնացի դէպ ի Պնաթին։ Անցեալք ուրեմն ընդ աւանն Թիամինից, ուր եկեղեցի և քահանայ Հայոց և Հայք ոչ սակաւք են, ոչ ումեք տուեալ զծանօթութիւն, թէ և յաւանամիջի անդ զոմանս տեսի, հասինք ի գեօղն Թօլմաչ, երկու մղոնօք հեռի ի Մթանիսլաւովու, և օթեցինք անդ։

19· Ցուրբաթիոջ եկեալք անտի, պատահեցան երկու Թրինիթարք ի վանացն Փաթէր Մաթիասին, որք զեկուցին նմա զգոյից եկեղեցւոյն։ Ի յաւանէն կվօժինեց ճաշեալք, գնաց Փաթէր Մաթիաս ի Պանիլօվայ. և ես վար-

ձեցի գկառ մի Հրէի և գնացի ի Անթիւն, որ հեռի էր միով մղոնաւ։ Ի մտանել արեւուն հասեալ անդ, խոտորեցայ ի տուն Ռուգի ումեմն, և առաքեցի զպաշտօնեայն ի խնդիր քահանային մերոյ, և չէր անդ. այլ՝ այլ իմն օտարական՝ Թերեւս և խաբեբայ՝ տեղապահ նորա եկն. որում ծանուցեալ գինէն՝ պատուիրեցի մի ումեք յայտնել, այլ միայն գտանել զօթեւան. և նա ոչ յամեալ եգիտ, մերձ եկեղեցւոյն Հայոց և Տօմինիքանաց. ուր գնացեալ գտի անձուկ և ժահահոտ, վասն որոյ արտաքոյ ընդ ծածկութիւ նընջեցի։

20. Ի շաբաթոջ առաւօտուն ոչ գնացի յեկեղեցին Հայոց, զի մի՛ ճանաչիցէի. այլ առ Տօմինիքանս, ուր՝ մինչ լսէի զպատարագ, զկնի իմ եկեալք էին և Հայք ոմանք. որպէս, Բան Դանիել Վառուկեան՝ մաքսապետ թագաւորութեանն Լեհաց, նախածանօթ իմ, ընդ ոմանց Լէօպօլսեցւոց. ընդ որս էին Թէօտօր Ասպաթ և Գաբրիէլ Պալսամօվից. սոքա յետ իմ իբր ի չորրորդում տեղւոջ կացեալք, և նշմարեալք զիս տնտղմամբ, քրթմնջէին, որպէս ինքեանք յապա խոստովան եղեն. մինն, թէ այս այր Սվէտ ումն է, և լրտեսել զքաղաքս եկեալ է. միւսն, ո՛չ ապաքէն զրապան վերարկուին ապացուցանէ զայնպիսի ումն գոլ. ամենեւին ծանուցանելի է կառավարչի քաղաքիս. գուցէ ի թագստի ունիցի ուրեք զղինւորս և անկարծ ըմբռնիցէ զսա։ Ասէ առաջինն, եթէ ոչ արասցէ զմեծարանս սրբազնասրբոյ Խորհրդոյն՝ ստոյգ Լութէրան է, և դարանակալել զքաղաքս կամի։ Իբրեւ ոչ ի բաց առի զթասակ գլխոյս՝ ի վերացուցանել սրբոյ Խորհրդոյն (քանզի ենթագաւտմամբ արարի՝ ոչ ցուցանելոյ վասն զպսակ գլխոյս,) իսկոյն ենթատրոհեցին երկաքանչիւրն՝ թէ արդարեւ Սվէտ իցէի։ Յետ պատարագին՝ ելեալ յաթոռոյ անտի՝ ի գնալն տեսի զԲան Վառուկօվիցին, որ կանգնեալ ի նստելոյն՝ խոնարհապէս արար զմեծարանս, համարելով՝ թէ գործակալ կամ պետ ումն զինուորաց իցէի, զի ունէի զվերարկու կարմիր՝ ըստ զօրապետաց Ալէմանաց։ ուց, և ամենեցուն մերայնոց աչք յիս կառուցեալք էին, և ոչ կարէին ճանաչել յայլակերպութենէ. իսկ ես ոչ հայելով ուղղակի առ նոսա, այլ ընդ ակամբ նշմարելով՝ ելի յեկեղեցւոյն։ Իբրեւ սակաւ ինչ հեռացեալ յեկեղեցւոյն հայեցայ յետս, ահա մերայինք ամենեքեան կային առ դրան եկեղեցւոյն, տեսանել՝ թէ յո երթայցէի. նշմարեցի ուրեմն ձեռամբ՝ Պալսամովիցին, որ իսկոյն մատեաւ առ իս, ձեալով այլոց ի տեղւոջն. ասեմ ցնա լհհերէն. Ճանաչէս զիս։ Ի ձայնէ թերեւս ճանաչեալ՝ կամէր համբուրել զձեռս. զոր արգելի. և մի՛ ումեք յայտնել զինէն պատուիրեցի. այլ զի երթեալ առ Բան Վառուկօվիցին՝ լռելեան կոչիցէր առ իս. որ և վաղվաղակի եկն. որում ի հեռուստ ազդեցի՝ մի՛ առնել զմեծարանս յատուկս, այլ իբր ծանօթի ուրուք ընկերակցիլ. հետեւէին պաշտօնեայք, ընտանիք նորա, և զոչինչ իմանային, մինչեւ ի տան անդր նորա ծանուցայ, պատուիրելով մի՛ ումեք յայտնել։ Անացի առ նմա զաւուրս երկուս, պատուասիրեցեալ մեծարանաբար. որում յայտնեցի զկորհուրդս գնալոյ ի Սէյով. որ զընդդիմակն զգացեալ՝ հաւանեցոյց դառնալ ի Գամենից։

22. Ցերկուշաբաթոյ գոան ուղեկիցք լութերականք ոմանք վաճառականք ի Լէօպօլսոյ, որք ի վաճառատեղն էին գնալոց. ընդ որս և ես ուղեկցեցայ՝ վարձեալ զկառս. եկն ընդ իս և Բան Թէօտոր Սապաթ: Ի վաճառատեղիս յայս յամենայնում ամի յաւուր Ննդեան Աստուածածնին, ըստ հնոյ տումարին, յութ սեպտեմբերի, սովորք են վաճառականք ի զանազանից գաւառաց համագումարիլ պէսպէս վաճառօք. որ կիսով մղոնաւ հեռի է ի Մնաթինու, ի սահմանին Պուղտանաց. ուր ոչ քաղաք և ոչ գիւղ է, այլ յանմարդում վայրի՝ զխուղս յոսոց ծառոց յօրինեալք՝ միան իբր եօթնեակս երկուս կամ երիս, և անուանին Օթաք: Անդէն զոմանս տեսի արեւելցիս ծանօթս, զերեւանցիս, Նախջեւանցիս, Կապանցիս, և այլս. յամենալք անդէն իբրեւ զժամս երկուս, ընդ նոյնց ուղեկցաց գնացինք դէպ ի Գամէնից, և երեկոյին օթեցինք ի գեօղն Գօցման, որ առ մէթրօփօլիտն Պուղտանաց պատկանի:

23. Ցերեքշաբաթոյ ելեալք անտի գիշերայն, փութացաք հասանել յայնմ աւուր ի Գամենից. բայց մոլորեցեալք՝ յանտեղեկութենէ կառավարչաց՝ ընդ ձորակս և յանտառս անմարդիս, յետ հասարակ աւուրն հազիւ ի գեօղն Զամշուվ հասինք, ուստի անդր անցանելոց էաք նաւու ընդ գետն Տնեստր: Ձաչեալք անդէն՝ միացինք ոչ սակաւ գալտեան նաւավարին, և անցեալք յայնկոյս, ուղեկիցքն Լութհէրականք հատուցին և վասն իմ զնաւուն, որք և ընդ ամենայն ճանապարհն ոչ նուազ զգթութիւն քրիստոնէական՝ քան զմարդավարութիւն ապացուցին. մերթ յընթերս իւրեանց հրաւիրելով, երբեմն զգինի և զցքի, զկոգի և զհաց պաշտպանելով, յ'օրսոց իւրեանց ըզբաժինս տալով, բազմիցս զտիղի առնելով՝ մինչ կառն իմ միաձի յամէր ժամանել նոցա. երբեմն օգնելով կառավարչին իմում յանցս դժուարինս, և այլով պաշտօնատարութեամբք պարաւանդեցին զիս, թէ և անծանօթք. որոց տացէ Տէր զլոյս ճշմարտութեան: Թանտէմ, յերեկոյին անագան հասինք յաւան Զառնօքօզնի՛ցայ կոչեցեալ, որ պատկանի առ եպիսկոպոսն Գամենից, և է փոքր-փօզիթուրայ. որոյ զդղեակն հանդերձ պաղատաւան եպիսկոպոսականաւ՝ վաղ ուրեմն ամբողջ տեսեալ էր իմ՝ նախ քան զամս 38. և արդ գտի տապալեցեալ:

24. Ի չորեքշաբաթոյ մինչ ելեալք անտի անցաք զառիվերն, սկսաւ անձրեւ մեղմաբար ցօղել. ի մտանելն յանտառն և յիջանել զառիվայրն ի ձորակն, յորում է առու մարգամէջ, առաւելաւ անձրեւն. իբրեւ անցինք ընդ այն գժուարութեամբ և ելինք ընդ դարն, յորդեցաւ յոյժ անձրեւն, մինչ գրեթէ ամենեւին թացաք. և յետոյ փոխեցաւ ի կարկուտ խիտ, հողմով ցըրտաշնչիւ, յորմէ սառուցեալք դողայաք. և հոսէին ընդ ուղին հեղեղք յորդք դէպ առ ձորակն՝ ընդ որ անցինք. եթէ դոյն ինչ յառաջագոյն իցէր սկսեալ, արդարեւ յայնկոյս առուոյն միացեալք էաք, կամ յանմարդում վայրի. կարկուտն՝ վերստին յանձրեւ փոխեցեալ՝ խստութեամբ օդոյ այնքան վշտացոյց, մինչ յուսահատել մեզ, եթէ ոչ գիտիցէաք մերձ գոլ ումն գեօղ կոչեցեալ Խա-

տիով, առ տեառս Գաւնեցիսալքիս պատշաճեցեալ, հեռի ի Գամենիցս միով մղոնաւ։ Ընդ ժամանեալք՝ համարէաք զպանդոկ իմն գտանել, որպէս ասէին, և ահա կիսախարամ և տիղմի ի նմին, Հրէից ևեթ պատկան անդր բնակողաց. ապա ինքնին որոնեալ ընդ գեօղն, զի ուղեկիցքն չեւ եւս էին ժամանեալք, խոտորեցայ առ չինական ոմն՝ Ֆէտուր կոչեցեալ. որ գթով ընկալեալ մարդասիրեաց, և վառմամբ հնոցի ցամաքեցոյց զզեստս. եգիտ և ըզդարեկուր ազնիւ յոյժ, զորպիսի ի Լէօպօլսոյ ցարդ ոչ ուրեք տեսի. զոր ևս առեցեալ բրդեցելով հացիւ փափկապէս՝ կուրինք և անդորրացաք, մինչև դադարեաց անձրեւն և ցրուեցան ամպք։ Անդուստ՝ ոչ սպասեալով ուղեկցաց՝ ելի, և ի հասարակ աւուրն ժամանեցի ի Գամենից. և զի այլափոխեցեալ էր յաւերածոյն, հապիւ ճանաչէի զիմաղոցս։ Ի Առաջնորդութեամբ ումեմն տեղացւոյ ժամանեցի յեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի, որ է հոգաբարձական Հայոց, և պատուասիրաբար ընկալեալ ի գերյարգելւոյ Տեառն Միքաէլէ Մուրաթեան՝ յեղբօրէ նօտարին իմոյ հանգուցելոյ, մնացի ի բնակութեան նորա, հուպ եկեղեցւոյն։ Ատ լու եղեւ մերայնոց գալուստ իմ, և խուռն ընթացեալք արք և կանայք, ուրախութեամբ արտասուօք փարէին զինեւ. զի լուեալք էին թէ կորուսեալ իցէի, և թէ ի Սվէտաց կալանաւորեցեալ կամ սպանեցեալ։ Զուարճացայ և ես ի տեսանելն զխաչինս իմս, և ի ցոյցս սիրոյ նոցա առ հովիւ իւրեանց. և մնացի յայնմ բնակութեան իբրեւ զեօթնեակս չորս։ Եւ զի տեղին խարխալեցեալ էր, և սորէին խիճք և փոշիք ի տանեաց և յորմոց ի տուն անդր, հրաւիրեցեալ ի Բան Թօմասէ Ադէնթօվից Շէմմէնգիք յորջորջեցելոյ, ի 17 հոկտեմբերի գնացի բնակել ի սենեկին՝ որ ընդ պատուարաւ տան նորա. որոյ մայրն այրի և բարեպաշտուհի Սօֆիայ՝ ոգւով չափ տածէ և խնամէ զպանդխտութիւնս իմ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ը

Ի ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ ՁԵՌԱԳՐԱՑ

1394·

Ձվերջին ստացօղ սուրբ մատենիս, զՊարոն Սինան, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, ի վայելումն աստուածատուր զաւակին իւրոյ Աբրահամին, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց· արդ որք հանդիպիք այսմ գեղեցկայարմար կտակիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՊարոն Սինան, և զհայր իւր զԹուխլուպէյն, և զմայր իւր զԱատա խաթուն, և զկենակիցն իւր զԷֆիլ մէլիքն, աստուածատուր զաւակաւքն իւրովք, և զամենայն արեան մերձաւորսն. և որք յիշէք՝ յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Արդ ստացաւ գիրքս այս (ի թուին) Հայոց ՊԽԳ, օգոստ. ԺԵ։ [Ձաշոց գիրք ի կաժանիից, գրեալ ի Սուրբ Գրիգոր]։

1711· [*Ի ճեմին Ձաշոցի*]· Ձաշու գիրքս այս է յիշատակ եկեղեցւոյն Սրբոյ Նիկողայոսի Աքանչելագործ հայրապետին՝ ի կամենից քաղաքին, որ գրեցաւ ի թվին Հայոց ՉՂԸ և յամի Տեառն 1349, յերկիրն Ղրիմայ ի քաղաքն Սուրխաթ, ձեռամբ Տէր Ստեփաննոսի երիցու. իսկ յետ Խե (45) ամաց գրելոյն՝ գնեաց զսա Կամէնցի Պր· Սինանն՝ որդի Թուխլուպէյի, և եհ յիշատակ վերոյասացեալ եկեղեցւոյս, ի թվին ՊԽԳ և Տեառն 1394, յօգոստոս ԺԵ (15)։ Այս Պր· Սինանս իւր յատուկ դրամովն չինեաց զնոյն եկեղեցին Սրբոյն Նիկողայոսի, ի թվ· ՊԽՂ և Տեառն 1398· որպէս յայտ է ի կոնդակէ չինութեան նորին, որ ի ռադուշն (դատարան) մեր, և սկսանի այսպէս· Այս իմ կամաց և հաստատութեան ձեռագիր է Սինանի որդւոյ Թուխլուպէյի, և այլն (1)։ Բայց յետոյ ի թվին Հայոց ՌՃԿ և յամի Տեառն 1711, կազմեցաւ, բաժանեցեալ յերկուս հատորս, վասն դիւրագոյն տանելոյ և բերելոյ, ձեռամբ Ստեփանոսի Ստեփաննեան Կամէնցացւոյ, տէքանի Կամէնիցու, Սգանիսլաւու և այլոց քաղաքաց· որ և յաւել զընթերցուածս և զաւետարանս ոմանս, ըստ արարողութեան ուղղափառ եկեղեցւոյ Հայոց։

1767· [*Ի ճեմին մատենի*]· Յամի Տեառն 1756, օրն յունիսի՝ 28, սկսաւ

1· Տես յերես 135։

չինումն եկեղեցւոյս Կամենիցոյ Հայոց Ս. Նիկողայոսի, և աւարտեցաւ յա-
մի Տեառն 1767, օրն առաջին յուլիսի չինումն նոյնոյ եկեղեցւոյն: Ցամի
Տեառն 1767, օրն 22 օգոստոսի եղեւ բերումն Թափօրով հրաշագործ պատ-
կերին Երանուհւոյ Կուսին՝ ի նոյն եկեղեցի:

1422·

Զվերջին ստացօղ սուրբ Աւետարանիս (գրելոյ ի Ոխէ Թուին) զՊր. Խութ-
լուպէկն, յիւր հալալ արդեանցն գնեաց զսուրբ Աւետարանս ի Սիմէոն ա-
բեղայէս, ի յիշատակ իւրեանն և իւր կողակցին՝ Մելիք խաթունին և իւ-
րեանց ծնողացն: Որ ոք հանդիպի սուրբ աւետարանիս՝ կարդալով կամ օ-
րինակելով, յիշման առնէք արժանի զվերոյգրեալ Պր. Խութլուպէկն և ըզ-
Տունական վարպետն, որ զայս սուրբ աւետարանս մեզ հրեր. և Աստուած
զձեզ յիշէ: Ի Թվ. ՊՀԱ, ես Սիմէոն աբեղաս եղբայր Ցոլանիսի՝ ծախեցի
սուրբ աւետարանս Պր. Խութլուպէկին: – [Ի Լեհակերկ]:

1435·

Ցիշեալիք ի Քրիստոս զՍտեփաննոս Որոնեցի, ի ՊԶԴ· զՑիշատակարանս
կարդացի, ապա զանունս գրեցի ի քաղաքս որ Լօվ կոչի: [Ճաշոց գիրք]:

1451·

Ցիշեցէք զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զՑակոբչան, և զեղբայրն
իւր զԱռիւծն, և զծնողսն իւրեանց, որ ստացան զսա ի հալալ արդեանց իւ-
րեանց, և եառն յիշատակ ի յԱն (Եաչ), Ս. Աստուածածնին. և մի՛ ոք
իշխեսցէ հանել զսուրբ աւետարանս ի Ս. Աստուածածնին (դրանէն), ոչ ի-
մաց և ոչ օտարաց...: Գր. ի Թվ. Չ: – [Աւետարան յԵաչ քաղաքի]:

1507·

... Որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան (ճաշոց գրոց),
յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր փափաքմամբ զսաացողս սորա՝ Սերագ
քաղաքի քահանայք և տանուտէրքն և տանտիկնայքն. Տիրատուր երէցն և
իւր որդին Խաչիկ երէցն, և իւր փեսան Քրիստոստուր երէցն, և Միքայէլն
և իւր եղբարքն՝ Գրիգորն և Մարտիրոսն, փոխեալս առ Քրիստոս. երեսփո-
խան Ուլուպէկն և իւր եղբայրն Խութլուպէկն, Նիկօլչան, Խաւլպէկն, Խա-
չումն, Նիկոլն, Թորոսն, Ազիզպէկն, (ևն, անուանք աւելի քան 20)· Եւ կա-
նայքն, Մանաք·· Մելիքն, Եաղուբն, Մարուկն, Անուշքան, Զոհալն... Թուխ-
տար իրիցկինն, Մարգարիտ իրեցկինն, Ազիզխաթուն իրիցկինն·· (այլ եւս
10 անուանք)... Նա թէ արժանի համարիք զանարժանս՝ սուտանուն Սիմէոն
եպիսկոպոս, և զծնողսն մեր և զեղբարս և զքոյր զփոխեալսն առ Քրիստոս, և ըզ-
մերձաւորքս մեր զառաջինս, միջինս և զվերջինս, յիշեսջիք միով Տէր ողոր-
մեայիւ. յիշեսջիք և զՅոհաննէս երէցն՝ որ սկիզբն նա գրեց մինչև Զաւակին

Դանիէլն՝ «Յամին ութեւտասներորդի», և ծաղկեց զամենայնն և զարդարեց. և որ զմեզ յիշէ՝ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։

Կատարեցաւ սա որ կոչի Տարէգիրք, ձեռամբ յոգնամեղ եպիսկոպոսի Սիմէոնի և Յովհաննէս երիցի, ի քաղաքս որ կոչի Սեչով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, առ ոտն կենսաբեր Ս. Խաչին, ի հայրապետութեան Տեառն կաթողիկոսի Տէր Սարգսի, և եպիսկոպոսութեան այսմ նահանգի փցուն գըրչիս, և պարոնութեան Պոհտան պարոնին, տարի ու կէս թագաւորութեան նորա. ի թվականութեան Հայոց ՋՄԵ, ի մարտ ամսոյ ԺԲ օրն։ — Յայսմ աշխարհի Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս Աղանպէկէն, և Սարգիս եպիսկոպոսն և Դաւիթ աբեղան, նվիրակ էին եկեալ ի Ս. Էջմիածնէն. յիշեցէք և ըզնազա ի բարին. և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած։.. [Ա՛ Մխիթարեանս վիմեայ]։

1518·

Ես Յոհաննէս աբեղաս գրեցի զսայ. և ես Ավետիք երեց օրընկեցի և գրիցի զսա ի Կամենից քաղաքս, Թվին ՉԿԷ։ [Յայտաւուրք, ի Բարիզեան գրատունն]։

1544·

Կրկին նորոգեցաւ Աղմոսարանս և կազմեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի ձձ ԺԺ ՄՄ 00 ՌՌ ԺԺ. (Մինասի) դպրի, ի քաղաքիս Կամենից. Թվին ՉՂԳ, մարտի Ի աւարտեցաւ։ Եւ Քրիստոսի փառք։ [Մաղոս ի Ս. Ղազար]։

1550·

Գրեցաւ գիրս ի կայսերանիստ և ի մայրաքաղաքն մեծն Հռոմ ի Թվ. Հայոց Մեծաց ՉՂԸ, սեպտեմբերի Չ. ձեռամբն տառապեալ հողոյս Սիմէոն սարկաւագի Իլովցոյ. Եւ Քրիստոսի փառք։ [կոնդակ վի Յոհփաւնուհի կաթողիկոսի]։

1556·

Գրեցաւ աստուածաշունչ գիրս սուրբ հին Կտակարանաց ի Թվ. Հայոց Մեծաց ՌԵ, սեպտ. Դ, ի մայրաքաղաքն ի Լով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին Ննջման. ի թագաւորութեան Չիկմունտ Ակոստոսին Իլախաց և Ըռուզաց և այլ խառնիճաղանճ ազգաց։ Ի ժամանակս այս էր քոյր թագաւորին Մահրաց թագուհին Չապէլլա և իւր նորաբողբոջ որդին Եանուշ թագաւորն Մահրաց, և բազում իշխանք և հեծելազօրք ի քաղաքս ի Լով։ Եւ գրիցի զսա ի խնդիր երջանիկ և աստուածաբան վարդապետին և արհիեպիսկոպոսին Տէր Գրիգորին Վարաքեցոյ, որ մականուն Անանիենց կոչի, և իմոյ անարժանութեանս օրհնողին Սիմէոնիս։... Ջնորափոխ գրոցս փոխարկուս զանպիտան ոգիս զԱւետ՝ յիշեա վերահասուտ. ընդ նմին և զտառապեալ հողս զգծողս

Սիմէոն... անարժան երէցս։ Գիրս սիայ և ձեռս հոզ դառնայ։ [Ցիշատա-
կարան Ազգաբանութեան Մ. Գրոց]։

1566.

Թվին ՌԺԵ. ես Մկրտչէլ երեց՝ որ ազգանուն Թիխնո կոչիւր, որդի Կոս-
տայի որդոյ Թիխնոյի, յուլիսի 20, եկաք ի Լովէն՝ Սիմոն երիցու հետ, ու
գնացաք ի Լուպլին, ի մեծ տիվան, առ Զիկմունտ Աւկուստոս թագաւորն
ի... ահէմ. ու գիւղայ եկեղեցուն զքահանայն ազատեցաք ի հարկապահան-
ջութենէ քաղաքին և ի թագաւորականէ. ու թարխանութիւն [1] երետ։ Ա-
տուած զինքն ազատէ յամենայն չարէ։ [Ժողովածոյ գիրք]։

1568.

Արդ, ով մանկունք նոր Սիոնի, Ծընան զաւակ ողորմելի.
Որք հանդիպիք այսըմ տառի, Թողութեան զվեզ արժանի
Ցիշման առնէք զիս արժանի Հայցեմ լինել յօրըն վերջի։
Ըզմեղապարտս յամենայնի՝ Տէր՝ համօրէն ողորմեացի՝
Զմինաս անուն՝ մեղաց գերի, Լինել բարեացն այն արժանի.
Տըրուպ ծառայ ամենայնի. Որ է առատ մարդկան ազգի,
Այլ և ծնողաց իմոց բարի Միշտ ողորմած ամենայնի.
Ցովհան անուն և Ղանիմաթի. Որ խնդրողդ էք մեզ բարի.
Որ զառածեալս մեղօք գերի Ամէն, ամէն, և եղիցի։

Գրեցաւ ի յաչխարհս Իլախաց, ի քաղաքս Լով. Թվին Հայոց ՌԺԶ, յու-
լիս Ա. աւարտեցաւ. [Մաշտոց առ Մխիթ. վ/հեն]։

1572.

Գրեցաւ Ջեռնմաչթոցս ի յաչխարհս Իլախաց, ի քաղաքս Լով, Թվ. ՌԻԱ,
հոկտեմբեր ամսոյն աւարտեցաւ. ըստացօղն և ընթերցօղքն միաբանեալք ընդ
գրչին՝ յիշեսցին ի Քրիստոս Ցիսուս ի Տէր իւրեանց. ամէն։ — Ջհամթեցի
Ցակոբ երէցս յիշեցէք յաղօթս ձեր. զայս տաղս (Ո՛վ զարմանալի) գրեցի։ —
[Մաշտոց, ի Բարիզ]։

1578.

Ի թագաւորութեանն Ստեփաննոս Պաթորէյ բարեպաշտ արքային, որ էր
յազգաւ Ըկռուզ, և հանդիպեցաւ յայսմ ամի ի քաղաքս Իլով, ի հայրապե-
տութեան Տեառն Տէր Թադէոս կաթողիկոսին, կրկին ստացաւ զսուրբ աւետա-
րանս Սէչովցի Պր. Տաւնաւադն աստուածասէր տանուտէրն, և ետ զսա սուրբ
եկեղեցւոյ անուան Ս. Աստուածածնին Ննջման. յիշատակ իւր հոգւոն և իւր

1 Պարսիկ բառ, նշանակէ ազատ լլալ (հարկ տալէ)։

ծնողացն առ Աստուած փոխեցելոց. հօրն՝ Սարգսին և մօրն՝ Ո՛լու խաթունին, և իր կողակցուն՝ Սուլթանին, և ամենայն արեան մերձաւորաց. նա և կենդանի զաւակացն, Պր. Պոկտանին, Կուլաֆին և Տովլաթին, և քրոջ Բեբօզային և Ճաշիկին, և Կուլաֆին, Աննային, ևն. զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն: Արդ ստացաւ զլուսաբուխ զսուրբ աւետարանս, ի թվ. ՌԻԷ, փետր. 20: Արդ սրտի մտօք յիշեցէք ի մաքուր աղօթս ձեր զՊր. Տօնաւագ. և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ. ամէն:

1590.

Շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաւ քնարս աստուածահօրն Դաւթի՝ ի յաչխարհս Իլախաց, ի քաղաքս Լոռի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, թվին ՌԻԶ (1568), յունվար ամսուն աւարտեցաւ, ի լաւ և յընտիր օրինակէ. ձեռամբ թերավարժ գրչի Տիւերկրցւոյ, զոր անուամբ չեմ յիշելոյ. երես անկեալ կ՝աղաչեմ գաղափարողացդ, որ մեղադիր չլինիք գրիս, ծերացեալ ալեօք գրեցի վաթանամեայ գոլով. զգայարանքս ի յուժոյ թափեալ է. եւս առաւել մագաղաթս կոկ չէր, խիստ դժարանօք գրեցի: Բայց գրեցաւ սա ի թագաւորութեան այսմ աշխարհիս գրուէլ Գիկմնդ Ակուստոսին, և ի կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի Տէր Ստեփանոս Ա՛բնձեցւոյ, և ի յեպիսկոպոսութեան այս նահանգիս Գրիգոր վարդապետի Վանեցւոյ:.. ՋՏիւերկրցի ձարտարդ անպարտաւ թողուք յընթեռնուլն ձեր:.. — Վերստին ստացաղս հոգիաշունչ սուրբ տաւիս Իլոլցի զՊր. Աղապէկն յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, և զհանգուցեալ զծնողսն իւր՝ զՊր. Աւգսենդ և զմայրն զՇուշան, և զամենայն արեան մերձաւորսն, որ ստացաւ զսա հալալ արդեանց իւրոց, և ետ զսա յիշատակ Զամոցայի եկեղեցւոյն Ննջման Ս. Աստուածածնին, ի վայելումն մանկանց սուրբ եկեղեցւոյ. ի թագաւորութեան Գ. Ջիկմունդին, և իշխանութեան քաջ զօրավարին և աստուածասէր իշխանին և քաղաքիս հիմնարկողիս Պր. Քանձէրբին, որ անուամբ կոչի Բան եան: ի թվ. ՌԼՐ և մայիս ամսոյն 17: [Մաղմոս ի կայսեր. գրատան վիեննայ]:

1592.

Ի ՌԽԱ թվականիս Հայոց Մեծաց, ի հայրապետութեան Ս. Էջմիածնի Տէր Դաւթի կաթողիկոսին, և ի թագաւորութեան յայսմ նահանգիս բարեպաշտ արքային Երրորդումն Ջիկմունդին Լեհաց իշխանաց իշխանին, Պր. Թորոս Պետնաթենց որդի Պր. Զատիկին՝ առ Աստուած փոխեցելոյն, եռաջեալ աստուածային սիրով մեծաւ փափագանօք, տեսեալ զսուրբ կենսաբուխ սուրբ Աւետարանս հնացեալ և անխնամ ի պահողացս, վերստին նորոգել եբեռ մեծաւ ծախիւք և արծաթապատ զարդարանօք, ի փառս Միածնի որդւոյն Աստուծոյ, և ի վայելումն մանկանց նոր Սիոնի. յիշատակ իւր և հաւետ կողակցուն իւրոյ Մարիանէին և մօրն Աննային, և ի Քրիստոս հան-

զուցեալ հօրն նորա Զատկին, և ամենայն արեան մերձաւորաց։... Յիշեալ ի Տէր Քրիստոս զամենեսեան առ հասարակ, զառաջին ստացողսն և զկրկին և զվերջին նորոգողս՝ զՊր. Թորոսն, և զամենայն արեան մերձաւորսն... յիշեալք և զիս չինչ մեխիրս Սիմէոն լոկ անուն երէցս՝ գրոյ յիշատակարանիս, կաթիլ մի ողորմութեան խնդրելով ի Քրիստոսէ։

Ո՛հ զանբարիս ի մէջ բարեաց
Եւ զանարժանս ի մէջ բազմաց,
Ցամէն դիմաց կամ պաշարած
Որպէս կաքաւ ի յարծըւաց.
Հոգիս ցանկայ երկնաւորաց,
Մարմինս ըղձայ գործոց չարեաց...
Արդ քահանայք լուսերամաց
Եւ հանդիպողքդ սուրբ վտակաց
Աւետարուղիս ականց փառաց,
Զիս յիշեցէք ի լի սըրտաց՝
Ըզցովանոցս յեռնեալ բարեաց,
Զկրկին կազմողս սուրբ տաճաց։...
[Ի մեծի Աշետարանին, ի Լեմպերկ]։

1594·

Ցերեաներորդի առաջներորդի յոբելեանի և ընդլիկոփանին երկրորդի բեսեքիսեանի և միոյ ղըմպլաթի թուաբերութեան ժամանակի մարդեղութեան Փրկչի, նա և ըստ համարոյ յաբեթային տումարի՝ հարիւր քսան և հինգ ինդոսի և ութերորդ նոնոսի, յարաբարգեալ ամի, եղեւ սկիզբն և աւարտումն գրի, ի խնդրոյ ողջաբան և իմաստուն կրօնաւորի Տէր Աւագին Գաղատացւոյ, ի դաստակարգէ Սրբոյն Աստուածածնի եգիպտացւոյ. որ այժմու ժամանակի պանդուխտ գոլով յաշխարհն Իլախաց բարելի մայրաքաղաքիս Լէօպօլիս կոչեցեալ. և տեսեալ զծաղկաքաղ Հարցմունքս զայս առ մեզ, եւ գրել զսա ի վայելս անձին իւր, ի շահ և ի յօգուտ ամենայն բանասիրաց, որ և ստացաւ զսա մեծափափագ տենչանօք ի սփոփանս մխիթարութեան անձին իւրոյ սրբասիրի։ Արդ, որք հանդիպիք սրբոյ տոհմս, իրրեւ զիմունճ մի մանուշակի ի քիմս իմաստասիրաց, յիշեալք զվերոյգրեալ զհրեշտակակրօն Տէր Աւագն և զծնողս իւր հոգեւոր և մարմնաւոր և զեղբայրս իւր և զամենայն ազգայինս... Այլ և զտրուպս ամենայն գրոցդ Աստուն անուամբ կոչեցեալ և գործովք ի գուն մահու ընկլուզեալ. մտաքեցէք վասն իմ հանդիպողքդ՝ առ Տէր... բայց գրեցաւ ընդ հովանեաւ Ննջման Ս. Աստուածածնին, ի թագաւորութեան քրիստոնէական զարմի Գ. Ջիկմունդի. զոր Տէր Աստուած մեր պահեսցէ զսա ընդ հովանեաւ ամենազօր ոյոյ իւրոյ, և յաղթող արասցէ ընդդէմ թշնամեաց խաչին. և ի կաթողիկոսութեան արարատեան աթոռոյ Տեառն Տէր Դաւթի. Հայցեցէք առ Տէր, զի մշակ առանց ամօթոյ պահեսցէ զնա ընդ ազնիւ հովուացն, և լսել տացէ նմա զերանելի բարբառն՝ որ ասէ, Ծառայ բարի, հայրն։ [Խրատական բանից հաւաքումն, յԵրուսաղէմ]։

1601·

Ի թուականութեանս յաբեղական տումարի ՌԽԹ ամի, և ի յամսեան մարտի 21, ի Լով քաղաքի, աստուածասէր տանուտէրն Իվաշքո որդի Պր· Միսքոի յայժմուս ժամանակի տեսաւ զայս անգին մարգարիտս, որ եղծեալ էր ի հիւթալի տեղւոջ, և փափագմամբ եռուր կրկին նորոգել, վասն իւր հոգուն և իւր ծնողացն և իւր արեան մերձաւորացն. զինք յիշեցէք ի բարին և դուք ասացէք զԱստուած ողորմին:·· Դարձեալ աղաչեմ, ով քահանայք սրբալի և ընթերցողք այսմ գրի, մի՛ մոռանայք զիս եղկելի զՅովհաննէս զվերստին կազմող գրի, որ զսուրբ աւետարանս ցիսուսի կապեցի, ևայլն: [Աւետարան ի Լեհպէրկ]:

1603·

Գրեցաւ իոթվ· Հայոց ՌԾՒ ամի, ի յերկիրն Իլախաց, ի քաղաքն Զամոսցայ, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին. ի ժամանակս հայրապետութեան Հայոց Տէր Մելքիսեթեկին, և թագաւորութեանն Իլախաց Զիկմունդին, և զօրավարին իւրոյ Յովանէսին, որ կոչի իլախերէն՝ Եան, և ըստ հայրենակոչութեան Զամօցքի. որ և ըստ անուան իւրոյ չինեաց զքաղաքս զայս և անուանեաց Զամոսցա. և յայսմ ամի կատարեցաւ բարաւոր դրանց քաղաքիս: Արդ ի յանգ հասեալ գրոցս, աղաչեմ զվերծանողդ յիշել զանարժան գրիչս Յակոբ երէցս, որ մեծաւ փափագանօք գրեցի զսա յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց. և որ յիշէքդ՝ յիշեալ լիջիք, ևայլն:

1603–4·

... Արդ լուեալ (զվարս) զայսքան աստուածազգեաց խաչակրօն և զանազան արանց և կանանց և կրօնաւորաց և ամենայն գերամաքուր խմբից դասուց մարմիրոսաց, որք զարիւն իւրեանց եռուն փոխանակ գառինն Աստուծոյ, ցանկացող եղեալ Սրբոցս և գրոցս՝ սրբասէր և աստուածասէր տիկինն Կատարինայն և Կերուխնայն, և եռուն գրել զսուրբ գիրքս զայս յիշատակ հոգւոյ իւրեանց և ծնողաց իւրեանց:·· Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի Թվ· Հայոց ՌԾՒ, ի հայրապետութեան Տեառն Մելքիսեդեկի և ի թագաւորութեան Գ Զիկմոնտին, ի քաղաքս որ կոչի Լով, ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնին եկեղեցւոյն. ձեռամբ մեղաւոր և անարժան և անիմաստ գրչի Վազար դպրի, ի խնդրոյ աստուածասէր տիկնոջն Կատարինէին: Եւ արդ, ես յետինս ի գրչաց անարժան և մեղաւորս, մանուկ էի հասակաւ և դպիր ի բաբերդ քաղաքի, պատահմամբ ան Տաճկաց ձեռքն անկայ, և խիստ տանջանօք և չարչարանօք ազատեցայ ի ձեռաց նոցա, նախախնամութեամբ և գթութեամբն Աստուծոյ ամենակալին. և եկեալ ի Լով քաղաքն Ըռուզաց, ընկալան զիս արք տեղւոյն այնորիկ, և եռուն ինձ յարկ մի, և ասացին, թէ ծառայեա Ս· Աստուածածնին. և անդ և ի ծառայելս իմում՝ բազում աշխատութեամբ

գրեցի և ծաղկեցի գիրքս այս՝ ի դուռն Ս. Աստուածածնին, ի դառն և անբա-
րի ժամանակիս, յորում նեղիմք ի ներքին և յարտաքին թշնամեաց: Եւ
արդ աղաչեմ զձեզ՝ ով երանեալ սուրբ ընթերցողք, յորժամ պատահիք սուրբ
գրոցս, ի տեսանելն ձեր զանհեդեդ գրիկս և ծաղիկս, աղաչեմ զձեզ, մի՛
մեղադրէք. զի թէ և դոյր կարողութիւն փոքր մի այլ լաւ գրել և ծաղկել,
սակայն ոչ կարացի, զի կարի սուիպ(աւ) արտորք էի՝ վասն ուսանելոյ հա-
մար լաթին լեզուին և գրին, և միայն աւարտելոյն էր փոյթ և ոչ արուես-
տի գրոյն և ծաղկոյն:...

Յարիպ եմ օտար յաշխարհի,
Անարժան և յոյժ փանագի.
Մարմնով եմ մեղօք ի լի,
Ըզհոգիս իմ խաւար լցցի:
Աղաչեմ ըղքեզ Միածին որդի,
Ըստեղծող երկնի և երկրի.
Մեղայ գոչեմ և այժմ ի լալի,
Թող զիմ մեղքն զոր ես գործեցի:
Քեզ աղաչեմ լոյսդ հայրենի,
Ցարուքիւն ու կեանք մարդկայնի.
Աստէն տուր զղջումն ինձի՝
Փոշմանիլ զոր ինչ գործեցի:
Ընձառ Միածին որդի
Որ էիր ի Հօր անմարմնի,
Խոնարհեցար յաշխարհս ստորի
Եւ առեր մարմին ի Կուսի.
Յաթի երկնաւոր բարի,
Գթա, Տէր, ի քո ծառայի.
Հառաչեմ ես արտասվալի,
Հաշտեա, Տէր, քո արարածի:
Քէն հայցեմ, ո՛ փափագելի,
Տուր անմահ ջրոյդ որ եմ ծարաւի.
Մի՛ տար զմիտս զբաղումն յաշխարհի,
Այլ տուր խնացումն՝ որ միշտ քեզ հայի:

... Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս աստուա-
ծասէր տիկնոջն Կատարինէին, և առն իւրոյ Զատկին, և ծնողացն իւր Գրի-
գորին և Աննային, և ամենայն արեան մերձաւորաց. նաև մեղապարտ Ղա-
զար գրչին, և իմ ծնողացն՝ Նիկոլին և Շնոֆորին, և իմ քուրոյն Ղուտ-
բատին:.. (Ձայսմաւուրք ի Լեհսկերկ: Տես և տարի 1613. 1624. 1627.
1629).

1605.

Գրեցաւ Սաղմոսարանս՝ որ է երդ Դաւթի մարգարէին, ի կաթողիկոսու-
թեան Տէր Մելքիսեթին, թագաւորութեան Ֆրանգաց աշխարհի Գ Զիկմոն-
դին, ի թվականութեան Հայոց ՌԾԳ, ապրիլ ամսոյ Ի, յաշխարհիս Իլա-
խաց ի քաղաքս Կամենից. որ և երեսս զսա գրել Պր. Խաչքո, որ էր որդի
Պր. Ավաքին, մեծաւ փափագանօք և սրտիւ յօժարութեամբ, ի վայելումն
անձին իւրոյ և զաւակաց նորին. որ և Աստուած բարով վայելել տացէ նմա
ընդ երկար ժամանակաւ: Արդ գրեցաւ ձեռամբ անիմաստ և անհմուտ չքեղող (?
չքերդող) Յակոբ դպրի որդւոյ Տեառն Գրիգորին: Աղաչեմք զամենեսեան, ով
ընթերցողք, որք հանդիպիք սմա տեսանելով կամ աղօթս ասելով, անմեղադիր
լերուք վասն սղալանաց գրոցս, զի կար մեր այսպէս էր. զի անտեղեակ եմ ի
գրոց սրբոց. բաւ է իմաստնոցն: Եւ արդ ծաղկեցաւ ծաղկունքն գարձեալ
նոյն Յակոբ դպրի ձեռամբ. և կատարեցաւ ի փառս Քրիստոսի:

1607·

Եղեւ զրաւ սուրբ գանձարանիս յամի չրջագայութեան արամազեանս տոհմի հայկական սեռի աբեթական տումարի ի ԻԱ յոբելինի և հինգերորդ յաբաթարդի, սեպտեմ. ամսոյ հինգերորդի, օրն ուրբաթի, ի հայրապետութեան Ս· Էջմիածնայ Տեառն Տէր Գրիգորի, և ի յառաջնորդութեան այսմ նահանդի Տեառն Տէր Կարապետ քաղ բարեւնապետի, ի յաշխարհս Իւխաց, ի քաղաքս Կամենից, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին և Ս· Նիկողայոս հայրապետի. ՅոանեԳաց ազգի թագաւորութեան Գ. Զիկմունդին: Արդ գրեցաւ այս սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ անարժան անծան և անծնող գրչի ծծծ ծ ծծ ծծծ ծ ի (ցակոբի) սուտանուն սարկաւագի, որդի Տէր Գրիգորի, չարութեամբ լցեալ և մեղօք տարածեալ:· Որոյ փափագող եղեալ քաջ բարեւնապետն մեր Տէր Կարապետ արքեպիսկոպոս՝ հմուտ և տեղեակ աստուածայնոց հին և նոր կտակարանաց··· ետ գրել զսա յիւր արդար և քրիստոնեան վաստակոց:·· [Ազխուռաւենկ· առ Մխիթար· վ հենայ]:

1607·

Եղեւ զրաւ սուրբ գանձարանիս որ կոչի Աւետարան, յամի չրջագայութեան արամազեան տոհմի հայկազեան սեռի աբեթական տումարի ի ԻԱ յոբելինի և հինգերորդ յալաբարդի, սեպտեմ. ամսոյ ԻԷնի, օրն չարաթ մուտ կիրակի: Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Կամենից, յերկիրն Ըռուզաց և Իւխաց, ի հայրապետութեան Տեառն Տէր Գրիգոր երջանիկ կաթողիկոսին Ուրհայեցոյ, և առաջնորդութեան երկրիս Տէր Կարապետ երջանիկ վարդապետին, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին և Ս· Նիկողայոսին. ձեռամբ անարժան և մեղօք զառածեալ Ղազար լոկ անուն եպիսկոպոսիս Թոխաթեցո, ի խնդրոյ աստուածասէր առնս Պարոն····· Եւ եղ յիշատակ իւրն և իւր ննջեցելոցն··· Խնդրեմ ի ձեզնէ չմեղադրիք վասն խոշորութեան կամ սղալանաց գրչիս. քանզի յոյժ կարի հիւանդ էի ի սըրտեցաւէ. վասն այսորիկ յոյժ լալագին դիմօք աղաչեմ որ յետ ցինանցն աւետարանացն Ա փոխ աւետարանաւ և Աստուած անեղ և Քրիստոս որդի ասէք յիշատակ դնօղին, և աւետարանիս գրողին հոգուն Ա Հայր մերիւ յիշեսջիք: Եւ այն որ ուսան է ի տուրս պարգեւաց՝ հատուսցէ ձեզ զփոխարէնն. և Քրիստոսի փառք յաւետեանս. ամէն: Գրեցաւ թվին ՌՃԼ; օրն չաբաթ: [Ազ Մխիթ· վ հենայ]:

1607–8·

Մեսրոբ վարդապետիս Կաֆացի աշակերտ Տեառն Յոհաննէս կաթողիկոսի Սիս աթոռոյ, որ գծագրեցի զայս դժուար և խրթին մատեանս տօնարական արհեստից մեկնութիւնս, ինձ և ծնողաց իմոց յիշատակ բարի՝ ի դրունս սուրբ եկեղեցւոյ· զի կար իմ այս էր· զի մինչ « ի նահանջն այսպէս ասա », ես

գծագրեցի, մինչ էի 'դաստառունն վեհին իմոյ ի Սեբաստիա. և մինչ ի « յատկութիւն միաչաքաթին՝ » Դահօռցի Սարգիս քահանայն գրեաց, ՌՄԸ թվին։ Եւ ես հրամանաւ իմոյ վեհին եկի ի Կաֆա. ունայ գիրքս կիսատ, անմխիթար ու տարակոյս էի. մինչ որ Հոգին Աստուած տնօրինեաց, Հոգոյն Սուրբ առաջնորդութեամբն թվին ՌՄՋ եկի ի նաչ քաղաքն, և օրինակ գտի Տէր Աստուածատուր քահանայէն. և բարեմիտ սարկաւագ մի Ստեփանոս անուն կատարեաց զգիրքս, և մխիթարեաց զանմխիթար անձս։ Աղաչեմ զքալ պատեհիկոզդ եկեղեցոյ՝ որք հանդիպիք այսմ տառիս, յիշեցէք ի Քրիստոս զաշխատողքս... մանաւանդ յեաչ քաղաքի արհիեպիսկոպոս Տէր Յովհաննէս Սեվովյուն, որ զտարտամ սիրտս մխիթարեաց։.. [Յակոբ Ղրիմ. Մեկն. Տօմարի, ի Մ. Ղազար]։

1608.

Շատ չանիւք չանացի գրել և ոչ գտանէի դգաղափար սորա, որ մինչ ի տան ամ խնդրեալ սատ և անդ, ոչ կարացի ձեռն բերել. յետ այսորիկ եկն առ մեզ սիրելի և կարգակից եղբայրն մեր Տէր Աբրահամ կրօնաւորն, զոր ստացեալ էր զսա վասն իւր, և տեսեալ զփափագ ցանկութեան սրտի իմոյ՝ չնորհեաց մեզաւորիս զսա, սակաւ ինչ ընկալեալ ի ձեռանէ իմէ. Աստուած իւր փոխարէնն հատուսցէ։.. Արդ ես մեղաւոր և անարժան զառաձեալ յակոբ երեցս՝ ստացայ զսա ի թվաբերութեան աբեթական տումարիս քսան և մի յոբելինի և եօթն թիւ յաւելորդի, յամսեանն հոկտեմբերի. ի ժամանակս թագաւորութեան Իլախաց Ջիկմունդի Գ.ի. և հայրապետ Հայոց ոչ գոյր ի Ս. Էջմիածին, որ նստէր յաթոռ Ս. Լուսաւորչին և հովուէր ըզժողովուրդ նորին. վասն պատերազմացն որ կայր ի մէջ Պարսից և Իսմայէլացւոց՝ գերի և եղկելի եղեն ամենայն ազգն Հայոց. դի ցրուեցան ամենեքեան ընդ երեսս երկրի, որպէս փոշի հոսեալ ի հողմոյ՝ ծագաց ի ծագս. բաժանեալք ի սիրելեաց, հեռացեալք ի հայրենեաց, որոշեալք ի յնտանեաց, անմատեալք յամենայն բարութեանց, չրջէին պանդխտէին նչդեհացեալք ի մէջ այլասեռն ազգաց այլախօս լեզուաց և անընդել աչխարհաց, որպէս զոչխար՝ որոց ոչ իցէ հովիւ, անտերունչ մնացեալ։ Ողորմելի և աւաղելի եղեր մեծանուն ազգ Հայոց մեծաց. վասն էր փոքրկացար, տառապեցար, և նուազեցար. – վասն այն՝ զի մեզար. այլ մի հայկազուն տոհմիդ, ոչ տուեր խաղաղ, այլ փուչս բռնութեր. վասն այն խոպանացար. ցանկ քո քակեալ և զեռ, և եղեր կոխան ամենայն ազգաց. այժմ զի՞նչ առնելոց ես. զի որբ մնացիր ի հօրէ և ի մօրէ, այսինքն ի թագաւորէ և ի հայրապետէ։ Այլ յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, զի փրկիչ քո նա է. թէպէտ և եհար վասն մեզաց դարձեալ նոյն ինքն, ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և ժողովեսցէ որպէս հաւ զձագս իւր ընդ թեւօք, և սեպհականեսցէ ի հայրենի աչխարհն, և հաստատեսցէ թագաւորաւ և հայրապետիւ բարեխօսութեամբ Սրբուհւոյ ամենօրհնեալ Աստուածածնին։.. Մի մոռնայք զհայրն

իմ զԱլթուն, որ թարգմանի Ոսկի, և զամենայն արեան մերձաւորսն իմ, և զուսուցիչն իմ զՏէր Յակոբ քահանայն, և զՏէր Յակոբ կրօնաւորն՝ որ չնորհեաց զսա։... [Ստուգաժաշուիլ ի կայսեր. գրատան վիեննայ]։

1609·

Գրեցաւ գիրս ձեռամբ Թորոս դպրի որդւոյ Մխիթարին. Թվին ՌԾԸ. Ո՛վ եղբայրք, յիշեցէք զմեղաւոր գրչակս։ [Ձեռագիրք, ի Մ· Ղազար]։

1610·

Ես անարժան Յակոբ երէց Եազլովացի, Թվին ՌԾԸ, սեպտ. 4, փոխարկեցի զԹոստովանութիւնս ի քաղաքն Կամենից. նորընծայ էի, և ի մէջ քառասնից որ գրեցի զսա. ինձ մեղաւորիս՝ Աստուած ողորմի ասացէք վասն Աստուծոյ սիրուն։

1610·

Գրեցաւ Պատարագատետրս ի լաւ և ընտիր օրինակէ՝ ձեռամբ անարժան և անարհեստ Աստուածատուր դպրի, որ եմ որդի Տէր Յակոբին, ի քաղաքն Կամենից, ընդ հովանեաւ Մ· Աստուածածնին և Մ· Նիկողայոսին. ի վայելուչն նորընծայ Տէր Ղազարին, և յիշատակ Եազլովիցու Հաճկատար Մ· Աստուածածնին։ Ով սրբասնեալ քահանայք, յորժամ որ կարդայք կամ օրինակէք, յիշեցէք զիս և զիմսն ամենայն՝ ի դէմ սոսկալի սուրբ պատարագին։ Աւարտեցաւ Թվ· ՌԾԸ. սեպտեմ. 28։ [Պատարագամատեան. ցով· Աբաձիչեցոյ. ի Մ· Ղազար]։

1613·

Անուանի գիրքս ճաշոց, զի հանապազօր ի ճաշոյն ընթեռնի, այլ և կոչի Տարէգիրք, զի զբոլոր տարին ընթերցուածսն յինքն ունի... Յիշեսջիք... զղաւական իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ. նա և զստացող գրոցս զԻլովցի Պր· Պէռնատն՝ Պր· Թորոսի որդին. որ ստացաւ զսա ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իւրոց, և ետ յիշատակ անջինջ Ջամռոցա քաղաքիս Մ· Աստուածածնի եկեղեցւոյս, վասն հոգոյ իւրոյ և վասն ծնողաց իւրոց. և ինքն ի յայսմ ամի վախճանեցաւ ի Քրիստոս մանուկ տիօք երիտասարդական հասակին, և մեծ կսկիծ հասոյց ծնողացն։.. Աղաչեմ զձեզ, ով ընթերցող եղբայրք իմ, որ մեղադիր չլինիք խոչորութեան և սխալանաց և անյարմարութեան գրոյս. զի պէսպէս վշտօք և չարչարանօք գրեցի. զի ի ՌԾԲ Թվին սկայ և կբին բռնի ի յաւարտն հասայ. վասն որոյ խնդրելով աղաչեմ զձեզ որ խնայելով բռնէք զգիրս, և զմեզ անպարսաւ թողուք. մանաւանդ թէ յիշելոյ առնել արժանի։.. [Կայսեր. գրատուն վիեննայ]։

1313·

Ես Սարկաւագ Լեհացիս Թվին ՌԿ երկուսին հանդիպեցայ Մսիր քաղաքին. ով ընթերցողք այսըմ տառիս։ [Մաշտոց, ի Պեզիին]։

1613·

Կատարեցաւ քերական գիրքս. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։ Թվ. ՌԿԲ. ես անարժան մեղաւոր Զաքիկ՝ Պր. Պողտանայ որդի. գրեցաւ Թուխաս. վայ ինձ մեղաւորիս։ [Ա՛ռ որս գիրք, յԼմիաժին]։

1615·

Ես ցակոբ էրէցս Թոխաթեցի թարգմանեցի զդեղեցիկ Պատմութիւնս (Փաւնցիանոսի) ի լաղինական գրոց ի հայ գիր. ի խնդրոյ վարժապետին իմոյ Տէր ցակոբին՝ որ ասեն Այվաթենց, Թվին ՌԿԳ. փետրվար ամսոյ ԻԳ, ի երկիրն Լեհաց, ի քաղաքն Զամաւացա։ Աղաչեմ զձեզ, յորժամ որ փոխարկէք, զանունս մեր մի՛ յապաղէք գրել ի տեղիս խորագրոց. և ասացէք, թէ, Աստուած ողորմի. ամէն։ [Ի Բարիզ. գրատան։ Նոյն տարին ցակոբ Թոխաթցի թարգմաներ է ի Զամոսցա և Եօթն իմաստասիրաց իսօքերն]։

1616·

Փառք համագոյ համազօր համապատիւ համատարած Ս. Երրորդութեան... որ ետ կարողութիւն ոգոյս սուտանան գրչիս յիմար և տարտամ եղեգնագրծիս, հասանել ի վերջին գիծ տառիս. որ կոչի Արարածոց մեկնիչս, ի լաւ և յընտիր օրինակէ... ցիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զՍարգիսն գրպիրն, որ ետ գրել զԱրարածոց մեկնիչս ի վայելումն անձին իւրոյ. զոր Տէր Աստուած վայելել տացէ նմա մինչ ի խորին ծերութիւնն։ Գրեցաւ սա ի թուին ՌԿԵ, ի քաղաքն Իլով, ի թագաւորութեանն Զիկմոնտին և ի կաթողիկոսութեան Մելքիսեթին. ձեռամբ մեղապարտ Գրիգորին, մականուամբ Տօմարժիրքին։ Եւ ինձ մեղապարտ Գրիգորիս գրչի, և իմ վարպետին Տէր Դաւթի՝ ողորմութիւն և թողութիւն մեղաց ի նմանէ։ [Վարդան, Մեկն. Արարածոց. ի Ս. Ղազար]։

1617·

Ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Իլախաց ի քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Տնօրէնի Ս. Աստուածածնին, ձեռամբ յոգնամեղ Քարմատանեէնց Յովանէս իրիցուս. զոր հոգս տարեալ մեծաւ աշխատութեամբ և բազում ծախիւք՝ տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցա մինչեւ գիրն ի գլուխ հանի, և նոր կազմարան սահմանեցի, և վասն փորձի նախ զերգն Դաւթի մարգարէին տպագրեցի, ի օ-

գուտ և ի չահ առտուածասէր աղօթողաց մերասեռ ազանց. զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց՝ Տեառն փառք: Արդ եղեւ զրաւ սորին թվականութեանս Հայոց ՄԼԸ ամին յամենեանն դեկտ. ԻԷ, և ի ՌԶԾԶ ամի (Փըրկչին) ի հայրապետութեանն Էջմիածնա սուրբ յաթոռոյն կենդանի նահատակ/ն Տեառն Տէր Մելքիսեդեկ կաթողիկոսին. այլ և Կիլիկեցո գաւառին Տէր Յովհաննէս քալ բարեւնապետի. ի սոցին ժամանակս հանդիպեցաւ տար սորին: Այլ և ի թագաւորութեան քրիստոնէից լէհ ազգին բարեպաշտ արքայի Իրրորդ Զիկմունտին, զոր Տէր Աստուած զինքն անսասան պահեսցէ երկար ամաք: Արդ ազաչեմ զամենեսեան որք հանդիպիք այսմ գրիս, յիշեսջիք ի բարի և զծնողս իմ՝ ի Քրիստոս հանգուցեալ Բաղէշցի Քարմատէնց զՄուրատն, և զմայրն իմ զԱննա. այլ և զպապն իմ զՏէր Սիմէոն քահանայն, և զամենայն ազգայինս իմ: Եւ նա ինքն որ առատն է ի տուրս բարեաց, կրկնակի բարութեամբ զփոխարէն պարգեւեսցէ մեզ և թողութիւն շնորհեսցէ յանցանաց ձերոց. և ձեր սուրբ աղօթիւք զմեզս մեր ընկեսցէ. այլ և զնընջեցեալն՝ խաչին լուսոյ և երկնից արքայութեան արժանի արասցէ. որում փառք յաւիտեանս. ամէն: [Ազուռս տպագրեալ]:

1617-8·

Ես տրուպս քահանայից, մանաւանդ թէ և ամենայն քրիստոնէից ցակոբ երեցս, ցանկացող եղեալ պատմութեան Սրբոցս, և ի հարկէ յանձին կալեալ՝ ձեռն արկի ի գծագրութիւն սորա. զի վասն ծուլացեալ մեղաց իմոց Աչմաւուրքն և ճաշոցն և չուրչառ մի այրեցաւ ի մէջ եկեղեցւոյն, կայծ հասեալ ի հրագէ, յաւուր տօնի Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և յերեկոյէ մինչեւ ցառաւօտն ծխեալ ծախեցան. և վաղորդայն առաւօտուն պահուն գնացեալ իմ և բացեալ զեկեղեցին, տեսի լի ծխով, և դողումն կալաւ զիս. կարծէի թէ ամենայն եկեղեցին բորբոքեալ այրէր. և մտեալ ի ներքս՝ տեսի զերկոսին գրեանն ի վերայ միմեանց հրացեալ. ճաշոցն ամենեւին այրեալ, և Աչմաւուրքն կիսայրեաց ծխայր. և ես եղկելիս ի մեծ կսկծոյս մեծաւականն ձայնիւ ազաղակեցի, ողբս և վայս կարդալով, որպէս ոք ի վերայ մեռելոյ սիրելոյ. և այսպէս զրկեալ կողոպտեցայ ի մեծամեծ գանձուցս յայսցանէ, և չկայր միւս այլ ճաշոց կամ Աչմաւուրք՝ ընթեռնուլ յեկեղեցին. և մեծաւ չանիւ հազիւ առաք զգաղափար սորա ի մայրաքաղաքն ի Լովայ. և ես անվարժ գոլով գրչութեան՝ հարկեցայ ի գործ, և ապաւինեալ յողորմութիւնն Աստուծոյ սկսայ, և նորին չնորհօք յանգ հասեալ կատարեցի: Արդ գրեցաւ ցայսմաւուրս ձեռամբ յոգնամեղ ցակոբ երիցուս, թվին ՌԿԶ, ի աշխարհս Իլտխաց, ի նորաշէն քաղաքս Զամօսցա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Լուսաւորչին և այլոց խորանացս. ի ժամանակս հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Մելքիսեդիկի կաթողիկոսին, և թագաւորութեան Իլտխաց՝ Զիկմունդի Գ.ի, և իշխանութեան քաղաքիս Պր. Թովմային՝ երիտասարդ իշխանին, որ հայրենակցութեամբ Զամոյսքի ա-

նուանի. զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։... Յիշեա՛ զիմայրն իմ զԱլթունն, և զմայրն իմ զԱննան, և զԳրիգոր որդեակն իմ, որ եւս յօգնութիւն գրոյս ունի զահեկան կարմիր։ Եւ եղաք զսա յիշատակ եկեղեցւոյս՝ որ յանուն Ս. Աստուածածնին կառուցեալ է ի քաղաքս Զամոցա. և այլ չունի զի իշխանութիւն առնուլ զսա աստի։ [կայսեր. գրատուռն վիճակայ]։

1617-8.

Ի թվին ՌԿԶ, գրեցի այս ի խուցն աղայներուն, ի քաղաքն Իլով, հոկտ. Լ. սուտանուն ԲՌ. Լ. ԵՌ. ԱՌ. իս (Սարգիս) զգործ ?։ Երես անկեալ կ՚ազաչեմ զդատ վարողդ՝ որ անմեղագիր լինիք գրիս, զի ծերացեալ անձամբ իմ. ամեայ (?) գոլով՝ ձեռնարկեցի ի սմա, Աստուծոյ ողորմութեամբն յաւարտ ածի, և փափագ սրտիս կատարեցի և զիղձս իմ լցուցի. հառաչմամբ սրտիս կ՚աղաչեմ զընթերցողդ՝ որ աննախանձ զԱստուածողորմին չի խընայէք. և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն. ամէն։ Ես մեղաւորս Քոռեցի սուտանուն Սարգիս։

Ո՛վ եղբայր Քոթահեացի տէրացու Սարգիս, երբ օգտիս ի սմանէ՝ զիս զյոգնամեղ Աստ Սերաստացիս յիշեա միով Հայր մեղայիւ։

Գրեցաւ գիրս ի քաղաքն ի Լով, Թվին ՌԿԶ, ան տարին մեղաւորս ի Լով ժամկոց էի, սուտանուն Սարգիս, որ է Քուէթեցի, որդի Յովանէսի. ամէն։ — Ո՛վ եղբարք, մի՛ մեղադրէք, մոլորեցայ այս ատենին. Թէ ինչ պաջարի (պատճառի) կ՚ասէք. նայ մէկ աղեկուկ մի տեսայ, որ եկօ ի քովս նստօ, զրուց երետ. Թվին ՌԿԶ. դեկտեմբերի Զ, օրն չաբաթ. Թ. ժամուն, մէկ մասին. ամէն։

Ո՛վ ժամակոչ չոլոր մոլոր,
Երբ որ տեսնուս դու շատ աղվոր,
Էր կու հայիս դու նենգաւոր.
Աչվիդ փակէ, նայէ ըստոր.
Ցաչխարս սուտ է ւանցաւոր,
Տուր գոհութիւն սըրտովդ բոլոր,
Մի՛ լինիր խէֆ անմըտաւոր,
Անմ որ ըստեղծ զաչխարհս ոլոր։[1]

[Ցոմսարաց գիրք]։

1617.

Ի գալն (ի) Ֆռանկաց հանդիպեցայ ի քաղաքն Իլով՝ որ կոչի Լհհ, ըստացայ գիրքս այս (Ամիրտոլվաթ) ի Վազար վարդապետէ, ես մեղաւոր երդամս, որ է Բառգիրք հաքիմարան, Հայոց բառոնէ, Արաբացոց, Թուրքաց, Պարսից, Հոռմոց, սակաւ ինչ Ֆռանկաց. ստացայ վասն հոգոյ իմոյ ի հալալ ընչից իմոց. բերի յերկիրս Հայաստան... Աղաչեմ յիշել զմեղաւոր եր-

1 Ոտանաւոր խրատս՝ ոչ Սարգսէ է, այլ կամ Աստծոյ կամ անոր՝ որ ուրիշ տեղ մ՚այլ գրած է այսպէս. « Եւ յիշեա զգծող գրիս զմեղապարտ Սրսաղ Բաքերթցի, միով Հայր մեղայիւ »։

դամն եւ զհայրն իմ Պալայխանն և զմայրն իմ Ըմպրիչատն, և զորդիքն իմ երկու Սահակն և զփոքրն իմ և զմեծն... Արդ գրեցաւ ի Թուականիս Հայոց ՌԿԶ, ի քաղաքն որ կոչի Իլով, ի թագաւորութեան Շահապազին, ի հայրապետութեան Տեառն Մելքիսեթ կաթողիկոսին. և առաջնորդութեան հոգեւոր Տէր Մեսրոբին արհիեպիսկոպոսին, և առաջնորդութեան մարմնաւոր կենցաղոյս՝ Խոճայ Սաֆարին։ Աստուած զիւրեանքն ընդ երկայն աւուրս պահէ. ամէն։ .

1618·?

Գրեցաւ գիրքս որ կոչի Աւ որս՝ ասացեալ Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, ի լաւ և յընտիր օրինակէ, ի վայելուչն և յիշատակ բարեմիտ և ուսումնասէր բանասիրի Տեառն Յովանէս հեզահոգի ընտրեալ քահանայի, որ մականուամբ կոչի Քարմատանենց... գրեցաւ սա ի Թուին Հայոց քառիս յինանակի և երեք յոբելինի այլ և եօթն աւելորդի (?), օգոստ. ԺԸ. ի տիբախնամ և աստուածապահ մայրաքաղաքս Լէվ կոչեցեալ, ի դուռն Ննջման Ս. Աստուածածնի, ձեռամբ մեղսամած և փծուն Սիմէոն դպրի Զամոսցացոյ... [Աւ Մխիթար. վ[ան]այ]։

1619·

Կատարեցաւ գիրքս գովելի
Որ չարագրեալ է Պորփիւրի.
Զի ցանկացող եղեւ սըմի
Նըւիրակս Երուսաղէմի,
Որ և անուամբըն որ[ը]որ[ի]
Ղուկաս անուն պարոնտէրի.
Որ յայսմ ամի եկն ի Լեհի.
Տեսեալ եղեւ այսըմ տառի,
Ի մեկնութեանցըն Յովհաննի
Աբի և սուրբ եռամեծի,
Ի աշակերտին իւր Գրիգորի,
Ի բնաբանիցըն Պորփիւրի։
Ի Թվականիս Հայոց մեծի
Հազար վաթսուն և ութ աւելի,
Սեպտեմբերի քսան և ութի,
Որ էր աւուրն երեքշաբթի.
Ի կամէնից ամուր քաղաքի,
Աւ ոտըս Սուրբ Աստուածածնի,
Եւ Ս. Նիկոլ հայրապետի,
Եւ այլ տաճարքս որ կան սըմի։
Թագաւորն Լեհաց երկրի՝
Երրորդ Զիկմունտ նա անուանի.
Եւ հայրապետն Էմիաձնի
Տէր Մելքիսեթ վերաձայնի,
Մեծ աթոռոյն ինքնագլխի՝
Որ օթեւանն է Քրիստոսի.
Գրիգոր անուն պատրիարքի,
Որ տեղապահ է սուրբ ուխտի։
Գրող սորա յոյժ եղկելի
Ոտից ձեր հող և կոխելի.
Զեզ աղաչեմ աղերսալի
Զիմոռանայք զիս յաղօթի՝
Ցոհան դըպիր մեղօք ի լի,
Եւ զիմ ծընողքս ի հետ կարգի։
Ցիշողքն առ Տէր յիշեալ լիցի
Այժմ և աւուրըն յապառնի։
[Ի Թուվարգա]։

1620·

Փառք... որ ետ կարողութիւն ոգոյս սուտանուն գրչիս յիմար և տարտամ եղեգնագծիս, հասանել ի վերջին տառիս, որ կոչի Մեկնութիւն ճոբայ, ի լաւ և յընտիր օրինակէ... Գրեցաւ սա ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Գրիգորի որդոյ Պր· Ավետիքին՝ մականուն Տօմաժիրաքին, ի խնդրոյ Տէր Գրիգոր կրօնաւորին, որ ետ գրել զայս գիրքս յիշատակ ի Ս· Երուսաղէմ, վասն իւր հոգոյն և իւր ծնողացն. ի թուականութեանս Հայոց ՌԿԸ, և սեպ· ամ սոյ Ա, օրն չորեքշաբթի. ի թագաւորութեան Լեհաց Գ Զիկմունտին, և ի կաթողիկոսութեան Հայոց Ս· Էջմիածնայ՝ Տէր Մելքիսեդին. ի քաղաքս Լեհաց՝ որ կոչի Լով, ընդ հովանեաւ Ննջման Ս· Աստուածածնին, և Ս· Հաճկատար Ս· Աստուածածնի և Ս· ճակոբին և Ս· Խաչին: Արդ որք հանդիպիք սմա... մի բերան Աստուած ողորմի ասացէք հանգուցեալ վարպետին իմոյ Տէր Դաւթի Զեթունցի քահանային. զի այր գիտնական և քալ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ հին և նոր կտակարանաց. որ բազում չանիւ և աշխատութեամբ աշխատեցաւ ի վերայ անպիտան ծառայիս, որ ոչ էի հմուտ այսմ արհեստիս և գրագարձիս: Որոյ Տէր Աստուած մեր պարգեւեսցէ, և այլն: [Ի Ս· Ղազար]:

1620·

Գրեցաւ սուրբ գիրքս (ճայսմաւորք) Հայոց թվին ՌԿԹ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսեդ կաթողիկոսին, և ի թագաւորութեանն այս Լեհաց աշխարհին՝ Գ· Զիկմունդին, ի քաղաքս որ կոչի Կամենից, ընդ հովանեաւ ամենօրհնեալ Աստուածածնին սրբուհոյ, և Ս· Նիկողայոս սքանչելագործ հայրապետին, և Ս· Աւետման Աստուածածնին, և այլ սրբոցս... ձեռամբ.. ճակոբ քահանայի որդւոյ Տէր Գրիգոր աւագերիցու, ի խնդրոյ պատուական և պայազատ Բան Եուրքոյին:.. (Բժշկեաւ, եր· 140]:

1620·

Աւարտ եղեւ Աստուածաշունչս այս սիրական
Հին և նոր կտակարանքըն լիական.
Թուականիս Հայոց Մեծաց և աբեթեան
Հազար վաթսուն ութ յաւելի յարաբարեան.
Ի յամիսն յապրիէլի ըստ հռոմական
Որ վեչտասանն եղեւ զատիկ մեր հայկական:
Ի յերկիրս յԸռուզաց և Լեհաստան,
Ի քաղաքս աստուածախնամ Լով կոչական.
Հայրապետին մերոյ ազգիս աբեթական
Տէր Մելքիսէթն կաթողիկոսն արեւելեան.
Ի յարեւմուտս տանըն Սրսա աղնուական՝

Տէր Յովանէս կաթողիկոսն աստուածաբան։
Որպէս լուսին և արեգակն ի յերկինս կան՝
Այնպէս սոքա են ի յերկիրըս Հայաստան։
Սըրբազան քահանայից որ այժմըս կան,
Որ անդադար տիւ և գիշեր առ Տէր կարդան.
Ըստեփանոս եպիսկոպոսըն Ծերալեան,
Եւ Տէր Գասպար աւագերէցըն պատուական.
Տէր Խաչատուր, Տէր Զաքարեան ազնուական,
Տէր Թորոս, Տէր Յովանէս վարպետք մանկան,
Տէր Գրիգոր կրօնաւորըն վանական
Եւ Տէր Մարգարն ի հետ նմին ընկերական։
Աստուածասէր տանուտերացըն Լոլական,
Բան Գաբրիէլն և Բան Թորոսքն երեսփոխան։
Եւ հասարակ են դատաւորք երկոտասան.
Որ արարիչն հաստատ պահէ և անսասան։
Ի ժամանակս սոցուն եղեւ յայս յանգական
Հոգիաբուխ աստուածատունկ այս բուրաստան.
Ես իմ անձամբս եղէ սորա աշխատական,
Եւ զնիւթն յառաջ պատրաստեցի աննիւզական,
Ետու ի ձեռս Թորոս դպրի երազագրեան,
Տալով զվարձս ձեռաց նորա առատական։
Բազում եղբարս յորդորեցի և ետու բան,
Զի և նոցա չանիւքն առնել աւարտական.
Մինչեւ ի չորս տարին եղաք աշխատական,
Հազիւ հանաք Աստուածաչունչս աւարտական.
Ետու ի ձեռս Անդրեա դպրի եղբայրական,
Որ կապեաց զսա ի մի տուփի հալաքական։
Որոց տացէ Տէր մեր Յիսուս վարձս յաւիտեան,
Զինչ որ աշխատ եղեն նոքա երազական։
Վասն որոյ ես կրսեր ձեր ծառայական
Աղտաստուալից հայցեմ ի ձէնջ պաղատական,
Ցաղօթըս ձեր յիշել զմեզ լի սրտական,
Ոչ մոռանալ յարեւանցի տեսողական,
Զիս ըզՂազարս Բաբերթացիս Նշդեհական,
Նա և սիրուն զծնօղն իմ Հանգուցական,
Այլ և ազգն մեր արեանառու և մերձական.
Եւ որ յիշէ զիս ընթերցաստս և անպիտան
Եւ վերոյ գրեալսն մի 'ստ միոյէ ամենեքեան,
Նա և նոյն ինքն յիշեալ լինի օրն ահեղական,
Ցորժամ նստի Քրիստոս յաթոռ դատողական։

եւ նըմա փառք յաւիտեանս անլըռական,
Ընդ Հօր, Հոգւովըն ճշմարտի միանգամայն,
Այժմ և յաւէտ և յապագայն յարաձգական,
եւ անըսպառ և ի անկէտ միշտ յաւիտեան. Ամէն։

1620-1·

Զանպիտան հողս և զանարհեստ գրչակս զպիտակ անուն զԽաչքս՝ յիշեցէք, ով եղբայրք, ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Գրեցաւ Թվ. ՌԿԹ. Նոյեմբ. 17։ [Շառակաւ, ի Ս· Ղազար]։

1623·

Գրեցաւ գիրքս ի Թվին ՌՀԱՒին, ի յունիս ամսոյ ԻՐին, ի յաշխարհս Ըռզաց, և ի թագաւորութեանն Գ Զիկմունտին, ի քաղաքիս Լուցքայ, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին։ Արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ բիւր քանքարոյ պարտական ՌՒ. ժԺ. ձՃ. (Գ.) Է. ՅՅ. ՄՄ. (Սիմէոն) իրիցուիս, որ միայն անուամբ եմ և գործովս հեռացեալ։ Բայց ետ գրել զսա ըղձմամբ և սրտիւ փափագանօք Յովհաննէս սրբազան քահանայն, ի վայելումն անձին իւրոյ և իւրոցն, յիշատակ անկըլնելի. զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ երկար ժամանակօք. ամէն։ [Ներս. Լաւբրռւն. յերռւսաղէմ։]

1624·

... Տեսեալ զսորայս (Աւետարանի) անճառ փրկագործութեան զխորհուրդ, Պր. պայազատ Թոճա Մարքոն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և ետ յիշատակ ի դուռն Հաճակատար Ս· Աստուածածնին, վասն իւր և իւր ծնողացն Հոգւոյն, Նուրպէկին, և մօրն Եղիսաբեթին, և կենակցին իւրոյ Քասքոյին, և զտեերացն իւր՝ Հօպքային և Հանուչքային, և մեծ պապին Մաթիաչին, և մամուն՝ Վասւաւային։... Բայց յորժամ գրեցաւ սուրբ Աւետարանն՝ էր թիւ հայկազան տումարի ՌՀԳ· գրեցաւ և աւարտեցաւ ի հռչակաւոր և յաստուածաբնակ մենաստանիս՝ Ս· Օգեննդայ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսեդ կաթողիկոսին, ի թագաւորութեան Օլախաց երկրիս Ռատուլին. ձեռամբ նուաստ և անարժան հող և փոշի Ղազար վարդապետին. որ անուամբ միայն և ոչ գործով... որ եմ առաջնորդ սուրբ ուխտիս և Օլախաց երկրիս, ողորմութեամբն Քրիստոսի։ Արտասուալից պաղատանօք հայցեմ ի ձէնջ զհանդիպողդ այսմ աստուածաշունչ մատենիս, մի՛ մեղադրէք. երկրիս հարկապահանջութիւն չատ էր. ամէն դատ և դատաստան առ մեզ կու գային, չունէաք խաղաղութիւն. կէս մի ի յայս քաղաքս գրեալով և կէս մի այլ քաղաք գրելով. և այսպէս չրջագայելով աւարտեցաք. թէպէտ գոյր կարողութիւն Քրիստոսի կարող զօրութեամբն՝ այլ գեղեցիկ գրել

և ծաղկել, այս տեղիքս դիժար էր, և մագաղաթ չէր գըտվէր. վասն այն տեղիս տեղիս՝ պատուով գրեցի։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան ներել սխալանաց մերոց, և խնդրել ապենիազ Աբարչէն՝ տալ թողութիւն մեղաց մերոց. եւս ա- ռաւել խնդրել յԱստուծոյ վասն ծնողացս, հօրն իմոյ Նիկողոսին և մօրն իմոյ Շնօֆորին և քուերս Խուտրաթին, և եղբարց իմոց՝ որ հանգուցեալ են առ Քրիստոս։ Նա և զբազմաշխաս Սրապիոնն՝ որ գրեց յեօթ չորս տետրն և կապեց զսուրբ աւետարանս՝ յիշեցէք ի Քրիստոս. Նա և զհոգեւոր և զմար- միաւոր վարդապետքն և ուսուցանողքն մեր, զոր ոչ գրեցաք զանուանս նո- ցա, զի մի յերկարեսցի բանս. այլ գրեսցի անուանք նոցա ի դպրութիւն կենաց։ Զմեզ յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ պարգեւեսցէ Քրիստոս զիւր առատ ողորմութիւնն, աստ և ի հանդերձեալն։

(Յետոյ գրեալ.) Գերապայծառ և ամենապատիւ Տէր Նիկողայոս Թորոսո- վիչն արքեպիսկոպոսն Լէոպոլսի և առաջնորդն, զայս սուրբ աւետարանս պարգեւեաց եկեղեցւոյս Ստանիսլաւովու, ի յիշատակ իւր յաւիտենական. զոր յետոյ բարեպաշտ Իլովցիք և Ադանիսլաւցիք ոսկւով և արծաթով ղար- դարեցին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

1625.

Գրեցաւ այս Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր և անարժան Ներսէս սարկաւագի, որդւոյ Հօլուպ վոյթին Կամէնցւոյ, ի յաշխարհս Իլսքաց, ի նոյն քաղաքի, ի վայելումն հոգեւոր հօրն մերոյ սրբասնեալ և քաղ ռաբ... [ՃԼՀմԺ]։

1626.

Աստուծոյ օգնականութեամբն սկսայ և կատարեցայ Տօնացոյցս այս, Հայոց թվին ՌՀԴին, և ամենեցուն օգոստոսի հինգերորդին, ի քաղաքն որ կոչի Կա- մենից, ձեռամբ մեղաւոր և անարժան Գաբրիէլ երէցին, ի փառս Քրիս- տոսի Աստուծոյ մերոյ։... Գրեցաւ Տօնացոյցս ի լաւ և յընտիր օրինակէ...

1627.

Թվին ՌՀԵ, մայիսի ԺԹ, օրն չաբաթ, եկաք ի Զամօսցա, Պարոն Տէր Մարտիրոս Ս. Էջմիածինեցի, և Պր. Տէր եղիա երզնկացի, և Տէր Խա- չատուր աբեղայ Իլովցի, վասն նուիրակութեան և հիմնարկութեան սուրբ եկեղեցւոյ, և ի հայրապետութեան Տեառն մերոյ Տէր Մելքիսեդ կաթողի- կոսին, որ էր ինքն ի Լով քաղաք. և առաքեաց զմեզ ի Զամօսցա քաղաք. և ի քահանայութեան Տէր Յակոբ քահանային, եկաք հանգեաք ի տուն նո- րին. Աստուած փառաւորէ զինքն ի հոգի և ի մարմին. ամէն։ [Ձաշոց ի վիճակայ։]

1627–8·

Զմեղապարտ զԱստուածատուր զպիրս յիշեցէք յաղօթս ձեր, ով պատուական հարք և նազելի եղբարք։·· Թվ· ՌՀԶ գրեցաւ ժամագիրքս, [ի կաւեւնից]։

1628·

··· Յիշելոյ արժան արէք զիս զանարժան
ԶՅակոբ երէցըս Թօխաթցի տաժանական.
Որ եմ պանդուխտ յայսմ աշխարհի տարաբնական,
Լեհաց երկիրն, ի նոր քաղաքըն Զամոսցան.
Այլ և ըզծնողն իմ յիշեցէք ի ժամ հայցման,
Զմեծահաւատ հայրն իմ Աւթուն, զմայրն իմ Աննան.
Ոչ ժամանեալ նոցա ի հասակ ծերութեան,
Այլ ի միջակ տիս հասակի վախճանեցան.
Եւ զվարժապետն իմ բարեբախտ արիական՝
ԶԱյվաթեանց Յակոբ անուն սուրբ քահանայն.
Իմաստիւք լի գերակատար ի գիտութեան,
Հոգւով մաքուր, մարմնով ճգնող ի ծերութեան.
Եւ զամենայն ըզմերձաւորս իմոյ արեան,
Եւ զժողովուրդ այս քաղաքիս զամենեսեան.
Զծեր և զտղայ, զերիտասարդ և ըզկուսան.
Եւ որք եդեալ են հաւատով ի գերեզման։
Ի թուականի մեծ տումարիս արեթական
Որ էր հազար եօթանասուն, այլ և վեց ամ,
Ես մեղաւոր չարագրեցի սակաւ զայս բան.
Ընծայեցի բանասիրաց ի վայելման.
Զի եղիցի սա յիշատակ ինձ անվախճան,
Եւ աղօթող առ Տէր Աստուած միշտ անխափան.
Այլ և լիցի փառաբանող Երրորդութեանն,
Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, միշտ յաւիտեան։··

Արդ գրեցաւ սա ձեռամբ Յակոբի սորին չարագրողի բազմամեղի և յոգնասղալ յանցաւորի, ի յիշատակ հոգւոյս տկարի. ի թուականութեանս հայկական տումարի ՌՀԷ ամի, ի 25 յունվարի ամսոյ, յանգ ելաւ չնորհօք Ս· Հոգւոյն, ի քաղաքս Զամոսցա, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին։ Եւ ի ժամանակս յայս կաթողիկոս ի Ս· Էջմիածին ոչ գիտեմք թէ ով ոք է. վասն զի յանցեալ ամի՝ որ էր թուականն Հայոց ՌՀԶ, վախճան ընկալաւ Տէր Մելքիսեդ կաթողիկոսն ի Կամէնէց։ Բայց առաջնորդ Իւղայ էր Տէր Նիկողայոս նորընծայ յաթոռ իւր· զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ· ամէն։

Արդ գրեցաւ երգըս Դաւթի
Որ կոչի Սաղմոս ճակոբի,
Որ շարագրեալ յանգ ելան
Հարիւր յիսուն փոխն ի տըմի?
Զեռամբ տրուպ Ղազարոսի
Որդւոյ Պարոն Իվաչքոյի.
Առ դուռն Ննջման Աստուածածնի,
Լեհաց յերկրիս Լով քաղաքի,
Եւ ի յաթոռս հայրապետի
Տէր Նիկողայոս (Թորոսովչի).
Արհեպիսկոպոս Լովայ երկրի
Եւ առաջնորդ նորին վիճակի.
Ի թագաւորութեանըն մեծի
Երրորդ Զիկմունդ թագաւորի.
Ի վայելումն բարեհոգի
Թուքան անուն ճգնաւորի,
Որ այժմ եկեալ առ մեզ չրջի
Պանդըխտութեամբ յայսմ երկրի.
Տացէ Նըմա Աստուած բարի
Զայս վայելել յերկար յերկրի.
Եւ յետ աստեացս նորին լիցի
Ճիշատակ սուրբ եկեղեցի:
Ի թուականիս մեր տումարի
Հազար եօթանասուն ինն աւելի,
Եւ յունիսի քսան և վեցի,
Շնորհօք Տեառն յաւարտ հասի:
Արդ աղաչեմ արտասուալի,
Անմեղադիր լերուք գըրի.
Մանուկ տիօք զայս գըրեցի,
Երկոտասան ամաց էի:
Ո՛վ ընթերցողք այսըմ տառի,
Կամ օրին(ակ)ողքն այսըմ գըրի.
Միով հայցեմ Տէր ողորմիւ՝
Մի մոռանայք զիս եղկելիս:

1629.

Յոհաննէս Ազիզն ստացաւ զսուրբ Աւետարանս, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն Յոչխապարին և մօրն Յանպէկի, կողակցին՝ Մարիամին, և եղբարցն՝ Սարուխանին, Նիկողայոսին, և քըւերցն՝ Շահազային, և ազգականացն, որդւոցն և դստերացն:...

1629.

... Այս աստուածաւանդ Աւետարանիս եռանդնոտ սիրով տենչացայ ես անարժան հողս ու փոշիս տրուպ և հուսկ նիազս, ոտից կոխան և յետնեալս յամենայնի, Բաբերթեցի Ղազար վարդապետս, գրել մատամբ իմով զայս սուրբ Աւետարանս, որում ի մանկութենէ ի վեր խանդակաթ սիրով կու ցանկայի և տենչայի գրել. որ և ընորհիւ Փրկչին մերոյ գծագրեցի, զոր սիրեաց անձն իմ. յիշատակ ինձ և իմ ծնողացն Նիկողոսին և իմ մօրն Շնոճորին, և իմ եղբարցն, Մարտիրոսին և քըւերն իմ Ղուդրատին, և ամենայն ազբեան մերձաւորացն իմ. վասն որոյ ցնծացայ և ուրախացայ՝ իբրեւ զունողս աւարաց բազմաց պատուականաց. այլ և զանազան գունով ծաղկեցի և գեղեցկանկար չորից աւետարանչացն պատկերագրութեանց յօրինածոք չքեղացուցի զսա, զի մի՛ լսելեօք միայն՝ այլ և աչաց տեսողութեամբ զուարճասցին հանդիպեալքն՝ ի խրախճանութեան աքանչելի տօնից աստուածային տնօրէնութեանն Քրիստոսի. իբրու հայելեաւ իմիք անմիջոց տեսանելով ի նկարս կենդանագրեալս զփրկարար գործսն Քրիստոսի. և ի բարի օրինակէն բարեմտութեամբ չահեալք՝ յօժարամիտ լիցին ի կցորդութիւն գործոցն Քրիստոսի և բանիցն

Ցիսուսի։... Արդ, քրիստոսապարգեւ Աւետարանս գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՀԷ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսէթ կաթողիկոսին, ի թագաւորութեան Ուլխաց երկրիս Միրօնին, և եպիսկոպոսութեան ինձ նուաստիս, որ գրիչս գրեցի. և աւագերիցութեան Տէր Անդրէասին, և երեսփոխանութեան Ծերիկին. ի մայրաքաղաքս Սեչով, ի անուանի հրեշտակաբնակ վանք Ս. Գաբենդի։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զԱրապիոն և զԱրգիս տիրացուն՝ որ զսուրբ աւետարանս կապեցին. այլ և յիշեցէք ի Քրիստոս զՏէր Անտոնն և զՏէր Աւետիքն. և որ զմեզ յիշէ կամ Հայր մեր ասէ՝ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւետեանս. ամէն. Ո՛վ դիս զդառնացեալս։

Այլ և յիշեցէք զանարժան մեղաւոր Ասլատուրս, որ եղեւ պատճառ սուրբ աւետարանիս, յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին. թվ. ՌՁԳ (1634)։ — Յիշատակ է սուրբ Աւետարանս Կորոսեցի Մանվէլի որդի Մկրտչին ի դուռն Սիլիսղրու Ս. Աստուածածնին եկեղեցուն. թվին ՌՃՂԴին (1745–6) և յուլիսի մէկին. աւարտեցաւ ձեռամբ ձեր ծառայից ծառայ անպիտան Սարգսի։... Յիշեցէք զՄկրտիչն մէկ Հայր մեղայով։ [Աւետարան ի Ռուսաձոզ։]

1629·

Գրեցաւ Տօնացոյցս այս ի հայրապետութեան այսմ նահանգի Տէր Մովսէս կաթողիկոսին, և ի թագաւորութեան Ցռանգագ ազգի Գ Ջիկմունդին, ի թվաբերութեան Հայոց ՌՀԷ, և ի յամսեանն դեկտեմբերի ԻԳ, ի վայելուչն Պր. Վարդերես դպրի, որդւոյ Պր. Գրիգորին. Աստուած բարով վայելել տայէ նմա ընդ երկայն ժամանակաւ. և գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան Վարդերես սարկաւագի։ Աղաչեմ, ով եղբարք, յիշեցէք զիս զմեղաւորս՝ ի սուրբ յաղօթս ձեր. և Աստուած զձեզ յիշէն։ [Բրեւանեան Մոզեռն]։

1629–30·

Գրեցաւ սուրբ գիրքս որ կոչի Ցայսմաւուրք՝ ի թուականութեանս Հայկազն սեռի ՌՀԸին, ի կաթողիկոսութեան Էջմիածնայ Տեառն Տէր (պարապ) և առաջնորդութեան Օլախաց երկրի Տէր Ղազար վարդապետին, աւագերիցութեան Տէր Անդրէասին, և երեսփոխանութեան Պր. Ծերիկին, և այլ քահանայիցն, Տէր Յովանէսին, Տէր Ղուկասին, Տէր Ղազարին, Տէր Վարդանին, Տէր Աւետիքին, Տէրտէր Սիմէոնին. նորընծայիցն՝ Տէր Աստուածատուրին և միւս Տէր Աստուածատուրին, Տէր Մովսէսին. և թագաւորութեան ... Պարոնին։ Գրեցաւ յերկիրս Օլախաց, ի քաղաքն Սեչով, ընդ հովանեաւ վանորէիցս՝ Ս. Հաճկատարի և Ս. Ըստատիոսեանցն և Ս. Լուսաւորչին. քանզի սկիզբն ի Հաճկատարն արարի և յաւարտն ի Ս. Օգէնտ. ձեռամբ անարժանիցս մեղապարտ Սրապիոնի և ցաւթան? Սարգիս դպրի. ի խնդրոյ

Տէր Նիկողայոս քահանային, որ է աստ երկրէն Բաբերթու, ի գեղջէն Հընտրէու։ Արդ, աղաչեմք զձեզ մանկունք նազելի մօրս մեր Սիոնի, սուրբ քահանայդ պատուելի, որ էք տեսուչ ժողովրդի, որ պատահիք սուրբ գրոցս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱրապիոնս և զուսուցիչն իմ զմէրտեսի Տէր Թաչատուր՝ արի և քաջ քարոզարանն Հիզանեցի, որ բազում աշխատութեամբ և գործովագութ սիրով հատոյց բիրտս և հաստատամիտս ի յարհեաս գրչութեան. զփոխարէնն ի Քրիստոսէ տացէ նմին։ Դարձեալ, յերես անկեալ և գլուխ ի գետին դնելով, ով դասք քահանայից և ուսումնասէր սարկաւագունք, յորժամ ընթեռնուցուք զպատմութիւնն սուրբ Հայրապետաց և նահատակութիւնս սուրբ մարտիրոսաց, յիշեսջիք ի յաղօթս ձեր՝ անպիտան հողս և փոշի զԱրապիոն գծողս Բաբերթացի, և զհայրն իմ Ջանուման և զմայրն իմ Շահփայշան, զքոյրն իմ Լուսթաթունն, փոքր եղբարն իմ Գրիգորն, որք են հանգուցեալ առ Քրիստոսի, և կենդանի եղբայրն իմ Պր. Յակոբն. զկողակիցս իմ զՄարթայն, և որդիքս՝ Յակոբն և Աբդէլնան, հանդերձ ամենայն զարմիւք իմովք. ամէն։... Արդ, ես նուաստս ամենայնի և զառածեալս մեղօք ի լի, գծոյլս ի բարին և զարագս ի չարին սուտանուն Սարգիս գպիրս գծողս, աղերսեմ ի ձեզանէ յիշել ի Տէր՝ զյուսուցիչն իմ զՅոհաննն գպիրն, որ բազում չանիւ և աշխատանօք զվրիպակաւն և զանիմաստ թանձրամիտս և յետնեալս ուսոյց արհեստ գրչութեան։.. Դարձեալ, յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զհայրն իմ զմահտեսի Տէր Յովանէս քահանայն և զմայրն իմ Զարդարն, և զքոյրս՝ Գուլվարդն, և զեղբարքն իմ Գասպարն, Կիրակոսն, Մելքոնն, Թորոսն, և ամենայն արեան մերձաւորքն իմ, զկենդանիս և զհանգուցեալսն առ Քրիստոս. ամէն։

Արդ, աւարտեցաւ սուրբ գիրքս ի դառն և ի դիժար ժամանակիս և ի ձմերացեալ յաւուրս վերջին. եկն ի վերայ մեր բարկութիւն Աստուծոյ, վասն ծովացեալ մեղաց մերոց. յարևան ազգն անհաւատից չար և անօրէն անագորոն և գազանաբարոյ քարապահանջ բռնաւոր, որ կոչին Ղեսողք, որ է Թաթարն. եկեալ մտին երկիրն Իլախաց՝ յաւար առնել. որ և բազում քաղաքս և գեօղս տապալեցին, և զրազումս գերեցուցին. յետոյ եկեալ ազգն Իլախաց բազում զօրօք ի վերայ նոցա, զգերին թափեցին, և զբազումս սրախողխող արարին. և ձեացեալքն եկին փախստական երկիրս Օլախաց և վրդովեցուցին երկիրս զայս, և զրազումս գերի առեալ տարան. և յետ երից և չորից աւուրց անցանելոյ նոցա, եկն եհաս այլ չարագոյն բօթ, թէ ահա Միրօն պարոնն ժողովեալ է բազում Ղազախ, և կուգայ ի վերայ միւս Պարոնին. և ահա կատարեցաւ բանն տէրունական՝ որ ասէր, թէ տուն՝ երկու բաժանեալ աւերեսցի։ Վասն որոյ մեծամեծքն Միրոն պարոնին զալպեցին զնա. որ եկեալ փախըստեամբ գնաց նստաւ ի բերդն Խօթինու. և երկիրս անտիրացաւ ի թագաւորաց չորս ամիս. յետոյ եկն որդին Ցըռատոլ պարոնին, տղայ գոլով. նստաւ ի նոյն քաղաքին աթոռ թագաւորութեանն. ըստ այնմ որ ասէ, թէ Աստուած որ բարկանայ ի վերայ երկրի՝ մանուկ թագաւոր առաքէ նոցա և

տղայ առաջնորդ ահա կատարեցաւ բանքս այս ի վերայ Օլախաց երկրիս. զի նախարարքն սորա ինչպէս որ կամեցան՝ այնպէս կու կողոպտեն երկիրս այս։... Բարեխօսութեամբ Սրբոյս որ կան ի տըփին յայսմիկ՝ Աստուած խաղաղութիւն տացէ երկրի և թագաւորաց հաշտութիւն։... Որոց Սրբոց Նախահարցն բարեխօսութեամբ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս՝ Տէր Նիկողայոսին, և ծնողացն՝ Պր. Վարդին, Խաթունչային, և կողակցուն՝ Կուլպահարին, և դստերացն՝ Ճաչխաթունին, Օղիտային, և եղբարցն՝ մահտեսի Գասպարին, Ալեքսիանոսին, Սիրունին, Միրիճանին, և կողակցուն Սիմային, և դստերացն Հռիփսիմէին, և ամենայն արեան մերձաւորացն. և միջնորդի սորա՝ Վարդապատին, և անպիտան գրչի Սարգիս դպրին, և վարժապետիս՝ Յոհան դպրին. և ծնողացն իմոց՝ մահտեսի Տէր Ովանէսին և Զարդարին, կարդացողացս և լսողացդ, և ղՈղորմին ասղացդ. ամէն. Հայր մեր։ — Կարողութեամբն Աստուծոյ և միջնորդութեամբ Սրբոցս ըսկսաք սուրբ գիրքս. և վերջացաւ ի յայսմ վայրի իմում բաժին. և ի յայսմ տեղւոջէս յաւարտ եհան հոգեւոր ծնողքն մեր և խրատատուն Սրապիոն դպիրն. զոր և յուշով աւարտեցաք ի թվականութեանս Հայոց ՌՀԸ ամին։ — Ողորմի Քրիստոս Աստուած զսուրբ ցայսմաւուրքս ի գերութենէ ազատողին, յԱկընցի Եայճի Փիրուխանին և իւր ծնողացն, Հօրն՝ Խորին, մօրն՝ Ցաչկուլին, և իւր եղբարցն՝ Թամուրին, Աստուածատուրին, Աբրահամին, Ցակոբին, Ցոհաննէս, Մովսէսին, և ամենայն արեան մերձաւորացդ, և որ զողորմին ասեն. ամէն։ — Ողորմի Քրիստոս Աստուած զսուրբ ցայսմաւուրքս ի գերութենէ ազատող Խօճայի եղեցքան (թերեւս եկեղեցպան) Վասիլին, և Հօրն Մանուկին և մօրն՝ Մարուցային, և կողակցին՝ Խաթունմէլիքին, և եղբօրն Խօճայ Թումանին, և որդոյն Օվանէսին և Օհանին, դստերացն Աննինցային և Մարուցային և Ալխաթունին և Հռիփսիմէին, և... Տէր Ցովանէս՝ Խութինու քահանայի։.. [Ցայսմաւուրք ի կեռլա]։

1631·

Թվ. ՌՀԹ, Սեպտ. 20, օրն հրկուշաբթի. ի հայրապետութեան Տեառն Տէր Մովսէսի, եկաւ ի Լվ նուիրակ Տէր Խաչատուր վարդապետ սրբալոյս մեռոնաւն. և դիս մեղաւորս Խաչատուր աբեղայս առաքեաց նուիրակ սրբալոյս մեռոնաւն ՚ի յայս աստուածապահ քաղաքս Զամոցս, ի ժամանակս քահանայից՝ Տէր Ցակոբին և Տէր Անդրէասին, որ և եկաք և հանգեաք ի տուն Տէր Անդրէաս քահանային, և Աստուած զինքն փառաւորէ ի յայս կեանք և ի յաւիտենականս. ամէն։ [Ճաշոց ի կայսեր. գրատան Վիեննայ]։

1631·

Ով եղբարք իմ սիրելի, յիշեցէք զԹերեւարժ զրչակս՝ զՄերիկ դպիրն՝ որդոյ Նիկօլին. և անզարդութեան գրոյս անմեղադիր լերուք.. գրեցաւ Թվ. ՌՀԹ. դեկտ. 15, օրն վեցշաբթի։ [Ի կաւեւից, – ձեռագիրք]։

Ո՛վ աստուածապահ քաղաքըդ մեծ Կամենից՝
Ի քառից կողմանց պատեալ յորդահոս վըտակից,
Անառիկ ամրոց չինեալ ի վերայ վիմի.
Օրհնութիւն աստուածային ի քեզ ծաւալի.
Ազգ հայկազեան զարմի՝ որ ի քեզ բնակի՝
Հաստատեալ յուսով սիրով Ս. Լուսաւորչի,
Պահեսցէ Տէր հաստատուն և անշարժելի,
Պայծառ լուսաւոր դիմօք և անդրդուելի.
Արդեամբ պերճմամբ բարգաւաճելի.
Շքեղազարդութեամբ փայլեալ որ կան ի մարմնի։
Տիրամայր ամենասուրբ Աստուածածին,
Բարեխօսեա Միածնի վասն այս քաղաքի,
Մանաւանդ փոքրիկ հօտի Հայկական զարմի,
Որ կան հաստատեալ սիրով փրկչին Յիսուսի։

[Ժառագիրք ի Ս. Ղազար]։

1631.

Եղեւ զրաւ սուրբ գանձարանիս ի թվաբերութեան Հայոց ՌՁ և հոկտ. 15, ձեռամբ մեղսաներկ և անհմուտ գրչի Գրիգոր քահանայի որդոյ Անդրէասին։... Բայց գրեցաւ ի յաշխարհ Լեհաց, ի քաղաքն Կամենից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկողայոսի Աքանչելագործի, ի հայրապետութեան Հայոց Տեառն Տէր Մովսէսին, և թագաւորութեան Գ Ջիկմունդին։... Ցիշեսջիք և զծնողսն իմ զԱնդրէաս հանդերձ մայրըն իմով Յանայիւ, և ծնողքն իւրեանց։ [Մաշտոց ի գրատան Վիեննայ]։

1631.

Գրեցաւ Երգս Ս. մարգարէին Դաւթի ի լաւ և յընտիր օրինակէ՝ որ կոչի Գառնեցի, ի Ղազար գրչէ, ի խնդրոյ բարեպաշտ և աստուածասէր երկիւղած յԱստուծոյ և ամօթխած ի մարդկանէ մահդասի..... Արդ աղաչեմ զամենեսեան. յիշեսջիք.. զեղկելիս և զյետնեալս ամենեցուն զՂազար գրիչս, որ լոկ անուամբ կոչեցաւ վարդապետ և ոչ գործով. թէպէտ ի մարդկանէ գովիմ, այլ ի տեսողէն ամենայնի՝ պարապիմ. և թէ ի մարդկան աչս պարկեշտ երեւիմ, այլ յորդւոցն լուսոյ աւազիմ. վասն այսորիկ արտասուագին պաղատանօք խնդրեմ պատահողացդ այս սուրբ գրոցս, ասէք բոլորով սրտիւ Հայր մեր կամ Քրիստոս որդի Աստուծոյ, կամ Աստուած ողորմի, ասելով ինձ եղկելւոյս և իմ ծնողացս, հօրս՝ Նիկողայոսին և մօրս Շնօֆորին, և եղբարցս՝ Մարտիրոսին և Սարգսին, և քրւերս իմ Ղուդրատին.. Արդ գրեցաւ ի վանքս Ս. Օգսէնտի, ի քաղաքս Սէչով, ի հայրապետութեան Տեառն Տէր Մովսէս կաթողիկոսին, ի թագաւորութեան Ուլախաց երկրիս՝ Աղե-

քանդրին. ի թվականիս Հայոց ՌԾթ-ին ապրիլ ամսոյ Թ-ին աւարտեցի Քրիստոսի չնորհօքն. Աստուած տա որ բարով վայելէ մահդասի.... բազմերամ ժամանակաք և ընդ երկայն աւուրս։ [Աղվոս. ի Պեզիհի]։

1632·

Արդ եղեւ զրաւ սուրբ գանձարանիս՝ որ կոչի Աւետարան, յամի չրջադայութեան արամազեան տոհմի հայկական սեռի արեթական տումարի ՌՁ թվականին, յունվար ամսոյ 22ին.. բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքն Լովֆ, ընդ հովանեաւ Աննման Ս. Աստուածածնին, 'ի հայրապետութեան Տեառն Տէր Մովսէս երջանիկ քահ բարեւնապետ Մովսէս կաթողիկոսին Ուրհայեցւոյ (?), և ի թագաւորութեան Լեհաց երկրին Գ Զիկմունդին, որ է ազգաւ Ընկռուզ. ձեռամբ մեղաւոր և անարժան լոկանուն Սիմոն երիցուիս, որ միայն անուամբս եմ կոչեցեալ, բայց գործովս հեռացեալ։ Գծագրեցի զայս սուրբ տառս ի խնդրոյ աստուածասէր և երկիւղած տիկնոջն Բանի Նազուխնային, որ է կենակից Աւետիքէնց Բան Մինքօին և դուստր Բան Պօհտանին Տօնալագենց. զի յոյժ փափագ և ջերմեռանդ սրտիւ ետ զսա գրել, ի հաւլալ ընչից իւրոց, և եղ յիշատակ անջինջ յաւիտենական իւր և իւրայնոցն՝ կենդանեացն և ննջեցելոց և ամենայն արեան մերձաւորացն, ի դուռն Հաճակատար մենաստանին, ի քաղաքն Սէջով։ Արդ աղաչեմ զձեզ զամենեսեան, ով սուրբ Հայրք և եղբայրք, նազելի պաշտօնեայքդ Քրիստոսի...

1632·

Գրեցաւ գիրս ձեռամբ Յովանէս վարդապետի Կ. Պոլսոյ եպիսկոպոսի, ի յիւլով քաղաքի. Թ-ի. ՌՁԱ. Թուականիս հայկազեան տումարի։ Այսմ ամի կրալ Թագաւորն Զիկմունտ առ Աստուած փոխեցաւ. Աստուած լուսաւորէ հոգին, և ընդ առաջին սուրբ Թագաւորացն դասեսցէ. Աչխարհամատրանին չորեքչաբթին էր վախճանն։ [Ձեռագիրք]։

1632·

Եպիսկոպոսն Մեսրոպ վարդապետն Հայոց՝ Կաֆացի, ի ՌՀԱ. Թվին եկեալ Կամէնիցս, ձեռնադրեաց զՄիքայէլ երէցն, ի խնդրոյ յիշատակի Թորոս կրօնաւորի. և Ս. Լուսաւորչի խորանն հիմնարկեաց, և եդ բազում մասն Սրբոց ի հիմն եկեղեցոյն, ի փառս և ի գովեստ սուրբ եկեղեցոյս. ամէն. և զՀիմնարկութեանս պատմն գրեաց. ի Թվականիս Հայոց ՌՀԶ, մայիս ամսոյ ԻԴ օրն Պէնտակոստէի երկուշաբթի։ Ես ամենամեղ անձն Թորոս եպիսկոպոս Կամինիցւոյ, ի խնդրոյ Եազլովցա ժողովրդոցն՝ գնացի ի քաղաքն Եազլովցա, և եկեղեցոյ հիմնարկութիւն արարի, յանուն Ս. Աստուածածնին, և եդի ի հիմն. մասն Սրբոց, ի փառս Աստուծոյ և ի պատիւ...

1632·

Ի Յովհաննեսէ վարդապետէ Կ· Պոլսեցւոյ պատրիարք անուամբ, մինչ գնայր ի Հռոմ, պատահեցաւ ի Լով քաղաք, ուր օրինակեայ զՊատմագիրս Վարդանայ վարպապետի, խիստ հնացեալ։ Թվ· ՌՁ· դեկտ Ա։

1634·

Ես խաչատուր եմ Լեհացի·
Որ սուրբ կանոնքըս գրեցի,
Թվականիս Հայոց ազգի
Հազար ութսուն և երեք։
Ձի գաւառիս Ռատուգի (Ռատոսգոյ)
Որ մականուամբ Թէքիրտաղ կոչի,
Ի դուռն Ս· Յովհաննէս նորընծայ Աւետարանչի·
Աղաչնորդութեամբ սուրբ ուխտիս
Տէր Գրիգոր քալ հռետոր բարունապետի,
Այլ և բազում քահանայից որ աստ կան հաւաքեալ։
Դարձեալ, ես խաչատուրս եմ մեղաք գերի
Ցոյժ անպիտան և խստելի·
Ողորմութեամբ աստուածային աւարտեցաւ
Կանոնքս աւգոստոսի ամսոյ ԻԳ·
Ցիշատակ Տէր Մինաս գրոց աշակերտի,
Եւ քարոզող Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի·
Եւ չնորհս տացէ Ս· Հոգին՝ ամենայնի,
Այժմ և անդրաւ յաւիտենի· ամէն։

[Ձեռնհագիրք, ի Հռոմ]։

1635·

Օրհնութիւն և գոհութիւն և փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ ետ զօրութիւն ակարութեանս իմոյ, գրել զայս գիրս՝ որ կոչի Հարցմանց (Գր· Տաթեւ)։ Արդ այսմ գրիս փափաղող գերեվարձանիկ և աստուածարեալ և սքրբազան Տէր Անդրէաս քահանայն, յոյժ սիրող աստուածային տառիցն և ջատագով ուղղափառ հաւատոյ և ախոյեան, յաղթող ընդդէմ ամենայն հերձուածողաց։ Արդ, գրեցաւ սա ի թուականիս Ռ և ՁԳ, մայիս ամսոյ 21, ի թագաւորութեան Լեհաց Դ Վլատիսլաւ գրայլին· Ցայսմ ամի զՄոսքովու թագաւորութիւնն առաւ։ Ի նորաշէն քաղաքս որ կոչի Ելվինա, ի դուռն Ս· Աստուածածնին· ի հայրապետութեան Ս· Էջմիածնայ Տէր Փիլիպպոս կաթողիկոսին։ Ցիշատակ պատուական և գերամաքուր Տէր Անդրէաս սրբակրօն քահանայիս, և հրնչտակերամ զարմից իւրոց, մեծի և փոքու· ամէն։ [Հարցմանց Տաթեւաց· յԷջմիածին]։

1637·

Կատարեցաւ Պրակք Աստիճանաց ձեռամբ Անտոն կրօնաւոր քահանայի, ի թվին ՌՁԵ, յունիս 1, օրն Դշ չորեքշաբթի։ Ձմեղապարտ և զանպիտան գրիչս Անտոն կրօնաւոր՝ աղաչեմ յիշել ի Տէր Աստուած՝ միով Տէր ողորմեայիւ. և Աստուած գյիշողդ յիշէ. ևն։ [Մայր ձեռագիրք]։

1638·

Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի գրոցս Տէր Զաքարիայ Լովայ քաղաքի աւագիրիցուն, և ծնողաց նորին՝ Տէր Գասպարին՝ յուսով վերափոխեցելոյն, և ամենայն արեան մերձաւորաց նորին, կենդանեաց և հանգուցեալոց. և ինձ մեղապարտ գրչիս Մկրտչիս՝ Ղազարի որդոյն, և ծնողաց իմոց։ Գրեցաւ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի թվ. ՌՁՁ. յունվար Ը։

Վասն չարչարանաց քոց, Քրիստոս Աստուած մեր, ազատեա ի չարչարանաց աստեացս՝ չար մարդոյ անօրէնն Ներկոլ չեպիսկոպոսէ, և ի հանդերձեալումն ի հրոյն յաւիտենից՝ զՏէր Զաքարիաս։..

Ով հարք պատուականք և եղբարք նազելիք, հանդիպողք այսմ ոգենուագ սուրբ տառիս՝ որ ասի Ճառընտիր, յիշեցէք ի Քրիստոս զմեծափափագ ստացող սորա զՏէր Զաքարիա Լովայ աւագերէցն, որդի Տէր Գասբար աւագերիցուն. որ ետ գրել զայս սուրբ տառս մեծաւ տենչմամբ և եռանդնաեռ սրտիւ. որ հանդիպեցաւ սորին օրինակի ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն, և ետ օրինակել յիշատակ իւր և նախնեաց իւրոց։... [Ճառընտիր ի Ս. Ղազար]։

1638-9·

Գրեցաւ սա (Մաշտոց) ձեռամբ յոգնամեղ Յակոբ իրիցուս, ի յերկիրս Իլախաց, ի քաղաքս Ջամօսցա, առ դրունս Ս. Աստուածածնին. ի թվաբերութեան Հայոց ՌՁԼ ամի, ի ժամանակս թագաւորութեան Իլախաց Դ Վլատիսլաւին, և հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Փիլիպպոս կաթողիկոսին։.. ի վայելումն անդրանիկ որդւոյ իմոյ Տէր Պետրոս քահանային. զոր արտասուաթոր մաղթանօք յԱստուծոյ ամենակալէ, զի բարով վայելել տացէ ի ժամանակս յերկարս ի խորութիւն ծերութեան։.. Ցայսմ ամի մեռաւ մեծ իշխանն տէր քաղաքիս՝ Բան Թումաս Ծամոյսքին, այր հանճարեղ և իմաստուն. Աստուած լուսաւորէ զհոգին. ամէն։ [ի հայսեր. գրատուն Վիենայ]։

1639·

Գրեցաւ և աւարտեցաւ այս Աղօթամատոյցս ի քաղաքն Սէլով, ընդ հովանեաւ Ս. Սիմէոնի եկեղեցւոյն, ձեռամբ Անտոն կրօնաւորի՝ Իրքոյի որդ-

ոյն Սերեքզոյենցս, ի վայելումն անձին իմոյ. ի թուականութեան յաբեթականն տումարիս ՌՁԸ, հոկտեմբերի 23, օրն չորեքշաբաթի. ի հայրապետութեան Հայոց Տէր Փիլիպպոս կաթողիկոսին, և առաջնորդութեան Լեհաց Տէր Նիկողայոսին. և ի թագաւորութեան Դ. Վլատիսլաւին. զոր Տէր Աստուած փառօվ! վայելել տացէ. ամէն: [Ի Կեսարիա]:

1639·

Մէն Տէր Ներսէս Հօլուպ վոյթ օղլու ալդմ սաթուն պու Բառգիրքնի Բան Պաղչաչ վակէր իմուն Տէր Աստուածատուր օղլու բէվլը լօ ամյկա? Թվ. ՌՁԼ, յունվարի ԻԷ· դշ· (չորեքշ)· խայսին օլ Օլախ վէլիյաթնա, ալայժէ սաթուն ալթէսի Ջ (վեց) լէվքովլոյ դալարկա: [Բառգիրք ի կայսեր· գրատաւն Վիեննայ]:

1641·

Որք աստուածային սիրոյն հրոյն վառեալ են՝ միշտ փութան բարի և Աստուծոյ հաճելի յիշատակ յաշխարհի թողուլ. որպէս և սիրելիս Աստուծոյ Տէր Խաչատուր մէհէսի կրօնաւոր, այս սուրբ Աւետարանս ետ գրել՝ մեղաւոր մէկ կարգաւորի, լցեալ մեղօք և տառապեալ մոգաբ: Արդ որք հանդիպիք կամ ժառանգէք՝ յիշեցէք զԽաչատուր կրօնաւոր. և զհայրն իմ զԽաչատուր և զմայր իմ Հռիփսեմայ, և զքնաւ զարմն, և թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք, զի և ձեր թողցի. ամէն: Գրեցաւ այս սուրբ Աւետարանս ի քաղաքն Սէյով, ընդ հովանեաւ Ս· Սիմէոնայ եկեղեցի, ի կաթողիկոսութեան Տէր Փիլիպպոսի, և յառաջնորդութեան այս գաւառիս՝ Տէր Անդրէաս արքեպիսկոպոսի, ի թագաւորութեան Օլախաց Վասիլ վոյվոտային. ի թվականութեան յաբեթական տումարի ՌՁԹ, հոկտ· 23· (օրն) զշ (ուրբաթ)· զոր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս: Ջմեղապարտս գծոյս յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ: [Ի Ս· Ղազար]:

1643–4·

Ա՛րտեցաւ քրիստոսահիմն և առաքելախօս մարգարէաչէն հոգիաբուղխ այս տառ (ձ՛աշոց) ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի՝ Տէր Սարգիս քահանայի, ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտօն երկու եղբարց, խոճայ Վասիլին և խոճայ Պաւղոսին, ի թուաբերութեանս Հայկազան սեռիս տումարի ՌՂԲին. ի հայրապետութեան Հայոց Տեառն Տէր Փիլիպպոսին, և առաջնորդութեան Տէր Անդրէաս արհեպիսկոպոսին Պուդտանաց երկրի, և թագաւորութեանն Վասիլ բարեպաշտ վոյվոտային. ի մայրաքաղաքն Եաշ, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնին և Ս· Լուսաւորչին. և քահանայութեանն Տէր Մովսէսին և Տէր Խաչատրին, Տէր Ղուկասին և գրչիս, և երեսփոխանութեան խոճայ Ակէնտիին:

1643·

Աւարտեցաւ այս տուրբ մատեանս ի լաւ և յընտիր օրինակէ, ի թվաբեր-
րութեանս Հայոց ՌՂԲ, ի թագաւորութեանն Լհհաց աշխարհին Դ. վկայտիս-
լաւին, և իշխանաց մերոց և վոյթութեան Բան Ղհանին և ԺՈ դատա-
ւորացն...։ [Աձետարան ի Սնեադին]։

1644·

Ցիշատակ է այս մէկ տետրիս Թուխթն Պր. Թաթուլին որդոյ Պր. Գրի-
գորին՝ կամենիցոյ տօլվաթաւոր Քառասուն եղբարցն մէկն, ի վայելումն Ս.
Նիկաւղայոս Աքանչելագործ եկեղեցւոյս. Թվ. ՌՂԳ, ապրիլի ԺԲ. Ատուած
բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս. և զմեղապարտ գրիչս զՎարդե-
րես դպրապետս՝ որդոյ Պր. Քրըչթօֆին յիշէք մէկ Հայր մերիս, և Ատուած
զձեզ յիշէ. ամէն։

Պու պիթիք եազըլըը ադարանիէսը աչըրա, եազըխըը անարժան Յակոբ
դպիրընէնկ Տէր Գրիգոր օղլունունկ սարօչքա զանեէսը. ալպօ պույրուխլու
աչալարընէնկ. խայսինքի յիշատակ խոյսունչար Ս. Նիկօլ եքխօվունա. տա
եազըլըը խօլուպիլա Թ(ուակ.) [ձառագիրք. տ. 1631 տարին]։ ԶԹորոս
նուաստ յիշէ, ով քաղցրաձայն եղբայր։ [Նոյն]։

1645·

Որք ընթեռնուք զաստուածաբան գիրքս, որ է յատեանի Աւետարան, յի-
շեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զխոճա Խաչքօ Իլովցի Պր. Ստեփաննոց.
վասն իւր հոգոյն և իր հօրն Ստեփաննոսին և մօր Նասրուխնային, և ամե-
նայն արեան մերձաւորացն։ Զոր եւս զայս անգին գանձս, մեծաւ վտա-
քանօք էառ զսա իւր հալալ արդեամբ վաստակոց իւրոց. և դարձեալ եւս
զսա յիշատակ ի նոյն տեղի՝ ուր և յառաջն էր. զի մի կորիցէ յիշատակն
արդարոց և աշխատողաց։ Դարձեալ աղաչեմ զձեզ հայրք և եղբայրք, մի
մոռանայք զբարի յիշատակ տուողս զՊր. Խաչքոն, որ այլ տուրբ գրոցս գթե-
րին լցոյց, քանզի եւս նկարել զչորս գլուխ պատկերանիկն և չորս կանո-
ներն. ի Թվին Հայոց ՌՂԳին, ապրիլի 28ին. Որոց յիշատակ տուողացն
օրհնութեամբ եղիցի, և կարդացողայց և լսողաց և որք զամէնն ասեն՝ Ամէն.
Հայր մեր։ [Մեծ Աձետարան ի Լեմպերկ]։

1648·

Ես մեղաւոր և անարժան ծառայ Ատուծոյ Մուրատ, որդի ողորմած հո-
գի Մխայելին. գրեցի զայս կանոնական հրամանս ի Շէլով քաղաք, ի դուռն
Ս. Խաչին, ի թագաւորութեան վասիլ Պարոնին, Թվ. ՌՂԼին. դեկտ. ամ-
սոյ 8ին, օրն հինգշաբթի։ Աղաչեմ զձեզ, ով հայրք և եղբայրք, յորժամ
կարդաք կանոնական հրամանս, անմեղադիր լերուք սղալանացս և խոշորու-

թեան գրոյս, զի չատ արտասուելով և հառաչանաք գրեցի զայս. զի այսմ ժամանակի փախստական էինք ի հայբենի տեղեաց եաղլովցայու ի Շէլոնին քաղաք, ի ձեռաց չար Թմէլին. զի չատ աւերում տրար ի Լեհաց երկիրն։ Յայսմ ժամանակի եկաւ Տէր մահտեսի Գասպարն երուսաղեմայ, զի ուխտն կատարեալ էր. եկաւ ի Շէլով քաղաք. յետոյ չկարաց երթալ ի եաղլովցա, զի չատ խառնակութիւն էր. ամէն հարամի եղեր էր. որ իակի չէին Թուղեր որ մարդ գալէր ճամբահներն. զի այս չարութեանս է պատճառ Թմէլին. յետոյ ետուր իւրեան հալալ ընչիցն՝ ինձ անարժան մեղաւոր Մուրատ սարկաւագիս, որ զայս սակաւ կանոնահրամանն գրեցի. այլ բաւ է։ Աղաչեմ զձեզ ով հայրք և եղբայրք, հայրապետք և վարդապետք, քահանայք և սարկաւագք, յորժամ կարդաք կանոնահրամանս կամ օրինակէք, յիշեցէք զանարժան ծառայն ձեր Մուրատ սարկաւագ զգծող սորին, և զնծողն իմ, զխոճայ Միքայէլն՝ որ առ Աստուած փոխեցաւ, և զմայրն իմ եաղութ խաթունն. յիշեցէք միով Հայրմերիս, և Աստուած զձեզ յիշէ միւսանգամ գալստեանն. ամէն։ — Ո՛հ գիր՝ որ մնաս. ո՛հ ձեռք որ հողանաս. ո՛հ եղբայր որ թէ զմեզ չմոռանաս։ [կաւոնագիրք. ի Ս. Ղազար]։

1652.

Ի թուականիս մերում ՌՃ (1651–2) ամին եկեալ ի Ս. Էջմիածնայ՝ բարձրափառ և ամենահռչակ Տէր Փիլիպպոս կաթողիկոսն, հանդերձ 12 վարդապետօք, չոգաւ յԵրուսաղէմ, առ որ և զամենաթշուառս (ցովհաննէս Վ.) կրսերս ի բեմբասացս և հուսկ վերջոտնեալս ի ծնունդս եկեղեցւոյ, ունելով ընդ իւր. որոյ այս 25 ամ է զի ծառայեցի նմա մտերմաբար. և գնացեալ մինչեւ ի քաղաքն Էնկիւրեայ, և անտի յղեալ զմեզ ի Բիւզանդիոյ՝ սակս գնոսին հրաւիրելոյ ի Ս. Երուսաղէմ... Եւ արդ գնացեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ընդ վերոյ գրեալ Տեառն մերոյ, և անտի եւս դարձաք ի յարքայական քաղաքն ի Կ. Պօլիս. և անդէն զմեզ ուղարկեաց Իւսխաց աչխարհն՝ հայրն մեր, ինքն չոքաւ ի յաթոռ իւր ի Ս. Էջմիածին, նոյն միաբանօքն։ Իսկ իմ երթեալ յայս վերոյասացեալ երկիրն, իբրեւ կատարեցաք զգործս մեր, յետ երկուց ամաց դարձաք ի Ս. Էջմիածին։... [Աշետարան ի Մոշ]։

1654.

Գրեցաւ Աւետարանիս յայլխարհս Իւսխաց ի քաղաքն Կամէնից, ի դառն և ի տրտում ժամանակիս, ի վշտալից և ի թշուառական ատենիս, և ի նեղաց սրտիս և ի այրեալ լերդիս, պիղծ և անօրէն Հոռոմ ազգէն, անուամբ կոչեցեալ չՊօկտան Թմէլէնիցքէն, որ երկու ամ պաշարեալ և գերեալ զաշխարհս Իւսխաց, զքաղաքս, զգիւղս, զգաւառս, զգիւղաքաղաքս, զժամս, զժամատեղս, զքահանայս և զկարդացողս, զկենդանիս և զմեռեալս, զամենայն զինչ ի միտս անկանէր և ի ձեռն հասանէր, նա անխնայաբար և անողորմաբար տանջեալ գերեալ և տայր ի ձեռս այլազգեաց, որ կոչուէին Թա-

թար ազգն. ոչ լալոյ և ոչ հառաչելոյ, ոչ պաղատելոյ և ոչ աղաչելոյ կու նայէր. այլ իւր գոռոզութեամբ և հնարիւք սատանայիւք առնէր զինչ և կա- մէր: Արդ հայցեմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ վասն մեր խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ և յարեաւ... որ նա զիւր առատ ողորմութեամբ և մար- դասիրութեամբ՝ զպեղծ և զանիծեալ բերանն բացեալ զառիւծուն՝ կալցէ կորեսցէ և զգլուխն կործանեսցէ ի ձորն անդնդային, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ, և զմեզ զամենեսեան զհաւատացեալսն աղաւեսցէ ի նորա անհաւատոյն ձեռանէն. ամէն: Արդ վասն խնդրելոյ հղբօրս իմոյ Բան Միա- քոյ որդւոյ Պր. Քըրըլթօֆ Մուսթաֆային, ի սուրբ եկեղեցին ի քաղաքն Զամոսցայ, վասն իւր արեւուն և ընկերոջն և դաստրորդոցն և ծնողացն նըն- չնչելոց... Արդ գրեցաւ ի յաբեթական մեծ տումարիս ՌՃԲ ամին և ի մայիս 22ին. ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ ՏԷր ՏԷր Փիլիպպոս կա- թողիկոսին, ի յառաջնորդութեան խառնակի ժամուն ոչ այս և ոչ այն, այլ մնացեալ վասն գալոյ Պր. Թորոսովից ՏԷր Նիկողայոսին, և ի թագա- ւորութեան Ե. Քաժիմիրին: Գրեաց զսա խեղճ և անճարակ մեղաւոր և ան- արժան ծառայ ոտացներուդ կոխան Վարդերես, որդւոյ Պր. Քըրըլթոֆ Մուս- թաֆային:... [Ձառագիրք ի կայսեր. գրատան Վիեննայ]:

1655.

Ողորմութեամբն Աստուծոյ սկիզբն ար(արաք) ճաշոցն, Թվ. ՌՃԳ, ապրիլ 26, օրն չորեքշաբթի, ցինանց, առաջ մէկ շաբաթ քան զՀամբարձումն, և մինչեւ ցայս վայր կատարեցաք, Գայիանեանց տօնի, մայիսի 23, ի փառս Քրիստոսի Աստուծոյ. ձեռամբ անարժան Անտոն եպիսկոպոսի և վարդապե- տի, ի քաղաքն Եազլովցա, ի դուռն Հաճակատարի:

Ցայս հրաշափառ մեծի տօնիս՝
Քեզ երանի որ հանդիպիս
Լուսափըթիթ բուրաստանիս.
Ցորժամ ի ծուները խոնարհիս,
Սիրով հոգւոյդ յԱստուած հըպիս,
Ցայնժամ յիշեա դու զեղկելիս
Զայս անպիտան խլոցիս,
Զմեղաք ծածկեալս ի մէջ տղմիս
Անտոն անուն վարդապետիս,
Բայց անուամբ կոչողիս.
Եւ եմ չարեաք լըցեալ գերիս:
Հազար հարիւր երեք թըւիս՝
Ցորժամ հասայ ի յայս տեղիս,
Մայիս ամսոյս երեսունիս.
Աւուր երեքշաբաթիս: Ամէն:

Հոգի սուրբ, յօգնեա և աջողեա անարժան գրչիս Անտոն եպիսկոպոսի, սպասաւորիս Սրբոյ Խաչին: Աղաչեմ և խնդրեմ ի քէն բարերար և բազում- ողորմ Աստուած, վասն քո սուրբ չարչարանաց, զի զօրացուցեսես զիս զան- արժանս ի անկ ելանել, որպէս ի սկիզբն զօրացուցեր, մարդասէր, նոյն- պէս տպաւորեա Ս. Հոգիդ, զի յօգնութեամբն հասից մինչ ի վերջն. զի յոյժ ծանր թուի ինձ այս սակաւամեաց գիրս կատարել. և քո սուրբ և աքան- չելի անուանն վերասկանիմ, կենսաբեր Ս. Խաչին աստուածաշունչ գիրս

անտարակոյս, յուլիսի 13, օրն հինգշաբթի թվին ՌՃԳ. ի փառս Աստուծոյ: Կատարեցաւ ձաշու գիրքս ձեռամբ անարժան Անտոն վարդապետի, ի մայրաքաղաքն Սէլով, ի դուռն Ս. Խաչին, թվ. ՌՃԳ, օգոստոսի ամսոյն 11, Փոխման Աստուածածնին պահոց. բայց և սկիզբն արաք ի եազլովցա քաղաքն, նոյն տարի, ամսոյն մայիսի, Գ աւուր յառաջ քան զՀամբարձումն, չորեքշաբաթի օր, ի փառս Աստուծոյ: Փա՛ռք քեզ, Աստուած յաղագս յամենայնի: [Ի Ս. Ղազար]:

1655.

Գրեցաւ Պաշխարութեան երգ, մարտի մէկ, թվ. ՌՃԳ, աղուհացիկ առաջի չաբաթուն հինգշաբթի, ձեռամբ մեղաւոր Անտոն վարդապետի, ի քաղաքն Սէլով:... Գրեցաւ ձեռամբ մեղաւոր Անտոն եպիսկոպոսի և վարդապետի թվ. ՌՃԳ մարտի ամսոյն ԻԱ, օրն չորեքշաբթի. միշնաց աղուհացիկ:

1657.

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ Շարակնոցս ի յաշխարհս Իւլախաց Ջամոչչայ. ի թվին ՌՃՉ, նոյեմբ. 9, օրն երկուշաբթի. բայց գրեցաւ ձեռամբ թերավարժ ձաբրտող նօտրիս գրչի, հոգս մեղապարտ Նիկոլ երէց կոչեցեալ անուամբ և ոչ գործով ի կարգ քրիստոնէութեամբ. անպարապ անձամբ ձեռնարկեցի. և ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Յակոբին և յառաջնորդութեանն արհիեպիսկոպոսին Տէր Նիկողայոսին Թորոսովից, և ի թագաւորութեան գրուլ Փաժվիրին, և իշխանութեանն Ջամոչչայ քաղքի եան Ջամոսքիյ: Գրեցաւ ի դուռն Ս. Ննջման Ս. Աստուածածնի և այլ սրբոց եւ սպասաւոր Ս. եկեղեցւոյս ժամանակիս մեղսաբաւիչ քահանայից, աշխատաւոր և ծերացեալ ալեօք 94ամեայ Տէր Յակոբ քահանայի, և միւս այլ Տէր Յովանէս պատուական քահանայի, որ է որդի Ֆրիմոսատուրի Կաֆայի քաղաքի: Նա և թէ արժանի համարիք զոկարս անարժան և զփծուն գրիչ Նիկոլ երէց ցաւակցաբար յիշել ի սուրբ և ի փառաւոր յատեան. երես անկեալ կու խնդրեմ զգաղափարողդ, որ մեղադիր չլինիք նօտրիս. զի ծերացեալ ալեօք գծագրեցի 60ամեայ գոլով. աչքս ի լուսոյ էր պակասեալ և զգայարանքս ի յուժոյ. կ'աղաչեմ որ անպարսաւ թողուք, և զմեզ յիշէք յերկնաբացիկ աղօթս ձեր, և զծնողս իմ՝ Մուրատն, և զմայրն իմ Եահուան, և զերիցկինն իմ հանգուցեալ Մարիամ, և այլն: [Ի Ս. Ղազար]:

1657.

Հայոց թվ. ՌՃՉ, նոյեմբերի ԻԷ, մեռաւ Զոսիմա արեղայն ի Լով քաղաք, մահտարաժամ մահուամբ. Աստուած իւրն ողորմի. ամէն: — Գուրէլոյ Ռէչնովէցքի:

1659·

Գրեցաւ գ/րքս որ կոչի Ա. որս, առեալ Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, ի լաւ և յընտիր օրինակէ, ի վայելումն և յիշատակ բարեմիտ և ուսումնասէր բանասիրի Տեառն Յոհաննէս հեզահոգի ընտրեալ քահանայի, որ մականուամբ կոչի Քարմատանենց։.. Գրեցաւ սա ի Թուին Հայոց քառեցս յինանակի և Գ յոբելինի, այլ և եօթն աւելորդի, օգոստ. 12, ի տիրախնամ և աստուածապահ մայրաքաղաքս Լէվ կոչեցեալ, ի դուռն Ննջման Ս. Աստուածածնի, ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Սիմէոն դպրի Ջամոցացոյ։.. [Ա. Մխիթար. վ/ևևայ]։

1662·

Պատճառին ամենայնի և գոյացուցչին զմարդն՝ ըստ իւրում պատկերին, և զնոյն վերստին նորոգողի ընդ ինքեան ի մի՝ ըստ անսահման սահմանի, անճառ և անհաս խառնմամբ նոր իմն եղանակի, յաւէտամատոյց գոհութիւն, մշտնջենաւոր փառատրութիւն տացի և վերառաքեալ հատուսցի. որ կարողացոյց զտկարս և զօրացոյց զ'ի բարեաց վերջնոտնեալս զՍտեփանոս Իլովացի, հուսկ յետինս ի բանասիրաց, գծագրել մատամբ իմով զերանապարփակ և զամենատարփակ մատեանս, զչորեքծագեան տիեզերաց համաքարոզ տառս, որ ընդ կենսակիր և նօթճալուր ներգործութեան իւրում՝ Աւետարան մակագրի. և այլն։ Սկզբնաւորեալ աւարտեցի զհոգեկեցոյց տառս աքանչելի՝ ի ստուգագոյն օրինակաց նախնեաց ցայս վայր հասելոց. իսկ ոսկենկարէնս իմն տեսակաւ զարդարեալ ետու դեղապատճէն արարեալ ի գոյնս վայելուչս, և բանգազան որակօք երփնազարդեալ ըստ արհեստից յօրինմամբ. և բոլորապէս ի կատարումն ածի, ի գովութիւն ամենակատար Էին Ցիսուսի Քրիստոսի։ Բայց գրեցաւ ըստ ամի մարմնառութեան Բանին կենարարի՝ հազարերորդի վեցհարիւրորդի վաթսներորդի և մէ միակի, և ըստ հայկայինս շրջանի Ռդի ճգի թուոյ, ըստ տասանց առ նոյն յարողի, ի գահ իմման Միածնի ի վաղարշապատ քաղաքի, ի հայրապետութեան Տեառն Ցակոբայ սրբազանի։ Ջեռնարկեալ էր յառաջագոյն գայս տուփ մատենիս գրել Մովսիսի վարդապետի սիրելոյ իմոյ և ուսուցանողի գայս արուեստ. յորմէ սակաւուք ինչ գտեալ՝ նիւթ և պատճառ եղեւ իմոյս բովանդակութեան։ Վասն որոյ յիշեցին ի վայելողացդ և ընթերցողացդ բարեսէր կամօք նախկին առիթք սորին տառի, և Ստեփանոս բանասէր բազում հոգացողութեամբ զրոյ և ստացող պատուականս մարգարտի, հանդերձ ծնողօք և համօրէն ընտանեօք։ Արդ զայս փափագելի կենսունակ սուրբ կտակս ընծայեցի ի դուռն Ս. Աստուածածնին եկեղեցւոյ Իլովայ մայրաքաղաքին, ի պայծառութիւն հարսին Քրիստոսի և ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ, և ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն՝ Պր. Վարդանին և մօրն՝ Կատարինեայ, և եղբարցն և քերցն, և այլ ամենայն զարմից իմոց, կենդանեաց և ննջեցելոց։ Վասն որոյ, մի ոք համարձակեսցի զայս հանել։...

1668·

Գրեցաւ Պատարագամատոյց տետրակս ի վայելումն Տեառն Յակոբայ երջանիկ քահանայի, ի Թվիս մերում ՌՃ և վեցտասան, յապրիլ ամսոյ Հռովմայեցւոց 23· ի հայրապետութեան Հռովմայեցւոց Տեառն Աղեքսանդրու Է· ի կաթողիկոսութեան որ ի Ս· Էջմիածին Տեառն Յակոբայ, և յարհիեպիսկոպոսութեան Տեառն Նիկողայոսի· ի թագաւորութեան Եան կազմիրի, երկիրս Լեհաց, ի մայրաքաղաքս Լով, և ի դպրատանս Հայոց· Ջհանդիպողաց՝ յիշել աղաչեմ յաղօթս՝ գգրիչս· [ի Հռովմ]։

1672·

Գրեցաւ և կատարեցաւ սուրբ երգարանս մարգարէին Դաւթի՝ ի քաղաքս ի Վարշաւ, ձեռամբ անարժան և բազմամեղ Ոսկերիչ Գրիգորի· զի յայսմ ժամանակի փախստական եղաք ի ձեռաց հակառակողաց Ս· Խաչին Քրիստոսի· և այս եղեւ ի գալստենէ Փրկչին մերմէ ի Քրիստոսէ ՌՈՀԲ ամի, օգոստոսի 16ին· Եկեալ ազգին տաճկաց և տիրեցին զԱմենից· և յետ հինգ աւուրց եկին չարքն հասան ի քաղաքն Լվով· ութ օր և ութ գիշեր պատերազմեցաւ թուրքաց ազգն և քաղաքացիքն ի հետ միմեանց, մին օրն և մին գիշերն հինգ վեց հարիւր թօփ քաշեցին առ միմեանս, թող թէ զանհամար թուփանկն։ Գոհանամ զառատ ողորմութիւնն Աստուծոյ, որ ոչ ետ ի ձեռն չարեաց զքաղաքն և զքաղաքացիս, և զսուրբ եկեղեցիքս պահեաց ողորմութեամբն իւրով։ Եւ յետ այսոցիկ 80,000 ղուռիչ կտրուածք արարին քաղաքացիքն և տալու եղան Տաճկաց՝ որ ելանեն և գնան· և Տաճկաց փաշա մի կար ի հետ իւրեանց, որ էր չարագլուխ, և անուն նորին կոչէին Ղափլան փաշայ· նա 80,000 ղուռիչի խապուղ կեցաւ, և ութ հոգի դրաւակ տվին· էառ գնաքա և ելեալ գնաց, մինչեւ առցէ զ80,000 ղուռիչն, և զայն ութ հոգին ի հետ դարձուցանէ· Այն ութ հոգին էր՝ երկուքն Լեհ, երկուքն Հայ, երկուքն Ռուս և երկու այլ Հրեայ· Եւ յետ այսորիկ այսքան որ ահ և դողումն և սով քաշեցին Լովու քաղաքացիքն՝ որ մերձեցաւ ի մահ, և յետոյ խորհեցան փախչել ի քաղաքէն Լովէ, վասն այսորիկ՝ եթէ լինի թէ տաճիկ ազգն դառնայ և կրկին անգամ գայ ի վերայ Լով քաղաքի, կէսքն քաղաքացւոց կամ թէ այլ աւելի փախստական եղաւ· որքն կոչեցին (չուեցին) ի Գրագով, և որքն գնացին ի Տանցկայ, և մին բաժին այլ եկին ընդ մեզ ի Վարշաւ։ Եւ եկեալ տեսաք զքաղաքն Վարշաւ, որ ոչ ունին իւրեանց առանձին եկեղեցի մեր Հայոց ազգս, և ոչ մին փոքրիկ աղօթատեղի, և ոչ մին հայգրուց քահանայ, և կամ մին խրատիչ, որ նովաւ մխիթարին։ Եւ ես նուաստ ոսկերիչ Գրիգորս՝ խորհեցայ ի մտի իմում, թէ լաւ էր որ մին Աղմոսարան լինէր ի ձեռին իմում՝ որ մխիթարէի· սկսեցի զԱղմոսարանս, ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի, այսպիսի խոշոր և կոպիտ գրով· մի՛ մեղադրէք, զի կարկաս այսքան էր՝ այս հոգաբեր տարոյս· և ունիմ ասել

այլ զպատճառս. առաջին պատճառ, որ ոչ եմ բնիկ ի յերկրէս, և ոչ գիտեմ զլեզու սոցունց, այլ որպէս համր կենամ. երկրորդ, ի մէջ զարիպութեան ոչ ունիմ ծանօթ և օգնիչ և կամ մխիթարիչ. բայց միայն ունիմ զարարիչն իմ Աստուած. երրորդ, ունիմ զծերութիւն, որ և մերձ եմ ի մահ. չորրորդ պակասաւոր եմ, ունիմ զաղքատութիւն հոգով և մարմնով. հինգերորդ, որ աչքս ոչ ունի պարզ և յիստակ տեսութիւն, զի սակաւ տեսանէ վասն ի ծերութենէ. վեցերորդ, որ կայ ի վերայ իմ մեծամեծ քան զչափս աւելի սուգ և տրտմութիւն. վասն այնորիկ եթէ հասեալ է որ մահուս, և անկարծ մեռանիմ ի յերկիր օտարաց. ոչ կայ գերեզմանատեղ Հայոց ազգիս. տա՜ բեալ ինձ ցուցանեն ի խոր վիրապ մի, և լինիմ մարմնակորուստ: Ահա այս՜ քան սակաւաք ճառեցի զորպիսութիւն մեր. անմեղադիր լերուք վասն իմ մեղուցելոյս: Եթէ ի միջի սաղմոսարանիս սղալութիւն գտցի, այն ոչ է ի կամաց, այլ ի մոռացմանէ և կամ կասկածանաց սրտի մերում եղեալ էր: Վասն որոյ խնդրեմ առ ձեզ, ով հանդիպողք գրոցս, հայրք և եղբայրք, նե՜ րել և զպակասն լնուլ և զաւելորդն յապաւել, որք թէ հմուտ էք արուեստի և մակացութեան, և զմեզ պահել անմեղադրելի: Ողջ լերուք ի Տէր. ամէն. եղիցի: — Կատարեցաւ երգարանս ի թվին Հայոց ՌՃԻԲ, ի դեկտեմբե՜ բի ամսոյ ի օրն հնկետասան. ցիսուսի Քրիստոսի մարդացելոյն փառք և պա՜ տիւ յաւիտեանս. ամէն:

Ո՛վ ընթերցողք սուրբ Սաղմոսիս
Եւ հանդիպողք այսըմ գըրիս,
Հայր մեզայ մի խնդրէ Գրիգոր գերիս
Եւ բազմամեղ ողորմելիս.
Վարձըս տայ ձեզ յայնմ յաւիտենին,
Ցորժամ ասէ. Ցարի՛ք առ իս:..
Զեռըս փըտի ի հող դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մընայ:

Ի Թվին Հայոց ՌՀ ամի սամառնացաւ (?) ծովն բովանդակ, մինչեւ գնաց հասաւ ի ովկիանոսի մեծ ծովն, փետրվար ամսոյն մէկէն մինչեւ ի մարտի ամիսն. վասն գիտութեան լինելոյ՝ զպաղն ծակեցին և առին գչափն, որ և իրեք կանգուն և կէս էր թանձրութիւն պաղին: Սով եղաւ Ըստըմպօլ. 25 դրամ հացն՝ մէկ ստակ, այն այլ հող և մոխիր էր:

Թուականութիւն Թուրքաց ժամանակաց (յառմանէ Կ. Պօլսի՝ մինչ իր ժա՜ մանակն)։... Յետ այնորիկ (Իպրահիմի) նստաւ Իպրահիմի որդի Գ Մահմատ անուն, որ էր Հայոց Թվին ՌՂԷ. որ եկաւ առաւ զԳամենից, և այժմ հա՜ կառակութեամբ պատերազմի ընդդէմ Լեհաց երկրի: Վերջ: [Սաղմոս ի Մո՜ ւսագոյ Պաւիերայ [1]]:

1. Գրած է և առանաւոր գովեստ Սաղմոսաց, յորում գրէ զինքն «Ոսկերիչ Գրիգոր Ըս՜ տամպօլցի»:

1673·

Օրհնեալ ես հարս Աստուածորդւոյ, Որ ծնար զերկնաւոր Որդի
Նըմին վիմի Հոգոյ Սրբոյ· ի պըսակել այսմ աշխարհէ·
Ուրախութեամբ մեղ հիմն արկեալ· Որք ցնծութեամբ ապաւինին՝
Փառք տաճարիս Լեվա եղեալ· Սուրբ Կոյս, օգնեա նոցին։

Նկց (նկարեցաւ) ի թվ. ՌՃԻԲ, օգոստոս ամս. ԺԷ։ (ի Լեհկերկ, ի վերայ բիբեղնեայ պատկերի Տիրամօր. տողագլուխք գրուածին կապեն Օնոփրիոս)։

1673·

Գրեցաւ և կատարեցաւ ժամագիրքս թվ. ՌՃԻԱ՚ն, ձեռամբ յոգնած մեղ փցուն գրչի·· Գրիգորի. որ միայն անուամբս եմ և հեռի ի ճշմարտութենէն... Սկիզբն կալայ գրել Դաւթեան երգն և գԺամագիրքն և զՏօնացոյցն և զՇարականքն՝ մինչեւ ի Աղուհացոն վեցերորդ կիրակին, «Որ զերկրորդ քո գալստեանդ» և այլն. ի տղայքն աշակերտքն գրեալ են. և խընդրեմք անմեղադիր լերուք. ոչ թէ ծախսի էր գրեալ, այլ յիշատակ որդւոյս Մխայէլին՝ դեռաբոյս մանուկին, որ եօթն տարւոյ և երկու ամսոց էր, Մինաս արքեպիսկոպոս ձեռնադրեց զպիր· Ով ոք չունի իշխանութիւն ուրիշ որդիքոցմուս, որ դորա ձեռանէ առնուն, այլ դորա լինի յիշատակ և վայելէ անասան կենաց. ամէն։ Որպէս զսկիզբն սկսայ գրել, նոյնպէս և վերջն կատարեցի։.. Կատարեցաւ թվ. ՌՃԻԱ՚ն, ապրիլ ամսոյ երեքին, օրն մեծ չորեքշաբաթի մատնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Թվին ՌՃԻԹ (1631) յունվար ամսոյ ԻԸ, կազմեցաւ ձեռամբ անարժան Աստաձէս երիցս., ի նորաշէն քաղաքն Սդանիսլաւ, ի վայելումն սիրելի եղբօրն իմ և իւր զաւակացն, որ են՝ Տէր Գրիգոր ընտիր և պատուելի քահանայն. Տէր Աստուած բարով վայելել տացէ իւրն և իւր զաւակացն ընդ երկայն աւուրս։ Աղաչեմ զձեզ մի՛ մոռանայք մեկ Հայրմերիս.. ամէն։ [Մըխիթար. վ[ի]ենայ]։

1676·

Սրբազան դասք երջանիկ վարդապետաց, արհի և պանծալի եպիսկոպոսաց, մեղաւաքաւիչ և իմաստուն երիցանց, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զպանդըխտացեալ և տառապեալ մեղսամածեալ՝ անուամբ և եթ Մինաս բանի սպասաւոր, երկրին Պուղտանա առաջնորդ. որ զդիրքս գտի եաշ քաղաքն, կարատեալ ի յայլազգեաց, և առի յիս, և զպակասն գրեցի ձեռագ իմովք, առ ի յիշատակ անձին իմոյ և ծնողաց իմոց, Թօխաթցի Տէր Ալէքսիանոսին, և մօրն իմոյ իրիցկին Թասխաթունին. միով ողորմի ասէք և յիշեցէք· զի

կարողութիւնն իմ այսչափ էր. մի՛ մեղադրէք. զի ի մանկութենէ տկարութիւն ունիմ. վասն այն ոչ հետեւեցա ուսանել զդիրն. այլ գրեցի զդիրս ի երկրին Մաճառաց, ի գիւղաքաղաքն Ճուրճով. իշխանութեան երկրիս Ըշտեֆան Լազարին. ի դառն ժամանակիս որ սուլթան Մէհըմէտն որդին Իպրահիմին՝ վասն ծովացեալ մեղաց մերոց եկաւ ի վերայ Լեհաց և Գազարաց երկրին վերա, և Պուղտանաց երկիրն (յ)երթեւեկողաց հեծելոց Տաճկաց և Լեհաց աւերեցաւ. Տաճիկն Լեհաց երկիրն կ'աւիրէր՝ ամառն, ձմեռն՝ Լեհն գայր Պուղտանաց երկիրն կ'աւիրէր: Եւ ես տառապեալս վասն սիրոյ սուրբ եկեղեցեացն՝ վանիցն չէի հրաժարեր. մինչեւ երկիցս անգամ կողոպտեցին. ապա մերկիկ գլխիբաց՝ մօրթի մի քամակս կապեալ՝ փախեա ելա երկիրս Մաճառաց. կէս մի ժողովրդոցս աստ փախեալ էին: Մինչ Աստուած ողորմի երկրիս Պուղտանաց, որ խաղաղութիւն տայ թագաւորաց, զի մի՛ օտարութեամբ մեռանիմք: Այս գրեցաւ թվին ՌՃԻԵ. սեպտեմբեր ամսոյ Ե: [Մաշտոց ի Մ. Ղազար]:

1678.

Սա է տապան ողորմած հոգի Մխիթարունին, կողակցուն Պարոն Յակոբին, մահտեսի Մինասի որդուն, եաղլօվա քաղաքին երեսփոխանին. յանգեաւ ի Քրիստոս Թվ. ՌՃԻԶին, ամսոյ ապրլի Զ. օրն ուրբաթ: [ի վարսապահա, յեկեղեցւոջ Դոմինիկեանց]:

1679.

Գրեցաւ գիրս ձեռամբ Աբդադէս եաղլովցացի իրիցու ի քաղաքն Սիլիստրէ, ի թվականիս Հայոց ՌՃԻԷին, յուլիս ամսոյ ԺԷին, օրն երկուշաբթի:

1683.

Որ ինչ ի գրքի աստ պարունակին՝ ժողովեցան յինէն ի զանազանից գրոց և ի տետրակաց հնացելոց, մինչ պանդխտանայի ի վերին Հայս, և ի մի պարփակեցան. ոչ իբր զի իցեն վէպք ուղղաշաւիղք և փորձեցեալք ի մէնջ իբր այնպիսիք. այլ զի սովոր եմք ի բանից հակառակացն առնուլ մեզ զէն ընդդէմ նոցին, և զի բազում ինչ ի սոսում գտանին և վկայութիւնք եւս. և այլն... Ես (Վարդան Ցունանեան) ոչ հեղինակ սորին՝ այլ հաւաքող միայն եմ. որպէս և զբազումս զայլս գրեանս ընդօրինակեցի ի Հայոց երկրէն, զոր չէին աստ յերկրիս Լեհաց, վասն չատագովութեան կաթուղիկէ հաւատոյ ընդդէմ ոմանց հակառակասիրաց մերազնեայց: Ողջ լերուք. 1683: — [ի Մ. Ղազար]:

1684-5·

Շնորհօք ամենազօրին Աստուծոյ և սիրով Ս· Հոգւոյն կենարարի՝ աւարտեցաւ Մաշտոց ի թվին ՌՃԼԳ, ի քաղաքին Խսլուխ, ի հովուապետութեան Տեառն Եղիազար կաթողիկոսին Էջմիածնի, ձեռամբ մեղապարտ անարժան և անիմաստ գրչիս Ըստամպօլցի Տիրատուր գրչի··

1684·

Ցանկ Մաշտոցիս զոր է գրաց
Զոր դուք կամիք գըտէք թված·
Մի՛ ձանձրանայք աշխատանաց·
Սորա մէջ չատ գանձ է պահաց·
Բարթամութիւնս եկեղեցւոյ
Մեր ուղղափառ սուրբ հաւատոյ·
Որպէս պարտէզ լի պտղով գոյ,
Կու տայ ծաղիկ պէսպէս գունոյ·
Հոգեւոր գոյնքըս զարդարեն
Հոգիս մարդկան մխիթարեն·
Որք ի մեր Լուսաւորչի են՝
Ի մեր Սուրբ Գրիգորըն լսեն·
Մեր Հայոց ազգիս պարծանք է·
Որք եւթն խորհուրդ կատարէ,
Մաշտոցըս զայս թող լաւ պահէ,
Որ Հովմայնցւոց ուղղափառ է:
Լեհաց երկիրըս սիրեցի,
Ի Լով Մաշտոցըս գըրեցի,
Ի ազգիս մերոյ մատուցի·
Քահանայից գործիք լիցի,
Ի թվականիս Փրկչին մերոյ
Հազար և վեց հարիւր թվոյ·
Ութսուն և չորս նոյն համարոյ·
Ցուլիս երեսուն· վերջն է ծրոյ:
Ես Տէր Ցակոբըս անպիտան
Ի Գրիգորենց մականուն տան·
Աննարհեաւ գիրս որք ստանան,
Իբր անարժան առնեն յիշման:
[Ի Մաշխատեքեաւ գրատան Ֆիրենցայ]·

1684·

Ձեր և ամենեցուն եմ ծառայ պատրաստական՝ Վարդան
Ծընունդ Գրագրոյ, [ծունանեան,
Սընունդ Թոխատու՝ որ մերձ Կոմանու·
Վարժեալ զհայկականն ի Վաղարշապատ
Եւ զհռոմէականն ի Լէօնապատ,
Ի վարժարանի մեծ Վենետկին
Օծելոյն Փրկչի երեսփոխանին·
Որ զայս դուզնաքեայ ձեռ նուիրեցի,
Գրաւական միւսոյն զոր վերոյ գրեցի՝
Ի ներմարմնութեան Աստուծոյ Բանին
Հազար և վեցհարիւր 84 ամին·
Իսկ ի հայ թուին որ եղաւ ի Դուին,
Հազար և հարիւր երեսուն երեքին·

Ըստ որում Թուի ի բաժանմանէն
Ի Հռոմայեցւոց և յունականէն։
Օ՛չ, Թէ վերստին առ նոյն դառնային,
Եւ միոյ մարմնոյ անդամք լինէին.
Ամէն եղիցի, և մի յամեցի։

[Ճիշտակարան գրոց Աղպերտի]։

1686·

Ես Մինաս վարդապետ Թոխաթցի, որդի Զիլիֆտար Տէր Ամբասանին, ա-ռաջնորդ Պուլտանոյ, տամ զայս Թուղթս՝ որ է իմ ձեռագիր, Բան Քրիս-տոճ Տէր Զաքարիայի որդւոյն որ է ինքն դատաւոր Լովու Հայոց· Թէ զիարդ մեռանելով եղբօր նորին Բան Խաչկոյին՝ ի յերկիրն Պուլտանայ, գիրք նոյն Բան Խաչկոյին անկան ի ձեռս իմ. այսինքն մէկ ճառընտիր ձեռագիր, զոր այժմ ուղարկեալ եմ ի Թոխաթ, և մէկ Հարանց վարք ձեռագիր՝ որ կայ ի մետս, մինչ կենդանի եմ. զորս խօստանամ ուղարկել Բան Քրիստոսին ի Լովի քաղաք։ Այս (բանիս) վկայ Վարդան վարդապետն առաջնորդ Լովայ քաղաքին, և Տէր Օքսէնտ վարդապետն Պօլանցի. զոր ձեռամբս իմոյ գրե-ցի, ի Թվին ՌՃԼԵ· ի հոկտեմբերի Ի· Լովի քաղաք։ [Պատարագատետր գրեալ յԱչմիածին]։

1688·

Այս է տապան Պարոն Յակոբին մահտեսի Մինասի որդուն, Եպլօվու եւ-բեսիոխանին. յանգուցեալ ի Քրիստոս· Թվ· ՌՃԼՉին, յունիս ԻԲ։ [Ի վար-սաւիա, յեկեղեցւոջ Դոմինիկեանց]։

1688·

Ցիսուսի Քրիստոսի չնորհօքն վերստին նորոգեցաւ սուրբ Աւետարանս, արդեամբք բարեպաշտ եղբարց Սրբոց Հրեշտակապետաց, վասն պայծառու-թեան սրբոյ եկեղեցւոյ մայրաքաղաքի, որ է Կամենից· ի Թուոյ Փրկչին ՌՈՉԸ, և ի գիւտ գրոց Հայոց Թվ· ՌՃԼԻ ամաց· սեպտ·ծ։ Պք· Տէր Օն· կր։ (Նոյեմբրիոս կրօնաւոր)։ [Աշտարան առ Մխիթ· վ. Հեճայ]։

1728·

Յոհաննէս Տօբիայ Ալկուսդինօվիչ՝ Աստուծոյ և առաքելական աթոռոյն (չնորհիւ) արհիեպիսկոպոս Լէօպօլսի, և ընդ բոլոր թագաւորութեանն Լեհաց և մեծի դքսութեան Լիթվանիոյ, Հայոց եպիսկոպոս Մոլտավիոյ նոյն ազգին Հայոց, սրբազան փափին մերոյ Բրիւլոդ ընտանի և Ազնիւ եղբայր· յորմէ հետէ աս-

տուածային պթուլթեամբն յարհիական աստիճան բարձրացաք, պատշաճաւոր հոգ յանձին կալաք ըստ սրբազան ժողովոց վճռացն, առաքինորդական պաշտամանս մերում բաւական առնելով, զբարեկարգութենէ եկեղեցեացս մերոց բուռն արկանէաք. և քանզի եկեղեցին Աստուածոյ ոչինչ սրբագոյն և գերազանցագոյն ունի քան զսուրբ խորհուրդս, զորս Քրիստոս Տէրն մեր վասն փրկութեան աղգի մարդկանս սահմանեաց, զիրքն հաստարակաց Մաշտոց կոչեցեալ, յորում կարգն պաշտելոյ զսրբազան խորհուրդս և զայլ արարողութիւնս կատարելոյ պարունակի, տրամադրել յանձն առաք. զոր ձեռն աստուածաբանից մերոց, եւս առաւել պատուելի Տեառն Ստեփանոսի Ստեփանեան աստուածաբանութեան վարդապետին. զհին ձեռագիր Մաշտոցս ընդ միմեանս բաղդատելով, և իբր զանհուն սխալանս՝ որք ոչ միայն ընդդէմ իմացման աղօթիցն՝ այլ և ընդդէմ իսկ ուղղափառ հաւատոյս մերում սփռեալք էին՝ սրբագրել, և զսրբագրեալսն կարգաւ յօրինել, նա և զհարկաւոր խրատսն իւրաքանչիւր խորհրդոցն և արարողութեանցն յառաջ դնել, և որ ինչ պակասէր ի մեր Մաշտոցն՝ ի հռովմէականէն՝ հետեւելով շաւղաց նախորդաց մերոց՝ առեալն առադրել ջանացաք: Արդ զի եկեղեցեաց մերոց հոգաբարձու բարոխքն (ժողովրդապետք) ի բաց թողեալք զայլ Մաշտոցս՝ այսու միայն, զոր մեք արհիական հեղինակութեամբ մերով առփորձեցաք և հաստատեցաք, այսուհետեւ վարեսցին. զխեղճ մտաց նոցին ծանրացուցանելով պարտաւորեմք: Գրեցաւ յարհիական պատատն մեր ի Լէօբօլիս, յամի Տեառն 1728, յապրիլի ամսոյ ԻԵ: — [ի Հռոմ]:

1728·

Բարոյական Աստուածաբանութիւն Ստեփանոսի Ստեփանեան Ռոչքայ, սրբազանի աստուածաբանութեան վարդապետի կամէնցացւոյ, ըստ գերիմաստ վարդապետացն հարազատ իմացուածոցն, հանդերձ դիպուածոցն մեկնութեամբ համառօտեալ ի Սդանիսլաւով. յամի Տեառն 1728, և Հայոց ՌՃՀԷ: [ի Հռոմ]:

1730·

Ես Տէր Սարգիս ի գավառէս Եկեղեաց յարեւելեան գուղն Տիրանաշէնու, որ եմ որդի Տէր Սահակի կրկ? ծառայ Տէր Ներսէս վարդապետի մեծին հար... Հայոց ՌՃՀԹ, գնեցի Ֆօշան պիտանի Կանոնաց գիրքս, որ է խրատ քրիստոնէից, և է անհաւատից. Տէր քաղցրացուցանէ սիրտ անդարցից և փորձ ի մեղաց. եկաւ քո ոտաց կոխ և անպիտան լոկ անուն կոչեցեալ Տէր Սարգիս, և է մեղօք շաղախեալ: Տէր Ցիսուս բարձցէ սիրտ քարեղէն, տացէ սիրտ մարմնեղէն. որ երկիւղիմ այն օրէն՝ որ համար յուզէ յինէն. Տէր Ցիսուս, ամենայն հաւատացեալք դարձո ի մեղաց. և արա քոյին սուրբ երեսի տեսութեանն (արժանի). ամէն: — Թվին Հայոց ՌՁՐին.

Մոսկով առաւ ՀԻԼԻ Հոթին ի ձեռաց, և աւերեց զՊուղտանու երկիրն և ոչ ի նոցանէ էր, այլ վասն ծովացեալ մեղացն մերոց։

1740.

Պօղոսի Բիւրոմալ մականուամբ քահանայէ չարագրեալ է Բառգիրքս այս, ի կարգէն Սրբոյն Տօմինիկոսի, որ ի Կախինեանու վանս բնակէր ի վաղընջուց ժամանակաց. ճշմարիտ, ով ընթերցող, զի սղալանք գտանին բազումք ի մէջ գրիս, բայց ճշմարիտ է եւս որ բազմապէս օգնութիւն գտցեն և առցեն ի սմանէ ընթերցողք նորաւարժք մանկունք, եթէ ունին զսէր ուսանելոյ։ Գիտելի է եւս, եթէ ոք կամեսցի զկատարելագոյն բառգիրք հայկական լեզուով ունիլ, նմա պարտ է որոնել զՄեփհաննոս վարդապետին չարագրեալ, որ յորջորջի Գանձարան լեզուին Հայոց, չարագրեալ մեծաւ աչխատութեամբ, այսինքն երեսուն և երրորդ ամս, մինչեւ աւարտեալ է գնա. երկու անգամ սրբագրեալ է, և յերրորդ սրբագրութեան հանգեաւ ի Տէր, (1740) ի Սահնիսլաւ քաղաքն Լեհաց։

ՅԱԻԵԼՈՒԱԾ Թ

(ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼԱԿԱՆ[1])

. . . . . ցաք,
Ներհակ ւանմիաբան կացաք.
Նենգիւ զմիմեանըս մատնեցաք,
Եղբայր զեղբայրըս խաբեցաք։
Քանի բանիկ մի այլ ասեմ
Վասըն Հայոցն՝ որք ի Լոմն են.
Չի հպարտ և անձնահաճ են.
Չի բնական Անեցիք են։
Իակ քահանայք որք ի Նմա կան՝
Գոռոզ յանդուգն ամբարտաւան.
Ոչ ումիք են նոքա հաւան.
Զտեսի յայլ տեղ սոցա նըման։
Զգիտեն բընաւ սահման ուսման,
Եւ չգիտեն զլեզուս Հայկեան.
Եւ զինչ կարդան՝ չիհասկանան.
Եւ գիտողաց վրայ խրոխտանան [2]։
Փարիսեցւոց նըմանեցան
Եւ չար դըպրաց Հրէիցըն այն,
Որք Քրիստոսի ընդդէմ դարձան
Եւ զնա ինքեանց մեծ չընկալան։
Այսքան չարեաց պատճառ եղան
Անմիաբան Հայք որք ի Լոմ կան.
Ինատ [3] արին, յանդըգնեցան
Զգեցին ըզմեզ ամենի ? [4] բերան։
Չի այսքան հարիւր ամք են [են.
Որ ազգս Հայոց ի Լեհ բնակեալ
Այսպէս կսկիծ բան տեսել չեն
Որ մեր գլուխս այժմ եկել են։
Այս փորձանացս ո՞րք պատճառ են,
Թէ ոչ՝ քահանայք՝ որք յիմարք են.
Որք զհայ լեզուն բնաւ չգիտեն.
Զեն հասկանալ, ծուռ իմացնեն։
Որպէս ասէ աւետարան.
Թէ կոյր կուրի յորժամ դիպան՝
Երկոքին ի խորխորատ անկան.
Այսօր ի մեզ բանքըս լըցան։
Երկու կենօք եմք մեք զըրկած
Եւ յԱստուծոյ աչաց ելած.
Չի յօրինաց եմք հեռացած
Եւ անհնազանդ պատուիրանաց։

1 · Այսպէս անուանեցինք զդրուածս, որոյ սկիզբն և վերջն այլ պակաս ըլլալով՝ մեր միակ ծանօթ օրինակին մէջ, անծանօթ մնայ բուն վերնագիրն և հեղինակն · որոյ այրած արտով բաւծներն՝ յայտնեն որ ժամանակակից էր · գնոյն յայտնէ և Վարդանայ Ցումնանեան անկէ առած վկայութիւնն (ա · եր · 127) · և թէպէ ի փոքր Հայոց կողմէն գաղթած : — 2 · Տես յեր · 129 Վարդանայ Ցումնանեան քիչ մ'այլայլութեամբ օրինակածը : — 3 · Ինաթ, թուրքարէն յամառութիւն : — 4 · Թերեւս գրուած էր ալ-ուրհ, կամ ալ-ուրհ :

Մեք թագաւոր չունիմք օծած,
Ոչ իշխանութիւն մեզ տրւած,
Յամէն ազգաց եմք մեք կոխած,
Քրիստոնէից եւ յայլազգաց։
Չունիմք աթոռ ըստ օրինաց,
Ոչ առաջնորդք ի վրայ խելաց.
Ամէնք խըմած են ու հարբած,
Մամոնայի ծառայ եղած։
Չինչ որ կ'ասեն՝ ինքեանք չառնեն,
Եւ վասըն դրամի քարոզեն.
Յամէն քաղաք ժողովք կ'առնեն,
Ով որ քիչ տայ՝ կու բանադրեն։
Կ'ուտեն խըմեն, կ'ուրախանան,
Վասն օրինաց բնաւ չըհոգան.
Չոչխարս ձըգեն գայլոց բերան,
Փրկել զոգիս բնաւ չիմանան։
Վայ և եղուկ հազար բերան.
Չի Հայք հոգով մարմնով կորան.
Ո՛ւր են նախնի հայրապետքն այն
Եւ քաջ հովիւքըն սըրբազան.
Որք վասն հօտին զանձինն եդին,
Չգայլս և զգազանսըն փախու-
[ցին.
Ըստ բանի Տեառն Յիսուսի Փըրկ-
[չին,
Արքայութեան ժառանգ արին։
Այժմըս հովիւք՝ վարձկան եղեն,
Տեսեալ զգազանս՝ ի յետ փախչեն.
Գազանք զգառինս յափշտակեն
Եւ պատառեալ զնոսա ցրուեն։
Որպէս այժմուս հազար թըւին
Եօթանասուն հինգերորդին,
Եկն Մելքիսեթ քաղաք Լովին.
Կորոյս ըղմեզ զամենեսին.
Բազում վընաս յիւրմէն տեսաք,
Շատ և յոլով տուգանք տըւաք.
Անթիւ արծաթ ոսկի տարաք,
Թէ նովաւ զհոգիս փրկէաք.
Իսկ նա բընաւ ամենեւին
Չառնէր փոյթ փրկել զմեր հոգին.
Կոչէր առ ինքն զամենեսին,
Թէ ձեռնադրեմ զձեզ՝ զի՞նչ տայք
[ինձ։
Վանքերն այլ աբեղայ չիմնաց.
Ամենքն եկին իւրեանց յետևանց,
Ղուռուչ դեկան բերին հիտրաց[1],
Լինել Պարոնտէր[2] թարց թեմաց։
Դըպիր մ'այլ կայր ի յայս տեղաց,
Նիկոլ անուն Թորոսովեաց.
Որ ի Սամսիոլ ելեալ գընաց,
Մըտաւ ի կարգըն աբեղաց.
Լըւաւ զհամբաւ երկրին Լեհաց,
Թէ Մելքիսեթն չատ ձեռնա-
[դրեաց.
Փութանակի Լով ժամանեաց,
Մելքիսեթին աչակերտեաց։
Իբրեւ ամիսք քանի մ'անցին,
Մելքիսեթն ասաց Նիկոլին.
« Քանի՞ հարիւր մաղխլ տաս ինձ՝
Չքեզ առաջնորդ դնեմ Լովին »։
Ասաց. « Երթամ յազգականքն իմ,
Գերց և եղբարց ասեմ վասն իմ »։
Նոքա լըւան և խընդացին,
Չսէֆէրն առ նա յուղարկեցին.
Չոր յետ բազում երթեւեկին՝
Հարիւր յիսուն ղուռուչ կտրեցին.
Հետ մէկմէկի թուղթ գիր արին,
Որ յետ շաբթու մի օրհնէին։
Իսկ ժողովուրդն երբ լըսեցին,
Քահանայք՝ զամբոխս կուտեցին,
Օրհնելուն ժամն վանքն գնացին.
« Այս ինչ բաներ կ'անես, ասին.
Մեք զնա չուզեմք, ոչ կ'ընդունեմք
Ոչ յեկեղեցիս մըտանեմք.
Չըլնի թէ զնա օրհնես մեզի.
Թէ չէ նա՝ չատ աղմուկ լինի »։

1. Հետ իրերաց. իրենց հետ։ — 2. Եպիսկոպոս ըլլալ առանց թեմ ունենալու։

Կաթողիկոսըն քան խըրած՝ ?
Մըտիկ չարաւ նոցա խօսաց.
Ըսաբեց զնոսա, ասաց. « Գնացէք.
Չեմ օրհներ զնա՝ երբոր չուզէք » :
Ժողովուրդն ի տուն գնացին,
Նորա խօսացն հաւատացին.
Իսկ նա ելեալ մէջ դիշերին,
Չնիկոլն գաղտ ձեռնադրէին :
Ընդ արշալուսն առաւօտին
Եկեալ քաղաքն իմաց արին.
Քահանայք՝ զամբոխ վերուցին,
Փութով ի վանքըն դիմեցին :
Մելքիսեթեկն երբ զայն լըսեց՝
Մըտաւ ի խուցն, դըռվին ախեց.
Քաղցըր ձայնիւ պատասխանեց,
Ապա ի սիրտըն ոխ պահեց :
Մըտին ամենքն յեկեղեցին.
Չինչ յիշոց կայր՝ նոցա տըվին.
Եպիսկոպոսք հարեղանին՝
Ցոյժ վախեցան և լուռ կացին :
Չնիկոլն ուզէին բռնէին
Կըտոր կըտոր զնա առնէին.
Հազիւ զերծեալ ձեռաց նոցին,
Մտեալ սաքրեստան [1] ախեց դըռ-
[վին :
Բազում ջլաս անդ գործեցին.
Կամէին զդռվին կոտորէին.
Մինչ Մելքիսեթն ներքուստ ձայ-
[նեց,
Թէ, զնա հետ մեր տանիմ, ասեց :
Ապա զամբոխն համոզեցին
Եւ զխռովարարն հաշտեցուցին.
Ամենեքեան ի տուն գնացին,
Խաղաղ Լովիք քաղաք մըտին :
Ծեր ւալեւոր՝ էր մոլորած,
Օրն երեք հետ լինէր հարբած.
Եպիսկոպոսք ունէր խուզած
Գան զձէլալի հանած վարած :
Բայց Մելքիսէթն ւ իւր ընկերին՝
Որք ունէին ոխ ի սըրտին,
Հնարս իմացան ընդ համախոհին,
Բանադրանք Հայոց գրեցին.
Թէ, « Եկին զվանքն կոխեցին,
Սըրօք բըրօք ի ներս մըտին.
Ի մեր վերայ սուր քաշեցին,
Մելքիսեթին՝ ձեռք վերուցին » :
Ապա Հայերըն վախեցան
Եւ ի յերկուս բաժանեցան.
Մի կողմն կաթողիկոսի եղան,
Մի կողմն չիւար նըկուն դարձան.
Ժողովեցին յոլով դեկան,
Աթոռ բազում առեալ տարան,
Արտասուելով ոտքըն անկան,
Ապա կապիճն արձակեցան :
Մելքիսէթ գնաց Եազլովցան,
Հետ իւր տարաւ զչար Նիկոլային.
Ասաց. « Ցեանուք թէ ինչ անեմ՝
Որ Լովրոցմէն վըրէժս հանեմ » :
Շըրջաբերնի [2] ետ Նիկոլին,
Թէ ամենքն քեզ հնազանդին.
Եւ որք զքեզ ոչ ընդունին՝
Իմ հրամանէս բանադրեսցին :
Եկեալ ի քաղաքըն Լովին,
Խրոխտ բանիւ սպառնայր նոցին,
Թէ, թուղթ ունիմ Մելքիսեթին՝
Որ ամէն Հայք զիս ընդունին :
Ժողովուրդն էր ի տարակոյս,
Եւ քահանայք մնացին անյոյս.
Ասեն. Վայ երեկ մեր գլխոյս՝
Երբ սա հովիւ կայ մեր հոգւոյս :
Եպիսկոպոս մանուկ ի տիս
Ունէր քսան երեք տարիս.
Հըպարտացաւ ի վրայ ազգիս.
Ասէր, թէ ջուր չընդունիք զիս :
Ժողովուրդն ալ յիրմէն երկեաւ,
Կաթողիկոսէն վախեցաւ,

1. Աւանդատուն : — 2. Շրջաբերական թուղթ, կոնդակ :

Զնիկօլն յակամայ ընկալաւ,
Թղթով գըրով հնազանդեցաւ։
Ցետոյ գացին դուռն արքային,
Պէրաթնի [1], էմրէր [2] հանեցին.
Նիկօլն է առաջնորդ Հային
Եւ հայրապետ Լովայ քաղքին։
Քանի մ՚ամիսք ի վրայ անցին,
Թղթեր Հռոմայ փափէն եկին
Ի ձեռըն Տէր Ցովանէսին,
Զուղայու աւագերիցին.
Թէ, կաթողիկոսըն Մելքիսեթ
Ընդ Ֆռանգաց ուխտ ու դաշն եդ.
Ձահուկ [3] գրքովք ձեռնադրանք ետ,
Զմեզ այլազգեացըն գերի ետ։
Ապա Լեհցիքըն մեզ ասին,
Մելքիսեթն թապի [4] է փափին,
Դուք ալ եկէք ի կրօնս Ֆռանգին.
Ապա չէք հնազանդ, ձեր գլխին։
Տեսէք, թէ ինչ բերին մեր գլխին
Սուտ անիրաւ առաջնորդնին.
Սուրբ հարքն վեզ արեամբ գնե-
[ցին,
Այժմուն վարձկանքըն կորուսին։
Կաթողիկոսն յետոյ մեռաւ.
Հայոց գլուխն շատ բան անցաւ,
Եպիսկոպոսն ալ զօրացաւ.
Ընդ աղգս Հայոց մաքառեցաւ.
Անօրէնըս խորհեցաւ.
Պատուիրանացն ի դուրս ելաւ,
Ֆռանկաց հաւատըն հաճեցաւ,
Լուսաւորչին չհաւանեցաւ։
Ելեալ գընաց ի Կամենից,
Եւ անդ արար ըզգործ սիրասից.
Ելաւ նա յԱստուծոյ աչից,
Զօրէնս Հայոց ետ կոխ ոտից։
Մինչ դեռ նա էր գործըս չարին,
Քակէր զօրէնս և զաւանդնին,
Հասաւ Գրիգոր Կեսարացին,
Ցանդիմանեաց զնա յատենին.
« Վասն էր քակես դու զկարգն
[Հային.
Ոչնչ չդնես դու կանոնքին.
Խախտիչ եղեր մեր սահմանին.
Հարցէ՛ զքեզ օձն անջըրդին » ։
Նիկօլն եղեւ նմա դիմադարձ՝
Մեծ վարդապետին դասասաց.
« Ես եմ ասէ էմրով նստած.
Իսկ դու ճիվ ես, հանած վարած » ։
Ապա եղեւ փըքով լըցած՝
Զինչ զպիղծ չուն և կատաղած.
Զեկեղեցին արար կպղած.
Զնա արտաքսեաց յեկեղեցեաց.
Ապա մօտ ստարօստան գընաց
Եւ զվարդապետն չարախօսեաց.
Ասաց. « Զաշուտ՝ թուրքէն եկած,
Խռովեցուցիչ, և մեծ հերձուած » ։
Պարոնն ղրկեց մարդ Գրիգորին,
Թէ, բերէք զնա իմ առաջին
Դատեմ ըզնա զինչ զհային. [5]
Ըստ Նիկօլայ դատախազին։
Ցօրժամ Հայերըն զայս լսեցին,
Ծերք և տըղայք դուրս վազեցին.
Գնացին ի բերդըն մօտ Պարոնին.
Ասեն. Ամենքս եմք տէր սըմին.
Սա վարդապետ է անուանի
Եւ պատրիարգ Ըստամպօլի.
Սուրբ է սրտիւ առաքինի.
Զուտէ սա միս, չըմպէ գինի։
Պարոն լըսեց և խմացաւ.
Զարաց երեսնին սեւացաւ.
Եւ Գրիգորն ի մեծ սուգ մտաւ,
Զեկաւ Լօռէն, այլ հետ դարձաւ։
Իսկ ժողովուրդըն դիմեցին
Ի դարպաս եպիսկոպոսին.

1. Հրովարտակ։ — 2 Հրամանագիր։ — 3. Ձահկեցոց կամ Ունիթորաց, իբր Թէ Լատինաց ծխով։ — 4. Թուրք. հնազանդ, հպատակ։ — 5 Թրք. մատնիչ, նենգաւոր։

Կ՝ուզէին գնա քարկոծէին՝
Թէ չէր տըվեալ զրաւնիք ժամին։
Իսկ ի վաղեան առաւօտին
Վախաց Նիկօլն ի յիւր սրտին.
Փախուստ արար դէմ ի Լովին.
Կորուստ հնարէր իւրոյ ազգին։
Իբրեւ ամիս ու կէս անցին՝
Գրիգորէն բանադրանք բերին.
Եօթըն թիւղ էր թուղթն որ ուվին.
Շատ նզովք ու անէծք կայր միջին։
Ժողովուրդն երբ զայն լսեցին՝
Պարանոիրէն հրաժարեցին.
Ցեկեղեցեացն ի բաց կացին,
Բանադրանացըն վախեցին։
Գնացեալ յետոյ ասեն նմին,
Թէ, « Եկին քեզ անէծք նզովին.
Գնա օրհնէնքն ա՛ռ Գրիգորին,
Որ զքեզ ընդունիմք կրկին.
Ապա թէ ոչ՝ չհնազանդիմք,
Առաջնորդի կարգն զքեզ չունիմք »։
Այս էր պատճառն առաջին
Որ սկիզբն եղեւ ամէն չարին։
Իսկ նա ասէր նմա չար յոլով
Եւ դիւահար զնա կոչելով,
Թուրք թլփատած անուանելով,
Ազգի ազգի հայհոյելով.
« Ես առաջնորդ եմ էմրէրով
Եւ տեղացի, լեհցի գոլով.
Մելքիսեդեկն եղ զիս ի Լով,
Եւ ես մեծ եմ քան զնա յոլով »։
Զբանադրանք նորա չընդունէց.
Զթուղթն ի յանարգ տեղի ձգեց.
Ցեկեղեցին համարձակեց.
Առջեւ խորանին աղօթեց։
Ֆահանայք երբ զայն լսեցին՝
Ժողովրդովք դուրս վազեցին.
Բնաւ այլ ժամըն չըմըտին,
Եւ ոչ զայն համբուրեցին.
Ժամըն մընաց դատարկ ունայն,
Եպիսկոպոսն երդէր միայն.
Եւ իւր օրհնած արեզակըն այն
Ամէն մէկ տեղ մի փախեան։
Նիկօլըն մնաց շիւարած.
Մէկ մարդ մի իւր մօտըն չի գնաց.
Ցամէն դիաց տարակուսած,
Մէկ մի իւր հետըն չիխօսաց։
Ապա մարդն յաղանին [1] յըղեաց
Ձամբու խարճլըխնացմէ խնդրեաց.
Երթամ մօտ վարդապետն, ասաց,
Մեղայ ասեմ, ընկնիմ յոտաց։
Աղաչք և ժողովուրդ խնդաց.
Տըվին դրամ ըստ իւր կամաց.
Իսկ նա մինչեւ Պուռսա գընաց.
Տէր Գրիգորին ոչ հնազանդեաց։
Եւ անդ յոլով չարիս գործեաց,
Եւ ի ճանապարհըն մեղանչեաց.
Եւ զինչ ունէր զամէնըն վատնեաց,
Բազում պարտեաք ի Լոմն եկաց։
Սուտ խաբեբայ թըղթեր գրեաց
Թէ Գրիգորէն բերի, ասաց.
Եւ ժողովուրդն նմա չաւտաց.
Գիտէին որ չէր ողորդասաց։
Ասեն. « Ատեն մի համբերեմք,
Սորա չարեացըն մենք լըռեմք.
Ապա թէ ընդ նա յիւրար ընկնիմք՝
Շատ մեծ աղմուկ մեք անկանիմք »։
Սկսան գնալ յեկեղեցին
Փառաւորել զՀայր և զՈրդին,
Խաղաղարար զՀոգին հայցեն.
Չի խռովութեան յոյժ պէղրած
[են [2]։
Այլ յետ քազում ժամանակին
Ի Գրիգորէն թղթեր բերին,
Կրկին անիծած Նիկօլին,
Որ չի գնաց նա Կեսարին.

1 · Թուրք. Պարոնայք ժողովրդեան։ — 2 · Թրք. ձանձրացեալ։

Դարձեալ ամէնքըն խռովեցան,
Նիկոլայէն յոյժ գարշեցան.
Ցեկեղեցին բնաւ չըմըտան,
Եւ ոչ բարեւ անգամ տըվան։
Հազար եօթանասուն Թուին
Եւ իններորդ աւելորդին, (1630)
Դարձեալ Հայոց փորձանք եկին
Ա՛յլ առաւել քան պառաջին.
Չի Թշնամիք Նիկոլին՝
Ըստամպօլու նուիրակ բերին
ՉՏէր Թաչատուր Վայսաբցին,
Որ ունէր ոխ չար ի սրտին,
Չինչ Թունաւոր օձ դառնացած.
Չմեզ կու ձըգեն մէջ փորձանաց.
Որպէս այժմ այս նվիրակս եկած՝
Ընդ եպիսկոպոսըն մեր մախաց.
Թէպէտ Նիկոլն ընդդէմ գնաց
Աւուր մի ճամբայ նմա ընդ առաջ.
Եւ էր նըմա յոյժ խոնարհած
Վասն իւր գործոց և չար մեղաց.
Իսկ չար մարդիկն որ զնա բերին՝
Վատ և անբախտ անիծածնին,
Նըվիրակին զաչվին բացին
Շատ չար խըրատ նըմա տըվին։
Թէ, « Է՞ր խօսիս ընդ Նիկոլին,
Առնուս ի քովդ ի ժամ հացին.
Ժամն ալ կանգնի հետ քեզ ի պա-
[սին,
Որ է նա մեզ մեծ թշնամին »։
Իսկ Նըվիրակն եղկելին
Հաւանեցաւ խօսաց նոցին.
Ասաց չնստիլ ի սեղանին,
Զասել աղօթք առվեւ խորնին։
Իսկ նա իբրեւ որ զայն լուաւ՝
Ընդ նվիրակն յոյժ կռվեցաւ.
Գնացեալ ի բերդն գործեաց չատ
[դաւ,
Որպէս յայտնի յետոյ ցուցաւ։
Տեսան Հայերն որ բանն մեծցաւ,
Օր քան զօր չարն յաւելցաւ.
Բազում դուռուչ ոսկի տվաւ,
Հազիւ Նվիրակըն զերծաւ.
Ապա ամբոխըն կուտեցաւ,
Ի կողմ Նվիրակին դարձաւ.
Իսկ պարոնտէրըն յոյժ երկեաւ,
Եւ մարդ յիւր կողմն չմօտեցաւ։
Նվիրակին Թուղթ գիր տվին,
Թէ « Մեր գլուխն ի քո ճամբին.
Միայն դու ա՛ռ զկարգ Նիկոլին.
Կարէ զփրկէն? և զմաղ գլխին »։
Տօվլաթեաւրք խիստ չատ կային
Ոսկի հազարնով ունէին.
Հպարտ գոռոզ կու խօսէին,
Թէ զՆիկօլն առնեմք հաւասար գեա-
նին։
Երբ պարոնտէրըն զայն լուաւ,
Բնաւ այլ ժամըն չըմտաւ.
Վախեց ու ի խուցն արգելաւ.
Տասնուչորս չաբաթ ի դուրս չե-
լաւ։
Իսկ ժողովուրդն ոչ զըղջացեալ.
Թէպէտ դևռնարհութիւնըն տե-
[սեալ,
Բազում չարիս նըմա խորհեալ,
Ի դատաստան մահու հրաւիրեալ.
Նա զաղգականն առ նա յղեալ
Եւ շատ աղաչանս արարեալ,
Ըլնըվիրակըն պաղատեալ,
Թէ թող զյանցանս իմ չարաչար։
Իսկ նա բնաւ նմա չիլուաւ.
Ա՛յլ և մինըւորդաց բարկացաւ.
Ասաց, Թէ « Չէ արժան կարգի,
Ոչ աստիճան քահանայի.
Քանզի Նիկօլն է յոյժ կոտրած,
Հայոց միջէն ի դուրս ելած.
Ես զնա դատիմ ըստ օրինաց,
Առնում ըզկարգն, կուլակ կըտ-
[րած »։
Ունէր նա չատ ազգ և ազին՝
Որ հաւասար է կէս քաղքին.

Ամէնք ժողվան ի միասին,
Անկան ի յոտք Նըվիրակին.
Ասեն. « Գըթա՛ պարոնտիրին՝
Վասն Աստուծոյ և մեր խաթրին.
Չի է մանուկ տիս հասակին,
Նստեալ էմրով փաստիչահին.
Զըլնի թէ տայ տեղ սատանին,
Հակառակի հետ մեր ազգին.
Ունիք մեք չատ չար թշնամի,
Զերթայ 'նդ նոսա միաբանի » :
Երբ Նըվիրակըն զայն լըսեց
Սակաւ մի իւր սիրտըն վախեց.
Ցօժարեցաւ կոչել ընդ նա :
Սիրով սրտիւ հաշտիլ ընդ նա :
Իբրեւ լուաւ ազգըս Հայոց
Թէ Նըվիրակն է հաշտելոց,
Որ տեղ որ կայր հանած վարած՝
Շուտ մէկմէկի արին խնաց.
Եկեալ ասեն Նըվիրակին.
Թէ, « Այդ ի՞նչ բան քո արածնին.
Հաշտի՞լ կամիս ընդ մեր թշնամին՝
Ընդ բազմամեղ չարագործին.
Եւ թէ հաշտիս դու ընդ նըմին՝
Մենք կ'ուրանամք դէմիածին.
Չքեզ կու ձգեմք վրայ երեսի,
Կ'առնեմք Նըման Նիկոլայի :
Մենք ժողովեցաք բազում դեկան
Ցոլով ղուռուշ և չատ դրամ,
Պիտոր բերեմք ընդնա յատեան,
Առնումք ըզկարգն, ձըգեմք կո-
[խան » :
Եւ այլ բազում չար խօսեցան,
Իբր ըզՀրեայս, թէ ի խաչ հան.
Ապա թէ ոչ՝ չես բարեկամ
Ազգիս Հայոց՝ որ ի Լեհ կան :
Իսկ Նըվիրակն երկչոտ հոգին՝
Հաւանեցաւ խօսից նոցին.
Հրաման արար տունս ամենին,
Թէ մի՛ ոք ընդ նա խօսեսցին :
Ամենքեան ազգ և ազին
Լըսեան խօսից Նըվիրակին.
Բանադրանացն ալ վախեցին,
Բնաւ այլ մօտըն չըգնացին :
Լըսեց՝ թէ չատ են դատախազք,
Ունին չատ գանձ և դաստատք(1).
Վասն այն եղեւ տարակուսածած,
Չի ազգն յիւրմէն եղան դարձած.
Այլ և տեսաւ որ չիմնաց մին,
Ի յօտարաց և յիւր տոհմին.
Հառչեց ի լաց ողորմագին,
Եւ վայ կարդաց իւրոյ անձին.
Ասաց. Ամբոխն է թշնամի
Եւ Նըվիրակն կողմն նոցին.
Ազգականաց եմ ատելի,
Փահանայք տան վըճիռ ինձի :
Ունէր փեսայ մի նա բարի,
Սահակն որդի Ցակոբչայի,
Խիստ երկիւղած եւ անուանի
Շինող վանացըն Սուրբ Խաչի.
Նա խըղճացաւ պարոնտիրին,
Խոստացաւ դրամ Նըվիրակին,
Հինգ հարիւր ղուռուշ էմիածնին.
Խաչ և սկիհ սուրբ սեղանին :
Տէր Խաչատուրըն չիմըռեց,
Ազգչանացըն չի լըսեց.
ԸզՍէֆէրն ալ ի դատ քաշեց,
Զայլ բարեխօսըն նըզովեց :
Ցետոյ սթափոստան քաղաքին
Եւ մեծ տիկինըն Պըլէճքին,
Ղրկեցին խնդիրք Նվիրակին,
Թէ, թող զյանցանս իւր ճահիլին :
Նա չիլըսեց ամենեւին,
Զըկատարեց զխնդիր նոցին.
Ինատ արաւ ի յիւր մըտին.
Այլ և ոմանք Նըմա հէլ (2) տային :

1. Թուի՝ Դատաստաց, իբր avocat : — 2. Թր. Զար խրատ, նենգութիւն :

Դարձեալ հրաման եհան կրկին
Որ ամէնք գան վրկայ լինին,
Քաղաքացիք և դրսեցին
Ասեն զամէն ինչ Նիկոլին.
Ժողովեցան ամենեքեան.
Նզովից Նըվիրակին երկեան,
Եւ գինչ վընաս վըրան գըտին՝
Գըրեալ՝ ի դուռն ժամուն զարկին։
Զայն լուեալ քոյրըն Նիկոլին՝
Ցաւագերէցըն վազեցին.
Առ ոտն անկեալ աղաչէին,
Թէ, Թողէք մնա եղբայրս հօտին։
Նա և այլք ւ երիցանին
Անփոյթ արին զխնդիր նոցին.
Նըվիրակին չիմացուցին.
Չկորուստ նորա զի հոգային.
Քանզի գոռոզք հըպարտք էին,
Զամէնքըն՝ ցած գէշ ունէին.
Ասեն. Կ'ուզէ Թող Թուրք լինի.
Մէկ մարդու պակսելն ինչ լինի։
Դարձեալ խորհուրդ մի չար արին
Հայոց աղայք և քահանին.
Չեկեղեցիս ամրացուցին,
Մեծ մեծ կուպրայք դըրանցն եդին։
Իբրեւ վաղիւըն լուսացաւ՝
Տեսաւ զդրունս կպղեալ ժամին.
Առեալ զէմրէրն Թարիղանին (1),
Գնաց նա մօտ ի Եէզվիդնին.
Լալով ասաց զիւր գանգատանին,
Թէ, Հայք իմ գլուխս գինչ անց-
[ցուցին։
Ասեն 2. «Թէ լինիս Թապի փափին,
Եւ ընդ մեզ դնես ուխտ և դաշին,
Մեք օգնական լինեմք քեզի.
Փրկեմք ըզքեզ ամէն վտանգի,
Ըզքեզ առնեմք մեծ անուանի.
Զգուեմք ըզՀայք ազգի ազգի »։
Եպիսկոպոսն այն խիստ Թերի
Հաբեղայիւքն ամենայնի՝
Մըտան Լեհու եկեղեցին,
Երդուան լինել կրօնըս Ֆռանկին։
Կային անդ Լեհու վանաց Հարք,
Մեծ դատաւորք բանիս վրկայք.
Գրեցին ի Թուղթ զայն դաւանանք,
Թէ, Հայոց մեծն եղեւ Ֆռանկ։
Դարձեալ եկաւ Նիկոլն ի տան,
Խնդայր՝ Թէ ունիմ չատ օգնական.
Թողի զհաւատն սուտ և ունայն,
Որ Հայոց գլուխն բերեմ չատ բան։
Ո՛վ եղկելի Նիկոլ Թերի,
Նըմմանեցար Պօղ երիցի, (?)
Կամ վասակայ չար իշխանի,
Եւ այլ բազմաց ուրացողի.
Վայ և եղուկ քոյ գլխի,
Եւ որք պատճառք եղեն քեզի.
Թողեր զհաւատն Լուսաւորչի,
Եւ չար յօրինացըն Հայի.
Էր չի գնացեր յԷջմիածին՝
Որ մնայիր ի քո հաւտին.
Այլ սիրեցեր զփառս աշխարհի
Առաւել քան զփառս արարչի.
Շատ ոք քեզի խրատ տըվին՝
Թէ հնազանդիր դու Գրիգորին.
Այլ դու չար մարդկաց լսեցիր,
Եւ զհոգիդ մարմնով կորուսիր.
Ինատ արիր հետ ամենին,
Զիւըսեցիր բարեկամին.
Նստար ի ձին սատանային,
Սկսար առնել չար դէմ լաւին։
Թէ կամենից չէիր գնացել,
Վատ մարդկանց չէիր հետեւել,
Չարեաց Թղթերն չէիր առել,
Ի քո հաւատդ էիր մնացել։
Ո՛հ, ոհ, Թէ ի՞նչ բան քեզ արին.
Հազար ափսոս քո սուրբ հաւտին.
Ատուած առնէ վրէժ նոցին՝

1· Թրք· Թուֆէկ· Պայմանագիր, օրէնք։ — 2· Յիսուսեանք կ'ասեն զայս առ Նիկոլ։

Որ զքեզ ի քո հաւտէն հանին։
Նախանձ մտաւ ի չար երիցնին
Որպէս յաւուրս Քհսուս Փրկչին,
Զքեզ չկամեցան նման նմին,
Կորեան կորուստն յաւիտենին։
Քեռոյ յղեաց մարդ յ'աղանին,
Թէ, Թող բանան զեկեղեցին,
Թէ չէ՝ կոտրեմ զմեծ կպղաքնին,
Բռնութեամբ մտնամ յեկեղեցին։
Աղանին զայս ճուղապ տըվին,
Թէ, « Դու ելած ես մեր միջին.
Քամն է Հայոց և մեր ձեռին.
Թող նա երթայ ժամըն լհհին »։
Երբ զայն ասին պարոնտիրին,
Էաւ զ'էմրէրն, եղ ի ծոցին,
Գնաց ի սէրայն սթաւօստին
Եւ յարքեպիսկոպոսն լհհին.
Ապա ի ռաթուչըն քաղքին,
Ուր մեծ դատաւորք նստէին.
Ասաց. « Ընդիմ էմր արքային.
Ժամերն և Հայք՝ իմ ձեռս պիտին.
Բայց Հայքն չեն հնազանդ ինծի,
Զթողուն մտնել յեկեղեցի »։
Երեսս զ'էմրէրն և կարդացին,
Պագին և ճակտին դրին։
Մարդ ղրկեցին առ աղանին,
Թէ Թող բանան ժամին դրուին։
Նոքա ինատ արին, չբացին, [ցին։
Թէպէտ քանի հեա մարդ ղրկե-
Նոք՝ ալ Հայոց յոյժ բարկացան,
Արքեպիսկոպոսըն և փաշան.
Չինուորքն ալ դուրն գնացին,
Չերկաթի դրունս կործանեցին.
Բացեալ՝ զօռով ի ներս մըտին.
Թէսլիմ արին պարոնտիրին։
Իսկ Հայոց ազգն որ անդ կային՝
Վայ և եղուկ անձանց տային։
Իսկ նըվիրակն յորժամ լըսեց,
Զմաղն և զմօրուքն իւր ճղեց.
Ցովըն նստած զՀայքըն վարեց,
Զպատճառ եղողնին անիծեց։
Հայերն լալով հառաչէին
Առ նըվիրակն երթային,
Ողբալով յոյժ յոյժ կսկծագին
Աղիողորմ զայս ասէին.
« Տէր Խաչատուր, այդ զինչ արիր,
Դու մեր գլուխն ինչ բան բերիր.
Միթէ առ մեզ վատն այն եկիր՝
Որ զմեր ժամերն խլել տայիր.
Էր դու չար մարդկանց լսեցիր,
Նոցա խրատովն ի չուրջ եկիր.
Միշտ ըզՆիկօլն դատ քաչէիր,
Եւ հազար գէշ նմա ասէիր.
Քեզ ինչ պիտէր ի լով գալու,
Կամ թէ զնա կարգէն ձգելու։
Գիտէիր դու գնա չահելու,
Եւ զայս չար բանս չերկարելու։
Քէմ լսեցիր դու ի Ստամպօլ,
Թէ օրչափ չարիս արար Նիկօլ.
Բաժանեալ էին Հայք որ ի լով.
Զի մտեցեր, հասար փուքով.
Եկիր ւ եղար կողմ չար մարդկան.
Կանչէիր, կ'առնեմ դատաստան.
Աչժմիկ եղար խիստ փոչմման.
Ցեանուս՝ գլխուդ ինչ բաներ գան։
Լաւ էր զմին չարն չահէիր,
Քան զմեզ զամէնքըս կորուսիր,
Ցկեղեցեացըն զրկեցիր, [ցիր։
Զմեզ այլազգեաց ձեռք մատնե-
Նչմիածինն այլ խատր (1) արիր,
Քու մուրատիդ այլ չհասիր.
Զմեզ հոգւով մարմնով կորուսիր.
Մեծ փոքորակ Թողիր գնացիր »։
Նիկօլն սկսաւ ոճիրս գործել,
Վտանգ Հայոց գլուխն անցընել,
Ըզքահանայսըն չարչարել,

1· եթէ թրք· խըդր, քող, պատուակ։

Զեօթըն խորհուրդըն արգիլել։
Զոմանս ի բանտ կու ձրգէր,
Զայլս բռնաւորաց ձեռս մատնէր.
Զոմանս ծեծէր և հարկանէր,
Դատաւորըն տուգանէր.
Լեհցոց առջեւ զՀայք նախատէր.
Պեղծ հերձուածող զնոսա կոչէր,
Անհաւատ ս՚ուրացող ասէր,
Եւ հետքեան զՀայս անուանէր։
Եւ յիւր ազգերն ինչ աղջիկ կայր՝
Լեհաց կարիճներուն կու տար.
Օր քան ըզօր կու զօրանայր,
Ցետոյ ի դուռն արքային գնար։
Կամէր զնվիրակն ալ տանել
Ցերկաթի չղթայս գնա ածել։
Ապա Հայերն շատ դրամ տըվին,
Հազիւ ձեռացն գնա թափեցին։
Խորհուրդ մ՚ալ չար եդ ի մըտին,
Թէ ի՞նչ բան ունի նա յիմ թեմին.
Ղրկեց ի վրայն զիւր հայտուքնին,
Թէ, թող կորչի իմ թշնամին։
Դարձեալ Հայերն դրամ ժողվեցին,
Մեծ պարոնաց պարգեւք տըվին.
Մինչ երեք օր հազիւ կարցին
Ըզնա պահել իւրեանց մէջին.
Զի էր յաւուրըս ձմերայնի
Սաստկասառոյց և ցրտայնի.
Ցունվարի մէկն՝ օրըն կաղանդի՝
Հանին ըզնա խեղճ և լալի։
Գնաց կամենից տրտմագին.
Զոր և անտից ալ վարեցին.
Մեք մեացաք Լով լալագին.
Զմեր քահանայսըն փախուցին։
Թագաւորն էմբէր հանեց,
Զիշխանութիւնս Հայոց խըլեց.
Զվանորայն յափշտակեց,
Զվախիճ տըներն առաւ յիրմէնց։
Երեք տարի յայս վիշտ կացաք.
Ի յօրինացըս հեռացաք,
Անհաղորդ ս՚անխոստովանանք.
Մեռեալք մեր մեացին անթաղք։
Այս ամեն չարքս որ մեզ դիպան,
Սեւագլխացըն մեր եղան.
Մեք եմք չարեացս այս պարտական,
Ի այս ամեն չարքըս մեզնէ ելան։
Վայ և եղուկ հազար բերան
Ազգիս Հայոց որ ի Լով կան.
Ամեն քաղքնին են հանգըստեան,
Մխայն աթոռս է դեգերման։
Մինչ մեք էաք ի յայս վըշտի
Ի տառապանս ազգի ազգի,
Խուլ պատրիարգն Ըստամպօլցի,
Մեք մեղքն երեր քաղաքն Լովի.
Որ միաբան հետ Նիկօլի՝
Մտան երկուքն յեկեղեցի.
Հնազանդեցաւ Քաղկեդոնի,
Ի արար ընդ մեզ բազում տաւի։
Ի ծերութեան ժամանակի
Ընկեց զօրէնս Լուսաւորչի.
Գովէր զգործըն Նիկօլի՝
Դառնալ ի կրօնըս Ֆռանգի։
Նա զՀայերն հերձուածող կոչէր,
Ի ամէն ազգաց բաժնած ասէր.
Պարոնտիրին հետըն չրջէր,
Ցոր տեղ նստէր՝ զՀայս հայհոյէր։
Լեհ կարգաւորքն երբ զնա տեսան՝
Մեծ որովայնին հաճեցան.
Ասին. « Ի Հայք չկայ քեզ նման.
Ե՛կ դու ընդ մեզ լեր միաբան »։
Պատասխանեաց նա ամենին,
Թէ պարոնտէրն է իմ որդին.
Ես եմ գլուխ և մեծ՝ Հային,
Սա իմ օրհնածս է և չրախ (1) իմ։
Իակ Իլախնուն երիցանին՝
Որպէս ըզսուրբ զնա պաշտէին.
Ցեկեղեցիս չուրջ ածէին,

1· Աշակերտ։

Ցընթրիս տարեալ մեծարէին։
Իշխանքն ալ զնա ի հաց տարին,
Եպիսկոպոսն ալ Էլախին.
Ցետոյ տարին սեւ երեցնին
Արքային առջեւ կացուցին։
Ասէ և անդ զՀայս չարախօսեաց,
Եւ մեր հաւատոյն չատ վատ ասաց.
Իսկ թագաւորն և վէզիրնին
Թագուհին ալ՝ զնա սիրեցին։
Ի լռին ալ զմեզ չարշարեց,
Անէծք բանադրանք մեզ ղրկեց.
Թ՛եկէք յեկեղեցին մըտէք,
Առաջնորդին ձեր լըսեցէք։
Բայց նըմա ոչ ոք հնազանդեց,
Եւ ոչ բանից նորա լըսեց.
Ասեն. « Մեք եմք Լուսաւորչի,
Հնազանդ մեր կաթողիկոսի »։
Ղափին (1) մեզ չար յոլով արարեալ,
Վասն այն մեր բանն եղեւ յամեալ։
Բազում դրամ, ոսկի տըվեալ՝
Հազիւ եղեն նմանէ փրկեալ։
Ասէր. Կաթողիկոսն ո՞վ է.
Իմ պատիւս քան զնա մեծ է.
Ամէն Հայոց աշխարհ իմն է.
Նա իմ աշկերտն ալ չէ։
Անտի ի մեծ Հռոմ գնացեալ
Ուրացողն՝ յոտըս Փափին անկեալ.
Իսկ Փափն ըզնա յոյժ մեծարեալ,
Դարպաս, ռոճիկ նըմա տըվեալ.
Ամ մի բոլոր նա անդ կացեալ
Հռոմայ գահիցըն պատուեցեալ,
Ցոլով դարանս Հայոց կազմեալ
Եւ զմեր դեսպանսըն փախուցեալ։
Այս ամենայն բանքս որ գրեցան՝
Մեր կարգաւորաց մեզ դիպան,
Զի սեւագլուխք մեր ուր երթան՝
Կորուսանեն զհոգիս մարդկան.
Այլ և մեր ազգըս Հայկազն
Ընկերատեացք և ամբարտաւան,
Միշտ խռով կենան ւ անմիաբան,
Բնաւ սէր չունին, չեն միաբան։
Ո՞ւր են դաւառք մեր հայրենի.
Ո՞ւր են աթոռքն հայրապետի.
Ո՞ւր կան թախտերն թագաւորի՝
Մեծ Արշակայ և Տըրդատի.
Եղեալ նմք ցիրուցան երկրի
Օտար աշխարհ և յոյժ հեռի.
Ի սփեւռս ցրուեալ հեթանոսի,
Կոխան եղեալ ամէն ազգի։
Ի լեհն էաք միայն հանգստի,
Զսրա հինգ հարիւր ամ աւելի.
Որք պատճառ եղեն այս չարի՝
Արկցին ի հուրըն գեհենի.
Այլ չիմընաց տեղ հանգըստի,
Ոչ բնակութիւն այլ քաղաքի.
Աշխարհս ամէն մեզ թշնամի
Եւ զասա[2] կանեն մեր սուրբ հաւ-
Զիաճրդ գըրեմ զաղբս աղէտի [տի։
Տառապանաց իմոյս ազգի.
Սեւագլուխք մեր անբարի
Զայս չարիքս բերին մեր գլխի։
Այս երեք ամաց որ անցին՝
Հոգւով մարմնով զմեզ նեղեցին.
Լեհաց բերան զմեզ ձըղեցին.
Կ՛ասեն. Թագի եղէք Փափին։
Երասն հազար ղրուչ խարճեցին
Լռին և ի դուռըն զափիճին.
Հայք բան մի առնել չկարացին,
Ոչ թափել զեկեղեցի մին։
Գնացին գարձեալ Հայք ի զափին.
Թագուհին էր կողմ Նիկոլին.
Միշտ կշտամբէր զՀայս յաւենին.
Ասէր. գնացէք զկնի Նիկոլին.
Խոստովանհայրն ալ արքային,
Եպիսկոպոսք, կարգաւորնին՝
Զտային թոյլ թագաւորին՝

1. Դուռն տրքունի։ — 2. Թերևս թր. ղըտ. հակառակութիւն։

Դարձընել մեզ զեկեղեցին։
Դարձան Հայք ի տուն լալագին.
Նիկոլ խրոխտայր ի վերայ նոցին.
Թերի կոչէր զհաւատ Հային
Եւ նախատէր զամենեսին։
Այս Աստուածն ողորմած՝
Եղեւ Հայոց ազգին գըթած.
Չի թագուհին գնաց առ Աստուած,
Խոստովանահայրն ալ յետևանց։
Դարձեալ Հայերն զափին գնացին,
Այն. Չօռ մի՛ անել Հային.
Թէպետ չըտաս զեկեղեցին,
Կարգ կատարել տուր քահանային։
Աբքայն արար պատասխանի.
Է՞ր չըհաւնիք դուք մեր հաւտին.
Ես չեմ ի տալ զեկեղեցին՝
Մինչեւ չհնազանդիք ձեր մեծին։
Բազում պարոնք և իշխանքնին
Մինոորդ եղան Հայոց ազգին,
Թէ հաշտեցնեմք ընդ եպիսկոպոսին.
Հայք չկամեցան ամենևին։
Եպիսկոպոսըն զօրացաւ.
Ելս առաւել նա զայրացաւ.
Չերիցանին՝ զորն որ գըտաւ՝
Ի չղթայս և ի բանդն արգիլաւ.
Պահնորդ եդիր քաղքին գըռվին՝
Որ յայլ տեղ գմեռնալս չըտանին.
Ոչ զերախայսըն մկրտեն,
Եւ ոչ զհիւանդսըն հաղորդեն։
Այսպէս չարիք ո՞վ է տեսել՝
Որ այժմ ի մեր գլուխս եկել.
Ով որ պատճառ այսմ է եղել
Նա ցուգայի է նըմանել.
Ամեն քաղաք լէհ՝ ուր Հայք կան՝
Են յիւրեանց ժամն և հանգըս-
[տեան.
Միայն Հայերն որ ի լով կան՝
Են չարչարանս մեծ նեղութեան.
Ոչ տօն գիտեն, ոչ պահք չաքթին,
Եւ ոչ ըղկարգ ժամատեղին.
Ոչ լսեմք զձայն աւետարանին,
Եւ ոչ զպաշտօն պատարագին.
Ոչ գնան ի թաղումն մեռելին,
Եւ ոչ կնունք երախային. [նին։
Չտեսանուք զպսակ սուրբ ամուս-
Վայ և եղուկ եկ մեր գլխին.
Հիւանդք անկեալ ի մահճին
Ցոյժ փափագին քահանային.
Բայց հնար չըկայ գալոյ նոցին,
Չի Նիկոլէն երկնչէին։
Յորժամ մարդիկ մեռանէին՝
Անթաղ մնային մինչ կէս տարին.
Դնեն մաղազան և աքլէփնին,
Չայլըն տանին յայլ քաղքընին։
Տըղայք ծընեալք յորովայնին՝
Մնան անկնունք՝ ոչ մկըրտին.
Պսակ, թաղումն ոչ կատարին
Եւ ոչ խորհուրդ պատարագին։
Ոմանք հոտեալ են և նեխին,
Կէաքըն փըտեալ, մարդիկ գարշին.
Չայլսըն ծածուկ գիշերային
Տարեալ թաղեն յանարգ փոսին.
Հաղորդ չըտան քահանային,
Եւ ոչ թաղեն ըզմեռելնին.
Անտուկըն գնեն համալնին,
Չայլս փախցնեն գիւղաքաղքնին։
Դարձեալ հրաման ևհան կրկին
Եպիսկոպոսն Ընհաթին,
Թէ, կալայք զօտար երիցնին,
Որ չգան տան պսակ Հային։
Բազում ունէր նա օգնական
Կարգաւորք և ալխարհական,
Դատաւորք և պարոն ւ իշխան,
Արք և կանայք որ ի լեհ կան,
Այսպէս եղաք մեք առելի,
Լեհաց ազգին մեծ թշնամի,
Որպէս ի հնումն Իսրայելի
Ազին Հրէից՝ Սամարացի։
Ցետոյ սկսաւ այլ չար գործել,
Եկեղեցւոյ գինչսըն վատնել,

Խաչ և բուրվառք՝ սիրհք ծախել,
Շուրջառ և զթագն վաճառել.
Այնչափ խաղնան աւանդատան
Ոչընչացոյց զամենեսեան.
Զըմնաց կազի, ոչ խատիֆան,
Ոչ աթլասի և ոչ քիմխան:
Ապա զվանքերն ալ կողոպտեց,
Ոսկին ւ արծաթ զանօթս թալնեց.
Զայնքան անթիւ գանձըն ցըրվեց
Որ քանի բիւր դեկան աժեց:
Ցետոյ զամեն գրեանս ժողովեաց
Որ ի գրատան էին պահած,
Աւետարանք ոսկով գըրած
Արծաթապատ կողքով կազմած.
Անգիւտ գըրեանքն որ Լով կային՝
Սըսայ խաղնիցն ելեալ էին,
Անհիւ գրքեր, չարակնոցնին,
Ցըրուեաց կորոյս զամենեսին:
Ցետոյ էառ ըզվախըճնին,
Եկեղեցեաց քար դարպասնին,
Ըզդպրոններն և զհոգէտներն,
Զայգիս, դրախտս և զպարտէզնին:
Էր յոյժ պճնող վատնող դրամին.
Կորոյս զամէնն և զիւր հոգին.
Նախնեացըն մեր յիշատակնին,
Ոչ մին չմնաց յեկեղեցին:
Սուղ ժամանակ մի վրայ անցին,
Մեռաւ Չիկմուռնտ արքայն Լեհին.
Զօրքն ամէն և մեծ իշխանքնին՝
Չմեծ որդին կու կամէին.
Նստաւ յաթոռըն հայրենի,
Արժանաժառանգ այն թախտի՝
. . . . . .
. . . . . .

Վլատիսլաւուս անուանի,
Որ էր հըզօր քալ և արի.
Որ չուտափոյթ գնացեալ Մոսկով՝
Զյոլով քաղաքս աւերելով,
Զոմանս եսպան, զայլս գերելով
Եւ զապստամբս հնազանդելով.
Շատ քաղութիւն անդ առնելով
Աղեքսանդրու նըմանելով,
Էառ զքաղաքն, գաւառս յոլով,
Տիրեաց թախտին՝ որ է Մոսքով:
Սա գնաց ընդդէմ Օսմանին՝
Հզօր և յաղթող խօնդքարին
Ցորժամ եկեալ էր նա Խօթին՝
Տիրել բոլոր Լեհաց ազգին.
Ունէր բազում հեծել ւ անթիւ
Եօթըն հարիւր հազար ի թիւ.
Իսկ նա չունէր վաթսուն հազար.
Ջնջեաց եսպան զամէնն խապառ.
Փաշայք ամէն և վէզիրնին,
Եէնկիչէրիք և սպահինին,
Պէկլէր պէկիք և սէրտարնին,
Եայապաշիք և սօլախնին.
Աճէմօղլանքն և չօրպաճիքն,
Խառնիճաղանջքն և չուրանին,
Թօփճիքն և ըզտապաննին,
Բնաջինջ եղեն ի միասին:
Ապա Օսմանըն չըվարեալ,
Ինքն և իւր զօրքն նկուն եղեալ,
Վլատիսլաւին պատգամ յըղեալ,
Թէ, եկ, լեր դու ընդ մեզ հաշ-
[տեալ:
. . . . . .
. . . . . .

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ժ

ԿՈՆԴԱԿԻ ԵՒ ԹՈՒՂԹԻ

Գ.[1]

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՊԻԳ=1375. ՅԱՆՈՒԱՐ 15.

(Հասուցեալ զՅԻՐ Գրիգոր յարքեպիսկոպոսուրբեան Լեհահայոց)։

✠ Ասյս մեր գիր հոգևորական հրամանի աւրհնութիւն է և կրկին հաստատութիւն. ԿՈՍՏԱՆԴԵԱՑ չնորհաւքն Քրիստոսի՝ կաթողիկոսի ընթհանուր ամենայն Հայաստանեայց.

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, Մեր ի Քրիստոս Աստուած հաւատացիմ ըստ հոգոյ որդիք՝ բնակիչք աստուածապահ մայրաքաղաքիդ Լաւին՝ և ամենայն սահմանեալ վիճակին իւրոյ. քահանայք և աստուածասէր ժողովուրդք մեծ և փոքր, այր և կին. Զոր երեկ առ մեզ՝ պատուելի արքեպիսկոպոս ձեր՝ և մեր ըստ հոգոյ պարծանաց որդիս՝ Տէր Գրիգորս՝ ի հնազանդութիւն մերոյ սուրբ աթոռոյս. զոր և մեք յոյժ սիրով և մեծաւ պատուով ընկալաք զինք՝ որպէս զմեր քաղ սիրեցեալ որդի. Այլ և ունէր ընդ իւր՝ զմեր նախնոյն տված չուրջբերականն, որ և զփառաւոր մայրաքաղաքդ՝ զԼօվզ՝ և զԱլատեմիրս՝ և զԼուցկայդ՝ մեր որդւդ Տէր Գրիգորիդ էր պարգևել. Մեք մեծաւ պատուով ընդունեցաք զմեր նախնոյն հաստատած չուրջբերականն, և վասն մեր սիրեցեալ պարծանաց որդւդ Տէր Գրիգորիդ արժանաւորութեանն՝ հաւանեցաք ի յինք. Եւ մերով հոգևորական, առաքելական և հայրապետական բարձր հրամանաւս՝ կարողութեամբն Աստուծոյ և աղաւթիւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, վերստին հաստատեցաք զսրբազան արհիեպիսկոպոսդ զՏէր Գրիգորդ ձեզ եպիսկոպոս. և պարգևեցաք դարձեալ իր՝ Տէր Գրիգորիդ՝ զամէնաւրհնեալ ականաւոր քաղաքդ՝ զԼօվս՝ զԼուցկայն

1. Ա և Բ թիւ համաբուխն կոնդակք Մեսրովպայ և Թէոդորոսի կաթողիկոսաց. տես ի սկիզբն գրոցս, երես 5 և 9։

և զԱլաստեմիրդ՝ մեր որդոյդ Տէր Գրիգորիդ՝ սեփհական թէմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի. կու աւրհնենք զձեզ զամենեսեան՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս, զի աստուածապատիւ և զառաքելաշնորհ զերիմաստ եպիսկոպոսդ ձեր զՏէր Գրիգորդ՝ փառաւք և պատուով ընկալարուք, որպէս ի դրանէ սուրբ և երկնահանկէտ աթոռոյս աւրհնութեամբ առ ձեզ առաքած. և ամենայն խրատու դորայ որ ի շահ և յաւգուտ լիցի ոգոց ձեր, դուք մեծաւ հնազանդութեամբ ունկնդիր լերուք դմայ որպէս մեր անձինս: Եւ զամենայն աւրինաւոր հաս և գիրաւունք ձեր՝ անթերի տուք ի ձեռս դորա՝ զվարթառատ սրտիւ. վասն զի որ ոք Տէր Գրիգորիդ հնազանդ է, նայ մեզ և Աստուծոյ աւրինացն և մեր Սուրբ Լուսաւորչի հնազանդ, և հնազանդեալքն աւրհնեալ եղիցին. իսկ հակառակողք և անհնազանդք դմայ և հրամանիս մեր, կրեսցեն պատիժ և պատուհաս յԱստուծոյ: Եւ վասն առաւել հաստատութեան և վստահութեան սրտի ձեր՝ ձեռնագրեցաք մերով սովորական կարմիր ձեռագրովս: Ծե ի յունվ. ի թվ. ՊԻԳ:

✠ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՇՆՈՐՀԱԻՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ:

Դ.

ԹԷՈԴՈՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ · — ՊԼԲ = 1384 · ԱՊՐԻԼ 2 ·

(Վերահաստատե զՅիր Յովհաննիս յարքեպիսկոպոս Լեհահայոց առաքելով ընդ նմին նուիրակ գՆերսես աւագ սարկաւագ)։

ՈՒՑՍ մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն, ԹԷՈԴՈՐՈՍԻ ծառա ծառաիցն Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ, Շնորհաւք և ողորմութեամբ նորին կաթողիկոսի ընթհանուր ամենայն Հայաստանեաց· Զոր աւրհնութեամբն Աստուծոյ հայրական հոգաբարձութեան գթով՝ գրեմք ի յամենաւրհնեալ և յաստուածապահ յանուանի և յականաւոր թագաւորական և քրիստոնէական մայրաքաղաքն Լովն և յամենայն վիճակն իւր, ի Լուցկայն, ի Մանքրմանն և ի բնակիչքն իւր· Որոց այդոցիկ ամենեցուն բնակչացդ ի միասին, Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգւոյ յոյժ սիրեցեալ բարեպաշտ և քրիստոսասէր թագաւորիդ թագաւորաց՝ և ակնկալիդ ամենայն քրիստոնէից ինքնակալիդ արիականաց՝ և մեր պարծանաց աչեաց[1] չափ սիրեցեալ եղբաւրդ Ըռէ Տինգուռելիդ[2] և արքայիդ· քրիստոսասէր և փառաւոր ամենամեծ պարոնիդ Լովիդ և Մեստեչնուդ· Գովելի և հավատարիմ պարոն Շաւլթիսիդ Աբրահամիդ· Իմաստուն վաճառականացդ՝ ծովայնոցդ և քաղաքայնոցդ առհասարակ· Հարկևոր և բարեգործ տանուտրացդ, պարոն Փանոսի որդեցդ՝ պարոն Ավրանիդ և պարոն Ալանիդ և այլոցն ամենեցուն· Ջեռնահմուտ արվեստագէտացդ· Աշխատասէր հողագործացդ, և համաւրէն ի Քրիստոս Աստուած ճշմարիտ հավատացելոցդ՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, մեծամեծաց և փոքունց, և ամենայն չափս հասակի· Ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, մեծաւ փափաքմամբ ի չնորհացն Քրիստոսի, կարողութեամբն Աստուծոյ Հաւր, աղաւթիւք Սուրբ Լուսավորչին մերոյ Գրիգորի,

1· Այսպէս էր ի բնագրին։

2· Շատ հետաքրքրական է դիտնալ, թէ ո՞վ է այդ թագաւորդ և ինչ անունն· վի յետ մահուան Լոդովիկոսի Ունգարաց թագաւորին (1382) որ և Լեհաց տիրեր, քանի մի տարի չկոթութիւն էր ի Լեհաստան, և չտեր չանային թագը կորզել, մինչեւ որ տուին զայն Հետուիկի՝ դստեր Լոդովիկոսի· այս միջոց ժամանակին գրուած է կոնդակս· զուցէ ֆոքսոր Ռոֆոբոյ նշանակէ Re (Roi) d'Hongrois.

Աղաչեմք ողջոյն սիրտ ի մէնջ և աւրհնութիւն առաքելական ի յաստուածընկալ սուրբ նշանէս Վանկկոէ, և ի շնորհաբաշխ աջոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանգէտ սուրբ աթոռոյս առաքել(ակ)ան. որոց արագահաս աքանչելագործ կարող զաւրութեամբն և աւրհնութեամբն պահպանեալ փրկեսջիք յամենայն վտանգից փորձանաց հոգոյ և մարմնոյ, տամք և որդովք և ամենայն գոյիւք. ամէն:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն մեր ի Քրիստոս Աստուած հավատարիմ ըստ հոգւո յոյժ սիրեցեալ ցանկալի և պարծանաց որդիք և եղբարք, բազմաչարչար երկեամբք ծնունդք ավետարանիչն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի յորժամ կամաւքն Աստուծոյ և մեր Սուրբ Լուսաւորչին աւժընդակութեամբն՝ հաստատեցաք ի վերայ գահոյից սուրբ աթոռոյս՝ կաթողիկոս ամենայն Հայաստանաց, նայ մեք ըստ հայրական հոգաբարձութեան [1] գթո մեր կամեցաք սիրովն Քրիստոսի զամենայն մեր ի Քրիստոս Աստուած հավատարիմ սիրելի որդիքդ հայրաբար հոգալ, եթէ ո՞րպէս կամ զիարդ էիք ուղղափառ աւրինաւք Սրբոյն Գրիգորի. քննել իսկ զամենայն վիճակս եպիսկոպոսաց և զաթոռունսն, թէ որք են այրի՝ կամ ո՞ր եպիսկոպոս ոչ ունի վիճակ և աթոռ եպիսկոպոսութեան: Յաղագս որո իմացաք որ իմացաք [2] զի մեր նախնին ի Քրիստոս հանգուցեալն Տէր Կոստանդին՝ ձեռնադրեալ էր զպատրոն Աղասրատնին որդին զՏէր Յոհաննէսն՝ եպիսկոպոս Լոռվի, Լուցկային և Մանքրմնա, և պարգեւեալ էր ձեզ զամենեսեան Տէր Յոհաննէսիդ՝ ժողովուրդ սեփական, և չուրջաբերականավ հաստատեալ: Իսկ մեք իրրև ստուգիվ իմացաք որ այնպէս յոյժ սիրով էր ընկալ(եալ) մեր նախնին զՏէր Յոհաննէսն, նայ եւ մեք կարի յոյժ պատվեցաք զհրամանս մեր նախնոյն Տէր Կոստանդնա՝ իրրև զառաջին սուրբ հարցն. և ծանեաք զի արժան էր Տէր Յոհաննէս, որո զչնորհս զայս առնէաք նմա: Ընդ որս և սոյն աղագավ, և մեք իսկ մեծով իսկ հոգեւորական բարձր հրամանավս վերըստին հաստատեցաք զսիրելի և զհավատարիմ որդիս զՏէր Յոհաննէս ձեզ եպիսկոպոս և հոգեւոր առաջնորդ: Եւ որպէս էր յայնժամ, սոյնպէս և այժմն եղիցի: Եւ մեծով հայրապետական բարձր հրամանավս դայ Տէր Յոհաննէս է ձեզ զատիվի [3] եպիսկոպոս սեփհական, և ոչ այլ ոք: Վասն որոյ դուք ամենեքեան զպարծանաց և ըզսիրեցեալ որդիս մեր զՏէր Յոհաննէս՝ այնպէս կալջիք, որպէս թէ եկեալ առ մեզ, և աւգնականութեամբն Աստուծոյ նոր եկեալ առ ձեզ. ելեալ ի զրկաց մաւրս կաթուղիկէ, սիգամեմ ընթացիւք որպէս զփեսա ելեալ յառաջաստէ, գալ հրճուել ի վերա լանջից նոր Սիոնի. և առաքելաբար շրջեսցի ի միջի ձերում, վարդապե(տե)լ, խրատել և ուսուցանել յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, կալ անարատութեամբ ի տուէ և ի գիշերի. Տալով զանձն

1. Բն. գրած է հոգ֊ան, յետոյ ն վրան փոխեր է ի Բ. և բառին ետացորդը գրեր է յոբնիւթ, մոռնալով կ տառն ալ փոխելու ի Բ, որպէս զի կարդացուի հոգաբարձութեան:

2. Այսպէս կրկնած է իմացաք:

3. Թրք. ղոհէ, արժանաւոր, յաջողակ, կամ առաջնորդ:

աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ապա զձեզ ուսուսցէ սրբու-
թեամբ, արդարութեամբ, խոնարհութեամբ, երկիւղիվ, սիրով առ Աստուած
և առ ընկերս. եղբայրսիրութեամբ, աղքատասիրութեամբ, ողորմածութեամբ և
աղաւթիւք, լինել այցելու որբոց և այրեաց՝ և ամենայն կարաւտելոց կարեկից
սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ վարժանավորսն և զվկաեալսն ի կարգ և յաստիճան
կէս սարկավագութեան, սարկավագութեան և քահանայութեան: Կալցի և
հրամանաւս մեր ի վերա ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձա-
կել յերկինս և յերկրի: Զմեղուցեալսն և զապըստամբեալսն յաւրինացն Ա-
ստուծոյ և ի կանոնաց սրբոց հարցն՝ կշտամբել և յանդիմանել, և ըզղջա-
ցեալսն ընդունել ապաշխարութեամբ: Որով և դուք ամենեքեան առ ի դմա-
նէ հովեալք և արածեալք ի վայրս դալարոյ առաքինութեան, և ի ջուր
հանգստեան պատուիրանացն Աստուծոյ, զաստուածապատիւ և զառաքելա-
չնորհ արքեպիսկոպոսդ ձեր զՏէր Յոհաննէսդ՝ մեծաւ պատւով և յոյժ սիրով
ընկալարուք, որպէս զհրեշտակ Աստուծոյ՝ և որպէս զառաքելական այր. և
ամենայն հոգեւորական խրատոյ դորա՝ որ ի շահ և յաւգուտ է ոգոյ ձերոյ՝
հնազանդութեամբ ունկնդիր լերուք: Այլ և զամենայն կանոնեալ հաս և զի-
րաւունք զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռոս, զհաս տանց քահա-
նայից և զամենայն ընտանեաց նոցա, զերախայրիս կալոց և զհնձանաց, զտէ-
րունականս և զսրբանվէրս, զիրաւունս մատաղաց կենդանեաց և զյանկարծա-
մահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս
դորա գուարթ և առատ սրտիվ, որպէս գուարթառատ սիրէ Աստուած: Եւ
մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սըմա, կամ հրամանիս մեր՝ և արգելցէ յիրա-
ւանց տալոց կամ խորհեսցէ կամ յայլազգիք անկանի և ուժ հասուցանէ Տէր
Յոհաննէսիդ: Իսկ որ ոք հակառակ լինի մեր հրամանիս, կամ սիրեցեալ որ-
դոյս մեր Տէր Յոհաննէսիդ, նայ այնպիսի հակառակողն առցէ յԱստուծոյ զա-
նէծան կայէնի, զմասն Յուդայի, և զխաչահանուացն, նայ եւ զպատիժս Կո-
խա և զԴադանայ: Որով աւրհնեալքն ի Տէր Յոհաննէս ի պատվելի արքե-
պիսկոպոսդ ձերմէ, աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և
որոշեալքն՝ ի նմին մնասցեն մինչև զղջասցին, և առցեն զարձակումն ի Տէր
Յոհաննէսդ, կամավ և ոչ ի հարկէ կամ բռնութեամբ,

Վասն որո՝ ի մտանել դորա և գրաւորական աւրհնութեան հրամանիս մերո
առ ձեզ և սուրբ մեռոնիս՝ ի ձեռն Ղևրսէս ավաք սարկավագիդ և նվիրակիդ
մերոյ, իջցէ և չնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր եաւ-
թընպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգեւոր և մարմնավոր բարութեամբ.
Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն, զպատուհաս և զտարաժամ մահ. Տացէ
ձեզ չինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. Բուսոց և տնկոց և ա-
մենայն անդէոց ձեր՝ այճողութիւն և քաղցր պտղաբերութիւն. պահարե-
ղէն անասնոց ձեր անսղալ ծնընդականութիւն. և ամենայն բարեաց ձեր՝
լիութիւն և առատութիւն: Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր՝ գործնականս
և արդիւնականս. գործել զարդարութիւն և զամենայն գովելի տեսակս առա-

քինութեան. և աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր. որպէս զի զառաւրեա կեանս ձեր վայելիցէք և երկնից թագաւորութեանն հասանիցէք ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

Շնորհեցաք ի ձեռն դորայ ձեզ պարգեւս հոգեւորական զեղն աւծութեան զսրբալոյս և զաստուածագործակ սուրբ մեռոնն, ի լուսավորութիւն նորածննելոցն ավազանաւն յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի՝ և ի ժառանգակցութիւն Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյն ի ճակատ նշան հաստատութեան, յաւծումն քահանայութեան՝ ի նորոգութիւն սուրբ եկեղեցւո Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Գրեցաւ զիր աւրհնութեան բարձր հրամանիս մեր ի յըստ ի մեզ մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳՃՂԳ ամի, և ի Սրբոյն Գրիգորէ ՌՂԳ ամի, ի մեր նստիլս ի սուրբ աթոռս՝ որ է ամ Բ և ամիս Գ, և աւր Ա, ի մեծ թվիս Հայոց ՊԼԲ ամի, յապրիլ ամսո Բին[1]։ Եւ վասն առաւել հաստատութեան և ավտալո ձեր՝ ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր ձեռնագրով. կընքեցաւ վերս ծաղկաւետ մեծ մատանեավս. Կամաւք բարերար մարդասէրին Աստուծոյ, որ է աւրհնեալ ի յաւիտեանս. ամէն։

✠ ԹԷՈԴՈՐՈՍ ԾԱՌԱՑ ԾԱՌԱՑԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

1. Ուրեմն 1382 տարւոյ առաջին օրն (կազանդի) օծուեր է կաթողիկոս։

Ե·

ՅԱԿՈՎԲ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՊԾԸ = 1410· ՅՈՒՆԻՍ 26·



ՅՍ մեր գիր հոգեւորական բարձր հրամանի՝ հաստատութիւն է եւ սուրհ-
նութիւն, ՅԱԿՈԲԱՅ ծառայի ծառայից Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ
Տեառն մերոյ· Շնորհաւք եւ ողորմութեամբ նորին Եպիսկոպոսապետի
Մեծաց Հայոց եւ պատրիարքի ամենայն արեւելից [1] եւ Վաղարշապատու·
Զոր աւրհնութեամբ եւ հայրական հոգեբարձութեան գթով գրեմք ի յամէ-
նաւրհնեալ եւ յաստուածապահ յանուանի եւ յականաւոր թագաւորանիստ քրիս-
տոսական մայրաքաղաքն ի Լոնդն եւ յամենայն վիճակն իւր բոլորովին, Սերաթն,
ի Զեյտն, ի Կամենիցն, ի Լուցկայն, ի յԱլատէմուրն, ի Մանքրման ի Վը-
լախաց երկիրն եւ ի Պրտինն, ի յԸնկիսալայն եւ ի յայլ ամենայն թէմն իւր առ-
հասարակ: Սէր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգւոյ յոյժ սիրեցեալ
ցանկալի եւ պարծանաց որդոցդ, Պատուական եւ սրբասէր քահանայիցդ, աս-
տուածասէր եւ բարեպաշտ պարոնացդ եւ ավագաւորացդ, փառաւոր խաւճանոյդ
եւ պուռճէանոյդ [2], իմաստուն վաճառականացդ, հարկաւոր եւ բարեգործ տանու-
տրացդ, ձեռնհմուտ արուեստագէտացդ, աշխատասէր հողագործացդ, եւ ա-
մենայն հայասեռ եւ քրիստոսաստուածատաւան մերոց ժողովրդականացդ,
արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից, մեծամեծաց
եւ փոքունց եւ ամենայն չափով հասակի: Որոց այդոցիկ ամենեցուն ի միա-
սին առ հասարակ, մեծաւ փափաքմամբ՝ կարողութեամբն Աստուծոյ Հաւր,
զաւրութեամբ Որդոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ,
Առաքեմք ձեզ ողջոյն սիրոյ ի միմեանս եւ աւրհնութիւն առաքելական, ի յաս-
տուածընկալ սուրբ նշանէս վանկոյ եւ ի հնորհաբաշխ աթոռոյս մեր Սուրբ Լու-
սաւորչին Գրիգորի, եւ յերկնահանկէտ սուրբ աթոռոյս առաքելական, եւ մեր
սուրբ առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի, եւ ի յայլ սուրբ նշխարացս
առաքելոց եւ մարտիրոսաց՝ որք աստ են: Զորոց սոցա արագահաս աքանչելա-
գործ կարող զաւրութեամբն եւ աւրհնութեամբն պահպանեալ փրկեալիք յա-
մենայն վտանգից փորձանաց հոգւոյ եւ մարմնոյ տեառմբ [3] եւ որդովք եւ ամե-
նայն գոյիւք· ամէն: Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն սիրելի որդիք մեր ի

1· Տես զծանօթութիւնն յերես 9:
2· Տես զծանօթութիւնն ի նոյն 9 երես:
3· Տամբ, տնով:

Քրիստոս, բազմաչարչար երկեամբք ծնունդք աւետարանաւճն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի ըստ աղէտալից հայրական ջերմն սիրս մեր զոր ունիմք ի վերա ձեր՝ հանապազ դուք լք հոգ մեր ի Տէր, եթէ արդեօք՝ կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և յարտաքուստ ներհակաց: Զոր և աղաւթիւք հայցեմք յԱստուծոյ և ի մեր Սուրբ Լուսաւորչէն՝ պահել զձեզ խաղաղութեամբ՝ հոգւոյ և մարմնոյ, առողջութեամբ և ամենայն բարութեամբ:

Եւ այլ ծանիք, մեր ըստ հոգոյ որդիք, զոր երեկ առ մեզ մեր սիրեցեալ և պարծանաց որդիս պատվելի եպիսկոպոս ձեր՝ Տէր Յոհաննէս՝ Լովիդ. ի յողջոյն և ի համբոյր սուրբ աթոռոյս, եւ ի չնորհաւորել զմեր ընտրիլս ի սուրբ աթոռս. և մեք զինք սիրով ընկալաք և հարկեւորեցաք. և եկեաց բազում աւուրք մի առ մեզ. Եւ ուղայորեցաք զՏէր Յոհաննէս արքեպիսկոպոս ձեր և զիւր եղբայրն ըզԳրիգոր աբեղայն, որ գնացին Աստուծոյ առաջնորդութեամբն ներկայնանալ ճանապարհն բազում աշխատանաւք ի յաստուածաբնակ մայրաքաղաքն ի յԵրուսաղէմ, ի տեսութիւն Սուրբ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և կատարեցին զիւրենց ուխտն. Եւ դարձեալ Տէր Յոհաննէս արքեպիսկոպոս յԵրուսաղէմայ և իւր եղբայրն Գրիգոր աբեղայն, և եկին առ մեզ: Նայ և առաւել զինք և զիւր եղբայրն սիրով ընկալաք և հարկեւորեցաք. զի վայել էր Տէր Յոհաննէսի պատվելի արքեպիսկոպոսիդ ձեր՝ և իւր եղբաւրն՝ զինչ որ սէր առնէաք դոցա: Զի մեր նախնեացն սիրած է և հարկեւորաց, և բարեկամ սուրբ աթոռոյս, և հրամանակատար որդի է: Աստուծով և մեք հաճոյացաք ի բարիոք վարս և իմաստութիւնս սորա, որ է սուրբ և աղաւթարար, կարգապահ, և առաքինի եպիսկոպոս է և առա(տա)ձեռն: Նայ որպէս մեր նախնիք՝ տէր Թէոդորոս և տէր Կարապետ կաթողիկոսն պարգևել էին ըզձեզ իւր թեմ և վիճակ, ըստ նըմին աւրինակի նոյնպէս և մեք պարգևեցաք մեր բարձր հրաւիրակաւս՝ և աւրհնուռթեամբ գրովս, զԼովին իշր բոլ(որ)ովին երկրով՝ Տէր Յոհաննէսի, դատի մի սեփական թեմ և վիճակ աթոռ և հանկըստեան տեղի, ի վերա աև սահմանիւն՝ զոր առաջին սուրբ և երջանիկ կաթողիկոսքն են հաստատել, որ ոչ ոք կարէ խորել ի Լովին երկրին թեմեն: Եւ առաքեցաք գալ առ ձեզ՝ հրամա(յա)կան և աւրհնութեան գրովս մեր, խրատել և ուսուցանել զձեզ, գնալով յաւրէնս և ի պատուիրանս Տեառն Աստուծոյ՝ անարատութեամբ և սրբութեամբ, ըստ աւրինի սուրբ և առաքելական եկեղեցոյս մեր. ի տուէ և ի գիշերի, և ոչ յայլ խոտորիլ և ոչ յահ(ե)ակ. Տալով զանձն աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ըզձեզ ուսուսցէ, սրբութեամբ, արդարութեամբ, երկեղիւ՝ սիրովն առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ, աղքատասիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որբոց և այրեաց, և ամենայն կարաւտելոց՝ կարելւոյ սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ զարժանաւորսն և ըզվկայեալսն ի կարգ և յաստիճան կիսատարկավագութեան, սարկավագութեան և քահանայութեան, եօթն աստիճանաւք: Կալցի հրամա-

նավս մեր առաքելաբար ի վերա ձեր իշխանութիւն կապելոյ և արձակելոյ՝ յերկինս և յերկրի. Զմեղուցեալսն զապըստամբեալսն յաւրինացն Աստուծոյ, և ի կանոնաց սրբոց հարցն՝ կըշտամբել և յանդիմանել, խրատել, սաստել, պատժել, մինչև ցուցանիցեն պըտուղս ապաշխարութեան. Զզղջացեալսն և զհնազան(դ)եալսն՝ սիրովն Քրիստոսի ընդունել ապաշխարութեան: Որով և դուք ամենեքեան, սիրելի որդիք իմ ի Քրիստոս, զաստուածապատիւ և զսքըբասէր առաքելաշնորհ արքեպիսկոպոսդ ձեր ըզՏէր Յոհաննէսդ, զիմ սիրելի և զհաւատարիմ որդիդ զպատվելի արքեպիսկոպոսդ ձեր՝ զսրբասէր այրդ, մեծաւ պատվով և յոյժ սիրով ընկալարուք, իբր զորդի իմ սիրելի և որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքելական այր, զի յայսմ հետէ իմ յաւժարական հրամանաւս ինքդ Տէր Յոհաննէսդ է ձեզ զատիմի սեփական եպիսկոպոս և ոչ այլ ոք, որ է այր ընդիր:

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունք՝ զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռոյ, զհաս տանց քահանայից և զամենայն ընտան(ե)աց նոցա, զերախայրիս կալոց և հնձանաց, զտերունականս և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանաց և զանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորա զըւարթ և առատ սրտիւ, որպէս զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած: Եւ մի՛ ոք կամ մեծ և կամ փոքր՝ յանդգնաբար իշխեսցէ հակառակիլ սըմա կամ բարձր հրամանիս մեր, և արգելցէ յիրաւանց տալոյ կամ խորեսցէ կամ յայլազգի անկանի և սուժ հասուցանէ Տէր Յոհաննէսիս՝ պատվելի արքեպիսկոպոսիդ. Զի որ ոք հակառակ լիցի սմա՝ նայ այնպիսին առցէ յԱստուծոյ զանէծն Կայենի, զմսան Յուդայի և զխաչահանուացն, և մնասցէ ի ներքոյ կապանաւք բարկութեանն Աստուծոյ և Սրբոյն Գրիգորի և մեր: Որով աւրհնեալքն ի յարժանապատվեալ արքեպիսկոպոսդ ի Տէր Յոհաննէսէդ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և աւրոշեալքն՝ ի նմին մնասցեն մինչև զղջացին հնազանդութեամբ, և առցեն զարձակումն ի Տէր Յոհաննէսէ արքեպիսկոպոսդ:

Վասն որոյ ի մտանել դորա և զրաւորական հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ մեռոնիս, իջցէ և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր եւթնապատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ: Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ ի ձէնջ և յաշխարհէդ ձեր: Տացէ ձեզ չինութիւն անդորրութիւն և խաղաղութիւն. Բուսոց և տնկոց և ամենայն անդէոց ձեր այճողութիւն և քաղաբերութիւն. Պաճարէղէն անասնոց ձեր անսղալ ծննդականութիւն. և ամենայն բարեաց ձեր լիութիւն և առատութիւն. ննջեցելոց հանկիստ և ողորմութիւն: Եւ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան առ հասարակ հոգով և մարմնով Տէր Աստուած Յիսուս Քրիստոս: Որպէս զի զառաւրեա կեանս ձեր բարիոք վայելելով, և երկնից արքայութեանն հանդերձ ձերաւք ննջեցելաւքն հասանիցէք ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

Շնորհեցաք և ի ձեռն դորա՝ ձեզ պարգևս հոգևորականս զեղն աւծութեան,

զսրբալոյս և զաստուածագործակ սուրբ մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն ավազանաւն յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի և ի ժառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ։ Զնոյնն ի ճակատն նշան հաստատութեան, եւ ի յաւծումն քահանայութեան, և ի նորոգումն սուրբ եկեղեցոյ, շնորհաւք Սուրբ Հոգւոյն և Քրիստոսի ցիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ աւրհնելոյն ի յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ գիր աւրհնութեան բարձր հրամանիս մերոյ ի յըստ ի մեզ մարդեղութեանն, ի մարմնով ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ՌԴՃԹ ամին։ Եւ ի սրբոյն Գրիգորէ՝ ՌՃԹ ամին, եւ ըստ գումարին ի մեծ թվ։ Հայոց ՊԾԸ ամին, եւ ի մեր նստիլս ի սուրբ աթոռս որ է ամ Բ, և ամիս Է, և աւր ԻԶ. ի ցունիս ամսոյ ԻԶ.[1] ի հայրապետանիստն ի Սըսոյ կլայն։ Եւ վասն առաւել հաստատութեան ավտոլոյ ձեր ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր Ձեռնագրովս։ Կնքեցաւ վերոյ ծաղկաւետ տիրական ամէնեղեւելի մեծ մատանավս։ Կամաւք բարերար մարդասիրին Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։ — Գրեցաւ ձեռամբ ցոհաննէսի գրագրի։

✠ ցԱԿՈԲ ՇՆՈՐՀԱԻՔՆ ցԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։

1. Ըստ այսմ՝ 1408 թուականի փրկչին՝ յառաջին օր նոյեմբերի (ոտն Ամենայն Սրբոց, ըստ ցայսմաւուրաց) օծուեր է կաթողիկոս։

Զ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — 1457-60.

(Զեռնադրեալ եպիսկոպոս գիտաչատուր վարդապետ՝ առաքէ առ Լեհահայս).

ՆՈՐ ՀԱԻՔ և ողորմութեամբ կամաւք և ընտրութեամբ ամենակալին Աստուծոյ Հաւրն երկնաւորի արարչին ամենայն արարածոց, և կատարողութեամբ և զաւրութեամբ միածնի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ Աստուծոյ ճշմարտի. Այս մեր գիր Հոգևորական հրամանի, և աւրհնութեամբ ամենասուրբ Երրորդութեան և միոյ աստուածութեանն, նամակ ողջունի սիրոյ և խաղաղութեան, քրիստոսասիրութեան և առաքելական. Առաքեալ յընթանուր ամենայն ծագս երկրի, ի փառաւոր և յերջանիկ գիտապետէ, նոր և ընտրեալ Հայրապետէ, և գերիմաստ պատրիարգէ, Տէր Գրիգորիկոսէ կաթողիկոսէ ամենայն Հայոց, եւ վաղարշապատու քաղաքի Հայոց Մեծաց տեղապահ և յաջորդ, աթոռակալ և փոխանորդ Սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի և Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. Զոր գրեմք ի գրանէ աստուածադիր սուրբ աթոռոյս երկնանման խորանէ և լուսակիր տաճարէ Կաթուղիկէ սուրբ Էջմիածնիս. ի յաստուածամուխ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի, եւ շնորհաբաշխ աջէ մեր Սուրբ Լուսաւորչին. Եւ ի կենդանաթաղ գերեզմանէ Սրբոյն Գրիգորի հրաշագործ խոր վիրապէ. Եւ ի սուրբ կուսանաց գերեզմանացս՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց, եւ յայլ բազմահաւաք սրբութեանցս՝ աստուածազարդ և մեծապայծառ սուրբ աթոռոյս Էջմիածնի: Զոր գրեմք և առաքեմք ի յաստուածապահ մայրաքաղաքդ Լով կոչեցեալ, ի Սեչովի, ի կաւեւնեցն, ի Սերաբն, ի Պօբիչան, Մանքերմանն, ի Պէչդան: Որոց այդոցիկ բնակչացդ ի միասին, նախ՝ պատուական քահանայիցդ ըստ կարգի, բարեպաշտօն տանուտերացդ և խոճայնոյդ, աստուածասէր ազատորդեացդ, աշխատասէր հողագործացդ, հաւատարիմ ձեռնաւորաց, փառաւոր և մեծ խոճայնոյդ, իմաստուն վաճառականացդ, ձեռնահմուտ արուեստաւորացդ, համեստ և երկեւղած տանտիկնացդ, և համայնքէն ամենայն ժողովրդականացդ, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից և ամենայն չափու հասակի. որոց անուանք ձեր գրեալ են և գրին ի գիրն կենաց՝ յանմոռաց յիշատակութիւն Աստուծոյ. ամէն:

Գիտուրիւն ձեզ ամենեցուն հոգևոր որդիք մեր ի Քրիստոս. Ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ մեր սուրբ Լուսաւորչին նստաք յաթոռս

Սուրբ Էջմիածնիս, ի յուղղել և ի կարգաւորել զկարգ և զկրաւնս Հայաստա-
նեայց սուրբ եկեղեցւոյ. Եւ այս եղև ի չնորհաց Սուրբ Հոգւոյն և ի խնդրոյ
հայկազեան տոհմի, և կամակցութեամբ արևելեան վարդապետացս. Շմաւոն
վարդապետէ, Սարգիս վարդապետէ, Դաւիթ վարդապետէ, Դանիէլ վարդա-
պետէ, (և) Ազատորդեացս և համաւրէն ամենայն ազգիս: Զոր և մեք ի հար-
կէ ապաւինելով յամենակալ նախախնամութիւնն Աբարչին ամենեցուն՝ ի
Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ յանձն առաք զայս անտ(ան)ելի հոգաբար-
ձութիւնս սուրբ եկեղեցւոյս Աստուծոյ. և բազում չնորհաբաշխութիւնս ա-
րարաք ի յայսմ ժամանակիս: Եւ ընդ սոցին եկն և Թաչատուր վարդապետն
ի հնազանդութիւն սուրբ աթոռոյս Էջմիածնիս, և մեք մեծ սիրով և պատուով
ընկալաք զդա ըստ տէրունական հրամանին. և երեր առ մեզ զթուղթն ինք-
նակալ Թագաւորին Գագեմիրին, եւ Լովի տանուտերացդ և զկամենէցիդ:
Եւ մեք վիաբանութեամբ վարդապետացս և եպիսկոպոսաց՝ ձեռնադրեցաք և
աւրհնեցաք զդա եպիսկոպոս մայրաքաղաքիդ Իլովի աթոռոյն և իւր ամենայն
բոլոր վիճակին, որ են այսոքիկ. Աստուածաչէն մայրաքաղաքդ Իլովն, ի Սե-
չովն. աստուածազոյգ և գեղեցկայարմար քաղաքդ, Կամենէցն և յայլ շրջա-
կայսն: Որ և առաջնորդութեամբ միածնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք առ
ձեզ զհաւատարիմ և զսիրելի հոգևոր որդիս մեր զՏէր Թաչատուր եպիս-
կոպոսս ձեր առ ձեզ՝ աւրհնութեան նամակաւ և բարձր հրամանաւ և սըր-
բալոյս սուրբ մեռոնաւ, քարոզել և խրատել և ուսուցանել զձեզ՝ գնալ յաւ-
րէնս և ի պատուիրանս Տեառն, (անարատութեամբ) և սրբութեամբ: Կալ-
ցի՛ն(ա) հրամանաւ մերով ի վերա ձեր առաքելաբար իշխանութիւն կապելոյ և
արձակելոյ զմեղուցեալսն և զապստամբեալսն ի յաւրինացն Աստուծոյ և ի կա-
նոնաց սուրբ եկեղեցոյ, և զանհնազանդսն իրաւամբ խրատել սաստել յանդի-
մանել և մխիթարել: Որով և դուք ամենեքեան սիրելի որդիք մեր ի Քրիս-
տոս, զառաքեալսնորհ եպիսկոպոսդ զԹաչատուր վարդապետ՝ մեծաւ սիրով և
պատուով յոյժ ընկալարուք զդայ, որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքեալ
Քրիստոսի ի դրանէ սուրբ աթոռոյս առ ձեզ առաքեալ: Այլ և զամենայն
կանոնեալ հաս և զիրաւունս, զոր աւրինաւք և կանոնաւք պարտիք տալ
Աստուծոյ բաժին, լի և անթերի առանց խորելոյ տուք ի ձեռս նորընծա
տէր Թաչատուր եպիսկոպոսիդ ձերոյ: Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ դըմա
կամ ընդդիմանալ հրամանաց դորա. իսկ որք յանդըգնին և հակառակին,
ի ներքոյ դատապարտութեան և պատժոյ լիցին: Իսկ հնազանդեալք դորա և
հրամանիս մեր՝ աւրհնեալ լիցին յԱստուծոյ և յամենայն Սրբոց և ի մէնջ:
Ամէն: Իսկ կապեալք և բանադրեալք ի դմանէ՝ ի նմին մնասցեն, մինչև հնա-
զանդեսցին, և ապա առցեն զարձակումն և զթողութիւն ի Տէր Թաչատուր
եպիսկոպոս վարդապետէ, կամաւ և ոչ ի հարկէ կամ բռնութեամբ: Վասն
որոյ ի մտանելն դորա ի յաւրհնեալ վիճակդ իւր, ինձէ և չնորհք ողորմու-
թեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր ևւթենպատիկ, և լցուսցէ զձեզ ա-
մենայն բարութեամբ: Բարձցէ ի ձէնջ և յաչխարհէդ ձեր՝ զամենայն ցա-

սումն և զպատահար. զսով, զսուր, զգերութիւն, զմահտարաժամ, զթրթուր, զղալուկ, զժանգ, զմարախ, զկարկուտ, զկայծակն, զերաշտութիւն և զամենայն պատիժ պատուհասի՝ որ գան ի վերա աշխարհի վասն մեղաց։ Այլ և աւրհնեսցէ զձեզ Քրիստոս Աստուած մեր. տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. բուսոց և տնկոց ձերոց և ամենայն անդէոց աճողութիւն և քալ պտղաբերութիւն տացէ, և ամենայն բարեաց լիութիւն և առատութիւն։ Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր գործնականս և արդիւնականս։ Ամէն։

Շնորհեցաք և ի ձեռս դորա ձեզ պատուական պարգև հոգևորական զեղն սուրբ աւծութեան, զաստուածունակ և զսրբալոյս սուրբ մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն սուրբ աւազանաւն՝ յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի և ժառանգակցութիւն Քրիստոսի, ի յաւծումն քահանայից՝ և նորոգումն սուրբ եկեղեցւոյ, զնոյն ի ճակատ հաստատութեան։ Եւ յամենայն ամի նոր առցէ, և զհինն ի նոր խառնեսցէ։ Ամէն։ Գրեցաւ գիր աւրհնութեան հրամանիս մերոյ....[1]

1. Պակասի ի քնաւգրին վերջն, որով և թուականն և ստորագրութիւն անուանն։

Է·

ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՑ ԱՌ ՄԻՒՌԱՑԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

15 ԱՊՐԻԼԻ, 1572·

(Պատուէն գՆուիրակն Տէր Մարտիրոս Ալվեցի· խնդրեն թոյլտուութիւն մեր-
ձաւոր իւնամուութեան, վասն սակաւութեան ազգայնոց։)

ՈՒՐ մաքրութեան և տեղի հանգստեան, լայնատարած բուրաս-
տան և այգի ցանկապատ՝ լրմամբ բոլորեալ, և կենաց հանգստա-
բան, օտարաց և կարօտելոց ասպնջական· արև լուսատու և $\overline{9}$[1] եր-
կրի· զամենեսեան լիացուցանէք· անուամբ բարի և տեսլեամբ գեղե-
ցիկ, բարեվիտ և իմաստուն·

Դուք աղբիւր էք գովելի,
Ցոյժ բարեհամ անճառելի·
Անմուտ արև էք աչխարհի·
Քննող տառից աստուածային,
Լուծող անյայտիմաստ բանին,
Լցեալ չնորհաքն աստուածային·
Նման ովկիանոս ծովին,
Ուռճացելոյ մեծ աղբերին,
Սաղարթախիտ փթթեալ վարդին,
Վարսաւորեալ նման նմին։

Երևելի և ականատուր և ամենայն ուրեք ցանկալի, յամենայն լեզուէ գո-
վեալ և յամենայն բերանոյ բարեբանեալ, յամենայն սրտից սիրեցեալ և ա-
մենայն մտաց տենչացեալ· պարծանք պարծանաց և պսակ ամենայն Հայաս-
տանեայց, հզաւոր հայր մեր, Տեառնդ մերոյ Տէր Միքայէլ, կաթողիկոս ա-
մենայն Հայաստանեայց։

Այս ձեզ սակայն գովեստ և բան
Փոքր ի շատէ ձեզ բաւական·
Զի ձեզ հրեղէն պիտի բերան՝
Զիրաւացին տայ և զարժանն·
Բայց դուք միշտ լոյս էք անխափան
Գործով մաքուր և սրբազան,
Ի գիշերի և ի տուընջեան·
Մինչօրէի լուսոյ նման·
Եւ ոչ լուսինն է ձեզ նման,
Զի նուաստանայ և առնու զվաղճան·
Բայց դուք հաստատ կաս և փարթամ
Միշտ անսպառ և անվախճան·

1· Այս փակագիծս բացուելու կարօտի· նման ձեւք նչանակին լուսին, արեգակ, բայց այս տեղ
մանաւանդ վարն այլ՝ չի յարմարիր այս քառերուս։

Եւ ոչ աստեղքն է քեզ նման,
Զի չերևին ի տուընջեան.
Բայց դու փայլես միշտ անսասան
Լցեալ լուսով արփիական.
Ի յայս միջի փորուածս որ կան,
Ոչ ոք գտայք ի ձեզ նման.
Որ թէ զծաղկունքդ ասեմ նման՝
Որ տերևով և պտղով կան,
Այլ և ոգքա ի դէմ աշնան
Թափեն զտերևն և մերկանան։
Ի յայս զգալեացըս տարրական
Դասք արդարացն է ձեզ նման.

Պայծառ պտղով անմահական.
Նոյնպէս և դու սեռ օրհնութեան
Ցաւէտ պտղով միշտ անծորան.
Առատահոս գետոց նման
Որ առատմամբ զազդումըն տան.
Այլ և աղբիւր ես անմահութեան,
Աղբեր զբաժակն ուրախութեան.
Սերովբէիցն ես դու նման,
Քերովբէիցն ասեմ պարծանս։
Զձեզ ինչ գովեմք մնք աննման
Տէր Միքայէլ կաթողիկոս, հայր պատուական։

Եւ ընդ կատար գովասանութեանս՝ աստուածային սիրով հարցումն ի մօտակայ հեռաստանէ, ամենիմաստ, հաւատարիմ, բարեպաշտ, աստուածասէր և երկիւղած, բարեմիտ և հոգիընկալ, հեզահոգի և առաքինի, բազմաց ցանկալի և մեզ յոյժ ըղձալի, հոգեցս բաղձալի և սրտէ սիրելի, հոգևոր հայր մեր բարի։ Իլխաց երկրիս Իլով քաղաքիս հավասար քահանայք և երեսփոխանք և ժողովուրդք, հարուստ և ռամիկ, այր և կին. Մեք անարժան հնազանդ ծառայքս մեզոք ի լի և պարտապան բիւր քանքարի, չեմք արժանի զքեզ գովելոյ, քանզի և չեմք հմուտ բանի. այլ զսէր սրտիս մերոյ փոքր ի շատէ իմաց լինի։ Զսակաւ գիրս գրեցաք, զի յիշեացես դու ի բարի. և հարցումն ի խորոց սրտէ բազմատենչ բաղձանօք և անձկատուչոր սրտիւ. ի մայր մածուցմամբ երկրպագութիւն և համբոյր մատուցանեմք, և ձեր գարշապարացդ գլուխ ի գետին դնեմք. Թէ, որպէս կեաք ի բերմանց կենցաղոյս և ի վշտաչատ ժամանակէս. և հայցեմք յԱստուծոյ որ հանապազ վասն ձեր մեզ բարիս լսել. բայց թէպէտ մարմնով հեռի եմք ի ձէնջ, այլ հոգով մերձ եմք։ Եւ թէ խոնարհիք ի ձեր բարձրութենէդ ի մեր նուաստութիւնս հարցման աղագաւ, ըստ բնածին բարուց ձերոց զոր ունիք առ հոգևոր որդիքդ, մինչ ի հասեալ ժամս՝ լաւ կամք, առողջ մարմնով և տարտամ հոգով. և առաջիկայն Աստուծոյ եմք անձին և ձեր սուրբ երկնաբացիկ աղօթիցդ. յուսամք յապէնիագն Աստուած, որ ողջ և բարով և խաղաղութեամբ կենայք ի պարծանս մեր և ի յամօթ ամենայն ներհակաց. ամէն։

Եւ ընդ դուզնաքեայ նամակիս ծանուցումն լիցի վեհ իմաստութեանդ քո, հոգևոր հայր մեր, Տէր Միքայէլ կաթողիկոս ամենայն Հայաստանեայց ազգիս, որ յուղարկած նվիրակն ծամթեցի Տէր Մարտիրոս եպիսկոպոս՝ ծաղկաւէտ կնքեալ չուրջառերականաւ և սրբալոյս մեռոնաւ հասաս իլով քաղաքս, առ վարատեալ ազգս հայոց, որ եմք ի հայրենական գաւառէ որոշեալ և ի մէջ այլասեռ ազանց բնակեալ. և ըստ հայրենական աւանդութեան մե-

րոյ ընդունեցաք զինքն իբրև գառաքելական այր. որպէս ի շուրջաբերականն գրեալ կայր, թէ հասակ և թէ չհասակ, զանկարծամահի և զկանամբի, և զաւետեանն որ Սուրբ Էջմիածնի մուտքն էր՝ տվաք լիով անթերի ի ձեռն Տէր Մարտիրոս եպիսկոպոսին. զառածն ինքն իւր հոգովն Թող պատմէ ձեզ: Դարձեալ տվաք հրամուդգ ֆ[1] արծաթ կրօչ ալահամբոյր, և մէկ լավ շուրջառ բոլոր զգեստիւ առանց վարշամակի, տվաք Սուրբ Էջմիածնին: Խ. Ծ.[2] տուն հայ կամք բնակեալ ի մէջ Իլով քաղաքի: Աստուած իւրեանց պարգատ[3] տայ. աղէկ ընդունեցին, և աստուածապէս հարկիս արարին, և աղէկ ողորմութիւն տվին ի մարմնաւոր ընչից իւրեանց, որն չատ, որն սակաւ ըստ կարեաց իւրոց, և զինքն աղէկ սիրտով ճանապարհորդաց: Տէր Մարտիրոս եպիսկոպոսն ինչպէս որ տեսաւ աչօքն՝ այնպէս Թող պատմէ:

Դարձեալ ծանուցանեմք հոգևոր տեառնդ մերոյ զմեր սակաւութիւնս ի մէջ այլասեռից. ամէնքս ազգատակ ենք, խառնակել ենք հետ միմեանց, ոմն ազգակցութեամբ և ոմն խնամութեամբ. չի լինիր որ այս բանս ի մեր մէջն չլինի: Երթամք ի Ֆռանկէ և յՈւզէ աղջիկ առնումք և աղջիկ տամք, հաւատոց պատառում կը լինի, և յետին չար կու լինի քան զառաջինն. լաւ է մանաւանդ չար լինալու քան զբուն չար: Տէր Մարտիրոս եպիսկոպոսն ինչպէս որ զմեր նեղութիւնս աչօքն տեսաւ՝ հոգովն Թող պատմէ: Հրամանքդ մեզ հոգևոր հայր ես և մեք քո հնազանդ ծառայքս. խղճայ մեր անճարակութեանս. ժողովք արա՛, գլուխ եպիսկոպոսաց և գլուխ վարդապետաց, և մեր բանն առաջի ձեր առնուք և աղէկ քննութեամբ մեզ բարի ճանապարհ ցուցանէք. որպէս սուրբ հարցն կանոնքն կու հրամայէ, «Առաջնորդ ըստ ժամանակին իւրոյ ստացի զյառաջնորդութիւնն իւր»: Ցայսմ ժամանակի ի վերջին յաստուածային օրինացն սառուցեալ են ազգք մարդկան. սառն ի վրայ սառի դնես՝ եղանակս ձմերան է, պինդ կու սառանայ յերկուց կողմանց. ինչպէս որ Հոգին Սուրբ տնօրինէ՝ այնպէս արէք: Ի մեր յառաջին հարցն աւանդութեան կայր ի մեր մէջն՝ Սալմաստեցուն ի վեր[4]: Որ բան որ յառաջ եղել է՝ մերձաւորութեամբ, հիմի այլ Թող լինի: Այս մեր Տէր Մարտիրոս եպիսկոպոսն հոգևոր տիրոջն մօհրովն Թուղտ եգիր ի միջվիս, որ բան Էջմիածնի աթոռոյն չահ և օգուտ է՝ զայն հաստատեց. կու խնդրեմք ի քո Սրբութենէդ, որ այն կարգին և սահմանքին վերայ ձեր ձեռնագրովն և ձեր ծաղկաւէտ մօհրովն մէկ լաւ Թուղտ ղրկես, որ մեր բանն աղէկ հաստատի. և Թողութիւն տաս այս բանիս վերայ. զմեր խնդիրն անտես չառնես. հանապազ մեք սուրբ Էջմիածնի ծառայն ենք, և ի ձեր ծառայութեան կանգնել ենք հոգով և մարմնով. և զսուրբ Էջմիածնի մուտքն և զնվիրակին

1. Ֆռանչ հարիւրի կամ հազարի Թուանշան է:
2. Այսինքն իբրեւ 40 կամ 50 տուն:
3. Թրք. պէրէքէթ, առատ արդիւնք:
4. Որ է Մաթէոսոս Ն կաթողիկոս, 1542–51:

մուտքն՝ լիով անթերի կու տամք, և աղէկ սրտով կ՚ուղարկաւորեմք։ Ձեր հրամանքդ այլ մեր ազգիս որ ի հօս եմք բնակեալ՝ մէկ բարութիւն արէք, որ անչինչ յիշատակ մնայ ի միջի մերում. որպէս զքաջ հովիւ զհօտդ արաջէ, և զմեր կեր[1] գայլու մի՛ տար. որ յանապատ ատենին ասես, թէ Ահա ես և մանկունք իմ։ Եւ այդ բաւէ աստուածիմաստ և խոհեմամիտ անձանցդ։

Ողջ լերուք ի Տէր յամենայն ժամ, վասն մեր։

Գրեցաւ քարտէզս ի յաչխարհս Իլախաց ի քաղաքս Իլով, ըստ ի մեզ մարդեղութեանն Քրիստոսի՝ ՌՇՀԲ ամի, և ի մերում յաբեդական տումարի ի յօրելինի և ԻԱ աւելի,[2] յամսեանն ապրիլի Հռովմայեցոց ամսի, ԺԸ համարի յօրն։ Ձեռամբ Թերավարժ գրչի Ի. Բ. Դ. Ժ. Ի. Բ. (?)

Ը.

ԹՈՒՂԹ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ի ԼԵՀՍ

վասն Յոաազատկին և վասն Լուսոյն. Երուսաղեմ. 1589.

Տէր Աստուածատուր վարդապետէ և պատրիարգ Կոստանդնուպօլսի մայրաքաղաքի աթոռակալէ, և Երուսաղեմայ Քրիստոսի գերեզմանին լուսարար Տէր Սամուէլ եպիսկոպոսէ. Սիրով Աստուած Սուրբ Հոգոյն ժամանեալ հասցէ ողջոյն և խաղաղութիւն և առաքելական աւրհնութիւն, ի յամէնաւրհնեալ, և յաստուածապահ երկիրն Իլախաց. ի Լոռն և ի Կամէնիցն և յայլ ամենայն թէմն իւր առ հասարակ. ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ յոյժ սիրեցեալ ցանկալի և փափաքելի պարծանաց որդոցդ. Նախ և առաջին, Տէր Գալուստ եպիսկոպոսին, և քահանայիցն և երեսփոխաներուն, և տանուտէրացն, հաւասար մեծի և փոքու, մեծաւ փափաքմամբ ի չնորհացն Քրիստոսի, աղօթիւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, կարողութեամբն Աստուծոյ Հօր, ի ձեռն Հոգոյն Սրբոյ, առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ և աւրհնութիւն առաքելական։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի որդիք մեր ի Քրիստոս, զի ըստ

1. Մեր կերակուրն, մեր ուտելիքն։
2. Այսինքն ՌԻԱ Հայոց, 1572։

աղետալից գթոյ մերոյ զոր ունիմք առ ձեզ, հանապազ հոգ մեր դուք էք ի Տէր, եթէ որպէս կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և յարտաքուստ ներհակաց։ Զոր և մխթարեսցէ զիմօք և սրտահաւաչ արտասվօք խնդրեմք յԱստուծոյ, հանդերձ միաբան եղբայրութեամբս. միշնորդ ուներլով ի մաղթանս մեր՝ զամենօրհնեալ սուրբ զԱստուածածնին և զՍուրբ Գրիգոր Լուսաւորիչն և զամենայն Սուրբս Աստուծոյ. զի իւր արարչական խնամովին և եռանդնաչարժ սիրովին գթասցի ի վերայ ձեր. ամէն։ Եւ զամենայն պատահմունք տարերաց և տարադէպ փորձութիւնք սատանայի՝ որ գան ի վերայ աշխարհի՝ վանն ծովացեալ մեղաց մերոց, բարձցէ ի ձէնջ և յամենայն սահմանաց ձերոց. ամէն։ Եւ լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ հոգոյ և մարմնոյ, տամբ և տեղօք, զարմօք և զաւակօք, որդովք և դստերօք, սիրելեաք և բարեկամեաք, այգօք և բուրաստանօք և ամենայն գոյիւք. ամէն. Այլ և ժաղովրդապետն ամենեցուն Քրիստոս՝ օրհնեսցէ զբոլոր ժողովուրդդ. զքահանայքդ ընդ սուրբ քահանայիցն Մելքիսեթեկի և Ահարոնի օրհնեսցէ. զմեծատունքդ՝ ընդ մեծատանցն ողորմածաց ընդ Աբրահամու և ընդ Յոբայ համբերողին. զտանուտէրքդ՝ ընդ տանուտերանցն բարեպաշտից. զաղքատդ՝ ընդ կամաւոր աղքատին Ղազարու. զծերդ՝ ընդ ծերոյն Սիմէոնի, զերիտասարդդ՝ ընդ Սահակայ և Յովսեփայ. զմանկունս ձեր՝ ընդ Երից մանկանցն. զտղայս ձեր՝ ընդ տղայիցն մատուցելոց առ Քրիստոս. զճանապարհորդս ձեր՝ ընդ Մարխասայ և Կոստիրայ՝ չահավճառ և արդիւնաւոր արասցէ. ամէն։ Զարվեստաւորս ձեր ընդ Բեսաղիէլի հանճարեղս արասցէ. ամէն։ Զհողագործսդ՝ ընդ ճշմարիտ և քրտնաջան աշխատողացն պսակեսցէ. ամէն։ Զկանայս ձեր ընդ իւղաբերից կանանցն օրհնեսցէ. և ամենայն որպիսութեամբ բարեաց զտունս և ըզչտեմարանս ձեր լցուսցէ. ամէն։ Այլ և հայցեմք յամենասուրբ Երրորդութենէն, զի պատճառն բոլորից՝ ահեղն Աստուած Հայր երկնաւոր հաշտեսցի ընդ ձեզ. Ծագումն ի Հօրէ անճառ ծննդեամբ Որդին Միածին ծագեսցէ ի ձեզ զլոյս անճառ չնորհաց իւրոց. Հոգին Աստուած ահեղութեամբ չրջի ի վերայ ձեր, և բաչխէ զպարգևս անապական փառաց իւրոց. ամէն։ Եւ տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն, խաղաղութիւն, հիւանդաց առողջութիւն, գերելոց ապատութիւն, մեղաւորաց թողութիւն, անզղջից զարձ և ապաշխարութիւն, սգաւորաց մխիթարութիւն. անդաստանաց ձերոց պտղաբերութիւն. բուսոց և տնկոց աճողութիւն. անասնոց ձերոց անսխալ ծննդակալութիւն և ամենայն կենդանեաց առողջութիւն. ննջեցելոց ձերոց հանգիստ և արքայութիւն պարգևեսցէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն։ Այլ և բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և Ս. Կարապետին և Ս. Լուսաւորչին, բացցէ Տէր Աստուած զդուռն հրաշից անճառ ողորմութեան իւրոյ ի վերայ ձեր. իբրև զցաւս գարնանային, և իբրև զճառագայթս արեգականն, զկանուխն և զանագանն, ի տվէ և ի գիչերի, ի նստել ի տան և գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, յուտել և ի յըմպել, յասել և ի լռել, գնել և ի ծախել, չինել և ի տնկել, գործել և ի հանգչել, (ի) կեանք և ի մահ

ի վերայ երկրի և հող տապանի, աստ և ի հանդերձելումն և յամենայն ժամու. ամէն: Այլ և տացէ ձեզ Տէր Աստուած կրկնակի բարութիւն, առատութիւն և լիութիւն, խաղաղութիւն և խնդութիւն, առողջութիւն և կարողութիւն, զաւրութիւն և արիութիւն, հաստատութիւն և անշարժութիւն, ուրախութիւն և բերկրութիւն, սէր և միաբանութիւն, և ամենայն բարի իրաց աճողութիւն և կատարելութիւն. ամէն: Այլ և ի հասանել բանիս առ ձեզ, զամենայն ներհակս չարին ի բարին փոխարկեսցէ. զնեղութիւն՝ ի յարձակութիւն, զչարչարանսն՝ ի հանգիստ, զդառնութիւն ի քաղցրութիւն, զրտմութիւն՝ յուրախութիւն, զսուգն ի խնդութիւն, զարտասուսն՝ ի ծաղր, զհիւանդութիւն՝ յառողջութիւն, զմահն՝ ի կեանք, զնվաղութիւն՝ յառատութիւն, զպակասութիւն յոլովութիւն, զթերութեան ի լիութիւն, զխռովութիւն՝ ի խաղաղութիւն, զատելութիւն՝ ի սէր, զթշնամութիւն ի հաշտութիւն, զծուլութիւն՝ ի յարիութիւն և յաստուածային օրհնութիւն. ամէն:

Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի ձեզ վասն Զատկին համար, թէ լոյսն գերեզմանին որպէս ելաւ: Ի զատկէն ժէ աւուր յետև երուսաղէմայ պարոնին քօֆխայեան [1] Ուլախով յԱտամբօլ եկաւ, և եկաւ ի Մահմուտ փաշային քարվանսարայն իջաւ. և Հռոմին ելան ի մօտն գնացին և ասացին, թէ յերուսաղէմէ ինչ խապար ունիս. նայ ասաց այն քօֆխայեան Հռոմիերուն, թէ դուք ինչ ազգ էք. և նոքա ասացին թէ մեք Հռոմ ենք: Եւ քօֆխայեան ասաց, թէ ձեզ մասլաֆաթ չկայ, գնացէք դուք, թող հայ ազգն գայ: Եւ յԱտամբօլ քաղաքս համբաւն վերացաւ, թէ յերուսաղեմայ մարդ եկեր է: Եւ Հայոց ազգն քահանայք և տօլմաթորնի ի միատեղ ժողովեցան և գնացին մօտ ի այն քօֆխայեան. և եհարց, թէ ինչ ազգ էք. և նոքա ասացին, թէ մեք Հայ ենք. Եւ ասաց, թէ ձեզի ուրախութեան խապար եմ բերեր. և Հայոց ազգս առին զքօֆխայեան, և բերին ի պազաստանն: Եւ հանեց ի դուրս մէկ յարապի գիր, հօքում [2] մի, որ յերուսաղեմայ սանճախպակուն մօհրն ի վերայ էր, և զատուն մօհրն ի վերայ էր, և սուպաչուն և էմենին մօհրն ի վերայ էր. և հետն մէկ ապէկ կարդացող զատի մի այլ կայր. երեսս ի նորա ձեռքն, թէ կարդա՛. և այն զատին այլ առաւ ի ձեռքն, և բարձր կարդաց ի պազաստանին մէջն, որ տաճիկ և ճհուտ և Հռոմ և Հայ և չՔ (72) միլաթ ամէնն լսեցին. և գրած էր այսպէս. Թէ, յերուսաղէմ քաղաք՝ Հռոմն և Ֆռանկն, Հապաշն և Կուրճին և Խպիին, այս ե ազգս՝ ապրիլի Զ զատիկ են ասացեր. և Հայ, և Ասորին և Նեստորն և Մարոնին, այս չորս ազգս ապրիլի ԺԳ զատիկ են ասացեր. և չատ աղմուկ է եղեր. և Հռոմին պատրիարգն ի յամէն աշխարհ թուխթ է ղրկեր, թէ ինչ զատար որ գլուխ մարդ կայ՝ նայ թող գայ. Հայերն մեզ այսպէս բան կ'այնեն: Եւ Հռոմ ազգն հանց չատ եկեր է՝ ԺԲՌ (12,000) հոգի եղեր է. և

1. Թր. Քէհեա. ատիկան, գլխաւոր:
2. Հրամանագիր:

գնացեր են Ցաղկազարդին չաբաթ օրն մօտ ի ղատին և էմինին և ի պա-
րոնն, թէ եկէք զՑարուԹեան դուռն բացէք, որ ի ներս մտեմք։ Ղատին և
էմինն և պարոնն՝ ասցեր են Հոռմին պատրիարգին, թէ Թող հայ ազգն այլ
գայ, և ապա զդուռն բանամք. և Հոռմին ասցեր են, թէ այն չորս ազգն
չեն ի գար. մեզի բաց որ ի ներս մտնեմք։ Եւ յամէն մարդոյ գլուխ Հոռմին
չորս չորս ֆլորի են ժողովեր և տվեր են էմինին. և ապա Թողեր են որ
ի ներս են մտել. և ճաշուն՝ ի ցարուԹիւն կու մտնուն ուրախուԹեամբ. և
յետ ժամ եղեր՝ և լոյս չէ ելեր. և ճրագվառք եղեր է՝ և լոյս չէ ելեր. և
պահակել ժամ եղեր է՝ և լոյս չէ ելեր։ Եւ յետոյ պարոնին մարգիքն և են-
կիչարիքն և ղատուն մարգիքն և սուպաշուն և էմինին մարգիքն զՀոռմին
ծեծեր և ի դուրս են արեր. և զհոռմին պատրիարգն և զգլուխ եպիսկո-
պոսնին, և զգլուխ աքապուռնին? զամէնն ի զնտան կու ձգեն, և կ'ասեն,
Թէ ի ձեր հաւատոցն վերայ պակասուԹիւն գտաք. և զամէնն կու տուգնեն [1].
ի պատրիարգէն՝ Ռ և ՆՃ (1500) ֆլորի կ'առնուն, և ի ժողովուրդենէն՝
յորմէ Ճ ֆլորի կ'առնուն, յորմէ ԵՀ ֆլորի, և յորմէ Ը, յորմէ Կ, յորմէ
Ծ. զհոռմիներուն մեծ ու փոքր՝ զամէնն կու տուգնեն. և հոռմ ազգն սևե-
րես լինալուն՝ մէկ չաբաթ ի դուրս չեն եղեր. և ոչ ի մարդոյ յերես են նա-
յեր։ Այս հոռոմ ազգն պիզմի [2] ազգ է. ոմանք զատիկ արեր են և յոմանք
հետ Հայոց ապրիլի ԺԴ զատիկ են արեր. և երբ մեր զատիկն եկեր է՝ նայ
գնացեր են Հոռոմին ի ղատին և ի պարոնն, Թէ մեք այլ կրկին ի ցարու-
Թիւն կու մտեմք. և Հայերն ասցեր են ղատուն, Թէ նոքա զիրենց զատիկն
արին, հետ մեզ Թող ի ներս չմտնուն. և ղատին այլ կ'ասէ, Թէ խիստ աղէկ,
Թող չի մտնուն. և Հայոց ազգն և Ասորին և Նեստորն և Մարունին մը-
տեր են ի ցարուԹիւն. և յԵրուսաղեմայ քաղաքին պարոնն և էմինն, և
բերդին ենիչարիքն և ութ զատի և տաճարին մեծ չեխն, և Երուսաղեմայ
քաղաքին գլխաւոր տաճկինին, ամէնն իրենց մարդոցմովը կու մտնուն ի ցա-
րուԹիւն, և զկանԹեղնին կու մարեն, և կու նստին ի Քրիստոսի գերեզմա-
նին դուռնն ի վերայ, Թէ տեսնուք Թէ ո՛րպէս կ'ելնէ լոյսն։ Եւ Հայոց ազգս
ուրախուԹեամբ ի շուրջ են եկեր. և երբ լուսն ելնելու ատեն եղեր է, և հան-
դարտ որոտում եղեր է. և Սուրբ Լուսաւորչին աղաւԹիւքն և բարեխօսու-
Թեամբն լոյսն բխեր է, և Լուսաւորչին կանԹեղն ինքն ընդ ինքն վառեր է.
և պարոնն և էմինն և զատեստանն և այլ տաճկինին զլոյսն տեսեր են, և աս-
ցեր են մեր եպիսկոպոսին, Թէ լոյսն ելաւ. և կու մտնեն ի ներս, մեր լուս-
արար Տէր Սամվել եպիսկոպոսն, և զլոյսն ի դուրս կու բերէ Հայոց ազ-
գիս. և տաճկանց ազգն ամէն կու տեսնուն և կու զարհուրին և կ'ասեն, Թէ
հաւատքն Հայուն է։ Եւ Հայոց ազգս խիստ ուրախացան որ Աստուծոյ ո-
ղորմուԹեամբն պարզերես եղաւ, և Հոռոմաց ազգն սևերես եղաւ, և գլխի-
կոր։ Եւ յԵրուսաղէմ քաղաք տաճկաց ազգն Հոռոմին կ'ասեն եղեր, Թէ

1. Տուգանք կ'առնուն։ — 2. Հակառակող։

Ծոյ չներ, լոյն այնպէս կու լինի. դուք մոլորեցաք և հետ ճշմին զատիկ արիք. և հռոմին ի յամօթացն չեն զրուցեր: Եւ երբ տեսան որ այսպէս հրաշք եղաւ, նայ Երուսաղեմայ զատին ինքն իւր ձեռօքն տան թուխթ կու գրէ, և զիւր մօհրն ի վերայ կու կոխէ, և զպարոնին և զէմինին, կու տայ պարոնին քօֆխային, թէ ա՛ռ և տար Հայոց ազգին բաժանէ. և քօֆխայեան զթխթերուն զորն ի Հայլապ կու տայ, զորն ի Ալմիթ, զորն ի Ղայսարի և զորն ի Թոխաթ և ի Սեաստ, և զմէկ թուխթն յԸստամպօլ բերին. և զայս բաներս ամէնն ի մէջն գրած էր. և յետոյ գրած էր, թէ Հայոց ազգն հանց ազգ է՝ որ զԱ. (11) ազգն կոխեց և սևերես արաւ: Եւ յԵրուսաղեմայ մինչև յԸստամբօլ գինչ քաղաք որ կայ՝ զամէնն զհռոմին տուգներ են, թէ դուք զձեր հաւատն մոլորեցաք. և Հայոց ազգ խիստ ուրախացեր են, և տավուլով և զուռնայով կերևխում են արեր. և ամէն ազգ հռոմին յետևանցն կու կանչեն, թէ զզատիկն մոլըրեցաք և ճուհուտ եղաք. նոքա այլ ի յամօթնացն և սևերեսութենէն մարդու երես չեն նայեր և ճուտայ չեն ի տար:

Եւ երբ մեզի այս բարի խապարս որ եկաւ և զթուխթն կարդացին, չՐ (72) միլլաթ լսեց, և Հայոց ազգն խիստ ուրախացան, և հռոմին սևերես եղան և գլխիկոր. և արարիչն Աստուած զՑէր Աստուածատուր վարդապետին աւուրքն շատ այնէ, որ ժողովեց զԸստամբօլու զքահանայքն և զտանուտէրքն, և ասաց. Թէ, Այս տարի հայոց տարու գլուխ է. զինչ որ ձեր նամուսն է՝ նա զայն արէք: Եւ առաք զԵրուսաղեմայ եկած քօֆխայեան իւր մարդոցմովն, և տավուլով և զուռնայով, նաղարով և պօռուով, ի Սուլու մանաստիրն ի պատիւ բերաք իւր մարդոցմովն, և երեք օր հարկեցայք: Եւ վարդապետն մէկ աղէկ կապայ մի փէշքաշ երետ, և Ըստամբօլու տօլմաթորքն մէկ արծաթի սուրահի մի տվին և արծաթի մշոպայ[1] մի և արծաթի թաս մի, և արծաթի գաւաթ մի. և թող զայլ փլորիքն որ տվին, և ի տավուլէն և ի զուռնայէն, ի նաղարայէն և ի պօռուէն հանց եղաւ, որ Ըստամբօլ քաղաք ի դունդ (թունդ) ելաւ: Եւ տանկաց ազգն կ'ասէին թէ այս ինչ ուրախութիւն է. նայ կ'ասէին թէ Հայոց ազգին Երուսաղեմայ խապար եկեր է՝ որ լոյսն Հայաւն ելեր է, և հռոմին լոյս չէ ելեր. և հռոմ ազգն ի սևերես լինալուն մէկ շաբաթ ի դուրս չելան: Եւ այսոր յետև գնաց քօֆխայեան ինքն իւր բանն. և մէկ շաբթու յետև հռոմի դարձած տաճիկ եկաւ, որ զԵրուսաղեմայ բերդին դուռն կու պահէ եղեր է, նայ այլ այսպէս զրուցեց. և հռոմիներուն յերեսն կու թքնուր. և կ'ասէր, թէ զՀաւատքն ձեր մոլորեցաք: Եւ յետոյ յայլ կանանչ գլուխ եկաւ, և ճուհուտ եկաւ, և արապ եկաւ, և ենկիչարի եկաւ, և Հռոմ եկաւ. և նոքա այսպէս վկայութիւն տվին, և Հայոց ազգս առաւել ուրախացան: Եւ յետոյ յուլիսի ԻԲ, Երուսաղեմայ Քրիստոսի գերեզմանին յարութեան լուսարարն եկաւ, որ զլոյսն ինքն իւր ձեռաւքն է

1. Կուժ. չորի աման:

հաներ և աչուքն զամենայն բան տեսեր է, և նայ այլ այսպէս վկայութիւն երեսո, Տէր Սամվէլ եպիսկոպոս։ Եւ Հայոց ազգիս կրկին և երեքկին ուրախութիւն եղև. որպէս ասէ աստուածային գրեանքն, թէ բ և գ վկայիւք հաստատեսցի ամենայն բան։ Հայոց ազգն այլ այնպէս հաստատուն և անշարժ եղօ ի վերայ հաւատոց։

Եւ յառաջմէ ի ձեզ մէկ այսպէս մօհրով թուխթ մի ղրկեցաք, վասն զատկին համար. և յետոյ որ այս Տէր Սամվէլ եպիսկոպոսն եկաւ՝ որ զլոյսն ինքն իւր ձեռօքն էր հաներ և զամենայն բան աչուքն էր տեսեր, և վկայեց, և այսպէս կրկին ձեզ այլ իմացուցաք որ պինտ ըստուդ է, հաւատայք եւ Սուրբ Լուսաւորչին փառօքն փառք տայք Աստուծոյ, և ուրախացիք հոգով և մարմնով, որ Հայոց ազգն պարզերես եղաւ ԺԱ ազգին ի մէջն։ Բայ (բաւ) է։

Եւ ի հին և ի նոր գրեանքն շատ բան գտաք վասն Քառասատկին համար. դուք այլ իմացիք։ Ի թվին Հայոց ՈՒԶ (1197) խանկարեցին զգատիկն և ընդ աստուածասպանսն արարին այլայոգիքն. 'ի գլուխ կատարման սուրբ յարութեան աւուրց՝ բերին եղբարց մերոց զաւետիս լուցման կանթեղի զեբրեզմանին ի մեր զատկին, և յամօթ եղեն հակառակքն որպէս և այժմոյս որ յամօթ եղեն Հոռմեերն. այլ բաւէ։ Եւ ի մէկ գիրք մն այլ այսպէս գրած էր. Սրբոյն Գրիգորի վերագետոզի Հայոց Վկայասիրի՝ բան յորդորական, վասն մոլորման զատկին. Ի թվականութեան Հայոց ՇԼԱ, (1081–2) ի սուրբ զատկէն մոլորեցան ժ ազգ հաւատացելոց, և Հայք և Ասորիք միայն մնացին հաստատուն, և Հոռմք և Ֆռանկք հետևեցան Իռիոնի, որ արկանէր զտումարն յապրիլի ե, և զլրումն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Զատարու. զոր Հայք և Ասորիք և Երբայեցիք արկանէին ապրիլի Զ, որ հանդիպեցուցանէր ի տօն Քառազարդարին. յորժամ ժողով արարին զԻռիոն ոչ կոչեցին. և նայ նախանձեալ և եկեալ գաղտ առեալ զգիրն, և քերեաց և արար զվեցն հինգ. վասն որոյ յամէն Ղե (95) ամի մոլորին ցոյնք ի զատկին։ Ցայնժամ դասք քահանայիցն որ էին ի քաղաքն Յերուսաղէմ, ազգ արարին Տեառն Գրիգորիոսի Վկայասիրի Հայոց կաթողիկոսի. և նայ գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեան։ Եւ էր պատճէն գրոյն այսպէս, զոր գրեաց Ներսէս. «Քրիստոսի Որդւոյ միարիւ սիրողացդ և դաւանողացդ Սրբոյ Երրորդութեան, քահանայիցդ և իշխանացդ և այլ ամենայն հաւատացեալ ժողովրդոցդ, ողջոյն։ Զաստուածասիրութեան գիրս ձեր ընթերցաք և զխնդիրս ձեր լուաք վասն աստուածութեան սուրբ զատկին, և յոյժ գոհութիւն մատուցաք Աստուծոյ՝ որ շարժեաց զձեզ յայդ։ Եւ արդ, Տէր ցնուս Քրիստոս զաւրացուսցէ զձեզ ի նոյն կալ հաստատուն և տալ պատասխանի ընդդիմողաց։ Գիտէ ինքն ամենագէտն ողորմութեամբն իւրով և ամենաքննին զօրութեամբն իւրով, որ թէպէտ և գործովք միշտ մեղանչեմք Աստուծոյ, այլ հաւատով ես և հաւատքս (հօտքս) իմ ամենեքեան զուղիղն և զճշմարիտն ունիմք։ Եւ եթէ ի վերայ ճշմարտութեան՝ պատժոց հանդիպիմք, մի՛ զանգիտէք և մի երկնչիք, զի վարձս ի Տեառ-

նէ առնուք, և մերձ է ժամանակ փրկութեան, և պարտ է այսմ ամենայնի կատարել, զի երևեսցին հշմարտեալքն։ Եւ ես որ խրախոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ, կամաւորութեամբ մահակից և ես գտանիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց. և եթէ բանիւք և քննութեամբ էր մեզ նեղութիւնս կամ հարցափորձութեամբ, ապա պատրաստ կամք յամենայն իրս տալ պատասխանի՝ զոր ինչ և հարցանիցեն. և եթէ տանջանաւք և կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրացաս կամք. և զհանգնամ զԱստուածոյ յամենայն ժամ, որ մինչև ցայժմ յանաստուած հեթանոսաց գատէաք, և այժմ ի քրիստոնէիցդ նոյնպէս։ Բայց դուք մի՛ վհատիք. կարող է Աստուած ընդ փորձութեանդն և զելս առնել. սակայն որչափ կար մեր է՝ ամենեքեան որպէս գքաջ զինուոր Քրիստոսի մարտիք զբարիոք մարտս ի վերայ ճշմարտութեան։ Վկայէ ինձ Տէր Աստուած իմ, վասն զի չեմք ի սաղլոմն ինչ, և ոչ եմք ի թիւրութիւն հաւատոց, և կամ յանդգնաբար իրաւ զմեզ կարծեմք. վասն զի այդ անզգամաց է գործ և անմտաց. այլ չնորհօքն Աստուծոյ և սրբոց լուսաւորչացն, զարքունական զճշմարիտն ունիմք զճանապարհն որ ի Քրիստոս Յիսուս, և ոչ յայ խոտորելով մեր և ոչ յահեակ, և ի պատուիրանացն Աստուծոյ ոչ օտարացեալ, և ոչ հպարտացեալ և ամբարտաւանեալք, որպէս զայլս ոմանս։ Եւ արդ եթէ խարդախութեամբ ինչ ունիմք զթերութիւն հաւատոց, վասն է՞ր չարչարիմք իբրև զպատժապարտս և ոչ ունիմք հանգիստ, այլ տագնապաւ չրխիմք ընդ ծով և ընդ ցամաք. որպէս և Պաւղոս պատմէ զինքեանէ, զնեղութիւնս, զվիշտս, զչարչարանս, զհալածանս, և զայլսն ամենայն. և թէ անտի յուսով էր այս ամենայն չրխագայութիւնս, և զիմ հայրենի տունն ի խաղաղութեան ժամանակ թողի, և փախուստ և զնեղութիւնս և անձուկս ինձ տարապարտ է անցանել. եթէ պարտաւելի հաւատոյ[1] զայս գործեցի, և քառասուն ամ[2] իմով չրխագայութեամբ և յայս փոխեցայ, ապայ ուրեմն խաբեալ ես միայն եղէ. բայց յուսոյն Աստուծոյ եմ վկայութեամբ սուրբ գրոց. վասն զի զուղղափառ և զանթերին ունիմ զհաւատն։ Արդ, ամենեքեան որ իմում հայրապետութեանս և հաւատոյս կցորդ էք, մի՛ թուլութեամբ և կամ աչառանաւք պատկառէք կամ երկնչիք, և զԱստուած վճառէք վասն անտի կենացս. վասն զի այս է ժամանակ ընդունելոյ և առնուլ պսակ ի Քրիստոսէ. և երաշխաւոր եմ ձեզ առ Քրիստոս. վասն զի որ սուրբ հարց զցանկն ոչ պատառէ՝ ընդ սուրբսն պսակիցի. ապա թէ ոք զմարդկան փառս առաւել սիրեսցէ քան զԱստուածոյն, ի դատաստանի Որդւոյն Աստուծոյ ընդ ուրացողսն գտցի, որք զքրիստոս Աստուած ոչ խոստովանեցան և ի մեր հաւատոյս և յօրհնութենէն անմասն ելցէ։ Իսկ հաւատացեալքն ի հաւատս մեր՝ օրհնեալ եղիցին յերկնաւորաց և յերկրաւորաց, ի մէնջ և յԱստուածոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

1. Պէտք է ըսել, պարտաւէլ հաւատով, կամ վասն պարտաւէլ հաւատոյ
2. Ցօրինակին խ ամ։

Իսկ այս են պատճառք լրմանցն՝ զոր ամէն Ղե (95) ամի սղալին Հռոմք ի սուրբ զատկին, որ է լրումն ապրիլի Զ խորանին իննեւտասաներեակացն. զի յորժամ եդին զհինգհարիւրեակն՝ Խոիան ավարիկ գիտնականն Հռոմոց՝ ոչ կոչեցաւ ի ժողովն. և յորժամ եկն ի հեռի ճանապարհէն յոր երթեալ էր, մահացեալ ընդ իրան ընդ այն, և զապրիլի վեց՝ հինգ ասաց և ելից զկոստանդինուպօլիս[1]: Իսկ յապրիլի Զ յայնմ ամի ի կիրակի հանդիպի. բայց մեք ի միւս կիրակի անցուցանեմք զզատիկն. իսկ ե (հինգերորդ) օրն չաբաթ լինի, և նոքա զլրումն ի տեղն առնեն, և ուտեն զխաչելութեան չաբաթն. Պատրաստ կացէք որ չի սխալիք, դուք այլ հետ նոցա զատիկ առնէք: Ի հին գիրք մի այսպէս գրած էր, և մեք ձեզ այլ ծանուցաք. որ յամէն Ղե տարի՝ կու մոլորին տան ապգ, բայց ի Հայոց և յԱսորոց. թէ չէք հաւատար, նայ զխառնայփընտուրին[2] զտարէգիրն համբրեցէք, և տեսէք որ կենայ գիրն[3] Շ կու գայ յայսկից Ղե տարի, և կրկին Ղե տարոյ յետև կրկին Շայ կու գայ, և երեքկին Ղե տարոյ յետև ՈՂ (Ո) կու գայ նահանջն ավլի, ապրիլի ԻԳ զատիկ կու լինի. և ի տումարն այլ գտայք, որ երկու անգամ առանց նահանջի կու մոլորին, և յետինն նահանջով. և յամէն մոլորած տեղն գրած է, թէ ցայսմ ամի մոլորին ցոյնքն. տեսէք և զգուշ կացէք: Հռոմի և Ֆռանկի հետ դրեր եմք խառնայփընտուրով, յամէն Ղե տարի զոր կու գայ նոցա զատիկն և Հայոցն ի ԻԳ, և յետոյ ԲՃ և ԽԶ (246) տարի չեն մոլորիր. հինգհարիւրեակին մէջն՝ չորս տարպայ կու մոլորին, երեք առանց նահանջի և մէկն նահանջով. այս տարինս յետև՝ երեք Ղեին այլ կու մոլորին: Դուք այլ ամէն գիրք գրեցէք, որ ի մեր յանցմանն յետև[4] մեր որդիքն այլ իմանան և հեռոյ[5] հոմինչ չմոլորին, և զհայրապետաց անէծքն ընդունին: Այլ բաւ է ձեր վհհ իմաստութեանցդ. ողջ լերուք ի Տէր, Լուսաւորչին փառքն. Փառք Աստուծոյ:

Գրեցաւ գիրս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սուրբ Յակոբայ. Թվ. ՌԼԸ, Նոյեմբեր Ը:

1. Պակսի բառ մի խովսրնեմբ կամ հոկտոմբեմբ:
2. Թուին Աղիւսակք տումարագրոց:
3. Կիրակագիրն:
4. Այսինքն, յետ մեր մահուանս:
5. Թերեւս՝ յետոյ, կամ հետ, Հոմոց հետ:

Թ.

ՄԵԼՔԻՍԵԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌԾԹ = 1611.

(Նոյիրակս առաքէ զՋաքարիա վարդապետ և զԴաւիթ եպիսկոպոս).

Ի գերայգոյ ի գերակա եւ ի գերադրական ի գերահրաչ ի գերազանց և ի գերաճառ յամենասուրբ Երրորդութենէն, ի յանսկիզբն Հօրէն, ի յանհաս Բանէն, ի Հոգւոյն ճշմարտէն, և ի միակութենէն և ի մի ընութենէն և մի գոյութենէն, և ի միապէս բարոյն, ի մի Աստուած գոլոյն, անձամբ և անուամբ բաժանելոյն, այլ ամենայնիւ մի կալոյն. Եւ ի գերագոյ ի մեծահամբաւ ի բազմալուր սուրբ վենաստանէս, ի վաղարշապատ սուրբ աթոռոյս Էջմիածնա աստուածակազմ լուսոյս. Եւ ի սոցին տպաւորէ ի Տէր Մելքիսէթ կաթողիկոսէ ամենայն Հայոց, և ի Տէր Ստեփաննոս վարդապետէ, և ի Տէր Ստեփաննոս եպիսկոպոսէ, և ի Տէր Կարապետ վարդապետէ, և ի Տէր Յովհաննէս վարդապետէ. Նա և Ստեփաննոս արհի եպիսկոպոսէ, այլ և ի Զաքարիայ վարդապետէ, և յայլ միեղէն եղբարցն՝ որ աստ կան հաւագեալ ի Ս. Էջմիածինս. Հասցէ յիսուսաւանդ ողջոյն և առաքելական աւրհնութիւն ի վերայ տիրախնամ և աստուածապահ քաղաքացդ. Նախ և առաջին Իլախաց երկրիդ մայրաքաղաքիդ Իլովա. եպիսկոպոսացդ, քահանայիցդ և Բժն (երկոտասան) Դատաւորացդ, և պարոն տօլվաթաւորացդ, և հաւատար քրիստոնէիցդ, մեծի և փոքու առ հասարակ. ամէն: Երկրորդ, կաժէնիսու քահանայիցդ և պարոն տօլվաթաւորացդ և հաւատար քրիստոնէիցդ. ամէն: Երրորդ, Աչովու քահանայից և պարոն տօլվաթաւորացդ, և բովանդակ քրիստոնէիցդ. ամէն: Չորրորդ, Եաշու քահանայիցդ և պարոն տօլվաթաւորացդ, և հաւատար քրիստոնէիցդ. ամէն. եւ Ֆռանկաստանու քրիստոնէիցդ առ հասարակ ամենեցուն ամենայնի. ամէն:

Աւրհնեալ է Հայրն Աստուած անեղածին անժամանակ. գովեալ Որդին միածին Բանն Հաւր, ծագումն անճառ, լոյս և ճառագայթ. բարեբանեալ Հոգին Աստուած ճշմարիտ, բխումն անսպառ և բաշխող բարութեան. որպէս աւրհնեաց զդասս հրեշտակաց և զկանոն անմարմնոց, նոյն աւրհնութեամբն և զձեզ աւրհնեսցէ արարիչն Աստուած, զդասս և զգումարս ձեր, զազգս և զտոհմս ձեր, զարկս (զյարկս) և զկայանս ձեր, զտունս և զընակութիւնս ձեր. Եւ որպէս աւրհնեաց զդրախտն Ադենեա և ի նմա զմարդն առաջին և զհայրն մեր

եւայ, նոյն արարիչն Աստուած աւրհնեսցէ զրախտս ձեր, զայգիս և զբուրաստան ձեր. ամէն: Պատճառ թէ չէն ու պայծառ լինի՝ ձեզ է պարծանք և ճոխութիւն. և թէ աղքատ և նուաստ, դարձեալ ձեզ է պակասութիւն: Զեզանէ խնդիրք ունիմք, որ զայս աթոռս ի մտաց չի հանէք և անտես չառնէք. և դուք աւրհնեալ լինիք յԱստուծոյ բարձրելոյն. ամէն:

Տ· կ· ես յաթոռակալ Մարտիրոս եպիսկոպոս վկա եմ այս բանիս:

Տ· կ· ես Համազա եպիսկոպոս առաջնորդ Ս· ուխտին Փրկչական պահան[1] պատկերին վկայ եմ այս բանիս:

Տ· կ· ես Միքաէլ առաջնորդ Ս· ուխտին Աղչկուց վանացն, որ է նահատակ Ս· Ստեփանոս քահանային, վկայ եմ այս բանիս և նահատակիս:

Տ· կ· ես Մանուէլ եպիսկոպոս առաջնորդ Ս· Աստուածածնին վկայ եմ այս նահատակիս:

Տ· կ· ես Աստուածատուր եպիսկոպոս առաջնորդ Ս· ուխտիս Այրվանացց վկայ եմ այս նահատակիս:

Այս հինգ վանաց առաջնորդս առաջի Աստուծոյ և սուրբ աթոռոյս դրանն՝ այս նահատակիս համախոհ եմք այս բանիս. որ զԱքաբիս վարդապետան և Դաւիթ եպիսկոպոս՝ հազիւ կարացաք հաւանեցուցանել առ ձեզ գալոյ. այլ մարդոյ հրամանք չկա այդ տեղեացդ նուիրակ կամ իշխանութիւն առնելոյ. գացանէք ի զատ այլ մարդ չընդունիք. Աստուած ըզձեզ աւրհնէ. Ամէն և խաբեա մարդ շատ շուրջ գա. բայց ինչ մարդ որ զայս նահատակ ու ձեր նշանն առ ձեզ բերէ՝ ըստոյգ և ճշմարիտ նուիրակն նա է:

Գրեցաւ սակաւ գիրս դուռն Ս· Էջմիածնա. Թվին ՌՀԹ, մայիս ամսոյ ի մէկն:

(ի տողիւ գրեալ) Ես Աւաք եպիսկոպոս առաջնորդ սուրբ ուխտին Աղնկուրիոյ տեսի զնամակս և հաւատացի, այս այսպէս է ըստուկ ճշմարիտ:

1· Այսպէս պակաս գրուած, վախանակ պողոտոն:

Ժ.

ՄՈՎՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Թուղթ առ Վլատիշլաւ Լ. արքայ Լեհաց[1]. ՌՉԱ.=1633, ՕԳՈՍ. 30.

ՈՏՈՒԱՆԱՊԱՐԳԵԻ Քրիստոսապսակ՝ ծիրանածին և չքեղաշուք, ի գերագոյն տոհմէ ընտրեալ և ի պանծալի չառաւիղէ երևեալ, պսակ և զարդ քրիստոնէից և ահարկու թշնամեաց խաչին Քրիստոսի, ով նազելի և սիրանուէնդ հոգեզարդ արքայից արքայ Վլատիշլաւ։

Որ թէպէտ ամենայն կենդանեաց թագաւորք ի չորս բաժանեալ են, այսինքն Մարդ և Առիւծ, եզն և Արծիւ, որ զչորս Աւետարանչացն ունի զխորհուրդ, որք են չորեքկերպեան աթոռ անմահին Աստուծոյ. սակայն ներքին նկատմամբ՝ ի քեզ տեսանի լիապէս գործառնութիւն չորեսին թագաւորութեանցս այս. քանզի անհամեմատ քանակութեամբ ի պատկեր Աստուծոյ յօրինեալ ես, ձեռամբ անհուն հզօրին՝ մարդ. եւ անյաղթելի արիութեամբ և հզօր զօրութեամբ Ձեր և ահարկու դիմեցմամբ ի թշնամիսն խաչին Քրիստոսի, բերես զնմանութիւն առիւծու. եւ չինարար և վաստակաւոր գոլով միշտ՝ յայգի Տեառն գործելով, բերես ի քեզ զնմանութիւն եզին. եւ բարձրաթռիչ և արիական գոչմամբ քո՝ ցուցանես ի քեզ զնմանութիւն արծուոյ։ Վասն որոյ յարաժամ հանգչի ի քեզ Հոգին Աստուծոյ, ըստ համեմատութեան չորեքկերպեան աթոռին։ Ո՛վ պանծալի պետ և ակնկալութիւն ամենայն քրիստոնէից. պահող և պատսպարան բանաւոր հօտին Քրիստոսի։

Նուաստ ծառայ ծառայիցդ Աստուծոյ, Մովսէս կաթողիկոս ամենայն Հայոց, յաղօրդ և վերադիտող գահոյից պարթևազին Գրիգորի, ի վիճակ թափէոսի սուրբ առաքելոյն՝ ի վերայ արամեան տոհմի. ի հեռաստանէ իբր առ ընթեր գոլով մեծարգոյ և բարձրաբերձ գահոյից Ձերոց, զրբարար և զաստուածայինն մատուցանեմք աղօթս, նորընծայ և քրիստոսապարգեւ թագաւորիդ մերոյ Վլատիշլաւի, հանդերձ ամենայն ընտրելագոյն աշակերտօքն մերովք. Քեզ և ընդ քեւ եղեալ մեծամեծ և քրիստոսասէր իշխանացն, յամենեսեան և յամենայնի ի Տէր խնդալ։ Եւ հարցանելով հարցանեմք զանօթդ

1. Հրատարակուած էր թուղթս ի Ձռաքաղ օրագրի, Բ, 72, որպէս և թուղթ Փիլիպպոսի կթղ. առ նոյն թագաւոր։ Ն. 90։

պատուական ի տան անմահ թագաւորին Ցիսուսի. զոր Տէր Աստուած անփորձ և աննսայթաքելի պահեսցէ զմեծութիւն ձեր մինչեւ ի խորին ծերութիւն, հանդարտ և խաղաղարար թագաւորութեամբ, ի հաճոյս բարերարին Աստուծոյ, ըստ մեծին Կոստանդիանոսի և Թէոդոսիոսի. և յետ աստեացս վճարման՝ անմահ թագաւորութեան արժանի արասցէ, դասակցիլ ի կայանս Սբոց յարաղուարճ բերկրանաց և մշտակաց ուրախութեամբ, ի տեսութիւն փառացն Քրիստոսի. ամէն:

Եւ յետ սիրալիր ողջունական բանիցս, ծանիր ո՛վ ամենայաղթ թագաւոր, զի թագաւորք երեսփոխան են անմահ թագաւորին. և որպէս նա ծագէ զարեգակն իւր ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց, այնպէս թագաւորք պարտին գորովագութ սիրով այցելու և խնամածու լինել ի վերայ ամենայն քրիստոնէից, ըստ ասելոյն Սողոմոնի. « Մի՛ զրկեր զաղքատն՝ որ յեցեալ և յուսացեալ իցէ ի քեզ »: Քանզի սակաւ ազգըս մեր՝ որ վասն աւերման աշխարհիս Հայոց և ալէկոծութեան՝ ցիր և ցան սփռեալ եղեն ընդ ամենայն երեսս երկրի, ոմանք առ Վիրս, ոմանք առ Յունս Պարսիկս, իսկ ոմանք յարեւմուտս, նաև ի Միջագետս Աւորուց, կան նչդեհացեալք և պանդխտացեալք: Իսկ սակաւս ի բազմաց յազգէս մերմէ եղեն ընդ հովանեաւ թագաւորութեան ձերոյ, իբր աւանդ ինչ ի պատուական տեղւոջ՝ զգուշաբար չինեալք և պատուասիրեալք ի նախնեացն և ի խնամոց ձերոց մինչև ցայսօր: Եւ մեր լսելով յարաժամ զնոցայն ապահովութիւն՝ և զչնորհակալութիւնն որ ի ձէնջ, գոհանամք զբարերարէն Աստուծոյ և մարդասիրէն, և փառս մատուցանեմք նմա, և յաղօթս հայցեմք միշտ՝ տալ երկարակեցութիւն ձերոց թագաւորութեանց: Եւ զնոյն սէրն և զխնամսն՝ հայցեմք ի քէն, ո՛վ ծիրանածին մեծ բարեպաշտ վլատիչլաւ թագաւորդ Լեհաց, պահել և ոչ նուազել. զի ամենայն թագաւորք երկրի տեսցեն զբարիոք խնամարկութիւնն որ ի վերայ նոցա, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է. մինչև այց արասցէ Աստուած՝ մեզ, և դարձուսցէ զգերութիւնն ցաւոտոյ, և յիշեսցէ զդաշինքն զայն՝ զոր եդին մեծամեծ հայրապետքն և թագաւորքն մեր. այսինքն Սուրբն Սեղբեստրոս և Գրիգորիոս, Կոստանդիանոս և Տրդատիոս, և վասն հաստատագոյն Միալոյ ուխտին՝ զարիւն Կենարարին ի մեզան խառնեալ, նովիմբ գծագրեցին և հաստատեցին դաշինս: Զնոյն սէրն հայցեմք ի Ձէնջ, և ոչ զնոտի հակառակաբանութիւն:

Զի սակաւ մի կարճ ի կարճոյ յուշ առնեմք քոյին սուրբ թագաւորութեանդ. զի եկն եհաս լուր ի լսելիս մեր վասն նեղութեան ազգին մերոյ՝ որ կան ընդ հովանեաւ Ձերում թագաւորութեանն, մանաւանդ ի մայրաքաղաքն Լեվ. Թէ, զեկեղեցիս առեալ են բռնութեամբ ի ձեռաց ազգիս մերոյ, և քահանայք և ժողովուրդք չրջին իբրեւ զոչխարս մոլորեալս՝ որոց ոչ իցէ հովիւ. զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ յերկարել քո սուրբ թագաւորութեանդ, վասն աղէտից: Եւ մեք յորմէ հետէ զայսպիսի իրս լսեալ եմք, կսկիծ և տրտմութիւն և նեղութիւն չատ ունիմք, քան զայս՝ որ յայլասեռից կու կրեմք: Վասն որոյ

հարկ եղեւ ինձ գրել առ Աստուածապաշտ նորածին թագաւորութիւնդ, չնորհաւորել։ Եւ խնդրեմք ի քէն լալագին պաղատանօք, լուր աղաչանաց մերոց և խնդրուածոց. մի և մի եղիցի այսպիսի իր ի միջի Ջերում. և մի դըժնել զվէրս ի վերայ վիրաց, և խարան ի վերայ խոցից. եղիցի սէր և խաղաղութիւն ի միջի մերում. « Քանզի Աստուած սէր է, և որ կայ ի սէրն՝ բնակի յԱստուած, և Աստուած ի նմա ». քանզի կան բազումք, որք ոչ են տեղեակ սիրոյս այս, հակակայ բանիւք վիճեն ընդ միմեանս, ասելով. « Ես Պօղոսեան եմ, և (միւսն) ես Ապօղոսեան եմ, և միւսն՝ թէ՝ ես Կեփայեան »։ Իսկ մեք զպատուէր Սրբոյն Պօղոսի լսել հայցեմք ի ձէնջ. « Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր՝ ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս »։ Քանզի և ի մերումս երկրի ի մեր վիճակ՝ փառանգ դաւանութեամբ քրիստոնեայք շատ կան. մեք՝ յիւրեանք բան չենք ասել, քաւ լիցի, այլ իբրեւ զեղբարս ընդունեմք և պատուեմք. այլ և եկող պատրիքն երբ առ մեզ կու գան, որչափ մեր կարս է՝ պատիւ և մեծարանս կ'առնեմք, վասն սիրոյն Քրիստոսի։ Նոյնպէս հայցեմք ի մեծութենէդ ձերմէ՝ զիոքրիկ հօտն զայն, այսինքն զազգս մեր, խնամով և սիրով պահեսցես, վասն սիրոյ նախնեացն քոց, և մի՛ սուտակասպասաց բանիւք վիրաւորեսցես զնոսա. զի գրեալ է. « Զեղէգն ջախջախեալ՝ մի՛ բեկցես, և զպատրոյգն առկայծեալ մի՛ չիջուսցես »։ Զի անկեալ ի թագաւորութենէ և ի վերջին սարկութիւն եմք հասեալ. և ըստ ցօրայ՝ ձայնեմք առ Զեզ. « Ողորմեցարուք ինձ, ո՛վ բարեկամք իմ ». և մեք և ամենայն ազգս մեր հայոցեմք ի յապէնիայ բարերարէն Աստուծոյ, զի անփորձ և անսասան պահեսցէ զթագաւորութիւն Քո, և բազում իմաստութեամբ և մեծութեամբ լցուսցէ զքեզ հոգեկան և մարմնական առաքինութեամբ, որպէս երբեմն զմեծն Սողոմոն և զաստուածասէրն Կոստանդիանոս. և պարագայս ամաք և յամեբամ ժամանակօք վայելեսցես զաստուածապարգև թագաւորութիւն քո, որդւովք և դստերօք, ընչիւք և ապրանօք, ծառայիւք և աղախնաւք, մինչեւ ի խորին ծերութիւն. և յետ աղցայւոր յաւիտենից՝ ի ժամանել բնութեանս կետի դասեսցէ զքեզ Տէր ընդ սրբազան թագաւորաց՝ բաղմել ընդ Քրիստոսի ի սեղան Հօր իւրոյ. Որում փառք և երկրպագութիւն ընդ Հօր իւրում և Հոգւոյն Սրբոյ, յարակայ խոստովանութեամբ անզրաւ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ գիրս ի դուռն Ս. Էջմիածնայ, ի թվին ՌՉԱ, յաւգոս. ամսոյ Ի։

ԵՍ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԵՑԻ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ։

ԺԱ·

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ· ՌՋԸ = 1640· ՀՈԿՏ· 12·[1]

(Յորդորէ զԼեհաստայս օգնել իւրեաց, և չսել Մուսաբէկի՝ որ ի չահել Պարսից դեսպան գնայր առ թագաւորն Լեհաց)։

Ի՛

ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց, ի վիճակէ սրբազան Առաքելոյն Բարթուղիմէոսի, յաջորդ Սրբոյ Առաքելոյն Թադէոսի, և փոխանորդ Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և բազմաչարչար նահատակի և սրբազնակատար հեղինակի, և պատրիարգ Վաղարշապատու քրիստոսահիմն և լուսանկար երկնահանգէտ սրբոյ աթոռոյն Էջմիածնի. Ցորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական և աստուածային աւրհնութիւնն ի վերայ տիրապահ և քրիստոսախնամ քաղաքացդ, Իլովայ, Կամենիցու, Եազլովցոյու, Զամոչցոյու և Լուծկայու. Լուսաւորչի աւրհնեալ հօտի ժողովրդեանդ. սրբանուէր քահանայցդ, տեառնաւիսխ դաստաւորացդ, պերճապատիւ ազատացդ, արգասապատիւ մեծատանցդ, և այլոց ամենեցունց, աղքատաց և ռամկաց, մեծամեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի, միագումար ամենեցուն. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ ՅԻսուսէ Քրիստոսէ, և ի Ս· Հոգւոյն կենարարէ և բարերարէ. ամէն. Աւրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդւոյ, և նախախնամութիւն ամենասուրբ Հոգւոյն, միշտ և հանապազ ի վերայ ձեր լիցի, և օր ըստ օրէ լցուսցէ զձեզ փառօք և արգասալիր ճոխութեամբ, իբրեւ զորթս և զոստ սաղարթախիտ և պտղալից դրախտ տնկեալ ի գնացս Հոգւոյն վտակաց. կալ ինալ ձեզ խաղաղական կենաք և պարագայից ամաք մինչ ի խորին ծերութիւն, ի կամս բարերարին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. անբասիր և անբռնադատ կենաք, յարազուարճ ուրախութեամբ. ամէն։ Այլ և աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր և զարդա-

1· Բնագրին վրայ թուականն պակաս· բայց կոնդակին հեւերը՝ ընդունողաց մեկն գրեր է այլազգերէն· « Որ պիդիք հաղըմըշ Սուրբ Էջմիածինսա· թվ· ՌՋԸ, հոկտեմբեր մն »։

բեացէ հոգւով և մարմնով, տամբ և տեղեաք, զարմաք և զաւակաք, որդւովք և դստերաք, սիրելեաք և բարեկամաք, ընչիւք և ապրանաք, և ամենայն գոյացեանաք փարթամացուսցէ զձեզ. ամէն:

Եւ ընդ աւրհնութեանս՝ այս եւս յայտ լիցի սիրելեացդ և ըստացողացդ ճշմարտութեան, որ ի վաղուց հետէ ըղձամ տեսութեան ձերոյ, բայց խափան որ (ոչ) սակաւ եղեւ և լինի. քանզի երիք ամ վանս խառնակման տեղւոյս և աւերակաց չինութեանն՝ եղեւ անհանգստութիւն. և այս երկու ամ է՝ որ ի դրան արքայի էաք. և թէպէտ յայսքան վշտի մէջ էաք, այլ բաղձանքս որ առ սիրելիքդ՝ ոչ բնաւ դադարի, այլ օր ըստ օրէ հալէ և մաշէ զիս. և չափ ըղձանացս այնքան՝ որքան ծարաւեցելոյն առ զովացուցիչն: Եւ արդ, գինք արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և հարազատ որդիք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և իմ տոչորեալ հօրս զաւակք, խնդրեմ ի ձէնջ զի միմեանց յօգնութիւն հասանիցէք յամենայն գործս բարութեան. և մանաւանդ առ ձեզ է բանս իմ, որդեակք իմ քահանայք, դաստաւորք և ամենայն ժողովուրդք կամէնցոց, եաղլովցոց և Ջամօշճացոց, որ եղբարց ձերոց Իլովացւոց պարտիք ձեռնտու լինել յամենայն իրակութիւնս. եթէ ընչիւք, եթէ խօսիւք, եթէ աղօթիւք, և եթէ աչխատութեամբ մարմնոյ. այսինքն, թէ ի դուռն արքայի գնալ, և թէ այլ ինչ այսպիսի գործ, անյապաղ պարտիք յօգնութիւն հասանել. զի « եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զպատրիսպ ամուր »: Եւ դարձեալ, վասն նամակաց ձերոց, մեծահաւատ և բազմաջան որդիք իմ Իլովացիք, ծանիք. զի յորժամ նամակն ձեր եկն եհաս առ մեզ, ընդ նմին և զբօթ գալատեան թագաւորին՝ որ ի վերայ երկրիս՝ եառն. և յետ այնորիկ զկտակարանս մեր զուռւոյ կախեաք և ի յուս մեր բառնայաք. ոչ տեղի հանգստեան և ոչ ժամ աղօթից, ոչ դադար կարասեաց և ոչ երեւումն գերապայծառ կարգաւորութեան մերոյ. վասն որոյ ոչ կարացաք զմիտս և զխորհուրդս մեր ի մեզ բերել, զի ծանիցուք զմեզ, մինչեւ յերիս ամս, որ զաւերակն սակաւ չինեցաք և զետեղեցաք. և ապա ի մէջ բերեալ զնամակն ընթերցաք. յայնժամ տրտմութեան ոչ սակաւ և մթութիւն ոչ դիւրաշնաց և ցաւ ոչ հեշտափարատ պատեաց զիս. թէպէտ և յառաջագոյն վասն իրիդ այդորիկ գոյր տրտմութիւն, բայց ասէաք, թէ տուեալ իցեն արդեօք զեկեղեցիսն, և կամ սակաւ ինչ թողացուցեալ իցեն վասն եկեղեցւոյ խորհրդոյ կատարման: Եւ յորժամ ընթերցեալ իմացաք և ստուգեցաւ տրտմութիւնն կարծական, այնքան առաւելաւ տրտմութիւնս, մինչ զի ոչ ինչ թուէր նեղութիւն և աւեր տեղեացս՝ որ եղեալ էր ի պատերազմացն անօրինաց. և ապա զկնի ընթերցմանն՝ խորհուրդ արարեալ վասն այդորիկ, յարուցեալ գնացաք ի դուռն արքայի. թէպէտ և մանաւանդաբար վասն այլ իրաց. և մինչ յայսմ խորհրդի էաք և երիթացեալ սրտիւ սպասէաք վասն համբաւոյ բարւոյ այդ իրաց, եթէ թերեւս անդորրութիւն ինչ եղեալ իցէ, լուաք երիք անգամ, թէ տուեալ են զեկեղեցիսն. բայց վասն ոչ գոլոյ ի ձէնջ առ մեզ թուղթ և մարդ, ի կարծիս էաք. քանզի յաստղագոյն անորոշակի

ասացին՝ զեկեղեցիսն տուեալ են. և յետոյ լուաք, թէ զայլ եկեղեցիսն տուեալ են, բայց զաւագ եկեղեցին ոչ են տուեալ. և վասն այնորիկ մարդ են առաքեալ առ Պապն: Եւ մինչ յայսմ տարակուսի էաք՝ ո՛րպէս արդեօք եղեալ իցէ, լուաք զգալուստ դեսպանին, և ընացաք գալստեան նորա. և յորժամ եկն՝ նա եւս զայն ասաց, թէ զայլ եկեղեցիսն տուեալ են, բայց զաւագ եկեղեցին ոչ են տուեալ, և վասն այնր մարդ է գնացեալ առ Պապն: Նա և ոչ սակաւ յուսադրութիւն ետ մեզ, ասելով, եթէ յորժամ հասանիցեմ առ Թագաւորն՝ գիւրին է այդ. և մեք այնմ դեսպանին՝ որ Պարսից արքայէն առ ձեր արքայն առաքիւր, թուղթ տուաք. մի՝ առ Թագաւորն, և միւս առ ձեզ. զի քրիստոնէից զաւակ է և հաւատարիմ քրիստոնէից, որոյ անուն Մուսաբէկ յորջորջի: Բայց զայս գիտասջիք, սիրելիք. զի դեսպանին այսպէս եմք ապսպարեալ, թէ յորժամ գայցէ այդր, յինքինէ թուղթ առաքեսցէ յառաջագոյն առ ձեզ. զի դուք եկեալ առջիք ի նմանէ զնամակն ձեր՝ որ ի մէնջ է տուեալ. զի այսորիկ թղթոյս դիտաւորութիւն ունի այն թուղթն. թէպէտ սակաւուք զանազանին ըստ բառին չարադրութեան: Եւ դուք պատրաստ կացջիք, որ զկնի առնլոյ զձեր նամակն՝ ընդ դեսպանին ի միասին մատուցանիցէք զթուղթ Թագաւորին առ Թագաւորն: Եւ դարձեալ, յորժամ զաւեր տեղւոյս լսէք, մի՛ այժմ եւս այնպէս կարծէք, այլ ողորմութեամբ Տեառն և աղօթիւք ձեր՝ քան զառաջինն եւս պայծառագոյն է բիւրապատիկ, և է լիցեալ պաշտօնէիւք Քրիստոսի, որք զցայգ և զցերեկ հանապազամատոյց աղօթիւք և հաչտարար պատարագօք՝ զձեզ ունին ի մտի, և յաղագս ձերոյ կարծրագոյն վշտացն՝ աղաղակեն առ Բարձրեալն: Որ և կողկողագին պաղատանօք խնդրեմք յամենազօր Տեառնէն՝ հանդերձ վերոյ գրեցելովքս, բարեխօս ունելով զյաջնաչարչար նահատակն Քրիստոսի զՍուրբն Գրիգորիոս. զի ամենակարող զօրութեամբն և ամէնառատ պթութեամբն՝ ազատեսցէ զձեզ յայսմ դառնագոյն վշտաց. և փոխանակ այդմ նեղութեան՝ մխիթարեսցէ զձեզ Հոգւովն Սրբով, աստ և ի հանդերձեալն. և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՁԵՌՄՄ [1] ԳՐԵՑԻ:

1. Այսպէս է ի բնագրին:

ԺԲ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — 1644, ՅՈՒԼ. 27։

Թուղթ Ա՛ն վշտահիւսուր Դ. արքայ Լեհաց

ՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ և ծիրանածին աւգոստափառ և տիեզերակալ, Տերամբ զօրացեալ և Յիսուսիւ բարձրացեալ, և առաքինութեամբք աստուածայնովք և մարդկայնօք բարեվայելուչ զարդարեալ, որ և ուղղափառ հաւատով ծայրագոյն ճշմարտին հասեալ, և աներկևան յաւուրս ի ծայրագոյն բարձին յեցեալ, և սպասեալ հանդերձեալ երանութեան, և խանդակաթ սիրով ծայրագոյն բարւոյն բաղձացեալ, և յար ցանկութեամբ նորին զմայլեալ. խոհեմութեամբ պերճացեալ, արիութեամբ քաջացեալ, ողջախոհութեամբ և ժուժկալութեամբ զամենայն ցանկութիւն ընդ բանականին լծով նուաճեալ. արդարութեամբ հաւասարակշիռ լեալ առ ամենայնս, ազատականութեամբ ուռճացեալ և մեծահոգութեամբ բարգաւաճեալ, պարիսպ ամրութեան հաւատացելոց, և վէմ անվանելի ընդդէմ թշնամեաց խաչին. եղջիւր եկեղեցւոյ և պարծանք համայնից քրիստոնէից. ի ծայր նիզակի և ի վահան հաստատակառոյց ընկալեալ զահմանս երկրի. միայնոյ թագաւորին երկնի և երկրի աթոռակալի և երկրորդ խնամողի, Քրիստոսասէր և ինքնակալ արքայի՝ Վլատիսլաւի Զորբորդի։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց, և փոխանորդ սրբոց առաքելոցն Բարթուղիմէոսի և Թաթէոսի, եպիսկոպոսական և վարդապետական դասուք և ամենայն վիճակելովք մերովք՝ զքրիստոսասաւանդն մաւուցանեմք ողջոյն և օրհնութիւն աստուածապարգև մեծազօր թագաւորութեանդ։ Եւ հայցեմք արտասուալից մաղթանօք ի միայնոյ թագաւորէն, զի զինքնակալ թագաւորութիւնդ ձեր անսասանելի և անվանելի պահեսցէ անկէտն յաւիտենից, հանդերձ արքայազուն և քաջազարմ աստուածասէր թագուհեաւդ և ծիրանածին զաւակօք, և ամենայն նախարարօք և մեծամեծօք, զօրապետօք և զօրօք, հնազանդելովք Ձերովք, ըստ հաճոյից և բարեսէր կամաց իւրոց, պարագայից ամօք և երկարաձիգ խաղաղական կենօք։ Եւ յետ աստեացս թագաւորութեան՝ անվախճան թագաւորութեանն արժանի արասցէ հանդերձ նախնի թագաւորօք ձերովք, ընդ սուրբ թագաւորացն դասակից և պսակակից առնելով. ամէն։

Գխտութիւն լիցի մեծազօր և ինքնակալ Տէրութեանդ Ձերում, ով քաջազօր բարեյաղթ արքայ, զի զփոքրիկ հօտդ մեր տարակացեալ ի մէնջ տեղեաւ, որ ի բազում ամաց ընդ հովանեաւ հզօր Ձերոյ ինքնակալ Տէրութեանդ են ամիփոփեալ, որ և հզօր Տէրութիւնդ Ձեր ոչ միայն հովուաբար է խնամեալ, այլ և հայրաբար սիրով. որ և մեք վասն դոցին բարեկեցիկ լինելոյն և որդիաբար խնամարկելոյն ի ձերմէ հզօր տէրութենէ, պանծացեալ եմք և պանծամք ի մէջ այլասեռից ազգաց, և հանապազ աղօթս մատուցանեմք վասն մեծազօր Տէրութեան ձերում, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցեն դոքա զկեանս իւրեանց, հանդերձ հայրենաւանդ կրօնիւք և սահմանօք իւրեանց: Իսկ այժմու ժամանակիս զինչ ասացից. զի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի, զոր անխնայաբար գիշատեաց զհօտ իւր՝ գայլ եղեալ հովուին. նոյնպէս և ողորմելեացդ այդոցիկ պատահեաց յանուանեալ հովուէ իւրեանց, որ և յայտնի է հզօր տէրութեանդ ձերում, զրկումն դոցին և անիրաւութիւն գայլասարսս հովուին: Զոր եթէ հզօր տէրութիւնդ ձեր ոչ էր ամիփոփեալ զդոսա ընդ թևօք խնամոց, վաղագոյն ուրեմն կլեալ էր անիրաւին զողորմելիսդ: Վասն որոյ յոյժ չնորհակալ եմք ի ձերմէ ինքնակալ թագաւորութենէ, որ այդպիսի բարերարութիւն և ողորմութիւն ցուցեալ էք և ցուցանէք զրկեալ և տառապեալ փոքրիկ հօտի մերում. և բարերարութիւնդ այդ՝ ոչ եթէ միայն մեզ է համարեալ, այլ մանաւանդ և Քրիստոսի, զի տեառնանման ամիփոփեալ է ձեր զտառապեալ հօտդ, և ոչ է տուեալ թոյլ գայլաքատակ հովուին գիշատել զդոսա: Որ և մեք տեսանելով զանչափելի գութ ձեր և ողորմութիւն որ ի վերայ տառապելոցդ, օրհնեմք հանապազ զքրիստոսապարգեւ թագաւորութիւնդ Ձեր, և ցանկամք տոչորմամբ սրտիւ՝ տեսանել զիրաւասէր ինքնակալ Տէրութիւնդ Ձեր յայսմ աշխարհի. զի ոչ է այսմ հնար լինելոյ, ի հանդերձեալն ունիմք յոյս տեսանելոյ զմիմեանս:

Ահա, ըստ մերոցս սրտի բաղձանաց առաքեցաք առ ինքնակալ տէրութիւնդ Ձեր՝ զհոգևոր որդեակն մեր և զհաւատարիմ խորհրդակիցքն, զՏէր Գրիգորիոս եպիսկոպոսն ընդ միոյ կրօնաւորի. զոր ինչ վասն մեր է՝ ի նոցանէ լուիցէ ինքնակալութիւնդ Ձեր: Եւ գիտեմք հաւաստեաւ՝ զի ինքնակալութիւնդ Ձեր ամենևին անկարօտ է երկրային նիւթոց. ահա գանձ երկնային որ առ մեզ գտանիւր՝ զրազմայ փափաքելի նչխարաց Առաքելոց՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի և Թովմայի և Մատթէոսի աւետարանչի, և չքնաղագեղ օրիորդին Քրիստոսի սրբոյ կուսին Հռիփսիմեայ, առաքեցաք պարգեւ մեծազօր թագաւորութենանդ, առ ի պահպանութիւն ինքնակալ թագաւորութեան Ձերում, և ի բարեխօսութիւն վասն տառապեալ և զրկեալ հօտից մերոց. և ի միաւանգամ գալստեան Քրիստոսի անվթար առաջնորդող ինքնակալ թագաւորութենանդ յանանց թագաւորութիւնն: Վասն որոյ սիրալիր մաղթանօք խնդրեմք ի մեծազօր թագաւորութենէ Ձերմէ, զի որպէս նախնիքն ձեր մինչև Ձեր ինքնակալութիւնդ՝ զփոքրիկ հօտդ մեր պահեալ են իւրեանց կրօնիւքն և աւան-

դուքեամբն, նոյնպէս և Ձեր ինքնակալութիւնդ վասն սիրոյն Քրիստոսի և Սրբոցդ բարեխօսութեան և աղաչանաց մերոց, զտուռապեալ հօտդ այնպէս պահեսցէ. և որպէս մինչև ցայժմ՝ այց առնելով զրկանաց դոցին՝ զեկեղեցին իւրեանց յինքեանս դարձուսցէ:

Եւ մեք հանդերձ ամենայն վանօրէիւք և անապատաւորօք և ամենայն վիճակեցելովք մերովք՝ օրհնող եմք և օրհնեմք զինքնակալ Տէրութիւնդ Ձեր, հանապազ աղօթս մատուցանեմք վասն Քրիստոսապարգև թագաւորութեանդ, զի խաղաղութեամբ վարեալիք զկեանս զայս՝ ըստ Տեառն հաճոյից, խրոխտ և ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց խաչին: Իսկ զդաւանութիւն Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ ըստ ուղղափառ սրբոց Հարցն, զոր խնդրեաց Պօղոս աստուածաբան վարդապետն, ի միւս թղթին ծանիցէ ինքնակալ տէրութիւնդ Ձեր: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյն ամենայն:

Գրեցաւ ի կենարարին մերոյ թուականի հազար վեց հարիւր և քառասուն և չորս. ցուլիս ամսոյ քսան և եօթն:

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Խնդիրք իմ այս են ի քէն, ով Աստուածապսակ արքայ, զի զայդ տառապելոց զդատաստանն դու դատես և տաս իրաւունս, և ոչ առ այլս ձգես. զի քո են ժողովուրդ: Իմով ձեռամբս գրեցի:

ԺԳ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱՔՈՂԻԿՈՍ. — ՌՃԲ = 1653, ՆՈՑԵՄ. 5.

(Առաքէ ի Լով զՅովհաւ վ. և արքեպիսկոպոս՝ ի Նոռիրակ և քարոզիչ հաղաղոռքեաւն)։

Յ

ԻՍՈՒՍ Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարգ Վաղարշապատու, վերնադիտակ և յադինասարաս, տիրանկար և գերապայծառ, վեհափառ և հրեշտակապար, լուսակառոյց և քրիստոսամատոյց սրբոյ աթոռոյ Էջմիածնի. ՅՈրմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական և աստուածային աւրհնութիւն ի վերայ տիրապահ քաղաքիդ Իլօվայ, եկեղեցեաց, քահանայից, խոհեմամիտ և ուղղագործ դատաւորաց, մեծապատիւ և իշխանաշուք պարոն երեսփոխանաց. բարեփառ և ուղղադաւան ժողովրդոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Տէր, մեծամեծաց և փոքունց. ամէն։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ ՅԻսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յառատաձիր բարերարէ և ամենազօր մարդասիրէ և կենսաբաշխ պարգեւատուէ. ամէն։ Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք, որդովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանօք, և ամենայն գոյականօք. ամէն։

Ընդ սիրոյ աւրհնութեանս յուշ լիցի վերոյ գրեալ հոգեւոր սիրելեաց մերոց հարազատ որդոյ Ս. Լուսաւորչին. զի ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ, Հոգք ամենայն եկեղեցեաց ի վերայ իմ կայ. և զկնի, Ո՞ հիւանդանայ, և ես ոչ հիւանդանամ. առ մեզ տեսանի, սակս առ մեզ յանձին եղեալ եկեղեցեաց. մանաւանդ վասն ձեր. զի յօրէ յորմէ հետէ դառնագոյն վիշտդ այդ պատահեալ է ձեզ, որպէս ծածկագիտին յայտնի է, զտիւ և զգիշեր անհանգիստ կամք, և միշտ աղէկիդիմք և տոչորիմք վասն ձեր. և ուստեք ճարակ ոչ գտանեմք. վասն այն յուսահատեալ և տարակուսեալ մնամք, ըստ իմաստնոյն բանի՝ որ ասէ, Երկար հիւանդութիւն ձանձրացուցանէ զոգ-

բժիշկ: Եւ որքան կարողութիւն մեր էր՝ չանացաք, եթէ թղթով և եթէ բանիւ, ընդ դեսպանաց թագաւորաց. և զկնի, զայն Գրիգոր եպիսկոպոսն առաքեցաք, իբր թէ տեղացի է, և զտեղոյդ օրպիսութիւնն գիտէ, լինի թէ հնար մի առնէ. նովաւ եւս ոչ եղեւ հնար: Եւ իբրեւ տեսաք թէ ուստեք հնար ոչ լինի, թէպէտ ի բազում ժամանակաց ունէաք փափագ զՍուրբ Տնօրինական տեղիան Ֆրիստոսի տեսանել զգալի աչօք, ապա առաւելագոյն վասն ձեր՝ ելաք ի սուրբ աթոռոյն, ծերացեալ մարմնով, և կատարեալ զուխտ մեր իջաք ի Կոստանդինուպօլիս, զայս ունելով ի մտի, իբր թէ այլ հուպ է ձեզ, իջէ ղի աստուստ բան հոգացուք. և աստ եւս բազում աւուրս զննեցաք. ձերոց հնարից, զայս գտաք ըմբռն. եթէ դուք եւս ըստ հրամանաց մերոց վարեսջիք: Զի ահա զսիրելի և զհոգեւոր որդեակն մեր, աղ բազուկ և նեցուկ սրտիս՝ զՏէր Յոհան վարդապետն և արհեպիսկոպոս, որ էր կարի պիտանի և հարկաւոր մեզ, բայց վասն ձերոյ օգտի առաքեցաք՝ սակս այսքան պատճառաց: Նախ, վասն եկեղեցեաց ձերոց հնարից. երկրորդ, վասն քարոզելոյ և ուսուցանելոյ. երրորդ, վասն նուիրակութեան. չորրորդ, վասն կատակաց: Վասն որոյ խնդրեմ ի հարազատ որդիութենէ ձերմէ, զի այս պատուէր՝ վերջին պատուէրն է. և ի մէնջ առաջին և յետին աւրհնութեան թուղթս այս. որ թէ կամիք զաւրհնութիւն ժառանգել, և զելս իրաց այդմիկ գտանել, ամենեքեանդ միաբան՝ եթէ հնազանդիք թէ աչխարհականք, թէ քահանայք թէ սուլթաւորք և թէ ռամիկք, միակամ միախորհուրդ և միաբան լիցիք, և ի միջոյ ձերմէ զխեռ և զնախանձ անհետ առնէք. ընդ միմեանս սիրով լիցիք. և յամենայն զօրութենէ և յամենայն մտաց վասն այդ բանիդ հոգայջիք: Զի ի մէնջ երկու բան հարկիւ պահանջեմ. նախ առաջին, միաբանութիւն. երկրորդ, հնազանդութիւն, որ զմեր պատուէրն կատարէք զոր պատուիրեալ եմք հոգեւոր որդւոյն մերոյ Յոհան վարդապետին. զի թէ զայս արասջիք, յայս ունիմք յԱստուծոյ՝ որ վերջ լինի տառապանաց ձերոց, և ուրախութեան ժամանեսջիք փութապէս: Ցայսոնի լինի ամենեցունց, որ մեր այլ հնար ոչ ինաց այսուհետեւ. ահա վերջին հնար այդ էր, որ մեր հոգեւոր որդի Յոհան վարդապետն առաքեցաք, որ է մտերիմ խորհրդակից մեր և հարազատ որդի. զմեր ամէն խորհուրդ ի դմանէ տեղեկասջիք լիով. և զձերն եւս դմա ծանուսջիք. և զոր ինչ սէր և հնազանդութիւն և պատիւ՝ զոր մեզ առնելոց էք, դմա արասջիք. զի դմա արարեալն՝ մեզ է արարեալ, ըստ Ֆրիստոսի հրամանին. և մանաւանդ չանասջիք՝ որ մեր հոգեւոր որդովդ բան ինչ առնիցէք վասն ձեր եկեղեցեացդ. զի ահա այսքան ժամանակ էանց, երկու թագաւորք գնացին, Պապն եւս գնաց, և մեր լուսահոգի Մովսէս հայրապետն գնաց առ Ֆրիստոս. և մեք եւս ի դրունս մահու եմք հասեալ: Վասն որոյ խընդրեմ ի սիրելի որդոցդ, զի որքան է հնար՝ չանասջիք: Թէ դաւանութեան կողմանէ բան ինչ խնդրէք, ահա ընդ Գրիգորի եպիսկոպոսին առաքեցաք. ի վերայ այդր դաւանութեան՝ ոչ առաւելացուցանելոց եմք և ոչ պակասեցուցանելոց. և որքան վասն անճարակութեան և հնար իցէ, որ թէ զիջանելոյ

լինի՝ մեր հոգեւոր որդոյն պատուիրեալ եմք. քան զայն՝ այլ ոչ կարիմք գիւ-
ղանել: Ողջ լերուք Տերամբ:

Գրեցաւ նամակս ի Թիֆիս Հայոց Ռաճ, Նոյեմբեր ամսոյ Ե:

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՁԵՌՄԲՈՍ ԳՐԵՑԻ:

ԺԴ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌՃԲ = 1654, ՓԵԲՐ. 12.

(Գրի առ Լովացիս, գի ընկալաւ զդեսպան նոցա Խոճայ Նիկողայոս. խրատէ
անսալ Յովհաննիս Կուիրակի):

Է՛

ԻՍՈՒՍԻ Քրիստոսի Ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու տիրանկար և գերապայծառ սրբոյ աթոռոյ Էջմիածնի. ցորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական, և աստուածային բազմապատիկ աւրհնութիւն ի վերայ Ս. Լուսաւորչի հարազատ որդւոց հայազուն ազգաց մերոց, որք ի տիրապահ և ի քրիստոսանմնամ քաղաքիդ Իլովայ կայք բնակեալ. մեղսաքաւիչ քահանայից, խորհրդաթիւ երկոտասան Դասաւորաց, արգասապատիւ տօլվաթաւորաց, և առհասարակ ժողովրդոց մեծի և փոքու. ամէն: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յառաջադիմէր բարերարէ և ամենազօր մարդասիրէ, և ամենուսնակ բաշխողէ. ամէն: Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած և նախանձամեալ պահեսցէ անխռով և անսասան կենօք, և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք, որդւովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանօք, հոգեկանօք և մարմնականօք. և փրկեսցէ յամենայն փորձանաց երեւելեաց և աներեւութից և ամենայն որոգայթից և ի ներհակաց ճշմարտութեան. ամէն:

Ընդ սիրոյ ողջունիս յուշ լիցի վերոյգրեալ հոգեւոր որդւոց մեր, զի եկն առ մեզ առաքեալ դեսպանն ձեր Յօճայ Նիկողայոսն՝ հանդերձ թղթով ձեր՝ և խնդրուածովք և ընծայիւք: Բայց մեր յառաջ քան զգալուստ Յօճայ Նիկողայոսին, ըստ կանխագոյն խոստման մեր՝ առաքեալ էաք զսիրեցեալ որդեակն մեր զՅովհան վարդապետն. որ է յոյժ հաւատարիմ մեր և գիտակ ամենայն խորհրդոց մերոց. և վասն ձերոյ որպիսութեանն մի ըստ միոջէ պատուիրեալ էաք. քանզի վասն ձերոյ օգտի և ազատութեան եկեղեցեացն ուղարկեցաք: Իսկ այժմ եկն առ մեզ Յօճայ Նիկողայոսն, և իմացեալ ծանեաք զամենայն որպիսութիւն ձեր և զխնդիր. ըստ հայրական գրոյ յաղթեալ՝ զամենայն խնդրուածս ձեր կատարեցաք. մի ըստ միոջէ [1] թուղթ ըստ սրտի ձերոյ՝ թէ առ սրբազան Պապն և թէ գերապայծառ թագաւորն, և թէ առ լուսապայծառ արքեպիսկոպոսն. նա և զձեր առաքեալ Ջեռնադրութեան գիրքն եւս ձեռագրեցաք, ըստ հայցման ձեր: Սիրեցեալ որդիք, որպէս բազում անգամ գրեալ եմք, եթէ մերով մահուամբ եւս լինէր հնար փրկութեան ձերոյ և ազատութեան, ոչ խնայէաք, որպէս ծածկագիտին է յայտնի. արդ ի մեր մէ կողմանէ զոր ինչ էր խնդիր ձեր՝ կատարեցաք, այսուհետեւ ձեայ ձեր քաջութիւնն. եթէ ճշմարիտ ցաւ ունիք այդ եկեղեցւոյդ ազատութեան, պարտիք յամենայն անձնէ, յամենայն զօրութենէ, յամենայն մտաց իսկապէս լանալ, զի թերեւս լիցի վերջ տառապանաց ձերոց, և խստագոյն վշտացդ: Վասն որոյ պատուիրելով պատուիրեմ և հարկաւորաբար պահանջեմ ի ձէնջ՝ զայսքան բան. Նախ և առաջին, կատարելապէս միաբանութիւն և սէր առ միմեանս, մեծամեծաց և փոքունց, քահանայից և դատաւորաց, տօլվաթաւորաց և ժողովրդոց, ամենեքեանդ միապէս լանալք վասն ձերոյ ազատութեան. քանզի առանց միաբանութեան անհնար է այդմ գործոյ աւարտ լինելն. զի միաբանութիւնն մայր է ամենայն բարեաց, և անմիաբանութիւնն մայր ամենայն չարեաց. այդքան վիշտ որ առ ձեզ պատահեցաւ, պատճառն ամենայն՝ անմիաբանութիւնն էր. զճաշակս առէք անմիաբան լինելոյն: Թէ Ս. Լուսաւորչին հարազատ որդի էք, և զմեր աւրհնութիւնն կամիք, և այդ գործոյդ աւարտ կամիք լինել, պիտի որ ամենեքեանդ միակամ և միախորհուրդ լինիք. այսուհետեւ ի ձեր մէջն այլ երկպառութիւն չլինի: — Երկրորդ, պահանջեմ ի ձէնջ կատարելագոյն հնազանդութիւն առ սուրբ աթոռն և առ Ս. Լուսաւորչի փոխանորդն. զի հանգոյն ամենայն աշխարհաց՝ ըստ սահմանի Հայաստանեայց եկեղեցւոյ՝ զձեր հնազանդութիւնն ունիցիք, և եպիսկոպոս և առաջնորդ ի նմանէ ընդունիցիք, և զամենայն հնազանդութիւն արդեամբ ցուցանիցէք. որպէս ի հայրենի սովորութենանց առ ձեզ հասեալ է՝ զամենայնն անթերի կատարեսջիք: — Երրորդ, պահանջեմ ի ձէնջ, վրէժխնդիր ի վերայ ձերոյ հայրենի աւանդութեանն, որ ամենեւին եկեղեցական արարողութեան մէջն աւելի պակաս բան չխառնէք. այլ որպէս է սահմանադրութիւն

1. Պակասէ բառն էբէցո+ կամ գոաո+:

Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ նոյն վարեսջիք առանց աւելման և պակասման. և մանաւանդ որպէս ի նախնեաց ձերոց առ ձեզ հասեալ կայ՝ անթերի ուղիղք. որ այսուհետեւ այլ աւելի պակաս բան չխառնէք. թէ պատարագի արարողութիւն և թէ ժամակարգութիւն, և այլն ամենայն՝ ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ լիցի։ — Զորրորդ, պահանջեմ որ ձեր եպիսկոպոսն ի սուրբ Էջմիածնայ հայրապետէն լիցի ձեռնադրեալ, և նորին հրամանաւ նստցի այդըր. և դուք հպատակ և հնազանդ լինիք, ըստ կանոնաց սուրբ հարցն, և առանց մերոյ հրամանի և նշանի՝ թէ եպիսկոպոս անուն թէ վարդապետ, թէ այլ աստիճանաւոր, ամենեւին չթողուք ի ձեր մէջն։ Քաջ իսկ գիտակ էք, որ այդքան խռովութեան պատճառ յայդպիսեացդ եղեւ։ Եթէ զպատուէր մեր կատարեսջիք, յոյս ունիմ ի Քրիստոսէ՝ որ փութով ազատութիւն տացէ ձեզ։ — Եւս, ի մէնջ եպիսկոպոս և դպրապետ էիք խնդրեալ. ահա մեր հոգեւոր և սիրելի որդի Յոհան վարդապետն՝ ձեզ չնորհեցի. որ կարող է զամենայն գործ ձեր կատարել. եթէ վարպետ եւս պիտոյասցի, ղեկուսջիք որ առաքեմ։

Դարձեալ, պատուիրեմ, զի խօճայ Նիկողայոսի զերախտիսն չմոռանայք. վասն ձեր շատ ջանաց. ըստ իւր աշխատանացն երախտահատոյց լինիք։

Ցանձն առնեմ զձեզ չնորհաց Ս. Հոգւոյն և Ս. Լուսաւորչի աղօթիցն։ Ողջ լերուք ի Տէր։ — Թվին ՌՃԲ. փետրվար ամսոյ Ժ։

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԻՄՈՎ, ՋԵՌՄԲՍ ԳՐԵՑԻ։

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃՒ = 1654, ԱՊՐԻԼ 15·

Զի եկն Նիկոլ առ ինքն ի հնազանդութիւն. և պատուիրէ ընդունել զնա)։

Ե՛

ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու լուսակառոյց և քրիստոսանմատոյց վեհափառ և հրեշտակապար սրբոյ աթոռոյ Էջմիածնի. ցորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան. չնորհք առաքելական և աստուածային օրհնութիւն ի վերայ տեառնապահ և քրիստոսանման մայրաքաղաքիդ Իլովայ, Ս· Լուսաւորչ իհարազատ որդւոց հայազուն ազանց մերոյ. մեղսաքաւիչ քահանայից, հանճարաշատ երեսփոխանաց, խորհրդաթիւ դատաւորաց, արգասապատիւ տօլմաթաւորաց, և առհասարակ ժողովրդոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Տէր, մեծամեծաց և փոքունց, միանգամայն ամենեցուն. ամէն. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յարատաձիր բարերարէ, և յամենազօր մարդասիրէ և ամէնունակ բաչխողէ. ամէն։ Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած և նախախնամեալ պահեսցէ անխռով և անսասան կենաց. և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք, որդւովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանաց, այգեստանօք և բուրաստանօք, հոգեկանօք և մարմնականօք. և փրկեսցէ յամենայն փորձանաց՝ յերեւելեաց և յաներեւութից, մարդադէմ զազանաց, ի քարասիրտ բռնաւորաց. ամէն։

Ընդ սիրոյ աւրհնութեանս յուշ լիցի վերոյգրեալ սիրելեացդ մերոց. զի ահա այսքան տարի այդքան նեղութիւն և վիշտ որ ձեզ պատահեցաւ, թէ ի սատանայէ էր թէ ի չար մարդկանէ և թէ վասն մեղաց. այդքան նեղութիւն կրեցիք և ողբան լանացիք՝ ուստեք ելս իրաց ոչ գտէք. ոչ ի թագաւորաց, ոչ յիշխանաց, ոչ ի մէնջ, և ոչ այլ ուստեք։ Ահա ի գթութենէն Աստուծոյ եւ լեալ դիմեաց առ մեզ Նիկողայոս արքեպիսկոպոսն բազում խոնարհութեամբ, և եցոյց մեզ զկատարեալ հնազանդութիւնն իւր. և մեք վասն օգտի ձերոյ և խաղաղութեան՝ ընկալաք բազում սիրով և յոյժ մեծարանօք, որպէս վա-

յել է հարազատ որդւոյ դարձելոյ առ ծնողն. և վերստին չնորհեցաք զիւր եպիսկոպոսական պատիւն և իշխանութիւնն: Այսուհետեւ իբրեւ զմի հարազատ և հնազանդ որդւոց մերոց է. վասն որոյ ընկալարուք զդա բազում սիրով և յոյժ մեծարանօք, և ամենայն կարողութեամբ հպատակ և հնազանդ լերուք դմա. և ի հոգեւոր գործ մի՛ խառնիք՝ որ ոչ վերաբերի առ ձեզ. դոյայ է գործ: Մի՛ ոք իցէ ընդդիմացօղ կամ հակառակօղ դմա: Եւ եպիսկոպոսական հաս և իրաւունքն յինքն հաստացանէք անթերի: Այսուհետեւ ով ոք խռովութեան պատճառ լինի՝ թէ ի քահանայից թէ ի դատաւորաց և թէ յաշխարհականաց, չարաչար բանադրանս ընդունելոց է, և պատուհասակոծ լինելոց: Սիրոյ և խաղաղութեան Հանացարուք. և վասն ամենայն սնոտի և ընդունայն բանից մի՛ վրդովիք և աղմկիք. այլ երկայնամիտ լերուք, և զօգուտն խորհեցարուք: Ահա ամենայն խորհրդոց մերոց սննեակ Պարոն Խաչքոն դատաւոր ձեր. զմեր ամենայն խորհուրդ ի Պարոն Խաչքոէն իմանայք. և զոր ինչ ի մերմէ կողմանէ ասասցէ ձեզ՝ ունկնդիր լինիք: Ահա ի մերմէ կողմանէ Ս. Էջմիածնայ երեսփոխան կարգեցաք զՊարոն Խաչքոն. որ զինչ Էջմիածնայ հաս և իրաւունք լիցի, թէ դանձանակ թէ ողորմութիւն, թէ յիշատակ, բովանդակն Պարոն Խաչքոն ժողովեսցէ. և պարոնտիրի և ձերով գիտութեամբ և կնքով ի Ս. Էջմիածինն հաստացէ: Ընդ ամին և զայս խընդրեմ, զի Թօխաթացի Խոճայ Մարկոսի որդի Սիմէօն չէլէպին՝ որ այս բարի բանիս պատճառ եղեւ, և պարոնտիրին՝ դրամով օգնեաց, որ եկն և խաղաղութիւն եղեւ, զնորա դրամն ըստ արժանոյն առաւելապէս յինքն հաստացանէք. և ըստ երախտեացն երախտահատոյց լինիք, պատուով և մեծարանօք:

Գրեցաւ թուղթս ի թվին Հայոց ՌՃԲ, յապրիլ ամսոյ ԻԵ, ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս:

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՁԵՌՄԲՍ ԳՐԵՑԻ:

ԺԶ.

ՅԱԿՈԲԻ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌՃԺ = 1662, ՅԱՆՈՒԱՐ 12.

(Նոյիրակ առաքէ զՏէր Յովհ. վարդապետ առ Նիկողայոս արքեպիսկոպոս և առ Լեհահայս, խնդրելով և տուրս վասն պարտուց Էջմիածնի):



ՅՈՎՀԱՆՆԷՍ Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու լուսապսակ և երկնահանդէս գերապատիւ և հռչակաւոր վեհափառ և հրեշտակապար սրբոյ մեծի աթոռոյս Էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական և աստուածային առատահոս աւրհնութիւն, հանդերձ նախախնամական գթութեամբն ի վերայ հաւատարիմ և խոստումն ծառայիցդ Քրիստոսի և ճշմարտապէս հոգեւոր մատակարարիդ, և իսկութեամբ ցաւակցաբար ցաւակցողիդ և մտերիմ հարազատագոյն հարազատիցդ, և սրտէ սիրեցեալ որդւոյդ մերոյ, և մեծափառ հոգեւոր ծնողիս աստուածընկալ սրբոյ աթոռոյս Էջմիածնայ փառք և պարծանք՝ Լեհաց երկրի աստուածապահ քաղաքացդ. Նախ, հաւատարիմ և սիրելի եղբօր մերոյ Նիկողայոս արհի եպիսկոպոսիդ, և քահանայիցդ և Բժ Դասաւորացդ, և առհասարակ ժողովրդոցդ առ հասարակ ամենայնի: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն անսկզբնական Էին, և ողորմութիւն նորին Էակից Բանին, նախախնամութիւն և գթութիւն փառակից Հոգւոյն ճշմարտի գետօրէն ծաւալեսցի, անճառ բղխմամբ պարգեւեսցի, հրահոսան իմամբ տեղասցի, անսահման պայմանաւ ցօղեսցի, անձրեւահեղ տարածեսցի, և մշտազուարճ առեղիցի. ամէն: Աւրհնեսցէ զձեզ Քրիստոս Աստուածն յաւիտենական, պահելով անփորձ և անսասան, երկարաձգեալ ամաք յարամնայական, զարդարեալ առաքինութեամբ հոգեկան, լրացեալ ընչեղիւք մարմնական, և ուռճացեալ փառօք գերազանցականն, պերճացեալ ուստերօք յոգնական և պճնեալ դստերօք զանազան. Նախախնամեալ սիրելեօք յարաձգական և բարեկամօք միշտ յաւիտենական. Ննջեցելոց տացէ կեանս անթառամ յաւիտենից յաւէժ և առ յապագայն. ամէն:

Եւ ընդ սիրոյ նամակիս յայտնի լիցի սիրելեացդ իմոց, զի ահաւասիկ զսիրելի և զհաւատարիմ որդին մեր զՏէր Ովանէս վարդապետն առաքեցաք ի կողմանս ձեր, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, որ եկեալ նուիրակութեամբ և

վարդապետական իշխանութեամբ բաշխեսցէ զաստուածաշնորհ մեռոնն սրբութեամբ, ի մէջ աստուածասէր և բարեպաշտ ուղղադաւան հաւատացելոցդ հայկազան սեռիդ, սիրով Հոգւոյն։ Խնդրեմ ի հարազատ որդեկացդ, զի դուք էք մեծ սիւն և հաստատութիւն սուրբ աթոռոյս Էջմիածնայ, զի յամենայն ժամ ձեզ պարծիմք, և ձեր ընծայիւք և առատաձեռն ողորմութեամբն է չէն և պայծառ սուրբ աթոռս. վասն որոյ հայցեմ ի ձէնջ զի յորժամ հասցէ առ ձեզ սիրելի որդիս մեր, սիրով և քաղցրութեամբ ընդունիջիք, հարազատական լրջմտութեամբ պատուեալ մեծարեսջիք, զմիմեանս յորդորելով, դատաւոր առ դատաւորն, իշխան առ իշխանս, ժողովուրդք առ ժողովուրդն. ամենեքեան վառելով ի հոգեւոր նախանձն, յորդորիչք և յօժարեցուցիչք լինիջիք առ միմեանս. որ յորդառատ սիրով և հեշտալրական քաղցրութեամբ ընծայեցէք զձեր հոգւոյ նուէրն զոր առ մեզ չնորհէիք։ Եւ մանաւանդ քան զնուիրակութիւնն կրկնակի օգնութիւն իմն կու խնդրեմ ի ձէնջ. քանզի յոյժ բազմացեալ է պարտքն ի վերայ սուրբ տանս, այս քան՝ զի պարանոցաթաղ կեամք ի մէջ պարտուցն. և այլ բազում վիշտք են մեզ, զորս ձանձրութիւն է թուելն. այլ ի հոգեւոր որդոյտ իմոյ լուիջիք. զի բերան առ բերան պատմեսցէ ձեզ զանցքն մեր։ Եւ դարձեալ կրկին թախանձանօք խնդրեմ սիրելի եղբօրէդ իմոյ Պարոնտիրէդ և ի քահանայիցդ և ի մեծաշուք դատաւորացդ. զի փութանակի գործառնութեան դորին օգնական և թելադիր լինիջիք, զի մի յետասցի, և տակոսն ի վերայ պարտուցն բարդեսցի. զի կամքն մեր այս էր, զի բոլոր տունս ցունաց ի դա էաք յանձնեալ, հանդերձ երեք վարդապետօք, զի նուիրակեսցեն. այլ վասն պարտուցն որ կարի նեղացուցին զմեզ, երկու երեք նուիրակ այլ առաքեցաք յամենայն կողմանս. զի մինչեւ ցայտնութիւն աւարտեսցեն. և դուք եւս մի յամեցուցանէք, զի մինչեւ ցայտնութիւն Քրիստոսի՝ զերկիրդ Լեհաց և Ռուսիէլու՝ աւարտեսցէ, և դարձցի և բերցէ զձեր հոգւոյ պտուղն և հաւատոյ ընծայն՝ առ սուրբ աթոռս. և մի վեր ի վերոյ տեսանէք՝ թէ ըշտապեցուցեալ եմք։ Այլ և խնդրեմ զի ամենայն ինչ լիապէս հոգասջիք, թէ Հոգեբաժին, թէ Քառասնից, թէ յիշատակ, լիապէս ընդ իւրաքանչիւր պարտիք հատուցանել. զի սրտին սէրն ի ձեռացն տուրքն կու երեւի. զի մինչեւ ցայժմ ամենայն նուիրակք մեր չնորհակալութեամբ և առատաձեռն արդեամբք (են) ուղաւորել, և նարդեանս եւս քան եւս պարտիք զնոյն սէրն և դութն ցուցանել. զի ձեր առաջին պըտուղն այս է որ գա(գայ) առ մեզ. որպէս վայել է ձեր աստուածսիրութեանդ՝ այնպէս արասջիք։

Գրեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԺ. յունվարի ԻԲ, աւրն չարաթ։

ԺԷ·

ՅԱԿՈՎԲ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃԻ = 1671, ՍԵՊՏ· 1·

(Հաւարելով թէ ոչ դարձցի Նիկողայոս ի Հռովմայ՝ զԹէոդորոս վարդապետեալ ընտրէ արքեպիսկոպոս Լեհահայոց)[1]·

ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի Փառայ ցակոբ Կաթողիկոս կաթողիկէ եկեղեցւոյ ամենայն Հայաստանեայց· Վեհ և վերադիտող ամենայն հայկազեան սեռի և պատրիարգ առաքելական աթոռոյ ի Վաղարշապատ քաղաքի, ի տեղւոջ Իջման Բանին Աստուծոյ, գլխափոխան և յաջորդ Սրբազնակատար և գերերջանիկ Տեառն մերոյ և Հօրն Հասարակաց Գրիգորի Լուսաւորչին ի վերայ ընթհանուր հայկականաց տոհմից և Թորգոմեանց սեռից, և ամենայն առ հասարակ հաւատացելոց, որք 'ի քաղաք և ի գեօղս յատանս և 'ի ծերպս վիմաց իցեն բնակեալ·

Գերապայծառ իմանալի ճառագայթիւք և լուսով իմաստից արփիաւորեալ և դրոշմեալ ճշմարտաքարոզ վարդապետաց արհի և պանծալի եպիսկոպոսաց վառեալոց լուսով աստուածազիտութեան և ի հովուապետութիւն բանաւոր հօտին հրաւիրելոց, երկնահրաւէր և աստուածանուէր քահանայից ի սրբազնագործութիւն կոչեցելոց, և համօրէն եկեղեցականաց և պաշտօնէից· ամենայն աշխարհականաց՝ ըստ պատուոյն արհեստին և որպիսութեանն կեցելոց, մեծաց և փոքունց·

Յամենեան Օգոստոսի յաւուր երիքտասաներորդի ի թուականութեան մարդացելոյն Աստուծոյ ՌՈՀԱ և Հայոց ՌՃԻ· յամի հայրապետութեանս մերոյ ԺԶի·

Լուեալ զեկեղեցի Հայոց ի Լեհաց երկրին և զբանաւոր հօտն մեր որբացեալ և զրկեալ յատաչնորդէն և հովուէն իւրեանց, վանն գնալոյն Նիկողայո-

1· Կաթողիկոսն յիշելով զսա և զՄատթէոսն՝ ծանօթ գիտնական թարգմանիչն, չըսեր, բայց ժամանակակիցք վկայեն՝ որ հարազատ եղբարք էին· Պր· կար· Եազեանցի հրատարակած Բոնի մխուքիւն անուն գրոց մէջ՝ կան տեղեկութիւնք Թէոդորոսի վրայօք· Թէ և կաւակածոտ մտօք գրուած, և նոյն մտօք անընդունելի եղած է նա ի յաջորդութիւն Նիկոլի· գնացեր է ի Հռոմ, յետոյ ի Սպանիա (ինչո՞ւ համար), և վերջապէս † է ի Հռոմ, յամի 1700 (12 փետր·), 60 տարուան, և թաղուած է ի Ս· Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ Հայոց·

սի արքեպիսկոպոսին Նոցա ի մեծն Հռոմ, և անդրէն միւսանգամ յետս ոչ դառնալոյն, արժանի երևեցաւ մեզ կոչել զԹէոդորոսն Վարդանեանց Բագրատունեանց ի սուրբ աթոռոյս՝ որ ի տեղւոջ Իլման Բանին Աստուծոյ, ի վաղարշապատ քաղաքին Հայոց մեծաց՝ հիմնեցաւ հաստատակառոյց ի վերայ հիման առաքելոց, երկրաւոր և երկնաւոր բանալեօք, կապել և արձակել յերկինս և ի յերկրի: Զայր խոհեմ և իմաստուն, աղնուատոհմ ծննդեամբ, քրիստոնէական սննդեամբ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, վարժեալ և տեղեկացեալ ի զանազան արհեստս գրոց և դիտութեանց և ի խորագոյն մակացութիւնս իմաստասիրական և աստուածաբանական հնարիւք և տեղեկութեամբք. Եւ զնա ձեռնադրել եպիսկոպոս Լեհաց երկրի՝ ըստ նախակարգութեան Աստուծոյ և օժանդակութեան ամենեցուն, ի կայսերանիստ քաղաքին Կոստանդինուպօլսի, ի տօնի և տաճարի Վերափոխման մօրն լուսոյ Ս. Աստուածածնի: Վասն որոյ ամենայն առհասարակ հաւատացելոց մեծաց և փոքունց՝ յայտ եղիցի. զի մեք առ ի վերուստ հրաւիրեալք ի հովուապետութիւն Հայոց աղգին, գլխափոխան և յայնորդ լինել սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի, և երից երանելոյն Գրիգորի Լուսաւորչին, առաքելական և հայրապետական իշխանութեամբ երկնաւոր և երկրաւոր բանալեօք, սահմանեմք կարգեմք և հաստատեմք զԹէոդորոս Վարդանանցն՝ առաջնորդ հովիւ և տեսուչ Լեհաց երկրին, ի վերայ Հայոց ազգին. ամենեցուն ընդ հովուապետութեամբ և հոգաբարձութեամբ դորա՝ սիրով և հանդարտութեամբ հաստատ և անսասան մնալ, ամենեցուն հնազանդ լինել, և լսել ձայնի դորա. զոր դա ընդունի՝ և մեք ընդունիմք. և զոր դա մեկնէ և ի բաց մերժէ, և մեք մերժեմք և հաւանիմք. զոր օրհնէ՝ օրհնեալ եղիցի, և զոր դա կապէ և արձակէ երկրաւոր և երկնաւոր բանալեօք՝ կապեալ և արձակեալ եղիցի: Ոչ ոք այսուհետեւ իշխեսցէ տիրել ի վերայ նոցա, ոչ խրատել և ուսուցանել, ոչ յանդիմանել կամ մխիթարել, բայ ՚ի դմանէ, և կամ դորա հրամանաւ. ամենեքեան իբրև զմի ՚ի մէջ նոցա ըստ կարգի և որպիսութեան եկեղեցական կանոնաց. Վարդապետեան քարոզութեան պարապեցի. այլ ոչ սնոտիապատուասո ունայնութեամբ կամ մարդահաճութեամբ և ներհակ վարդապետութեամբ հարցն սրբոց. երիցունք և քահանայք սրբազնագործութիւն կատարեսցեն. աբեղայքն և կրօնաւորք զմիայնակեցութիւն ընկալեալք՝ հաստատ և անսասան ճգնեսցին ի կրօնս իւրեանց, հնազանդութեամբ, յօժարութեամբ և աշխատութեամբ, և մանաւանդ ընթերցմամբ սըրբոց գրոց և վարդապետութեամբ հարցն սրբոց: Եւ ամենայն եկեղեցականքն և աշխարհականքն ըստ կարգին և որպիսութեանն չարժեսցին, սիրով և ամենայն հնազանդութեամբ առ հովիւ և տեսուչ իւրեանց: Եւ եթէ ի պահպանութիւն պատուիրանացս այսոցիկ եկեղեցական կանոնաց անչարժ մնասցեն, կեցեալք ըստ հաճոյիցն Աստուծոյ, ընկալցին զվարձս ՚ի Քրիստոսէ առատապէս և բիւրապատիկ. իսկ եթէ ուխտազանց և պատուիրանազանց եղիցին, պատժեսցին յառաջնորդէ իւրեանց հոգւով և մարմնով, ասա և ՚ի

հանդերձելումն, ըստ քանակութեան և որակութեան յանցանացն: Եւ որպէս դորա եղիցի ոչ միայն վեհ և վերակացու լինել ժողովրդեան, այլ և նմանիլ անարատ և անբիծ հարսին իւրոյ՝ սրբութեամբ վարուց և ուղիղ վարդապետութեամբ արածել զհօտն իւր, այսպէս դորա եղիցին ընտրել և կարդել զայնոսիկ՝ որք առաքինութեամբ և խմաստութեամբ պայծառացեալք արժանի և ընդունակ եղիցին սպասու և սրբազնագործութեան եկեղեցոյ, ըստ կանոնաց և աւանդութեան հարցն սրբոց: Դորա եղիցի սահմանել և հաստատել դպրատուն ի վարժումն երիտասարդաց և ի տեղեկութիւն սուրբ գրոց. զի մի ի խաւարի շրջեսցին, այլ լուսով աստուածգիտութեան զարդարեալք զօրացին ի պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ, և հայրենաւանդ սուրբ և ուղիղ դաւանութեան հաւատոցն:

Դարձեալ, հաստատեմք և սահմանեմք ըստ եկեղեցական կանոնաց, ոչ ումեք իշխանութիւն լինել ի վերայ հօտին և ժողովրդեան դորա, ոչ կարդել և ոչ ձեռնադրել առանց դորա հրամանի. այլ և ի սուրբ աթոռս մեր ոչ զոք ընդունել և ոչ զոք ձեռնադրել, և ոչ ումեք վարդապետական կամ եպիսկոպոսական իշխանութիւն տալ՝ առանց դորա խնդրոյ և յանձնարարութեան, որքան կենդանի եղիցի, ի դատաւորաց քաղաքին:

Բայց այս ամենեցուն յայտ եղիցի, զի որպէս մեք առաքելական և հայրապետական իշխանութեամբ երկրաւոր և երկնաւոր բանալեօք ընտրեցաք և ձեռնադրեցաք զդա՝ եպիսկոպոս Լեհաց երկրի՝ ի վերայ ժողովրդեան մերոյ, նոյնպէս և դա որքան կենդանի է՝ ամենայն հնազանդութեամբ առ մեզ շարժեսցի, և ով զք ընտրողութեամբ և օժանդակութեամբ ամենեցուն՝ զաթոռն հայրապետութեան մերոյ յաղորդեսցէ: Եւ եթէ Թէոդորոս Վարդանեանց եպիսկոպոս Լեհաց երկրին, կամ ներհակ և օրինազանց ճանապարհացն Աստուծոյ կամ անհնազանդ առ սուրբ աթոռս երևեսցի, եկեղեցականքն և ժողովուրդքն Լեհաց երկրի բողոքեսցեն առ մեզ, և մեք ըստ քանակութեան և որպիսութեան յանցանացն՝ դատեմք զնա: Իսկ եթէ հաստատ և անշարժ ի պահպանութեան պատուիրանաց Աստուծոյ և աւանդութեան հարցն սրբոց մնասցէ, մի պակասեսցի ի դմանէ լիութիւն աստուածային չնորհաց, և բազմապարգև օրհնութիւն՝ զոր միանգամ ընկալաւ. և արժանի եղիցի իբրեւ զգիր մշակ և քաջ հովիւ յեկեղեցւոյն Քրիստոսի, լսել ձայնի օրհնութեան և հրաւիրման յերկիր աւետեաց, այսինքն՝ յիմանալի և յաստուածանուէր յանդիմանատես երանութեան և կենսաբեր բնակութեան վերինն Երուսաղեմի. ամէն:

Դարձեալ, գիտելի եղիցի ամենայն առհասարակ հաւատացելոց մեծաց և փոքունց. զի դա ինքն Թէոդորոս Վարդանեանց՝ յերկրէն Լեհաց՝ ի զարմէն Բագրատունեանց, անեալ ի տիս մանկութեան, վարժեալ և տեղեկացեալ առ ոտս մեր՝ գիտութեան աստուածային գրոց, ըստ չափոյ և կարողութեան իւրոյ. զի որպէս մեծն Մեսրովպ զվարդապետական իշխանութիւնն ընկալաւ ի Սբրբոյն Ներսիսէ աշակերտէ երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի, որ և զհայ-

բալետական աթոռն յայորդեաց. նոյնպէս և մեք ըստ կարգի և փոխանորդութեան զնկեալ մինչեւ ցառ մեզ զվարդապետական իշխանութիւն՝ տուաք ընձեռեցաք և չնորհեցաք սիրելի և հոգևոր որդւոյս և աչակերտիս մերոյ Թէոդորոսի Վարդանեանց, յամենայն օգոստոսի յաւուր ԺԵի, ի թուականութեան Հայոց ՌՃԻ. չրջել առաքելաբար ուր և յօժարեսցի. և զընկալեալ քանքարն սեղանաւորել. և զսերմն բարելի բանին Աստուծոյ արկանել և սերմանել ի բանաւոր անդաստանին. և զտապ բոցաճենճեր յանցանաց ազգի մարդկան՝ իւրովն չիջուցանել, և զովացուցանել ի ձեռն քարոզութեան յանդիմանութեան և մխիթարութեան: Ցաղագս որոյ խնդրեմք և պատուիրեմք ընդունել զդա ուր և հանդիպեսցի՝ իբրեւ ի մէնջ առաքեալ. պատուել և մեծարել ըստ ճշմարտաքարոզ ուսուցչաց. զի արժանի է մշակ վարձու իւրոյ: Խնդրեսցուք բոլորով սրտիւ ի մարդասէր Հոգին՝ որ յայողէ ի մեզ զկամեն և զառնեն, բանալ քաղցրաքարոզ վարդապետիդ Թէոդորոսի՝ դուռն աւետարանական ասացուածոց, և տալ կարողութիւն ըղձակերտ առնել զարքայութեան բան՝ ի լսելիս հասարակաց, և պարգևել յօժարութիւն յորդորամիտ լինել ունկնդրութեամբ բազմաւ: Որք ի միասին բոլորապար պարուք խրատողաք հանդերձ համբրէն վճակակեալ դաստիարակացելովք՝ ընկալչիք զանճառելի ուրախութիւնն և զանեզրական ցնծութիւնս յարքայութեան երկնից, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ յաւիտենական ժամ. ամէն:

Գրեցաւ ի կայսերանիստ քաղաքի Կոստանդնուպոլսի ի թուականութեան ՓՐԿՀԻՆ ՌՈՀԱ, յամի հայրապետութեանս մերոյ ԺԶի, սեպտեմբերի ի Ա:

ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱՑ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՉԵՌԱՄԲ ԻՄՈՎ ԳՐԵՑԻ ԱՌ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻԻՆ ԹՂԹՈՑՍ:

ԺԸ·

ՅԱԿՈՎԲ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃԻ·=1672 ՕԳՈՍՏ· 28·

(Լռեալ զի Նիկող· արքեպիսկոպոս կոչեցեալ է ի Հռոմի, և ոչ գիտեմով երբ դարձցի, առաքէ զԹեոդորոս եպս· վարդապետեալ՝ ի տեղակալ, և յաջորդ)։



ԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս կաթողիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց, վեհ և վերադիտող ամենայն Հայկազեան սեռի, և պատրիարգ ի վաղարշապատ քաղաքի առաքելական աթոռոյ, ի տեղւոջ Իջման Բանին Աստուծոյ· տեղապահ և յաջորդ աթոռակալ և փոխանորդ մեծահռչակ տեառն մերոյ և հօրն հաւասարակաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին· Յորմէ ժամանեալ հասցէ նամակ աւրհնութեան և քարտէղ պահպանութեան, հանդերձ լիութեամբ վերնահոս շնորհաց և յաստուածօսա առատաբուխ պարգեւացն, ի վերայ ընդհանուր հայկականաց տոհմից և թորգոմեանց սեռից, որք ի Լեհաց երկրին բնակեալ են· մանաւանդ ի տիրապահ և ի քրիստոսախնամ քաղաքին Լվովայ, երկնահրաւէր և սրբանուէր քահանայից, արդարադատ և խորհրդատ դատաւորաց, և ամենայն առհասարակ եկեղեցականաց և ժողովրդոց, մեծաց և փոքունց· Առաքելական աւրհնութիւն և լիութիւն աստուածային շնորհաց· Շնորհք և բազմապարգեւ աւրհնութիւնն ծագեսցէ ի վերայ ձեզ և ամենայն գոյականացդ, և ամենայն ազգականաց և բարեկամաց ձերոց, յանապատ աղերսէն աստուածութեան և յանմատոյց լուսոյ եռալուսնեան զուգակցութեանց հանգուցատիպ երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ· ամէն։ Այլ և բարեխօսութեամբ և մաղթանօք ամենասուրբ Կուսին Մարիամու Աստուածամօրն, և որոց իշխանութիւն ի վերուստ տուաւ ի վերայ երկրի՝ երկրաւոր և երկնաւոր բանալեօք տիրել ազգաց և ազանց, մանաւանդ երիցս երանելոյն Լուսաւորչի մերոյ Սրբոյն Գրիգորի, և ամենայն երկնագումար խմբից· գերալոյս և գերահրաշ մէգն աստուածութեան ի ներքոյ վարագուրին բնակեալ, և ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ ծաւալեսցէ ի ձեզ զլոյս աստուածգիտութեան, և առատանուէր հոսմամբ և բազմամանեայ յաճախութեամբ մեծին երախտեաց ի ձեզ ամե-

նեսեան՝ իբր ի ձեռակերտն իւր և ի նմանութիւն, զամբաւութիւնս համբա-
րեալ գումարեսցէ. հաստատ և անսասան մնալ ի պահպանութեան ի պա-
տուիրանացն Աստուծոյ, և արժանի լինել երկնահրաւէր ձայնի աւրհնութեան.
ամէն:

Եւ ընդ աստուածապատիւ և առաստածաւալ աւրհնութեանս, գիտելի եղիցի
սիրելի և հոգեւոր որդւոցդ, զի մեք իբրեւ գհովիւ և տեսուչ բանաւոր հօ-
տիդ, միշտ և հանապազ փոյթ ունիմք ամենեցուն ձեզ խնամ տանել, մանա-
ւանդ ըստ երանելոյն Պօղոսի՝ Ուխտիւք խնդրելի ի Քրիստոսէ նզով լինել
վասն ձեր, զի եղիջիք բնակարան վերնահոս շնորհացն և պահօղք պա-
տուիրանացն Աստուծոյ: Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղեւ թէ որքան վիշտ
և նեղութիւն յամենայն դիմաց պատեաց զմեզ՝ վասն ի միոյ բառնալոյ զան-
կարգութիւն եղիազարին, և զպարտս վճարելոյ. եօթն տարի է որ ի սուրբ
աթոռոյս հեռացեալ՝ աւր ըստ աւրէ հաչիւք և մաշիւք ի տառապանս, և ոչ կա-
րեմք աստի ելանել, զի մի կաշառօք աւերեսցեն զուղղեալն մեր, այլ սիրով շա-
հեսցուք զնոսա: Դարձեալ, գիտելի եղիցի ձեզ, զի բազում կերպիւ վիրաւորեաց
զմեզ ցովհաննէս վարդապետն. զոր մի ըստ միոջէ պատմելն՝ անպատեհ է, զոր
արար յԵրուսաղէմ, ի Լիվօռնոյ, և յայլ տեղիս. մանաւանդ թէ որոյ հրա-
մանաւ եկն առ ձեզ. կամ էր արդեօք զպատճառ գնալոյն ի մեծն Հռոմ
Նիկօղայոս եպիսկոպոսին և անդ յամելոյն ոչ զեկոյց մեզ, և ի տեղին՝ ա-
ռանց մերոյ հրամանի ինքնագլուխ նստաւ, և դուք ոչ խնդրեցիք ի մէնջ, այլ
և զտոյգն ոչ ծանուցիք վասն առաջնորդին ձերոյ, թէ ինչ պէտս ի սրբա-
զան Պապէն կոչեցաւ ի մեծն Հռոմ. և էր արդեօք այսքան ժամանակս անդ
յամենայ: Ճշմարիտ զրեմք, զտոյգն և զիրաւն ոչ գիտեմք:

Արդ, որովհետեւ եպիսկոպոսն ձեր անդ յամեցաւ, և ամենեւին ոչ գի-
տեմք թէ միւսանգամ յետ դառնալոց է, կամեցաք զՄտեփանոս վարդապետն
չնորհել ձեզ, իբր զայր հանճարեղ և տեղեակ ամենայն ճանապարհացն Աս-
տուծոյ, լի չնորհօք և աստուածապաշտութեամբ. բայց նա յանձն ոչ առեալ,
զմիայնակեցութիւն՝ առաջնորդութեանն նախադասեաց. վասն որոյ կոչեցաք
ի Ս. Էջմիածնայ ի Կոստանդինուպօլիս՝ զհոգեւոր և զսիրելի որդիս զՏէր
Թէոդորոսն Վարդանեանց, զայր խոհեմ և իմաստուն, որպէս և ձեզ յայտնի
է. և զնա ձեռնադրեցաք եպիսկոպոս, և վարդապետական իշխանութեամբ
առաքեցաք առ ձեզ. զի եղիցի փոխանակ Նիկօղայոս եպիսկոպոսին, և եր-
կրորդ նմին, այսինքն աթոռակալ և տեղապահ, որքան նա կենդանի է.
իսկ զկնի մահուան Նիկօղայոս եպիսկոպոսին՝ Թէոդորոս եպիսկոպոսն՝ ձեզ ա-
ռաջնորդ հովիւ և տեսուչ է: Եւ գիտեմք զի անագորոյնք և անուղղայք ոչ են
պակաս. զի ոմանք ասելոց են, թէ մեք զնա ոչ խնդրեցաք. իսկ թէ ցաւ լի-
նէր ձեզ՝ վաղ ուրեմն խնդրեալ էիք. զի հօտն առանց հովուի կերակուր է գա-
զանաց: Ահա ետու ձեզ հովիւ ըստ սրտի իմում, որ հովուելով հովեսցէ զձեզ
իմաստութեամբ. վասն որոյ պարտ է ձեզ ամենեցուն հնազանդ լինել. զի որ-
պէս ասէ վարդապետն մեր Քրիստոս, « Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ ընդ-

ունի՝ զիս ընդունի. և որ զիս ընդունի՝ զառաքիչն իմ ընդունի»։ Ոչ ոք այսուհետեւ իշխեսցէ տիրել ի վերայ ձեր, ոչ եպիսկոպոս և ոչ վարդապետ, բաց ի Նիկոլէէն. այլ ամենեքեան դմա հնազանդ լիցին. ամենեքեան իբր զմի ի միջի ձերում. զոր դա ընդունի և մեք ընդունիմք. և զոր դա արտաքսէ և ի բաց մերժէ՝ և մեք հաւանիմք. զոր դա աւրհնէ՝ աւրհնեալ լիցի, և զոր դա կապէ և արձակէ երկրաւոր և երկնաւոր բանալեօք, կապեալ և արձակեալ եղիցի. ամէն։ Ցէրն տերանց հովանասցի ի ձեզ և ամենայն ազգակացդ և բարեկամաց ձերոց, լինել անօթ ընտրութեան և տաճար բնակութեան անմահին։

Գրեցաւ սիրոյ և աւրհնութեան նամակս՝ հազար հարիւր քսան թուին Հայկազեան տոհմի, և յամենայնն օգոստոսի քսան և ութերորդում աւուր, ի Կոստանդինուպոլիս մայրաքաղաքի և արքայարանի. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածամօր Կուսի և քրիստոսաբնակ տաճարի։

ՓՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՑ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ, ԳՐԵՑԻ ԱՌ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՍ։

ՑԱՆԿ

Ա Ն Ձ Ա Ն Ց Ե Ի Տ Ե Ղ Ե Ա Ց

(*վ. վարդապետ. վ. վանք. քղ. քաղաք. գղ. գիւղ. ո. որդի. դ. դուստր.*)

Աբգար Թագաւոր 115
Աբրահամ. ո. Պր. Սիւնեաց 160
Տէր — ի Կամենից 64
— կրօնաւոր 169
— Շաւլեթից? 217
Ագաթան ժամանակագիրն 67. 72. 75. 81 84. 99. 107–8
— Երեսփոխան յՇաշ 188
— Ջազկից
— տես Օգսենտ.
Ագաթանգեղից Թոմաս 159
Ագապէտ Պր. Լոռեաց 109. 164
Ագաթիկոս հայրապետ 261
Ազատ սրկդ 18
Ազարիա կԹղ. Ագուանից 127
Ազիզ խոճայ 180
Ազիղքո բանի կին Հրիւորից 36
Աթաբէկ. տ. Ադաբէկ
Աւատին քերդ 128
Աւբերդ Թդ. Լհնաց 16. 116
Աւետարան հայր Մխիթարեան եպսի 196. 199
Աւետուն հայր Յակոբ երիցու 170
Աւի փաշայ Գարահիսարի 100
Ահարոն պէկ Օլախ 59. 68
Ահմատ սուլթան 82. 94
Ազա օղլու 119
Աղեքսանդր Թդ. Լհնաց 16. 117
— պէկ Վլահաց 81. 87–9. 95. 184–5
— Բեգրոյ 19
— Գալինօվաքից 74
Աղեքսանդր ե պապ 127. 141. 193
— ո. Երեմիայ պէկի 78–9
Աղկուց վանք 240
Աղբերման 15. 28. 88. 116
Ամիւ 235
Անդրէաս աւագերէց Սիւռմայ 181. 188
— դպիր 176
Տէր — ի Նովինա 186
Անեցիք 202
Անկիւրիա 190
Ս. Աննայի վանք 147
Անուշքա 161. 164
Անտոն եպիսկոպոս յԵպզլովցա 191
— կրօնաւոր ո. Իւրքոյ 187
— (Տէր) ի Սիւռմ 181
Առաքել Պատմիչ 2. 124
Առիւծ եղբ. Յակոբչայի 161
Առատագէս երէց ի Ստանխալաւ 196–7
Աս. Ասպազար տ. եաշ 35. 49. 71. 78–9. 86. 108. 161. Են.
Ասար Սեբաստացի 173
Ս. Աստուածածնի վանք ի Հայս 240
Աստուածատուր պատրիք 231–8
— աւագերէց Լոմի 117
— եպս Ղեբսխեան 129–30. 144
— եպիսկոպոս Այրիվանից 240
— Նուիրակ 135
— վ. Մշոյ Ս. Կրպաի 144
— քահնց յԵշ 169
— ո. Տէր Յակոբայ 170. 178

Աստուածամուր քահնյ ի Սեչով 181
Ասբի (Բան) 111
Արծուն գրող 165
Արխաակէս կթղ 225–6
Արհաւուքք 19
Արպու ? 118
Աւազ ո· Մաթեոսի 59
— եպս Անկիւրիոյ 165· 240
Աւետիք արքեպ 116· 134
— (Տէր) վարպետ 50
— քահ· ի Սեչով 181
Աւլատեմիր տ· Վլատիմիր
Բանա պ· Վլինչկի 111
Բանեւօվկա (տեղի) 91· 104
Բեդրա Պր· Վլահաց 17· 19· 30· 42· 48· 51· 58
— մխս 58
Բեքաբաքեյ· Բիքաբաքեյ 89
Բխտաքեյ 28
— մխս 53
Բիրմալի Պօղոս 139· 200
Բոդքովա տ· Իւան
Բոլոքա 22· 50
Բոլքա (Լեհաստան) 43
Բոռուխա 31· 37· 42· 46· 56· 61· 66
Բրեդվից 60
Բրիդովիչ 18
Բրուխ դէտ 87
Բրուխնիցքեյ եպս 68
Բրուսք 15· 116· 118
Բօդոցքեյ Եան Շըբըրքա 39· 57· 68· 81
— Եէնորիոյ 66
— Սուեփան 71· 81–2· 89
Բօլոցքեյ (Բան) 96–97
Բօքուդէտ 83· 120
Գաբրիել տանուտէր 176
— երէց ի Կամենից 178
Գազարք (Խազիրք) 197
Գալըճօր իչխան Վլահ· 61
Գալինովքի 87
Գալուստ եպիսկոպոս 117· 135· 231
Գանդելմի Նունց 129· 144
Գասատուհաք ռուս 154
Գասպար աւազերէց 187
— մահտեսի 130
Գասպեր Կրացեն պէկ Վլահ· 84· 86–8
Ս· Գէորգ վանք 149
Գոճա քղ· 35
Գոռգա Խաչուտ 71
Գուղի գղ· Խազտեաց 198
Գրեմցա 119
Գրիգոր եպիսկոպոսք Լեհահայոց 4· 10· 29· 43· 46· 115· 131· 135· 215
— կթղ Վիլայասէր 236
— Մակուեցի 124· 134
— Ուրհայեցի 168
— եպիսկոպոս Նուբրակ 117· 25
— Անանեանց Վարագեցի 162
— աթոռակալ Անկիւր· 54
— աւազերէց ո· Տ· Յովհան· 83
— Վ· Կեսարացի (Նուբրակ) 124· 126· 138· 205
— (Տէր) Յովհան 83
— Նիկոլ 77
— ո· Անդրէի 71
— Խարախաչ 90
— ո· Խաչքոյկ 68
— Մեսրոպ 109
— ո· Տամղահի Սարգսի 110
— ո· Մարքոյկ 59
— Թոռն Սեֆերի 71
— Տոմաժիրսքի 171· 175
— ոսկերիչ Կ· պոլսեցի 194–5
— քահն· ի Սամանխալաւ 196
Գօնեցպոլսքի 159
Գօպիչով 46
Գօցման գղ· 158
Դադարիչցե (տեղի) 73
Դանիէլ Ծառուկեան 157
— Վ· յիշմիածին 226
Դառնովոսքեյ (Բան) 17
Դարկօվսքեյ դեսպան 77
Դաւիթ կթղ 54· 164–5
— Զեթունցի 175
— Նուբրակ 68–9· 117
— վրդպտ 18· 52 69
— քահ· ի Լով 171
— Վ· Իշմիածնի 226· 240
Դերկովէչղ քղ· 85
Դխամինից 130
Դնչինցքեյ 119· 121
Դուխալ պէկ 29
Դրապոլ ք· 119
Դօմիցքեյ եպս Քրաքովի 120
Եագուպ սրկդ 67
— (Բան) ո· Բան Թորոսի 111

Եպիսկ Թոռն Մխիթարի գլխաւորեալ 46
— Շղխոդ 83
— Բօթոցքէն 69· 81
— Աքանժէնէք 109
— Խայիմ հրեայ 112
— Պէնէչ երեւելոհան 64
Եպիսկոպոսս առքսար 111
Եպղովիք 72· 119· 137· 170· 185· 190· 199· 204· 245
Եպղովիցքի վոյվոտ 21· 31· 35· 47
Եան Իւան 42· 44
— Բան ս· Գանցլէր
— ս· Կիւրղի 30· 84
Եանգով Պր· Վլահ· 51
Եանկինգար Բան 30
Եանչկ Մաճար 53
Եաչ· ս· Աս· 169· 188· 239
Եասլովիցքէն գեսպան 35
Եասամ եպս Լեհ· 79
— Կուրսքէն գեսպան 75
Եարասլով 17· 91·
Եզեանց կարապետ 2· 259
Եզուիթք 77· 91· 128
Եկպլոց 15· 116
Եղիա (Տէր) Մնարուլ 128···
— եպս Նուիրակ 178
— Կարմելիդեան 138
Եղիազար պարքք 264
Եուրքոյ (Բան) 175
— Խայչինքի 77
— Գեվորովից 68· 70· 74
Երդամ 175
Երեմիա Պր· Վլահ· 61–2· 66· 78·
Զաքարոսքա 77· 103
Զախնովիչ Տ· Խաչար 129–30
Զամշուհ գղ 158
Զամոյսա քղ· 54· 95· 110· 135· 164–6· 170–2· 178–9· 191–2· 244
Զամոյսքի քանցլէր 54–7· 60· 64–5· 73· 82· 164· 192
Զապելլա Թագուհի Մաճար 162
Զաուրքա ? 111
Զաւիկ հայր Պր· Հրիհորի 36
— Բաթքար 90
— Պետնաթենց 164
— Աքանժէնէք 109
— այր կաւարինէի 167
Զաւիկեանգ Հ· 74
Զախոլոսքի Ցխուսեան 127
Զաքար եպիսկոպոս 34
— աւագերէց Լովի 112
— Պր· Պողոսեանց 171
— (Տէր) ո· Հանուսի 82
— Վ· Իլմիածնէի, նուիրակ 240
Զիկմունտ Ա 15–6· 18· 117
— Բ (Աւգուստ) 17–8· 31· 35· 42· 135· 162
— Գ 35· 68· 89· 108· 185
Զոչայ աղջիկ 111
Զոսիմոս աքեղայ 132
Զպորովցքէն Սամուէլ 54
Զվանից 106–8
Իլմիածին ս· ի Կոնդակս
Իսիլ մելիք կ· 160
Լմպրիչատ կին 174
Ընկիսալա քղ· 221
Ըչտեմզէք Շուտա 147
Թագէոս կիթղ 50· 136· 163
Թաթարք 15–7· 34· 37–8· 44–6· 50· 56–8· 65· 72· 78· 89· 94· 118· 182· 190·
Թաթուլ ո· Պր· Գրիգորի 189
Թարլոյ եպս Լեհաց 28
Թէադինեանք 127
Թէոդորոս կիթղ· 4· 9· 16· 217
— եպիսկոպոս Վարդանեանց 257–64
— Սապաթ 157
Թէքիրտաղ 186
Թէքուչ (տեղի) 79
Թիլքեվից 88
Թխամինից 156
Թոմչա, Տոմչա 33–4
— Սաեփան 69–71· 78–9· 109
Թովմաս Գեռնաուից 159
— Դասքթուիչ 129
— Զամոյսքի 172· 187
— Իլծանովքի 138
Թորոս եպս Կամենից· 185
— քահն· ի Լով 109
— ի Կամենից 69
— աքեղայ 135· 185
— գպիր ո· Մխիթարի 170· 176
— Պետնաթենց 164
— տանուտեարք 176
Թուրլու գետ 78–9 100· 105·
Թուրքք 31· 37· 44· 49, և այլն·
Թուքան ճգնաւոր 180

Թուանդսխլվանիա 128
Թրխնիդարք (կրօնաւորք) 135
Թօլմաչ դղ· 156
Թոխատ 198· 235
Թօրէզ (Դաւրէժ) 117
Ժէլինսքիյ 98
Ժուպր դղ· 152
Ժօլնէր 97
Ժօլքովսքիյ 73· 76· 85· 88
Ժօլքվա 84
Իլախք· ա· Լիհք
Իլով· Լով· Լէմպէրկ· 2· 4· 35· 106–7· 110–1· 228
— հկեղեցիք 175
— քահանայք 176
Իննոչէնց Պապ Ը 135
— ժ· 140
— ԺԱ 127
Իուրքեվիչ 149
Իպրայիլ 30· 34
Իռիոն ասմաթաձէա 236
Իսայի (Բան) ո· Տէր Աբրամու 76
Իսմայելացիք (Թաթարք 65
Իվաչքօ Ջիչաք 112
— Գևխատեակ 118
— Զօրնուչ 83
— ո· Մեսքոյի 166
Իւան վոյվոտա 44–5
— Բողքովա 48–9
Իւրքոյ կամ Իրքոյ 187
Իֆլանտ 51
Լանսքօրնսքիյ 80· 120
Լասքի կամ Լասոի 32–3
Լեքոնա (Նեկրոքոնա) 117
Լհհասատան, Լհհք (յաճախ)·
— Թագաւորք 122–3
Լհմպերկ· Լէոպօլիս· ա· Իլով
Լևոն Բ Թգ· Հայոց 115
Լենարդ եպիսկոպոս Լհհաց 30
Լէոբոլտ կայսր 145
Լէոնասատա (Լով) 198
Լիդվա 15–6· 38· 46· 116· 121· 199
Լիպաչով (տեղի) 119
Լիսցա 130
Լիսովիչք, Լիսովչիք 100–1
Լիվոռնոյ 264
Լով· Լհվ· ա· Իլով
Լովեցիք 202
Լուպէլ Վոյվօյից 104
Լուպլին 38· 163
Լուսիկ սրկւդ 52
Լուսվիկ Թգ· Մահաբ 17
Լուցկա 4· 5· 46· 177· 215· 244
Լուքաչ Հրիցքովիչ վոյճ Հ· 76–7· 90 106
Լօպօտայ 59–61
Խազախք 49· 53· 57–8· 78· 95–104· 182
Խալաճա 82
Խաղախք 198
Խանպէկ 180
Խանտէմիր միրզա 83· 87· 93
Խաչատուր ալքեպս 16· 134· 166· 226
— Կեսարացի Նուիրակ 126· 136· 183· 207· 210
— քհնյ· տանջեալ 18· 25
— սքեղայ 178· 186
— երէց 28
— սուգդերէց ո· Տ· Օգսենաի 83
— Հիւանցի 182· 188
Խաչքօ Ֆիրօզլու 83
Ս· Խաչ վանք ի Լով 148
Խաչերես կախեալ 33
Խաչում ա· Գոսդա
Խաչքո դատաւոր 125· 199· 256
— Թորոսենց 129
— ո· Պր· Աւագի 167
— Յաեցքոենց 189
Խաբախաչ փաչայ Պուտինի 98
Խիյմաճ տանուտէր 80
Խմէլ· Խմելնիք Խմելիցքի 37· 110· 190·
Խոճին ք· 28· 40· 42· 46· 76–8· 95–4· 97· 101· 200· 214
Խոտորովցա, Խօտորուվիցկա 70· 93
Խորուժքին 37
Խորօժնիից Իուսքի 38
Խուրխուրիկ հայր Սիմեանի 161
— Սերաճցի 161
Խրիմ· Ղրիմ 15· 72· 88
Խօճքէվիչ 89· 91–3· 106
Խոյնիցա քղ· 116
Խօտորուվուցկա 93
Ծառուկ Ագեենտեան 145
— Դանիէլ 157
Ծերիկ զպիր 183
— երեսփոխան 181

Մերձք ս. Ցերձք
Մինականք (Գնչուք) 25
Կաղիմիր. Քաժմիր Մեծն 115. 131
— Զ. 15. 110. 116
— Ի 192–3
Կալիկա սուլդան Թաթար 86
Կամենից 2. 4. 15–7. 31. 39. 65. 72. 76. 80. 107–8. 119. 184. 194
— եկեղեցի. — Ս. Օգաննա 90
— — Ս. Աստուածածին 16–7. 76. 115. 120. 135
— — Ս. Նիկող. 36. 52. 70. 74. 76–7 134. 159. 175
— Դաստաբան 131
— Դպրատուն 141
— Տօնավաճառ 116
— 40 Եղբարք 189. 199
Կանքայ 145
Կավրիլաշք. Կավրիշք վկաՀ 13. 14–5
Կարապետ կԹկն 222
— արքեպիսկոպոս 66. 136. 168
— Վ. Էջմիածնի 239
Կարմելիտեանք 137. 139
Կարք խչկան Լհ 122
Կաֆա 15. 116
Կեսարիա 235
Կերուխնա կին 166
Կիւլի քղ. 15. 116
Կիւրեղ վրդԹ 38. 68. 77
— Ցուհ. Սալկան 82
— Պըկօշօվից 90
— Տիրատուր 77. 92. 109
Կլայվացիկ 110
Կլեմէս Գալանոս 127. 141
Կոմանա քղ. 198
Կոստանդին կԹղ. Ի. 8. 215. 219
— Գ Թագաւոր Հայոց 115
— քնհալ 16–7
— Պր. Վլահաց 66. 70–1
Կոստանդնուպօլիս 119. 262–5
Կուլաֆ կին Մխիթոյ 64
Կուսքէ 62–3. 72
ԿվաժՀինց դղ. 156
Կօչկան սանուսէր 80
Հալապ 52
Հալիչ. Հալից քղ. 71. 134
Հանկաստար Աստուածածին եկ. ի Լով 171
Հանկաստար յԱգուլովցա 170
Հանկաստար ի Սեչով 185
Համազասպ եպիսկոպոս Ս. Փրկչի վանաց ի Հայս 240
Հայաստչնիկ հէԹման 106
Հայանուսքօ Հ. 68
Հայաստեք 50. 57. 59. 97–9.
Հայք ի ԼհՀս 123, և այլն
— Ունգարիոյ 143
— արեւելեան վհուկք 158
Հարպուրդ խչկան 36. 44
Հեռիկ Թդ. ԼհՀաց 43–6
Հիւսէին շահ 145
Հլինեան քղ. 88
Հնարէու դղ. Բաքերդու 182
Հոթին ս. Խոթին
Հումինցա (տեղի) 90
Ս. Հոխիսիմեայ նշխարք 248
Հոռոս 115. 118.
Հռոմ 162
Հրանիցքա 45
Հրիճոր Պր. 36–7
Հրիցքօվից Լուքաշ 90
Հօգքա կին 77
— դ. Սէֆէրի 83
Հօրօտիշքա 16
Ղալախք. ս Խազախք
Ղազար Թոխատեցի 168. 177. 181
— վարդպ. 117
— դպիր քաքերդացի 176. 186
— ո. Իվաշքոյի 180
Ղանխմաճ կին 163
Ղարապաղ 145
Ղափլան փաշայ 194
Ղեւոնդէս աքեղայ 120
Ղուկաս եպս Նուխրակ 84. 174
Ճաղու դղ. Թոխատու 143
Ճահուկ (Ջահկեցիք) 205
Ճան Անէծն դեսպան 84
Ճուրճով քղ. 192
Չ. ՄաՀիաս (Թրինիդար) 155
Մալդոչ 16–7. 117
Մակար եպիսկոպոս Նուխրակ 18
Մակեդոնացիք 31
Մահմատ սուլդան 60. 64. 195–7
Մահպուտ 116
Մահտեսք 15. 17. 48. 60. 102. 197
Մահտեօղլու փաշայ 81
Մանայիլ 15

Մանուէլ Կորուսեցի 181
— եպիս. Ս. Աստուածծնի վ. 240
Մանուկ Խոթինցի 92
Մանքրման 217. 221. 225
Մարխաս և Կոպիար 232
Մարկոս (Տէր) կրօնաւոր 18
— խօճայ Թօխաթցի 256
Մարտիրոկ 116
Մարտիրոս եպիսկոպոս Նուխրակ 178
— եպիսկոպոս ամենաակալ էչմ. 240
— եպս. Չամշեցի նուխրակ 42. 226
Մարցին եպիսկոպոս Լիճաց 50. 54
Մարքոյ խոճայ 177
Մաքովիցքի 121
Մաքսիմիլիանոս կայսր 56. 58
Մելքիսեդ կաթող. 62. 124. 135. 179. 203. 239
— կրօնաւոր 18
Մեծխաչեան Եազլովցի 197
Մեսրովբ Ս. 261
— կաթող. 4–8. 110
— արքեպիսկոպոս 136. 174
— վ. քարոզիչ 68. 75
— եպիսկոպոս կաֆացի 110. 168. 185
Մէհմէտ Գէբի սուլդան Թաւթար 72
Մըխիթ դպրապան 184
Մխիվանքի 109
Մխոյ Հ. 146
Մխոնոյ Երեսփոխան 57. 67. 69. 80
Մինաւ (Մքայէլ) Գալ պր. Մինդանի 62
— օղու 94
Մինաս Թօխաթցի 19–27
— Զէլիֆտար 18. 127. 144. 196. 199
(Հ.) — Բժշկեան 2
— գրիչ ի Լով 165
— քահնյ 185
Մինդան (լեռնակողմն Վլահաց) 25. 44. 62
Մխոցոյ Աւետիքենց 185
— ո. Գրիչճոճի 191
Մխրոն իշխ. Վլահաց 181–2
Մխքայել եպիսկոպոս Աղթկուց վ. 240
— Թխնոյ Երէց 163
— Երէց ի Լով 185
— Մուրատեան 159
— ո. Տէր Յովհաննու 57
— գպիր ո. Գրիգորի 196
— կաթող 228–30
Մխքսաչ Իւովցի 17. 118
— Սեբաստեցի 161
Մխքոլայ Գրիսքէյ 42
— Հալիցքէյ 116
Մխիթար Գոշ 2
— Վ. Լալուկ 128. 145
Մկրտիչ Եագուպ 92
— աւագերէց Լովի 119
— ո. Մանուէլի 181
— գրիչ ո. Վաղարշ 187
Մոլտաւիա 1–3. 78. 103. 199. եւն.
Մոսկովք 16. 31–3. 50–4 68–9
Մոսկուա 70. 214
Մովսէս Գ կաթող. 136. 185 241–5. 251
— եպիսկոպոս Երեւանցի 127. 144
— Վ. գրիչ 193
Մոցոք 35
Մուղնեէ 103
Մունդանի երկիր տ. Մինդան
Մուսաքէկ հայ դեսպան 246
Մուսուլաքա սուլդան 82
— փաշա Պաղտատայ 96–7
Մուրատ սուլդան 64
— Քարմատենց 172
— Մխիթար 83
— ո. Մխքայելի 189
Մուքշա (տոհմ) 92
Մսիր քղ. 171
Մրզաչահ Թաւթար 72
Յակովբ ո. Աւետունի 170
— աբեղայ Նուխրակ 117
— Աղվաթենց 171
— Երէց Կամենիցու 3. 67–9. 94
— (Տէր) ո. Գրիգ. 168. 175. 189–9. 194
— Գ կաթող 192. 221–4
— Դ — 257–65
— եպիսկոպոս Նուխրակ 18
— Երեսփոխան Եազլովայ 197. 199
— քահն. ի Լով 193
— ո. մահտեսի Մինասի 199
— Երէց Զամոցայ 116. 119. 187. 192
— Եազլովացի 120
— Թօխաթեցի 137. 171. 179
— Թորոսովից 143
— Չամշեցի 165. 198.
— վ. Պաղտատար. 128. 147–59
— ո. Շահնշահի 151
Յակովբչայ Սեւլովցի 139. 208
Յակոբչա 161
Յովհաննէս Ա. արքեպ. 24. 131. 218

Յովհաննէս Թոպչիա արքեպիսկոպոս. է· 128· 199
— Ալանպէկ արքեպ· 162
— աւագերէց ժամանակագիր 11–3· 61· 67· 136
— Վ. Էջմիածնի 239
— Վ. նուիրակ Յակովբայ Դ 257
— քահն ո· Սիմոնի 64
— ո· Աթոռի 68
— Ծուռտատ 33
— արքեպիսկոպոս նուիրակ 42· 117· 190· 205· 251
— Ը կաթղ· 135
— կաթղ· Սսոյ 172· 176
— Վ. Արղնցի 126· 140–1
— եպս Սեբաստ 136· 169
— երէց ի Սերաստ 162
— Զաբմաստանենց 145· 171· 174· 195
— պատրրք կ· Պօլսի 185–6
— (Տէր) Կաֆացի 192
— դրագիր Յկեղ կաթղ· 224
— քահն· ո· Սիմոնի 64
Յովհան Ոսկեբերան 261
— (Բան) վրէժ 189
Յովսէփ եպիսկոպոս 68
— քահն· ո· Տէր Գրգրի 77
Նաքօմոց 108
Նալիվայքո 59–61
Նասուսինա կ· 185· 189
Նասրադին պէգ 4· 218
Նաւարդնա քղ· 130
Նիմիչք (Լիճք) 29· 45
Ներսէս աբեղայ նուիրակ 33
— Վ. Երեւանցի 145
— Չօլուպովիչ 141· 178· 188
Նիկոլ Թորոսովից արքեպ· 2· 124–7· 130· 133–45· 178–9· 187· 202· 257–62
— քահն· բաբերդցի 182· 192
— եպս 119
— Խոճայ դեսպան Լովի 253–4
Նիքօրիցա պէյար 89
Նովասելիցա 46
Նովինա քղ· 186
Շաքիէլիչ 89
Շամախի 143
Շաւլեխ 217
Շըմքօ Հ· 116
Շիրուան 143
Շմաւոն Վ. Էջմիածնի 226
Շնավիցքի 111
Շուեաք 144· 146–58
Շումլայնաքի ռուս 156
Շահֆան Պաթօրից 47
— վոյվոտա 16–8
— ո· Թոմշայի 69
Ոնուփրիոս քահն· 138
Ուլուպէկ Սերագցի 161
Ումէկ պարոն 11
Ունեաթք 214
Ուռումանի (Իտման) 24
Ուռումէլի 238
Ուրբանոս Ը 126· 139
Ուրհա (Հապք յ') 236
Ուքրանիա 73
Զառնօքօղնիցա աւան 138
Զեյով ա· Սեյով
Պալայխան 174
Պալատովից Գաբրիել 137
Պալաեսքի 128
Պալքոյ 19
Պայազիտ սուլդան 117
Պայլախան 174
Պանիլովա գղ· 156–7
Պար (տեղի) 18· 62
Պարոնչ Յակովկ աւագերէց 2
Պարսամ արքեպ· 136
Պեկիբաա 145
Պետրոս ո· Տր Գրիգր· 77–8
— Իաքովից 90
— քահ· ո· Տէր Յակովբայ 187
— քահ· ծեր ի Կամենից 42
Պերնադովեան տոհմ, 144
Պղով· Պուղով քղ· 144· 79
Պէթլէմ կապօր խչխան Մաճարաց 83
Պէլդան 225
Պէլդեցքի (Բան) 104
Պէնաէր քղ· 53
Պէչ (Վիեննա) 57· 65
Պէտնաա ո· Պր· Թորոսի 170
Պըլևեցքի տիկին 208
Պըլըդչեան Գրիգոր· ը· թ· 1
Պըչքօ 82· 87
Պըտին 4· 9· 17· 98· 221
Պրիկբաա 118
Պրըլյաէնքով 16
Պիչով (հեղինակ) 2

Պիսէրիցա 119
Պոդչիան· Պօթիչյան 24· 81· 225
Պոհատան· Պոդատան վոյվոտա 16· 44
— Պր· Վլահաց 162
— Սբենատովաքիչ 157
— Տօնատադենց 185
Պոբիս կառոնովիչ 65
Պուդով ա· Պդիվ
Պուդտան (Մոլտաւիա) 19· 197
Պուդտանուվքա լիճ 149
Պուչա (տեղի) 86
Պուչաչ քղ· 54
Պուպուքով դղ· 154
Պուտտա 26
Պուտին· Պուտա 98· 118
Պրակա 70
Պրայիլ (Խպրայիլ) 79
Պրասլավաքիչ· Պօրոսլավաքիչ 74–5
Պրիաքիչ Նիկոդ· 57–8
Պօղ երէց ? (ուրացող) 209
Պօղօզ (տեղի) 105
Չ· Պօնէզանա 130
Պօչան քղ· 146
Պօանա 99
Ռատուդ (Ռատոսդոյ) 186
Ռատուլ պարոն Վլահաց 182
Ռումհան 24
Ռուսչուխ 198
Ռուաք· Ըռուղք 54· ա· Մասկովք
Ռօսաթին քղ· 154
Սադալ (տեղի) 17
Սալայի պէկ 92
Սալմասոցի ա· Սափ· կաթոդիկոս
Սահակ եպս· եղբօրորդի Մելք· կթղ· 157
— փեսայ Նիկոլի 208
Սամուէլ եպս· լուսաւորիչ Երզոմի 231–6
Սանտոմիրսքիչ 89
Սառա մայր Պր· Սինանի 160
Սարգիս կթղ· 155· 162
— քահն· Պահոռցի 168
— Տամղահի 27
— դպիր ի Լով 171
— քահն· յՇաշ 188
— տիրացու ի Սէլով 181
— Տիրանաչինեցի 200
— Վ· Իչմիածնի 226
Սարկաւագ Լեհացի Չ· 171
Սաֆար 174
Սեբաստիա 235
Սդանիսլաւ քղ· 178· 196
— մարշալ 119· 154
Սդանիսլաւսքիչ 64
Սդաբոխովսքիչ (Բան) 51
Սդաբոյտուլ բ· 17
Սդրուս զօրապետ 37· 56
— Իւրիչ 64
Սերաղ 4· 24· 45· 76! 221· 225
Սերբիկա թ·
Սերեբքոյինց 188
Սէլիմ սուլթան 37· 46· 117
Սէնտոմիրսքիչ 85· 89· 95
Սէլով· Չելով· Սօլով· 4· 15–6· 21· 28· 36· 45· 62· 81· 221· 239
— եկեղեցիք 181· 188· 192
— քահանայք 184· 188–9
Սէմիկրօցսքի 118
Սէֆէր երեախոան 205· 208
Սըրպք 1· 19
Սթաուչէլի բ· 152
Սթեվլիսքա դղ· 154
Սթէյքէվիչ 148
Սիլիստրա 94· 197
Սիմոն կթղ· Ադուանիչ 145
— եպս ի Սերաղ 161
— աբեղայ գրիչ 161
— երէց ի Լով 163· 165· 177· 185
— հարպեխ 119
— Վ· Ջուղայեցի 141
— սրկւդ ի Հռովմ 162
— պէկ Վլահաց 73· 84
— եպիսկոպոս Նուիրակ 116
— ո· Ջոխնայի 59
— չէլէպի թոխադցի 112· 125· 256
— Ֆոտեցի 173
— Հայ 73
Սիմոնովիչ պատուոր 150
Սինքոյ (Բան) 111
Սինան ո· Խուժլուպէկի 152–4· 160
Սմոլենսքա 68–9· 117
Սմոլովսքիչ եպս 38
Սնեադին 67· 107· 157
Սուլէման սուլթան 17–9· 119–20
Սուլու մանաստըր 235
Սուրղաթ 160
Ստեփանոս թգր· Լեհաց 51· 55
— Պաթորից 163· 165

Սահմանոս Թագր. Մահարայ 56
— ո. Թոմչայ ս. Թոմչա
— պէյ 116
— կղզիկ 19. 52. 155. 164. 230
— պատրիարք 18
— արքեպ. 119–20. 155
— եպս. նուիրակ 119. 193
— Վ. Վարդանեան 140. 145. 193
— Վ. Յիշմիածին 239
— Վ. Սահմանեան (Ռոշքայ) 143. 154. 160. 200. եւն
— Ռոշքայ Սարգսեան 145
— դուքս Ռուսաց 134
— երէց ի Սուրմալի 160
— Որոմնեցի 161
— եպիսկոպոս Յիշմիածին 239
— արքեպիսկոպոս Յիշմիածին 239
— կարգուրաց քահնյ 84
— Նահատակի վ. 240
Սուսանիս վ. ի Սեչով 181
Սրապիոն Բաբերդցի 178. 182–3
Սրովինաքէյ 54
Սխանչօք վկայ 35
Սքանժէնիք եաղուպ, Ջատիկ 109
Սքէնաեր փաշայ 81–2. 87–8
Սօքալ (տեղի) 118. 120
Սօքօլովսքէյ 35
Վալ 98–9
Վալաքիա տ. Վլահ
Վահկա 10
Վայէր (Բան) 98
Վասիլ վոյվոտա 188–9
— խոճայ Յեշէ 181
— քահն. ռուս 74
Վասով 24. 79
Վարդա (տեղի) 85
Վարդան եպիսկոպոս Ցունանեան 126–30. 143–4. 197–9
— երեսփոխան 64
Վարդերես քահնյ 18
— դպիր 181.
— Մալար 90
— ո. Պր. Քրչճոճի 189
Վարնա 16
Վարչով. Վարչաւ 76. 84. 89. 194
Վաքօվսքէյ 87
Վհատօմ 75
Վհնեակ 115
Վէլիեսկ 76
Վէսին 119
Վխատամեա 73
Վխանենա 37
Վհննա. Պէէ ժ.
Վհրուդ իշխան 15
Վհրնեա 119
Վհշնովսքէյ 15. 31–3
Վխալա 90. 120
Վհանեօվա 117
Վլահք (Օլախք) 17–9. 48. 78. 81. եւն.
Վլասքէյ 25
Վլատիմիր. Աւլատիմիր քղ. 4. 216. 221
Վլատիսլաւ Դ. 93. 241. 247
Վլոտեք Մացէյ 39
Վլէիկ 111
Վղնիա 46
Վղուցքէյ եպս 60–1
Վզնիցա 15
Վզնիցքէյ 45
Վզչեա 115
Վօլնէյ (Վղնիա) 108
Տահիկք (տ. Թուրքք) 15. 33–4
Տանցկա 194
Տաշօղլի 118
Տեսքող 19–30. 32–3. թ.
Տեւուշ Ջեցհնովսքէյ կամ Սեցհնովսքէյ եպիսկոպոս 33. 47
Տիմիդր ո. Ռուսաց իշխանի 65
Տիարիես 15
Տիրանաշէն Յեկեղեաց 200
Տիրատուր աւազերէց 134
— երէց ի Սեչով 161
— գրիչ Սամսօլցի 198
Տիւերկէրցի գերդ 164
Տնեսար գետ 158
Տոմչա տ. Թոմչա 33
Տունա գետ 34. 35. 108
Տուրլու (Թուրլու. Դուբաա) գետ 63
Տօլուչքա. Տօլչքա քղ. 46. 78. 91. 93–3
Տօնական վարպետ 161
Տօնաւաղ Սեչովցի 163
Տօնաւաղենց Պոկոտան 185
Տօնիկ ո. Յակովքշայ 159
Բարիշ (Բարեշ պէկ Վլահաց 118–20
Բասուլ Շերպան պէկ Մոլտաւաց 69. 81. 85
— միւս 69. 77. 98. 101
Բզովան 60–1

Թօկադդի ? 118
Թօռակ (տեղի) 91
Ցերժքօ· Ցերշքօ 54· 57
Ցիրինա (Հայր) փրանկիսկեան 156
Ցոցորա (Ցուցորա) գղ· մերձ Յեշ 60· 65· 86–7
Փալլավիչինի լեկատ 127
Փանոս պարոն 217
— Հալիչացի 131
Փելիպպոս կճղ· 124· 139· 190· 245–56
Փիրզատա ո· Նուրիճանի 52
Փիրուխան հայեի 183
Փրկչական Պատկերին վանք 240
Քանցլեր Բան Էան տ· Ջամոյացի
Քարափչօացի 40
Քարմատաննեց Յովհ· 171–2· 193
Քէրման 117
Քէրօրման 11
Քիւ· Քիով· 75· 156
Քուչնէրեան Հ· Քէրովբ 3
Քրաքով 45–7· 54· 119–21
Քրաքովացի Դնչինցի 121
— Քրըչդօֆ 120
Քրխատատատուր Մնարուլ 144
— երէց ի Սեբաս 161
Քրըչճոֆ Մուսաֆա 191· 199
Քրխատոֆ ո· Տէր Ջաքարայ † ի թուին ՌՀ· 91· 99
Քրուլօվից 106
Քօսդանդին քնեազ 118
— Պալիտա 98· 101
Քօրէացի 81· 85
Քօրօնըլ Հէթման 100–1
Օդա Հալիցի 120
Օթվինօսքի 85
Օլախք տ· Վլահք
Օլէքսանտր տ· Աղեքսանդր
Օլուխնա (Կին) 109
Օլղբեխտ տ· Ալբերտ
Օնոֆրիոս Վ 124
Օշաքով 119
Օսպրոկ 50
Օսդրօչինչա 91
Օսման սուլդան 94
Օրինա 85· 93
Օրշա, Orsava 16
Օքսենա (Տէր) 5· 51
— Պօչանցի 128· 199
— Ս· եկեղեցի ի Կամենից· 90
— վանք ի Սեչով· 177· 181· 184
Օքսյինա (Ուքրանիա) 78· 106
Ֆանթուչից Դամինիկեան 155
Ֆէտօր ռուս քահնյ 74
Ֆէքէթիչ մահար 102

ՈՒՂՂԵԼԻՔ

Երես		
3	Տէր Օգսէնտ	Պր. Օգսենտ
8	ի հետքը բերելով	ի հետը բերելով
17	խապախ (ջրմուղ)	դուռն. դրունք
29	Նեմիչ, Գերմանիա	Լեհք
37	Վիատնեա	Վիեննա
48	Բոդիովա	Բոդքովա
61	Բոցոցքիյ	Բոդոցքիյ
63	Մայելի	Մայիլեւ
69	Բօդօրքիյկա	Բօդօցքիյկա
76	օլ դուրուբ	օլդուրուբ
84	Կավրիչ աչքը	Կավրիլաչքօ
118	Ջըկմունդ	Ջըկմունդ
	— Սարանչիա	— սարանչիա (մարախ)
123	(վերջնական տող) օլդուրզուզտու	օլդուրտուզտու
128	Սլատինոյ	Սլատինոյ
240	Թվին ՌՀԹ	Թվին ՌԽԹ



Կաթաշանաւատուն (հրկիզեալ) Մանուկ պկյի ի Պոչքրէշ.